

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

ՈՒՐԲԱԹ, 11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2015թ. № 23 (366)

ԾԱՅԱՑ ՄԵԾ ԾԱԽԱՅԵԱ

Ամենայն հայոց 101-րդ կաթողիկոս, տիեզերահոչակ ու
բազմապատիկ լուսավորիչ հայոց, վերստին նորոգող
Սուրբ Էջմիածնի, հայոց ազգային-եկեղեցական վերջին
սուրբ Սովոր Գ Տաթեացի (Խոտանանցի)

Մեծ պատիվ է մեզ համար չորս դար հետո խոսք ասել Սյունյաց աշխարհի բոլոր ժամանակների ամենանշանավոր զավակներից մեկի՝ Մովսես Տաթեացու մասին, ով եղավ դարակազմիկ անձնավորություն, ով դեռևս կենդանության օրերում ստացավ «Երկրորդ լուսավորիչ հայոց» պատվանունը, ով 17-րդ դարասկզբի քառոսի մեջ ճառագած լույս եւ ամայության մեջ նոր կյանք վերընծոյուղող ու ավերակների վրա նոր քաղաքակրթություն կառուցող ճարտարապետ դարձավ, եղծված բարքերի բուժիչ եւ հանգած խորաններին կյանք տվող հայրապետ, ով առաջնորդեց Երկրի մեջ քրիստոնեական կարգի վերահաստառումը:

Խոհեմարդական

5

ՊՐՈԴՅՈՒ ՀՅԱ ՇԵՐՋԱՆ ՇԵՐՋԱՆ ՀՅԱ ՊՐՈԴՅՈՒ 110x80, 2015թ.

Սյունիաց Երկիր

Դաստե՛ք՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ (0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Էլ.կայք՝ www.syuniacyerkir.am


Գլխավոր Խմբագիր՝
ՍԱՍՎԵԼ ԱԼԵԽԱՆՅԱՆ
Լրագրող Անժեր՝
ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ
ՄՐՄԻՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Օպերատոր՝
ՏՈՒՐՄԱ ԴԱՎԹՅԱՆ
Սրբագրիչ՝
ԱԼՎԻԿՆ ՆԱՎԱՄՐԴՅԱՆ
Զեւավորում՝
ԳՐԻԳՈՐԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ

Թողակցությունները չեն գրախոսվում
եւ հեղինակներն չեն վերապարձվում:
Խմբագրության եւ հեղինակների կա-
ռութեածությունը կազող են շնամընկել։
Նյութերը ներկայացնել մերենագիր
վկակում (3 մերենագիր էջոց ոչ
ավելի):

Հղումը «Սյունիաց Երկիր» պա-
րտադիր է:

Գրանցման վկայականը՝ 01Ս 000231:
Թերթը տպագրվում է «Ժիգրան Սեծ»
կրօնակալչության տպարանում։
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց 2։
Դետակոմ աջակցություն՝ տարեկան
500,000 ՀՀ դրամ։

Ծավալը՝ 18, 5 տպագրական մամուլ։
Տպարանակը՝ 1700, գինը՝ 100 դրամ։
Ստորագրված է տպագրության
10.09.2015թ.։



**Մրագործված՝
նաեւ Սովու Տաթեւացու հուշով**

Էջմիածնի մայր տաճար. Ազաթանգեղոսի (5-րդ դար) վկայությամբ՝ կառուցվել է արքունի ապարանքների մով, Տրդափ Գ-ի (298-330) եւ Գրիգոր Պարթենի (Լուսավորիչ) օրոք Յայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հոչակվելու առաջին տարիներին (301-303):

1627-ին, Սովու Լուսարարապետի, ապա եւ կաթողիկոսի օրոք, վերանորոգվեցին գմբեթը, առաստաղը, ծածկը, հիմքերը, սալահավակը, կառուցվեցին արդաքին նոր պարսպապատեր, հյուրանոց, խուցեր, սեղանավուն, այլ շենքեր:





Սուրեն
Խաչատրյան
Սյունիքի մարզպետ



Վարդան Վարայան
Կապանի քաղաքա-
պետ 2008-2012թ.

Հայաստանի Հանրապետության նախագահ
Սերժ Սարգսյանին
Ծայրագույն պարրհարք եւ Ամենայն հայոց
կաթողիկոս, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ-ին

Սեծարգո՛ նախագահ Հայաստանի
Հանրապետության
Վեհափառ Տեր

Է. թ. ապրիլի 23-ին, երբ Մայր աթոռ Սուրբ Եջմիածնում սրբադասվում էին Հայոց ցեղասպանության նահատակները, մեր հոգեւոր հայրերի աղոթքներում ու աստվածական խոսքերում քանից հնչեց նաեւ Ամենայն հայոց 101-րդ կաթողիկոս, տիեզերահոչակ ու բազմապատիկ լուսավորիչ հայոց, Սուրբ Եջմիածնի վերաստին նորոգող, Յայ առաքելական եկեղեցու վերջին սուրբ Մովսես Տարեւացու (Խոտանանցու) ամուռը:

Հայոց մեծահաճրավ այդ վարդապետի շիրմը, սակայն, միջինավոր հայերի համար գտնվում է անհայտության մեջ:

Տասնամյակներ շարունակ, հայտնի պատճառով, անտարբեր վերաբերնումը է ցուցաբերվել նրա հիշատակի հանդեպ:

Կարծում ենք՝ եկել է ժամանակն անդրադառնալու այդ հարցին:

Մովսես Տարեւացին մահկանացուն կնքեց 1632թ. մայիսի 14-ին եւ թաղվեց Երևանի հնագույն գերեզմանոցներից մեկում՝ Կողեւնի գերեզմանատանը՝ 10-11-րդ դարերի հայոց մեծ վարդապետ Շովիաննես Կողեւնի եւ Մելիքսեթ Վժանեցի վարդապետի մեջտեղում։ Շետագոյում այդտեղ՝ դրանց գերեզմանների վրա, շինվեց մի վայելու մատուռ՝ կոչվելով «Կողեւնի մատուռ», որը 1829թ. հիմնանորոգվեց։ Այդ մատուռը ժամանակին հանարվել է մեծ սրբավայր,

այնտեղ ննջող սրբի հիշատակին հաճախ Սուրբ պատարագ է նատուցվել։

Սակայն, Երեւան քաղաքի ընդարձակման նկատառումներով, 1934թ. որոշում է կայացվել տեղափոխել Կողեւնի գերեզմանոցը։ Աստծո ողորմությամբ, մինչդեռ, մատուռը կանգուն է մնացել, թեւ արտաքինից չի Երեւում։

1955 թվականից մատուռը դարձել է բնակելի տուն՝ որոշակի վերափոխումների ենթարկվելով։

Բազմաթիվ մասնագետների կարծիքով՝ բնակության համար հարմարեցված մատուռի այլևս բետոնապատ հատակի ներքո են Մովսես Տարեւացու, Շովիաննես Կողեւնի եւ Մելիքսեթ Վժանեցու սրբաւոն նշխարները։

Մովսես Տարեւացու շիրմի շուրջ ստեղծված վիճակը հանգուցալում է պահանջում։

Հավատում ենք, որ Դուք ակնածանք կտածեք սուրբ Մովսես Տարեւացու հիշատակի հանդեպ եւ պատշաճ վերաբերնումը կմատուցեք նրա շիրմին՝ նվիրական այդ վայրը բարեկարգելով, ուխտատեղին վայելու տեսքի բերելով, ինչի համար անհրաժեշտ կլինի նախեւառաջ հոգալ այն մարդկանց բնակարանային պայմանների մասին, ովքեր ճակատագրի կամոք բնակվում են Կողեւնի մատուռի մեջ (տարածքում):

Խնդրի լուծման տարբերակներից մեկն էլ Մովսես Տարեւացու նշխարների վերաբաղումն է Սուրբ Եջմիածնում կամ Տարեւի վանքում։

Հավատում ենք նաեւ, որ այդ քայլով եւ Դուք, եւ մենք՝ բոլորս, կարժանանանք սուրբ Մովսես Տարեւացու բարեխոսությանն առ Աստվածածու, որպեսզի Բարձրայալի ողորմության դրսերը բացվեն Հայոց աշխարհի վրա։

Հարգանքով՝

Սուրեն Խաչատրյան
Սյունիքի մարզպետ

Ծանօթություն

Մայր աթոռ Սուրբ Եջմիածնի պատասխանը՝ 107-րդ էջում։

ՀԱՅՈՑ ՄԵԾ ՄՈՎՍԵՍԸ



Մամվել Ալեքսանյան

Ծ 1

Օ վ նրա համբեաւ մեր սերը, հարգանքն ու հիացմունքն արտահայտելու համար հրատարակում ենք «Սյունյաց երկրի» հատուկ համար՝ փորձելով մոռացության փոշուց մաքրել նրա անունը, նոր սերնդին ներկայացնել Հայոց մեջ Սովուսի նկարագիրը, կյանքը եւ գործունեությունը:

Համոզված ենք՝ թերթի սույն համարը կարժանանա ընթերցողի բարեկամ վերաբերմունքին:

Համոզված ենք մաեւ, որ կգտնվեն գիտական ու կրթական հաստատություններ, լրատվամիջոցներ ու անհատներ, որոնք մեզանից հետո եւ մեզանից ավելի հիմնավոր ու բազմակողմանի կներկայացնեն Սովուսի Տաթևացուն, քանզի նա անցյալ չէ, այլ ներկա է եւ ընդորինակման արժանի մի այր է, որ միշտ պիտի ներկա լինի մեր ազգային ընթացքին. ոչ սովորական մեր ժամանակներում առավել եւս:

Սովուսի Տաթևացուն «Սյունյաց երկրի» հատուկ համար նվիրելու եւ Հայոց երկրորդ լուսավորչին նոր սերնդին ներկայացնելու հույժ գնահատելի նախա-

ձեռնության հեղինակներն են Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը եւ Կապանի նախակին քաղաքացին (2008-12թթ.) Արտուր Արայանը:

Ինչպես դադեր շարունակ, այնպես էլ մեր օրերում, կարեւոր են հոգեւոր-մշակութային նախաձեռնությունները: Դիմենք Պատմահոր ողջույնի խոսքը «Հայոց պատմության» սկզբնամասում՝ ուղղված Սահակ Բագրատունուն: Եվ ուրեմն հետեւենք այդ ավանդույթին եւ ասենք՝ գովեստի է արժանի նախաձեռնողների ու հովանավորների վերաբերմունքը սուրբ Սովուսի Տաթևացու հիշատակին. Սուրեն Խաչատրյանն ու Արտուր Արայանը նաեւ այս ձեռնարկմաք պետք է ճանաչվեն, որովհետեւ նպաստեցին, հորդորեցին, որ ծնվի սույն հիշատակարան-թերթ՝ յուրօրինակ նպաստ բերելով մեր հայունագիտությանը:

Անցած ճանապարհը՝ համառուք

Մատենագիրներից շատերը նրան անվանում էին Սյունեցի, Խոտանանցի, Արանանցի հորջորջումով: Սակայն Մաղաքիա Օրմանյանն իրավացիորեն կանգ է առնում Տաթևացի մականվան վրա, որը մի տեսակ նվիրագործված էր եւ ընդհանրացված, թեև Շահ Արա Ա-ի եւ Շահ Սաֆիի հրովարտակներում նշվում է Խոտանանցի մականունով:

Ծնվեց իրեւ զավակ «մեծազգի» ծնողաց: Նրա ծնունդը հետագայում (1628թ.) երգեց Մկրտիչ Զուղայեցին:

Միա մի հատված նրա բանաստեղծությունից.

Ուն մեծազգի,
դուդուս գուլելի եւ անւանելի,
սուրբ ովհարին Սրբաթէի
եւ մենարանի
սրբոյն Գրիգորի.
ի վերջու ժամանակի
սորին վիճակի
դունկ բուսեալ լինի
յարմակոց տեղի
սրբոյն Սրբաթէի
ծառ զարմանալի
ուսդ բազում ոնի
միշտ պարտերի:

Մեկ ուրիշ ներբոյսան էլ Սովուսի մահվանից հիսուն տարի անց հեղինակներ է Երեմիա Չելչպի Քեմիրճեանը:

Ծնողների անունը չի նշվում, հիշատակություն կամիայն քրոջ մասին, ում միակ զավակը եղավ «կրօնաւոր բանասէր» Գրիգորիսը: Սովուսին ազգական էր Տաթևի Յովիաննես արքեպիսկոպոսը:

Սովուսի մանկությունն անցել է Խոտանան գյուղում: Նորահաս պատանուն այնուենտեւ ձգեց մոտակա հօչականուն Տաթևը:

Ըստ Առաքել Դավիթինցու՝ «Դեռեւ 15 տարեկան էր՝ ավել կամ պակաս, նրան քահանայության աստիճան տվեցին եւ օրինեցին կուսակրոն արեղա» (Պատմություն, Երեւան 1988, էջ 225): Այդ ժամանակ էլ որպես Տաթևի վանքի միաբան կոչվեց Սովուսի Տաթևացի:

Այնուենտեւ մեկնել է Ամիդ, որտեղ աշակերտել է Սրապիոն վարդապետ Եղիսաբետ:

Հայոց անձնանունների բառարան

ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆ: ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍԱԼՍԱՐԱՆ, 1946:

— 121. Մովսես Գ. Միւնեցի (Խոտանանցի կամ Տաթևացի), կաթուղիկոս հայոց «1629—1632» թվ. Արեգա ձեռնադրվեց 15 տարեկան հասակում. սովորեց Սրապիոն կաթուղիկոսի և Գրիգոր վրդ. Կեսարացու մոտ. գնաց Երուսաղէմ, Պաղեստին և Եսդիալառ, ուսումնասիրելու համար անապատական կյանքը. Միւնելով Սարգիս եպիսկոպոսի և Կիրակոս վարդապետի հետ՝ եկան Միւնիք և հիմնեցին Հարանց անապատը «1608» թվ., որ դարձավ ոչ միայն ճգնարան, այլև որինակելի ուսումնարան:

Ճ

Սուրբ Մովսես Տաթևացի



Ճայ Եկեղեցու կողմից կանոնացված վերջին սուրբն է, ով այդ պատվին է արժանացել իր բեղուն հոգեւոր գործունեության ու մի շարք բարենորդությունների համար, որովհետեւ դրանք իրագործվել են մեր Եկեղեցու անկումային, կարելի է ասել, ամլացած տարիներին: Այդ ժամանակվամիջնադարում, հոգու լույսի ոչ մի առկայությ չեղած է նշանակությունը, քանզի Եկեղեցու բոլոր արուները,

լիներ դա Կիլիկիայում, Աղթամարում, թե Երուսաղեմում, մնացել էին անմշիբար վիճակում:

Մովսես Տաթևացին ծնվել է 1578 թվին, Սյունյաց նահանգում, աշակերտել է Սրապիոն Եղեսացի մեծ վարդապետին: Արդեն տասնիննա տարեկանից իր վարդապետի կողմից ծեռնադրվում է որպես կուսակրոն քահանա, իսկ նրա մահից հետո մեկնում է նախ Երուսաղեմ, ապա Եգիպտոս, ուսումնասիրելով տեղի կրոնավորների կյանքը, այնուհետեւ վերադառնուվ հետ՝ դառնում է Երուսաղեմի միաբան, որտեղ հոգեւոր ուսուցումից բացի, սովորում է նաև մոն Տերմակեցնելու արիեստը, որը հետագայում պիտի խիստ օգտակար լիներ իրեն:

Այստեղից նա կարծ ժամանակով այցելում է Ստամբուլ եւ Գրիգոր Կեսարացի պատրիարքի կողմից ստանում վարդապետական աստիճան: Եվ շուտով նրա հետ էլ, 1610 թվին, դուրս է գալիս Երկրորդ շրջագայության դեպի Երուսաղեմ, որտեղից նա մենակ վերադառնում է հայրենիք եւ հաստատվում Տաթևի վանքում, ջանալով այնուն արքացնել արդեն մարած վանական կյանքը: Այսուհետեւ, հայ ժողովրդի անհավատությամբ խավարած սրտերը Թրիստոսի լույս հավատով լուսավորելու համար, քարոզչական արշավներ է կազմակերպում: Այդ նպատակի համար նախ հիմնում է դպրատներ, կարգում ուսուցիչներ, ապա Ներսես Մովսեսի վարդապետի հետ իրեն նվիրում է վաղուց երազած քարոզչական գործունեությանը:

Շահ Աբասը, լսելով նրանց գործունեության մասին, իրամայում է ծերբակալել նրանց ու նահապատժի Ենթարկել, բայց հետո, Աստծո նախախնամությամբ, որոշում է նրանց տուգանքի Ենթարկել 300 թուման գումարով: Ու քանի որ չքավոր վարդապետները այդքանն էլ չեն կարող վճարել, նրանց արտոնվություն է հանգանակության համար շրջագայության ելնել: Աստծո ողորմությամբ տուգանքի գումարը հավաքվեց, եւ նույնիսկ դրա մնացորդով ուրիշ արգելափակվածների եւս ազատման հնարավորություն տրվեց:

Բայց Մովսէսը չուզեց փակվել վանքի սահմանափակ շրջանակում. ոնա սկսեց շրջել հայ գավառներն ու գյուղերը, եկեղեցիները բարեկարգել, զպրոցներ բանալ և քարոզել, կարճ ժամանակում նա դարձավ բոլորի սիրելին. Նրա համբավը տարածվեց ամբողջ Հայաստանում և հեռավոր գաղթավայրերում ապաստանած հայկական բեկորներն սկսեցին որոնել Սիւնիքի խիզախ և հայրենասեր վարդապետին: Նա զրեթե շրջեց Հայաստանի մեծ մասը. նա շրջում էր ոտքով, նրան հետևում էին նրա 15—20 առաջավոր աշակերտները, որոնք իրենց մեջքերին տանում էին իրենց պարենը, անհրաժեշտ զրականությունը ևն: Այս հուզիչ աեսարանը բորբոքում էր հավատացյալ ժողովրդի զգացումները և խանդավառություն առաջ բերում: («Էջմիածին», 1945, № 1, էջ 24—29): Հարանց անապատի օրինակով հիմնվեցին մի խումբ անապատներ: Մովսէսը շրջեց և քարոզեց մինչև Սպահան, ուր 1624 թվին, Շահաբասի առաջարկությամբ՝ գործարան բացավ և պարսիկներին սովորեցրեց մոմ սպիտակացնելու արհեստը: Իրավունք ստանալով թագավորից՝ ձեռնարկեց նորոգել Էջմիածինը, պարիստներով պատեց, վեհարան, հյուրանոց, շտեմարան, սեղանատուն և սիարանների համար սենյակներ շինեց: Բացավ դպրոց Յովհաննավանքում, և Էջմիածնի վանքը հարկից ազատեց: Զիջելով ժողովուրդի խնդիրքին, ընդունեց կաթուղիկոսական օծում, բայց կարճ ժամանակից վախճանվեց: Գերեզմանը գտնվում է Երևանի Կոզեռնում, ուր իր դամբարանի վրա մահվան թվականը նշանակված է ՌԶԲ (=1633, ըստ Շահազիզ, Հին Երևանը, էջ 188): Ունի գրած մի գանձ և մի տաղ, նաև Թուղթ առ Ռւբանոս պապ (Տաշեան, Յուց. 1120 ա), Թուղթ առ Վլատիշլաւ և արքայ Լեհաց՝ 1632 թ. (հրար. Կամենից, էջ 241—3): Տաթեմից էջմիածին է բերել տվել մի ընտիր Յայսմաւուրք (որ Ստեփաննոս Օրբելիանը Սսից էր բերել) և շատերին հրամայել է օրինակել (Զեռ. Ազուր. = Արքա. 1911, էջ 853):—Սամ. անեց. շաբ. 178. Մ. մաշտ. 336 բ. Յկ. կր. 34. Զուզ: 140. Առաք. պատ. 5, 165, 171—2, 177—185, 192, 198, 215, 217—220, 222, 224—243, 266—8, 272—3, 278—9, 282, 284, 286, 292—5, 306—10, 338—40, 495—6, Զքր. սարկ. Ա. լ, իսկ, իդ, Բ. էջ 26, Գ. 32, 34. Մարտ. ժմ. 96 ա. Դընդ. 283—301. Զամբռ 21. Ազդապ. 2399—2422. Զամչ. Գ. 564—637: Ծնդարձակ կենսագրությունը գրեց Ալինեան, Մովսէս Գ. Տաթեացի, Վիեննա 1936:

Սուրբ Մովսես Տաթեւացի



6

Միաժամանակ ուրիշ նախանձախնդիր Աստծո ծառաներ եւս ի հայտ եկան, որոնցից առավել արդյունավետ ու հօչակավոր էր Սաղմոսավանքի եպիսկոպոս Սարգիս Պարոնտերը, որը հասկացավ, որ առանց անապատական ճգնակենցաղ կյանքի անկարող է հոգով զրոյանալու եւ Աստծո խոսքը անաղարտությամբ ապրելու, առավել եւս քարոզելու, ու նորից մեկնելով Երուսաղեմ, այնտեղ հանդիպում է նոյն նպատակի համար եկած տրապազոնցի այրի քահանա Կիրակոս Պոնտացուն: Չեռք բերելով կրոնավորական անապատական կյանքի անհրաժեշտ գիտելիքներ՝ նրանք միասին վերադառնում են Սյունիք: Այստեղ որոշում են իրենց նպատակները իրագործել Տաթեւի հին անապատում, որը կոչվում էր նաեւ Յարանց անապատ: 1608 թվին, նորոգելով ու բարեկարգելով այն, լծվում են այդ շնորհմնակալ գործին, եւ շատ շուտով մեղվի նման այդտեղ են մղվում հոգու ծարավ անձինք, այդ թվում՝ Մովսես Տաթեւացի ու Պողոս Սուրբացի վարդապետները, որոնք եւ դարձան Սարգիսի եւ Կիրակոսի ընտիր օգնականները: Բայց սատանան նոյնական իր ծառաները ուներ, որոնց միջոցով աշխատում էր խափանել Աստծո լույսի տարածումը Յայսատանում: Ինչքան էլ ցավակի թվա, բայց դրանց թվում էր այդ ժամանակվա հայոց Մելիքսեդեկ կաթողիկոսը, որը հալածանքի էր ենթարկում Աստծո նվիրյալ վարդապետներին: Այդ նպատակով նա որոշում է Մովսես Տաթեւացուց մեջ գումար շորեն, իբրեւ տուգանքը: Նա էլ որպես պատասխան, ուղարկելով իր փիլինը, գավազնը ու մի խալի, ասելով. «Մենք կլուենք ու կիադարենք խոսելուց, ու եթե այդ անելով մեղք գործած լինենք, դու պիտի պատասխան տաս Աստծո առջեւ»: Կարողիկոսը, ամաչելով, թե վախենալով Աստծո դատաստանից, նորից արտոնում է շարունակել քարոզությունները:

Շուտով Երեւանի կառավարիչ են նշանակում մի քարեմիտ պարսիկ իշխանավորի, որը, լսելով Մովսեսի համբավի մասին, կանչում է Երեւան եւ նրան հանձնում Ս. Անանիայի Եկեղեցին: Աստծո այդ լրված տունը շենացնելուց հետո անխոնց վարդապետը այնտեղ նոյնական կրոնական միաբանություն է հիմնում:

1623 թվին Մելիքսեդեկ կաթողիկոսը, Մովսես վարդապետի ժողովրդականությունը օգտագործելու նպատակով, նրան եպիսկոպոս է ձեռնադրում, որպեսզի միասին կատարեն ճյուղունորինությունը:

Շուտով այնքան է տարածվում Մովսես եպիսկոպոսի համբավը, որ ջուղայեցիները պատգամավոր են ուղարկում նրա մոտ եւ հրավիրում իսպահան, որտեղ նա Աստծո խոսքով ու Սուրբ հոգու

գորությամբ քարոզում, իորդորում եւ սրտապնդում էր իր ժողովրդին:

Վերադարձնալով Երեւան՝ Ամիրգունա կուսակալի մոտ, հանդիպում է Շահ Արակի ներկայացուցչին: Նրանց որպես նվեր է տալիս յոթական սպիտակ մոմեր, որոնք ինքն էր պատրաստել: Նրանք հիանալով մոմի անսովոր ճերմակությամբ, քանզի նույնիսկ պալատում չկար այդպիսի բան, որոշում են դրանք ուղարկել Շահ Արակին: Նա, տեղեկանալով, թե ով է դրանց հեղինակը, իրամայում է Երեւանի կառավարչին, որ Մովսեսին Պարսկաստան ուղարկել մոմի սպիտակեցման գալունիքն իր պաշտոնյաներին սովորեցնելու համար:

Նա էլ մեծ գոհունակությամբ ու պատրաստականությամբ կատարում է շահի իրամանը, ու եթե վերջինս իմանում է, որ իրենց քաղաքում 1627 թվականին, Դաւուսի ծննդյան տոնի պատարագը պետք է կատարի Մովսես եպիսկոպոսը, ցանկություն է հայտնում ներկա գտնվել այդ արարողությամբ: Դահնից մեծ տպավորություն ստանալով՝ նա որոշում է Մովսեսին վարձատրել խոշոր գումարով ու կալվածքով: Բայց նոր Զուղայի խոջա Նազարը միջանտելով շահից խնդրում է, որ Մովսեսին ավելի նպատակահարմար է նշանակել որպես Էջմիածնի տաճարի լուսարար, քանզի նա աշխարհիկ հարստության ու կալվածքների կարիք չունի եւ անպայման կիրաժարվի նման ընծայաբերությունից:

Շահը ուրախությամբ կատարում է այդ խնդրանքը, եւ 1627 թվականի հունիսի 25-ին, Մովսես եպիսկոպոսը, ստանալով իր նոր պաշտոնը, վերադարձնում է Երեւան:

Այդ փոփոխությունը կատարվեց ճիշտ ժամանակին, որովհետեւ Ս. Էջմիածնը գտնվում էր չափազանց անմշխթար վիճակում: Եվ նա առաջին հերթին նորոգում է տաճարի գմբեթն ու տանիքը, հետո կառուցում է նոր խուցեր, սեղանատուն, հյուրատուն եւ այլն: Յաստատում է նաեւ վաճական կենցաղավարություն, իսկ Յովհանավանքում բացել է տալիս դպրատուն, որտեղ կրթություն են ստանում ապագա վարդապետներն ու քահանաները:

Փաստորեն ինքը անպաշտոն կաթողիկոս էր, քանզի 90-ամյա Մելիքսեդեկ հայրապետը, զառամյալ ու ամօնական վիճակում, գտնվում էր հսպահանում, իսկ նրա պաշտոնակիցները, ծանր տուրքերից ծանձրացած, այս ու այն կողմ էին փախել:

1628 թվին մեռնում է Շահ Արակը: Մեծագին ընծաներով նրա հետնորդի մոտ մտնելով՝ հայորի խոջա Նազարը խնդրում է թեթեւացնել Էջմիածնի տուրքերը եւ մի հրովարտակ տալ, որպեսզի Մովսես եպիսկոպոս դառնա հայոց կաթողիկոս:

Ու վերջապես կատարվում է ժողովրդի այդ վաղեմի փափագը, եւ նա 1629 թվին օծվում է որպես հայոց կաթողիկոս: Բայց ավաղ, այդ բեղուն ծառայի տարիները արդեն հաշված էին, քանզի դրանցից ընդամենը երեք ու կես տարի հետո նա վախճանվում է:

Թաղում են նրան Երեւանում 1632 թվականի մայիսին:

Եվ հայոց Եկեղեցին սուրբ պատարագի ժամանակ, մեծամեծ սրբերի ու նահատակների հետ մեկտեղ, հիշում է նրա խնկելի անունը եւս:

«Վարք սրբոց», Երեւան, 1998թ.

Զաքարիա Էջմիածնեցի

↑ Իրոջ շնորհիվ սկսեցի ու նրա ողորմածությամբ ավարտեցի Հայկազյան տոնարի ՌՅՇ /1625/ թվականին Արարատյան Երկրում, որ Արարատան է, Երեւան մայրաքաղաքում, Սուլը Անանիա առաքյալի վաճռում, սուլը ուխտիս հեզանդի եւ տիեզերալուս մեծ վարդապետ տեր Մովսես քաջ Պարունապետի առաջնորդության ժամանակ: Սա Սյունյաց Երկրից էր, Ազանանի գավառից, բնիկ ու հայրենական Խոտանան գյուղից՝ սնված ու վարդված արքուն եւ զվարքուն տեր Գրիգոր Եղեսացի Եջմիածնի կարողիկոսի մոտ, որովհետեւ քսան տարի շարունակ մնացել էր այնտեղ եւ հասել ուսման գագարին: Ապա առնելով Վարդապետական իշխանություն՝ եկավ լուսավորեց մեր աշխարհը, որ արհամարհված էր պարսիկներից եւ ցիրուցան եղած Արարի Երկրում, մեկը՝ Սպահանում, մեկը՝ Թաշանում ու Պարսից այլ Երկրներում: Եվ սա իր ծերության ժամանակ ծերբազատվեց մարմնի տկարությունից, գնաց Պարսկաստան՝ քարոզելու քրիստոնյաներին: Եվ շտկեց եկեղեցու բովանդակ կարգն

ու սահմանադրությունը: Եվ այնտեղ հովիվ ու վարդապետ նատեցրեց իր պատվական աշակերտներից մեկին՝ տեր Խաչատուր Կեսարացուն: Եվ ինքը վերադարձավ մեր Երկիր Երեւան, Անանիա առաքյալի սուլը ուխտ:

Ով Եղբայրներ, այս հոգելից ու ծշմարիտ ուսուցիչ տեր Մովսես Պարունապետը բազում մանուկներ առաջնորդեց փառքի մեջ: Եվ սրան աշակերտներին Ուստակես Վարդապետը, տեր Խրայելը, որ փոխադրվեց Քրիստոսի մոտ, տեր Խաչատուր Վարդապետը, տեր Փիլիպոս Վարդապետը, ծերունիներ՝ իմ քերին՝ Կարապետ Եպիսկոպոսը, տեր Մինասը՝ գիրս ընդորինակողը, տեր Հովսեփը, տեր Փիլիպոսը, տեր Պողոսը եւ մենք՝ մանկահասակ աշակերտներս, որ ուսում ենք ստացել սրա ոտքերի մոտ՝ տեր Յովհաննեսը, ես՝ Նվաստ Զաքարիա Եջմիածնեցիս, տեր Խաչատուրը, տեր Յակոբը, Առաքելը, որ խիստ տկար է մարմնով: Տեր Աստված թող թիկունքին հասնի, Եսայի սարկավագը, Զաքարիա լուսարարը եւ ջականակալ մանուկները՝ Ղուկասն ու Ղազարը, Խոհարար Կարապետը եւ սուլը ուխտի մյուս միաբանները, որ կանք տեր Մովսես սուլը Վարդապետի ոտքերի մոտ: Խնդրում ենք ամենաառատ Արարչից, որ պահել է ու պահի մեզ ի հաճոյս իր աստվածային կամքի. Ամեն: (*Տե՛ս Յայերեն ձեռագրերի ժեղարի հիշապակարաններ /1621-1640 թթ. / հր.*
Բ, Կազմեցին՝ Վազգեն Յակոբյան, Աշուր Յովհաննիսյան, Եր., 1978, էջ 175-176):

Գրիչ՝ Եսայի սարկավագ, Վայր՝ Երեւան

§ ...» Արդ, այս սուլը տառը գրվեց դառն ու մեղ ժամանակ, երբ փայլում էր քաջ ուսուցիչը՝ մեր տեր Մովսես Վարդապետը, Միսակի /Սյունյաց-Յ. թ. / աշխարհից, Անանիա Երկրից, Խոտանան գյուղից, Եվստարեի Արորից, որ այժմ կոչվում է Տաթեւ, որ լուսավորում է Հայկազյան ազգին: Եվ ժողովելով կրօնավորական դասեր՝ նորոգեց վաճքերն ու անապատները, կրկին հաստատելով պայծառացրեց: Եվ ապա բազում աշակերտներով գնաց Արարատյան գավառ, ուր տիրում էր ազգությամբ պարսիկ մի իշխան՝ Ամիրգումա անունով՝ քաջ եւ արի, պատերազմի մեջ հնուտ, այնպես, որ թուրքերը

սարսափում էին նրա ահից, ու նրա նմանը չկար: Թեպետ կրոնով այլահավատ էր, սակայն բարեպաշտ ու Երկյուղած, նաեւ՝ քրիստոնեաներ: Այնպես որ հանդիպելով այս սուլքին եւ խիստ հոժարությամբ ընդունելով, բազում սիրալիրություն ցույց տվեց նրան, եւ նրան մի տեղ տվեց, որ կոչվում է Անանիա առաքյալ՝ գեղեցիկ ու վայելու մի վայր այգեստաններում: Եվ այնտեղ գնալով այս Վարդապետը նորոգեց այն, բազում աշակերտներ, կրոնավորներ ու միայնակյացներ ժողովեց, կարգեց դպրոցներ, հաստատեց այլ բազում կարգեր ու պաշտամունքներ:

«...» Արդ, հասնենք խոսքիս ավարտին. գիրքս գրվեց Եսայի սարկավագի ձեռքով, Արարատյան Երկրում, Կոտայք գավառում, Երեւան մայրաքաղաքում, Անանիա կոչվող սուլը ուխտիս մեջ, քաջ ուսուցիչ Մովսեսի ոտքերի մոտ, որի ծառան եւ ողորմելի աշակերտներից մեկն իսկ եմ, Միսակի /Սյունյաց/ աշխարհից, Գուրիանու Երկրից, Կարճավան գյուղից «...»:

(*Տես Յայերեն ձեռագրերի ժեղարի հիշապակարաններ, էջ 177-179):*

Գրիչ՝ Ստեփանոս քահանա Վայր՝ Էջմիածին

Ժամանակ՝ 1655թ.

«...» Սակայն արդ, զանց չառնենք մնացյալն, այլ այժմ համառոտաբար վրայից անցնենք, համաձայն նախօրոք գրվածի:

Որովհետեւ գերազական պատճառը մեր Երանելի հայր

ու Եկեղեցու պայծառ ջահ, հայոց սրբազն հայրապետ մեծն Մովսեսը Եղավ, ով հետագայում Աստծուց առաջնորդված՝ սիրելով այս սուրբ Աքռօք, բազմա-չարչար աշխատությամբ, անտանելի չարչանքով, բացառապես ջանալով Յոգով՝ սկիզբը դրեց այդ գործի: Նախ շուրջ բոլորը մաքրեց դիմոված աղբից, որի մեջ թաղված էր /վաճրը/, ու ջրով ողողելով հարթակատակ, ողորկ գետին պատրաստեց եւ հետո պարսպեց, ինչը գլուխ բերեց հաջողությամբ, ինը թաց որի նաեւ երեք կողմերից շինություններ կառուցեց, Սուրբ Գրիգորի տաճարը մաքրեց թշունների զգելի ծերտերից, իբրեւ ավերակ Վայրերի անզարդություն, ինչպես ժամանակին մարգարեն Բաբելոնն էր ակնարկում ասելով՝ «Յուշկապարիկներն են բնակվելու նրա մեջ, ոզնիներն են ծագ հանելու նրա ապարանքներում» /Եսայի ԺԳ 21/՝ դադարեցնելով նրանց ճռվոյունը, որ խլացնում են մարդկանց ականջները, ու շինեց վանդակապատ պատուհաններ, վերստին սալապատեց նրա հատակը, ավելի եւս առաջ գնալով, քանդեց նրա գմբեթը, որ հիմքից խախտված էր, եւ ավելի բարձրը կանգնեցրեց, որի ավարտին ինքը փոխադրվեց իր անձևակի Քրիստոսի մոտ՝ հայրապետության Արորի վրա մնալով չորս տարի եւ նույնքան ամիս: Սա երեք անգամ գնաց Պարսից թագավորի մոտ ու նրա

առջեւ շնորհի արժանացավ, որով եւ Աքռօք ազատեց խստագոյն հարկերի ծանրությունից, որ անարդար առաջնորդների պատճառով Երկարյա շղթայի նման դրված էր նրա վրա: Սա Սյունյաց Երկրից էր, Աճանան գավառից, Խոտանան գյուղից: Սա լինելով պարզ բարոյականությամբ, ազատ մտածողությամբ, վայելչացած գեղեցիկ, փառազարդ դեմքով, միջահասակ, ներքին եւ արտաքին մարդով շնորհաշուր ճոխությամբ արտափայլալ /հմնտ. Բ Կորնթ. Դ 16/, որ նման էր պարթեւազին սուրբ Սահակի՝ համաձայն ամեն տեսակ բարեւունակ տեսության՝ ճոխացած բնական եւ իմացական գովաբանությամբ: Եվ այսպես ցանկալի լինելով աշխարհին ու փափագելի՝ բոլորին, վաթուն տարեկան հասակում փոխադրվում է դեպ անմահական կյանք: Եվ նրա պատվական մարմնն ամփոփվեց մի փոքրիկ բլիր վրա, որ նայում է Քրագդան գետի կողմն, իր սեփական կացարանի հարավային կողմում, ուր Անանիս առաջալի շիրիմն է, որ, իհրավի, կրոնավորների մենաստան՝ շրջափակված իր աշխատության արդյունքը [իհանդիսացող] պարսպով<....>:

1. տե՛ս Յայերեն Ծեռագրերի ժեղարի հիշատակարաններ /1641- 1660 թթ. I, հտ. Գ, կազմեց՝ Վազգեն Յակոբյան, Եր., 1984, էջ 648:

Խաչարուր Կեսարացի



§ առք եռանձնյա տիրությանը եւ միագոյ բնությանը Յոր եւ Որդիվո եւ Սուրբ Յոգուն, որ կարողություն տվեցին տառապյալ անձանցս հասնելու գործիս ավարտին: Միաժամանակ սուրբ եւ ամենաերջանիկ աստվածային մարդու՝ Տեր Սովուն կարողիկոսի վարժը նույնպես համառոտ ցանկանում ենք հայտնել:

Սա Սյունյաց Երկրից էր: Մանկությունից սրբաւեր եւ աղոթարար եւ պահեցող, հեզ եւ հանդարտ բարությամբ: Եվ մտերմացավ մեջ կարողիկոս Սրապիոնի հետ. Երկուսով աշխատեցին Աստվածաշնչի ընթերցման վրա: Կարողիկոսի մահվանից հետո իշխանություն եւ գավազան վերց-

րեց Գրիգոր Վարդապետ Կեսարացուց: Եվ իրեն շնորհված Աստծո հորդառատ վարդապետությամբ եւ բարի քաղաքավարությամբ լուսավորեց Յայկազյան ազգին եւ բազում ուղղություններով գործուներություն ծավալեց:

Նախ՝ իր նախորդների թուլության պատճառով խանգարված Եկեղեցական եղծված կարգերը վերստին ուղղեց:

Երկրորդ՝ բազմաթիվ տեղերում եղած անապատներում խարանազգաց ճգնավորներ կարգեց, տղամարդկանց առանձին եւ՝ կանանց: Այնտեղ հավաքվեցին՝ մի տեղ քսան եւ երեսուն, մի տեղ վարսուն եւ յորանասուն հոգի եւ ամրադար աղործում էին: Եվ ինքն էլ որպես հասարակության հայր ամենքի նկատմամբ խնամք էր տանում, լրացնելով նաեւ նրանց նարմնավոր կարիքները:

Երրորդ՝ ամենուրեք՝ շենքում եւ ավաններում, ամրիկ Եկեղեցիներ շինեց եւ քահանաներ կարգեց, որով քրիստոնեական հավատը ծաղկեց-պայծառացավ:

Չորրորդ՝ Սուրբ Էջմիածինը նորովի նորոգելով՝ զարդարեց եւ ամբվելի ծախսերով պայծառացրեց, որ տեսնողին հիացնում էր:

Քինգերորդ՝ ստանձնեց կաթողիկոսությունը եւ դիմեց պարսից արքային եւ անտանելի հարկը, որ նախորդ կաթողիկոսների մեղքով դրված էր Սուրբ Էջմիածինի վրա, բազում ջանքեր ներդնելով վերացրեց եւ հարկապահանջությունից ազատեց:

Վեցերորդ՝ ամեն տեղ դասատուներ եւ դպրոցներ կարգեց եւ լուսավորեց հայոց ազգին եւ նախորդը ցանկանում էր տպագրություն ստեղծել, որպեսզի գործիք առատության պայմաններում ավելի յոյւրին սովորեցնեին, սակայն չհասցրեց, քանի որ այս կյանքից հեռացավ...

Մնաց կաթողիկոս չորս տարի եւ չորս ամիս, եւ նրա հիշատակը օրինությամբ լինի... » (գրաբարից, «Յա Գիրքը 1512-1800 թվականներին», Եր., 1988թ., էջ 22ա):

ՎԱՎԵՐԱՎԳԻՐ 18

Սեֆյան Շահ Աբբաս Ա-ի 1627թ. հրովարտակը Մովսես վարդապետ խոտանանցուն էջմիածնի լուսարարապետ նշանակելու մասին

Թղթապանակ 1ա, վավերագիր N47, բնագիր,
մեջ. 56x18 սմ, գիր՝ շիքասքե

Նա է:

Իշխանությունն աստծունն է:

Շահ Աբբաս Ա-ի կնիքը

2 Իրայական իրաման եղավ այն մասին, որ զեկուցվեց, թե քրիստոնյա (Մովսես) վարդապետը Ուչքիլիսայում քրիստոնեական օրենքի համաձայն գրաղված է այդ (վանքի) բարգավաճնան եւ բարեկարգման գործով եւ կատարում է լուսարարության եւ հարակից այլ գործեր: Այս մասին նա սրբազն իրամանագիր խնդրեց, ուստի որոշեցինք, որ ոչ մի մարդ արարած, լինեն դրանք հարգարժան հաքիմներից, թե ուրիշներից, երբեք արգելք չհարուցեն եւ նեղություն չպատճառեն եւ ուշադիր լինեն նրա նկատմամբ:

Թող այս ընդունեն որպես խիստ կարգադրություն եւ, երբ հրովարտակս սրբազն կնիքով կնքվի, հավատան նրան:

Գրվեց 1036 թվականի ջումաթի առաջին ամսին (1627թ. հունվար 18-ինտրվար 16):

Մյուս էջում կան հետեւյալ մակագրությունները.

ա) Ջամաձայն բարձրապաստան նորին մեծության գրագիր, Խասսեյե-շարիֆեի քարտուղար (մաջլիսնվիս) Սիրզա Մուհամմադի գրության:

Չորս հաստատման կնիքներ

բ) Նա է: Ջամաձայն գերագույն իրամանի, թող իրամանագիր գրի առնեն:

գ) Նա է: Թող ստորագրեն:



Շահ Աբբաս 1-ին



Շահ Սաֆի

ՎԱՎԵՐԱՎԳԻՐ 19

Սեֆյան Շահ Սաֆիի 1629թ. հրովարտակը էջմիածնին տարեկան 100 թուման փիշքաշի պարտավորությունից ազատելու մասին:

Թղթապանակ 1ա. վավերագիր N49, պատճեն, մեջ. 52x20. 5 սմ, գիր՝ շիքասքե

Դրամատարբակ եւ բարձրագան Սեֆյան շահ Սաֆիի կնիքի տեղը, - թող աստված նրա հոգին լուսավորի:

*Ին բագավոր հայրը, - թող աստված նրա հոգին լուսավորի:

Աշխարհասաստ իրամանագիրս իրապարակվեց հետեւյալ մասին.

Զեկուցվեց, որ քրիստոնյա Մելքիսեթ (1) կարողիկոսը դրախտարնակ արքայի* օրոք ապօրինի կերպով Ուչքիլիսայի կաթողիկոսն է դարձել եւ ամթույլատրելի գործեր է թույլ տվել: Դրա համար էլ նրան ձերբակալել են ու բարձրագույն դուռը են բերել եւ,

թագավորական պատժից խուսափելու համար, նա հանձն է առել ամեն տարի 100 թավլիգի թուման որպես փիշքաշ վճարել եւ շարունակել գրաղվել կաթողիկոսական գործերով: Խև այդ գումարը դիվանի պաշտոնները հատկացրել են հաղթական գինվորներին որպես ռոճիկի թամիսա:

Օրերս ընտրյալ քրիստոնյա խոջա Նազարը զեկուցեց, որ վերոհիշյալ կաթողիկոսը փախել է Ուլումի (Թուրքիա) կողմերը եւ առանց իրամանագիրի ոչ ոք այդ տեղի հայերի կաթողիկոսությունը հանձն չի առնում: Նկատի ունենալով այն, որ Ուչքիլիսայի կաթողիկոսների փիշքաշը երբեք ընդունված չի եղել եւ որոշ մարդիք Մելքիսեթ կաթողիկոսի համուեա ունեցած թշնամության պատճառով են այդ գումարը նրա վզին դրել, խև այդ գումարի գանձումը պատճառ է դառնում ռայաբների ցրվելուն, միաժամանակ նա խնդրեց, որ այդ գումարը նորին մեծության կողմից

գեղչի եւ ներվի:

Ընդառաջելով նրա խնդրանքին՝ օձի տարվա սկզբից հիշյալ փիշքաշը գեղչված եւ ներված հայտարարեցինք: Մեծապատիվ մուսրովֆիները, Սելիքսեթ կարողիկոսի փիշքաշ արած 100 թունանը, որ հետո նրանք հատկացրել էին հաղթական զինվորներին որպես համեսալե, թող հիշյալ տարվա սկզբից իրենց մատյաններից դուրս բերեն եւ համեսալեդարներին ուրիշ բանով փոխարինեն:

Այդ նույն տարվա սկզբից Ուչքիլիսայի կարողիկոսությունը նվիրեցինք Մովսես վարդապետին, որին տեղի հայրերը ընդունել են եւ իրենց համաձայնությունն են հայտնել: Չուխուր-Սաադի հայ համայնքը, կրոնավորները, քահանաներն ու մյուս հոգեւորականները վերոհիշյալին թող ճանաչեն որպես իրենց կարողիկոսը եւ նրա խոսքից չշեղվեն:

Ովեր որ նախկին կարողիկոսի փիշքաշի գումարների դիմաց հանձնարարությունները ունեն, այդ պատճառով կարողիկոս Մովսես վարդապետին նեղություն չպատճառեն եւ նրա կողմից գանգատների տեղիք չտան: Թող նրանք, սկսած օձի տարվա սկզբից, իրենց համեսալեի փոխարենը դիվանի մարդկանցից պահանջեն: Տեղի բեկլարբեկը պարտավոր է հետեւել, որպեսզի որեւէ մեկը չփորձի ապօրինի կերպով հիշյալ կարողիկոսին անհանգստություն պատճառել, եւ թող ամեն դեպքում օգնի ու օժանդակի նրան:

Թող այս ընդունեն որպես խիստ կարգադրություն եւ, երբ հրովարտակը արեգակնային սրբազն կնիքով կնքվի, հավատան նրան:

Գրվեց 1038 թվականի գիհաջա ամսին (1629թ. հուլիս 22-օգոստոս 20):

Մյուս էջում հաջորդաբար կատարված են հետեւյալ մակագրությունները.

ա) Համաձայն բարձրագույն հրամանի եւ մեծ մուսրովֆիների մեագրությամբ: Թուղրա: Իմաստումների վեհագույնի կնիքի տեղը:

բ) Հաստատվեց սրբազնագույն կնիքով: Կնիքի տեղը:

գ) Հաստատվեց արքայական կնիքով: Կնիքի տեղը:

դ) Տեղեկաց սույն թվին: Կնիքի տեղը:

ե) Աչքի անցկացվեց: Նազիրի կնիքի տեղը:

զ) Ավարեց գրվեց: Մուսրովֆի-ով մամայիքի կնիքի տեղը:

է) Սարխաթի դավթարում արձանագրվեց:

ը) Դաֆրարդարի դարուղայի կնիքի տեղը:

թ) Գրի առնվեց: Սահիբ-թովշիի կնիքի տեղը:

ժ) Նա է: Սա բարձրագույն եւ սրբազնագույն իսկականի հետ ժիշտ է: Գրեց՝ կնիք:

ժա) Սա սրբազնագույն իսկականի համապատասխան է: Գրեց՝ երկու կնիքներ:

Ծանոթագրություններ

Վավերագիր 18

Յրովարտակը պահպանվել է բնագրով, նորոգված եւ փակցված է սպիտակ կտավի վրա: Նորոգությունը կատարված է ոչ ուշ, քան մը դարձ: Խևկ կտավի վրա Միմեն կարողիկոսի օրոք կատարված են հետեւյալ մակագրությունները.

1. «Ե. Մովսես կարողիկոսի լուսարարութեան ռադամն է, զոր մեծ ծահարասն է տուեալ ի թոլին տածկաց ՌԼՀ»:

2. «Ծահի ամրն է չուազութեան»:

3. «Անօգուս»:

Վերջին մակագրությամբ Ս. Երեւանցին ցանկացել է նշել, որ սույն հրովարտակը էջմիածնի վանքի կալվածատիրության եւ մուաֆության իրավունքների հաստատման եւ ապացուցման համար որեւէ արժեք չի ներկայացնում:

Առաջին մակագրությունը, որով տրված է հրովարտակի համառոտ անոտացիան, քիչ այլ խմբագրությամբ գտնում ենք նաեւ «Զամբռ»-ում (էջ 211):

Դարանաղցին եւ Դավիթեցին միաբերան վկայում են, որ Մովսես վարդապետ Խոտանանցին մոն սպիտակեցնելու արհեստի շնորհիվ կարողացել է ձեռք բերել Ծահ Արքասի համակրանքը. եւ Խոջա Նազարի միջնորդությամբ շահը նրան է շնորհել էջմիածնի վանքի լուսարարության պաշտոնը (Դարանաղցի, էջ 292-295, Դավիթեցի, էջ 233-234):

Դարանաղցին նեց է բերում նաեւ սույն հրովարտակի «Քարգմանությունը», աղավաղելով բնագիրը եւ չափազանցնելով Մովսես վարդապետին շնորհված իրավունքները: Դամովզելու համար, թե որքան պետք է գգույց լինել նման «Քարգմանությունները» կամ «պատճենները» որպես հավաստի վավերագիր եւ ստույգ սկզբանաբրյուր ընդունելուց, քավական է համեմատել սույն հրովարտակի հրատարակվող բնագիրը Դարանաղցու ժամանակագրության հետեւյալ հատվածի հետ.


«Յայնժամ ետուր նմա հրովարտակս, - գրում է Դարանաղցին, - կնքեալ մատանեաւ եւ հրաման եւ պատուէրս սաստկագինս եթէ՝ ոչ ընդունողացն զիրամանս իմ այսպիսի պատժոց արժան կառնեմ: Եւ պատժեն հրովարտակին էր այս՝ եթէ «Ես Ծահ Յապազ ետու գիր հրամանաց Մուսայ խալիֆին, որ երթայ նստի իմով հրամանաւ յուչքիլիսայն: Եթէ՝ անդ ով որ իցեն, ի մեծաց կամ ի փոքունց, մի իշխեսցն հրամանաց դրա կալ հակառակ կամ տալ պատասխանի, այլ զինչ եւ կամնեսի արասցէ ըստ կրօնից օրինաց իրենաց, եւ որքան կարասցէ՝ զիսխատեալ եկեղեցին վերստին նորոգեսցէ եւ նոր եկեղեցի այլ իհմնարկեսցէ եւ շինեսցէ՝ որքան կարասցէ, եւ նի յազգաց մերոց կամ ի պարսկականացն հակառակ կայցեն, եւ խափանել ջանայցեն, որպես զագգն թուրթաց. եւ թէ ոչ որ յանդիմութիւն արասցեն եւ հակառակեսին հրամանաց իմոց եւ ոչ կամնեսին լսել ինձ օն եւ օն արասցէ Տիր եւ օն եւ օն յաւելցի, եթէ զայնպիսի ոչ բնացինջ եւ ազգացինջ ոչ առնցեմ եւ կորուսանիցեն զյշատակս նոցա յերկու» (էջ 294-295):

Վավերագիր 19

Սեֆյան Ծահ Սաֆիի առաջին հրովարտակներից է: Ծահ Սաֆին գահ բարձրացավ Ծահ Արքասի մահից 10 օր հետո 1629թ. հունվարի 29-ին (ԶթԱԱ, էջ 7):

Այս հրովարտակի բնագիրը անհետացել է հավանաբար ժե դարուն: Պատճենը հանված է նույն դարի 30-40-ական թվականներին. հաստատման կնիքներից մեկի վրա կարդացվում է իհջրեթի 1047 թվականը (1637-1638թ.): Սիմեոն Երեւանցին նույն այս հրովարտակի մասին գրում է.

«Ծահ Սեֆյու ռադամի սաւատն է, բայց հաստատուն կնքով, յորում Ծահ-Սէֆին զիարիւր թուման մուշաթէն բառնայ ի սուրբ Արքուոյս ըստ արզայի Մովսես



ԹԱԿՆԱԿ ՄՈՒՋԱՄԻ ՎԱՐՈՂԱԲՈՒՄ ԱՅ ՎԱԼՏԻՎԱԿԻ ԹԱԿՆԱԿ

կաթոլիկոսին, որ էր հաստատեցեալ ի մեծ Ծահ-Ապասէն, ի ժամանակս Սելջիսէր կաթոլիկոսին: Որ գրի ի տաճկաց ՈԼԸ թուին» («Զամբռ», էջ 211, հմնտ. էջ 104 եւ 130):

Այլ կապակցությամբ նորից նշում է, որ այդ հրովարտակի բնագիրը չի գտել. «Բայց ռադամս այս ոչ տեսար մեք՝ այլ զսուրաքն», - գրում է նա (էջ 130):

Կավերագրի մյուս էջի հայերեն համառոտ անոտացիաները եւս կատարված են Ս. Երեւանցուց առաջ: Վերջինս միայն նշել է վավերագրի համարը՝ Զ (6): Այդ անոտացիաները երկուսն են.

1. «Զ. Ծահի հուքմի սաւատն ա, որ Մովսէս կաթողիկոսն Ճ (100) թուման վեր էկալ Էջմիածնա»:
2. «Նարիկ թուման մոլխարայէն, զոր Ծահարասն առաջին եղեալ է ի վերայ Սելջիսէր կաթոլիկոսին Մօվսէս կաթոլիկոսն արզ է արարեալ Ծահսէֆուն եւ զայս ռադամս առեալ, որ այլ մի ես տացէ սուրբ Աթոռու զՃ (100) թուման: Ի թոփին տաճկաց ՈԼԸ»:

Առաքել Դավիթիցու «Պատմության» ի գիտում համառոտակի նկարագրված են սույն հրովարտակում իշշված դեպքերը, առանց սակայն որոշակի ժամանակագրության: Ըստ Դավիթիցու Խոջա Նազարի հրավերով Սպահան է գնում նաեւ Մովսէս վարդապետ Խոտանանցին, որ այդ ժամանակ Էջմիածնի լուսարարապետն էր (Վավ. 18) եւ «միջնորդութեամբ խօջայ Նազարիս բազում գանձս ծախեալ եւ յոգնակի աշխատութիւնս կրեալ, հազի թե կարացին բարնալ զիարիւր թուման մուշադայն, որ ծանր բեռն անկաւ ի վերայ կաթոլիկոսարամին, զի Ծահսէֆին հրամայեաց եւ գիր ետ թէ՝ անցայ ի հարիւր թուման մուշադայէն» (էջ 239):

Այնուհետեւ Դավիթիցին նշում է, որ այս հրամանը ստանալուց հետո հայերը խնդրում են նաեւ Էջմիածնի կաթողիկոս նշանակել Մովսէս վարդապետին եւ այդ մասին եւս ստանում են հաստուկ հրովարտակ: Սակայն, ինչպես տեսնում ենք, նոյն այս հրովարտակով նորընծա շահը, ազատելով վաճքին հարյուր թուման միանվագ փիշքաշի պարտավորությունից, միաժամանակ Մովսէս վարդապետին նշանակում է Էջմիածնի կաթողիկոս:

Յրովարտակի այդ հատվածից այն տպավորությունն է ստացվում, որ նախօրոք արդեն հայերը նրան ընտրել էին որպես իրենց գերազույն հոգեւոր պետ՝ կաթողիկոս եւ հետո միայն շահն իր հրովարտակով հաստատում է նրան այդ պաշտոնում: Մինչդեռ Դավիթիցին այդ մասին գրում է, թե երբ «շահն ետ զիրաման եւ թուրք կաթոլիկոսութեան Մովսէս վարդապետին, ապա ամենայն ազգն Յայոց, որը յարեւելս եւ յարեւմուտս կային՝ միաբանեցան թքով եւ բանիւ եւ արարին զՄովսէս վարդապետն կաթուղիկոս, եւ հաստատեցին ի սուրբ Աթոռն Էջմիածն» (էջ 239):

Ինչպես վերը շեշտեցինք, Դավիթիցին այս դեպքերը նկարագրելիս որոշակի թվականներ չի նշում, մինչդեռ այս եւ N 12 վավերագրերի շնորհիվ հինարավոր է լինում պարզել, որ Էջմիածնի վանքի հարյուր թուման «փիշքաշը» կամ «մուշադամ» հաստատվել է 1617 թ. մայիսին եւ վերացել 1629 թ. օգոստոսին:

**Մատենադարանի պարսկերեն հրովարտակները
Երեւան, 1959թ.**

Մովսէս Գ կաթողիկոսի նամակը Ուրբանոս Շ պապին⁽¹⁾

Օ կեղեցու վերատեսուց եւ ընդհանուրի դիտապետ հովիվ...հաջո՞րդ...եւ փոխանորդ հավատի անխախտելի վեն սուրբ Պետրոսի, Տիեզերական ...հայրապետ եւ պարծանք բոլոր քրիստոնյաների, Յոհոն քաղաքի Տիեզերական պապ եւ պատրիարք, տեր Ուրբանոս Ուրերորդ, ընտրեալ եւ սուրբ քահանա/այապետ: Եվ ես ծա/ռա Քրիստոսի Մովսէս կաթողիկոս Ամենայն Յայոց, տեղապահ եւ սպասավոր...մատուցուածնակ եւ երկնանամ այս սուրբ տաճարի, Եկեղեցու բոլոր հավատացյալների հետ միասին հեռվից իրեւել մոտիկից գետնանած ծնրադրումով խոնարհվելով Երկրագում ենք առաջանարի գլխի՝ սուրբ Պետրոսի եւ (Պողոսի) աստվածադիր նշխարներին առաքելական սուրբ Աթոռիդ մեջ: Այլև Յիսուսավանդ ողջույն եւ սուրբ համբույր ենք (մատուցում) ...մեծությանդ իբրեւ պաշտոնակցի ու գործակից հոգեւոր հոր եւ եղբոր...քո հաջորդներին խոնարհությամբ...սիրո ողջույն ենք մատուցում: (Խնդրում ենք՝) ամենախնամ Յայոր Աստծուց եւ մեր Փոքից՝ Յիսուս Քրիստոսից եւ կենարա/ Սուրբ Յոգուց, որպեսզի ծեզ շնորհի խաղաղությամբ եւ առողջությամբ վարելու հոգեւոր իշխանությունն ի շինություն (Եկեղեցու եւ) ի փառս, ի գովություն իր անվան եւ ի պարծանք բոլոր քրիստոնյաների. ամեն....:

Ողջույնիս (այս խոսքը՝) թող հայտնի լինի քո սրբությանը, սուրբ Պապ եւ պատրիարք... բազմապատիկ Վշտերի ու նեղության մեջ գտնվելով ազգս Յայոց՝ այլահավատ ազգերի մեջ...ովքեր առյուծների նման հոշոտում են մեր կյանքը, Յայոց աշխարհին ավերման, ալեկոնության.../ եւ անտերության պատճառով: Մանավանդ թագավորների եւ իշխանների անհավատության եւ անաստվածության (պատճառով)՝ ովքեր արեւելյան նահանգներում խոցված ու վիրավորված են մարդակեր գազաններից՝ զրկելով ու մերկանալով հայրենիքից, բնակարաններից, տներից, ապարանքներից, այգիներից, բուրաստաններից, ազգականներից, ընտանիքներից, սիրելիներից եւ բարեկամներից...եւ հյուսիսի օտար կողմեր գնացածները, ոճանք Պարսկաստանի խորեւը... ոմանք շրջվելով դեպի արեւելք, իսկ ոճանք՝ դեպի

արեւմուտք (...) ...դեպ Պոնտոս, Կոստանդնուպոլիս, Կիպրոս, նաեւ՝ ասորիների Միջագետը հանուն քրիստոնեական հավատի...հասնելով իրեւ օտարական, պանդուխտ եւ ստրուկ մեր մեղքերի, հանցանքների պատճառով՝ ներկայում լինելով այնպէս, ինչպէս ժամանակին տեսնվում էր Խորայելացիների մեջ: Սակայն ողորմած Աստված բավարարվելով եւ բավական համարելով միայն տարագիր լինելը եւ մնացալը...հատուցելով... շնորհեց, եւ գութ ու գրություն դրեց թագավորների, իշխանների ու տեղակալների, այլազգի ... հրամանատարների սրտերում, ըստ մարգարեի, որ ասում է. «Գութ տուր նրանց գերեվարողներին, գթա նրանց» (2): Եվ մինչեւ օրս գտնվում են ի ներք նրանց տերության՝ Աստծո խնամքի ներքո պահելով իրենց հավատը եւ քրիստոնեությունը: Քանզի Միամին Բանը չանտեսեց աշխատանքը, արյունն ու քրտինքը իր ծառայի եւ մեծ նահա/տակի/ ու Յայոց Լուսավորչի, որ այս նահանգի բոլոր դաշտերն ու վայրերն իր արյամբ ռոռգեց... տասներեք տարի անտառելի չարչարանքներով բնակվելով բունավորների մեջ, ինչպէս որ հայտնի է անքավ ինաս/տուրյանը...: Իսկ մեր ազգի շատերից քչերը մազապուրծ մտան Զեր /իշխանության եւ արքայի/ (3) տեսչության հիվանու ներքո Լեհաստանի Կիհմ, Լվով եւ Կամենից քաղաքներում եւ այլ տեղերում.../ իրեւ ավանդ գգուշաբար դադարելով պատվական վայրերի պատիկ վայելեցին իշխաններից եւ քո սուրբ խնամքից մինչեւ այսօր:

Եվ մենք լսելով նրանց ապահովության ու շնորհի մասին... գոհանում ենք բարերար ու մարդասեր Աստծուց, եւ փառք, աղոթք եւ երկրպագություն ենք մատուցում նրան Զեր թագավորության համար ու միշտ խնդրանք ենք առաքում առ Աստված, որ ամեն ժամ.../ պատրաստ Ե՞՞ / հոգ տանել մեզ վրա: Նաեւ համբերատար լինելով, ու, համաձայն առաջալի սպասելով մեծ հույսին, որպեսզի Աստծոն (օգմությամբ) գերյալներս, որ այստեղ ենք, սպասենք մինչեւ կատարվի: Իսկ այս ժամանակի մեզ լինելով... (վերատեսուչ) կարգվեցինք մեր եկեղեցիների վրա, որով կոչվեցինք հովիվ ցաքուցրիվ ու տարութերվող Յայոց ազգիս, եւ Զեր սուրբ աղոթքով ու Տիրոց հրավերով (ընդունեցինք) կաթողիկոսության պատիկը, համաձայն առաջալի, որ ասում է. Ոչ թե նա է պատիկ ընդունում, ով ընծայում է իր անձը, այլ Աստծուց կոչվածը (4), որով եւ իսկույն Աստծոն քաղցր բարերարության նշանը երեւաց, որովհետեւ քաղցրացրեց թագավորների, իշխանների եւ դատավորների սիրտը մեզ ու մեր սուրբ եկեղեցու վրա՝ ... հրաման տալով... կառուցելու ու վերանորոգելու համար, ինչը եւ եղավ Զեր սուրբ աղոթքների մայթանքներով, ու շինեցինք երեք հարյուր կամ չորս հարյուր եկեղեցի, եւ նորոգվեց մեծ եւ սուրբ եկեղեցին, որ կառուցված էր Տրդատի ու մեր Գրիգոր Լուսավորչի կողմից: Նաեւ ես կամենալով տեսնել հեռացած ոչխարներին (5)... եւ առաքեցի, որպեսզի հայտնի լինեն, թե ուր են, ու սուրբ մյուլոնով մեկ միա/բանության գան. խոսքը / նրանց մասին է, ովքեր Զեր նահանգում են եւ Զեր սուրբ իշխանության ներքո ... մի (Վարդապետի), որի անունը Խաչատուր էր (6): Եվ նա հանուն այն սիրո, որ տաշում էր քրիստոնյաների հանդեպ, հոժար կամքով... մտնելով ծառայության լջի տակ,

որ դրեցինք նրա պարանոցին, նաեւ հանուն սիրո եւ ծառայության... (գործում է՞՞) ըստ իր կարողութեան՝ քո առաքվածներից ակնկալելով, որպեսզի Զեր կողմից եւս ընդունվի նա: Եւնելով ճանապարհվելով հասնում, մտնում է Լեհաց աշխարհի աթոռանիստ քաղաքը, որ կոչվում է Լվով՝ ճանապարհին կրելով բազում ... դժվարություններ եւ վիշտ, համաձայն առաջալի, «վիշտ ծովից, ցանաքից, ընկերներից, ավազակներից» (7): ... առաջալի ասածից ավելի: Սակայն չհուսահատվելով մինել Զեր աստվածաշտուրյանը... քրիստոնյաներից ու քրիստոնեականներից Քրիստոսի նման թող մեծարվի: Եվ այնտեղ եւս չկարողացավ հանգստանալ ճանապարհի նեղություններից, եւ ավելին կրեց, ինչի մասին չեմ կարող գրել, որին... վշտերին... իրեն եւ հատուցողների երախտիքը: Որովհետեւ մերունցից Նիկոլ անունով մի եախսկապոս լինելով անարժան (Եկեղեցակամ) ոչ թե ընտրությամբ, այլ սիմոնական կաշառքով է ընդունել եախսկապությունը (8): Եվ անառակ գործերի պատճառով (հանդիմանվել է՞) մեր ենթականներից եւ արոռակալներից: Իսկ նա համառելով նոյն գործերում, չգալով դեպ զղում եւ բարի վարք, անառակ ընթացքի պատճառով արժանի չեղավ մեր օրինությանը, այլ՝ մեծասաստ բանադրանքի եւ անեծքի, որ ընդունեց իսկ մեր կողմից: Որովհետեւ բազմիցս նրան կոչ արեցինք, բայց այդ նրան չսաստեց: Իսկ լեհերի մեջ ... արձակվելով ու չհասնելով վերն ասված բաներին՝ այդ բանադրվածը գնաց ճիզվիս կոչվածների մոտ, որոնց դարձնելով իրեն համախոհ, ասում է, թե քանի հայ որ կա այստեղ, պետք է կաթոլիկ դարձնենք (9): Եվ նրանք հարձակվելով սկավարթիվ ոչխարների վրա՝ դատաստանի (Ենթարկեցին նրանց): Ոմանց բանու է (նետում), ոմանց պես-պես վիշտեր ու նեղություններ է պատճառում... հավատացյաների ծեռքից խլում եկեղեցին, չեն մկրտում նորածին երեխաններին, չեն կատարում եկեղեցու յոր խորհուրդները... բազում մարդիկ աղաղակով հեռացան... նրանցից շատերը փախչելով, տարագրվելով ցիրուցան եղան ամեն տեղ: Եվ մենք (օրավու՞՞) լսելով այս աղետի մասին՝ կակիծ, տրտոնություն ու շատ նեղություն ունեցանք պետիկ, քան այլահավատների պատճառով եղած... տառապանքները: Նրանց դեսպանները մեզ հասան գրված նամակներով ու բողոք բարձրացրին եւ մեծապէս ողբացին: Ինչը տեսնելով, իրեւ Յովիկ հարկ եղավ մեզ եր անձը դնել հանուն ոչխարների ... եւ խնդրում, աղաչում ենք, հայցում եւ պաղատում ենք, որ այսպիսի բաներ չինեն մեզանում... ու (նոր ցավեր չափանամ) մեր խոցերի վրա:

Գիտենք, որ Զեր սրբությունը այսպիսի բաներ չի կամենում, քանզի ծեր իմաստությունը... հեզ եւ խաղաղարար է, ողորմած է ու բարի պտուղներով (լիալիր), ըստ առաջալի հրամանի (10): ... եւ քո սուրբ կամքով, որպեսզի ուղիղ դատես այն դատապարտվածին: Քանզի այլահավատներից... ու նրանց համարելով ոչ քրիստոնյա, (այդուհանդերձ հորդորում ես) սիրել նրանց իրեւ յուրայինի, ըստ տերունական խոսքի, (որ պատվիրում է սիրել) ընկերներին իրեւ մեր անձեր եւ օգնական լինել տկարներին, չքարոզել մեր անձերը, այլ՝ Քրիստոսին... որովհետեւ

մենք նրա արյան գինն ենք ու նրա նարմնի անդամները, համաձայն առաջալի, որ ասում է Կորնթացիներին (հղած նամակում). «Ինչպես մարմնիր բազում անդամներ ունի ու մարմնի բազում անդամները մեկ մարմնին են» (11) նույնպես եւ Թրիստոս, քանզի նույն հիգով ... մկրտվեցինք. թե՛ հրեաները, թե՛ հեթանոսները, թե՛ ծառաները, թե՛ ազատները եւ մյուսները: Եվ թե՝ «մարմնը մեկ /անդամ չէ, այլ՝ բազում: Եթե՛ ոտքն ասի՝ քանի որ ձեռք չեմ, այդ մարմնից չեմ/, դրանով չի դադարում նույն մարմնից լինելուց/: Եվ եթե ականջն ասի՝ քանի որ աչք չեմ, այդ մարմնից չեմ, (դրանով չի դադարում նույն մարմնից լինելուց), եթե ամբողջ մարմնը աչք լիներ, ու՞՞ կմնար ականջը, եւ եթե ամբողջ մարմնը ականջ լիներ, ու՞՞ կմնար հոտոտելիքը: «Բայց արդ, Աստված դրեց անդյամները, նրանցից ամեն մեկը մարմնի մեջ ինչպես որ կամեցավ» (12): Իսկ եթե ամբողջը մի մարմնին լիներ... Քրիստոսի մարմնն է, ըստ առաջալի, ինչպես ասում է Կողոսացիներին (հղած նամակում). «Եվ լուացնում են իմ մարմնի մեջ Քրիստոսի նեղությունների պակասը իր մարմնի համար, որ եկեղեցին է» (13): Ինչի մասին նույն առաջալն ասում է. Մի է Քրիստոսի եկեղեցին, եւ մի է եկեղեցին... եւ մենք Քրիստոսի մեկ անդամն ենք: «Եվ եթե մարմնի մի որեւէ անդամ ցավ է գգում, ցավ են զգում բոլոր անդամները... եւ եթե ոտքը կամ անդամներից մեկը ցավում է՝ գլուխն իր բարձրությամբ խոնարհվում է ու կարեկից է լինում շոշափելիքներով մինչեւ որ պապիկնում է տկարացած անդամը, քանզի անդամներն իրար հակառակ չեն, եւ գլուխը ձեռքերին չի ասում, կամ ոտքերը, թե ինձ պետք չեք, այլ անդամներից յուրաքանչյուրն իր գործն ունի... իրարով, եւ մի մարմնին են, եւ ոչ թե մի անդամ ու մի շինվածք՝ կցված գլխին ի փառս Քրիստոս Աստծոն: Այլ է ձեր լեզուն եւ գիրը, այլ է նաեւ մերը, այլ է ձեր արարողությունը, այլ է նաեւ մերը, սակայն «մեկ է Տերը, մեկ է հավատը, մեկ է մկրտությունը եւ (եւ մեկ Աստված, Յայր բոլորի, որ է բոլորի վրա, բոլորի հետ եւ մեր բոլորի մեջ» (14)), ինչպես գրում է սուրբ Պողոսը Եփեսացիներին: Այս պատճառով (հարազատո՞ւ) համարեք եւ մի ատեք որբերին, այրիներին, պանդուխտներին, օտարականներին, ինչպես պատվիրեց... ասելով. «Պանդուխտին, որբին, այրուն մի բռնադատեք» (15), ու նրանք բողոք բարձրացնելով աղաղակելու են ինձ, եւ ես լսելով լսելու են նրանց: Այս պատճառով «տեսեք որքի դատաստանը եւ արդար դատեք այրուն» (16), որովհետեւ բազում եւ անհմաստ գործերը կանցնեն, ինչը վայել չէ Զեր ամենինստ աստվածակրությանը: Քանզի Զեր մեջությունը բարեկամ ու սիրելի է մեզ. (սակայն) ոչ միայն բարեկամ, այլեւ Քրիստոսի պատվական արյամբ է հաստատված, ինչը եւ ես բարեխոս ունեմ քո սրբության առջեւ՝ նահատակների վարդանան արյունը, ճգնավորների սառնորակ արտասուքը, սուրբ հայրապետների՝ Սեղեստրոսի ու մեր Գրիգոր Լուսավորչի դաշինքը, նաեւ Փրկչի պատվական արյան գավարն ամբողջապես, որով կնքեց դաշինքը. այս ամենը բարեխոս դարձնելով... թերանքսիվայր աղաչում եմ քո սրբության առջեւ, հոգեւոր հայր, որ Քրիստոսի փոխանորդն ես, որբիս դատաստանը տես, աղքատիս իրավունքը

պաշտպանիր, աղաչում եմ քո սրբությանը, որպեսզի ինձ ամորով ես չուղարկես, այլ ունկնդիր եղիր իմ աղաչանքներին ու թիկունքից օգնության հասիր տարակուսածիս, որ թեզ (աղաչանքներ)՝ հղելս հաճախորեն նամակ գրես թագավորին, որպեսզի նրանց եկեղեցին եւս դարձի թերես օրինությամբ, ինչպես որ նրա նախնիներն ու ինքը պահում էին մինչեւ այժմ: Գիտեն, որ ինչ է որ իրամայես, թագավորը կատարի քո խնդրանքը, քանզի նրանք ապատամք չեն ընդդեմ քո սրբության...: Որովհետեւ լսեցինք, թե այս աղետալի ու վշտալից բաները, որ նրանք գործեցին մեր պանդուխտ ժողովոյի հանդեպ, Զերդ սրբությունն այս դեպքերին երեք իրազեկ չի եղել: Ի՞նչ օգուտ ունի ֆոռանկ դառնալը. դա ոչ կավելացնի, ոչ էլ կպակասեցնի. միայն մեր մեջ տրտմություն եւ խռովություն չլինի: Թեպես մեր մեջդերը բազում են, սակայն հավատով Ընդհանրական եկեղեցուն ենք, ու նզովում ենք բոլոր հերձվածողներին՝ Արիոսին, Մակեդոնին, Նեստորին, Եվփիթեսականներին ու բոլոր նրանց նմաններին: Որովհետեւ մեր կողմերում եւս ազգությամբ հայ եւ դավանությամբ ֆոռանկ շատ քրիստոնյաներ կան, մենք նրանց չենք (Անեացնում), այլ իբրեւ եղբայր ենք ընդդեմում եւ մեծարում. ոչ թե միայն նրանց, այլեւ եկող մեծավորներին... ինչքան մեր կարողությունն է, պատիվ ու մեծարանք ենք տալիս համուն Քրիստոսի սիրո: Եվ մեր ժողովոյի (զավակներին), որ ձեզ (մոտ են) ու վաճառականներին, կամ ուխտավորներին, որ հանդիպում են այդտեղ, խնդրում են, որ մարդասիրապես ընդունես եւ վիրավորվածներին վերստին հաստատես ի փառս Քրիստոսի եւ ի պատիվ նրա անվան մեծ փառքի: Որի պատճառով թախանձագին դիմում ենք քո սրբությանդ, հայր հոգեւոր, իբրեւ ավագ եղբարոր, որպեսզի քաղցրությամբ եւ գրությամբ ընդունես ու խոնարհվես վեհափառ մեջությունիցդ ու (լսես) մեր (աղաչանքները), որպեսզի չլինի թե մեր շուրջը եղած անօրենները լսեն այդ լուրը ու հարձակվեն (մեզ վրա)... որ գործեցին ժամանակին: Այս պատճառով աղաչում ենք կրկին եւ երեքին անգամ (որ ունկնդիր լինես)՝ իմ աղաչանքներին ու պատճառ չլինես Լուսավորչի փոքր ազգի կորստոյան... որովհետեւ նրանք չար գավանի պես հարատեւրեն կրծուում են իրենց ատամները մեզ վրա ու [փնտում են] կուտալ մեզ, ինչպես ասում է առաջալը, թե՝ «Զեր սոսի՞ սատանան այոլիծի պես նոնչում է ու փնտում է, թե ու՞մ կուլ տա» (17): Աղաչում եմ թեզ, որպեսզի ոչ մի բանով պատճառ չտաք գայթակորության, որպեսզի մեկը ... չգլուրի, այլ ձեռք մեկնեք եւ օգնական եղեք, որպեսզի փրկվեն եւ օրինեն Տիրոջը ու (փառք) մատուցեն նրան: Այսուհետեւ Քրիստոսի խաղաղությունը բոլոր հաստատվի ձեր մեջ ու ձեր սրբափայլ [աղոյ] քը բոլոր լինի մեր նվաստության հետ. ամեն:

Գրվես Սուրբ Էջմիածնում ՈՉՍ թվականին, Օգոստոս անսի ԺԹ-ին (1632 օգոստոս 19):

Ես՝ Սովուս Կարողիկոս գրեցի իմ ձեռքով:

Թող այս գիրը հասնի մեծ նայրաքաղաք Յում,

ու ձեռքը տրվի հոգեւոր ավագագույն եղբարոր՝ տիեզերական

եւ հոչակավոր սուրբ հայրապետին՝ Տիրոջ Տեր

Ուրբանոս Ութերորդին, բոլոր ֆոռաների ի բարին. ամեն:

1. Այս նամակի բնագիրը մեծապես վնասված է. անընթեռնելի հատվածները ներկայացված են բազմակետով, ենթադրաբար վերականգնված են որոշ բառեր, արտահայտություններ (թրգմ.):
2. տե՛ս Գ Թագ. Ը 50:
3. արքա-երրայերեն՝ Յայր
4. տե՛ս Բ Կորնթ. Ժ 18:
5. ոչխարներին, այսինքն՝ բանավոր հոտի անդամներին:
6. Խոսքը Խաչատուր Կեսարացի վարդապետի մասին է, ով կաթողիկոսի կողմից առարվել էր Լեհաստան՝ սանձելով համար Նիկոլ Թորոսովիչի (տես) կաթողիկոսական հրահանգներն անտեսող բահած ընթացքը, ի հետեւանս որի «Նիկոլ Եպիսկոպոսն Լեհու արար գրաւանութիւն»։ տե՛ս Օրմանեան, Ազգապատում, Խո. Բ, պարք. 1661։
7. տե՛ս Բ Կորնթ. Ժ 26:
8. Խոսքը Նիկոլ Թորոսովիչի (Թորոսյան) մասին է, որը հայտնի էր իր անփառունակ գործունեությամբ. հակառակ Մովսես կաթողիկոսի գգուշացումների ու բանադրանքի (1629թ.), միջոցների մեջ խտրություն չդնելով, ոտնահարելով ազգային Եկեղեցու բազմադարյա ավանդները՝ նա փորձում էր հիսուսյան միաբանության օգնությամբ դավանափոխ անել լեհահայերին. նրա գործունեության վերաբերյալ

տե՛ս Առաքել Դավիթիթեցի, պատմություն, թարգմանությունը, առաջարանը եւ ծանոթագրությունները Վարագ Առաքելյանի, Եր., 1988, էջ 285-306, Օրմանեան, Ազգապատում, Խո. Բ, պարք. 1660-1662։

9. Առաքել Դավիթիթեցին այս փաստը վկայելով գրում է. Նիկոլ Եպիսկոպոսը «գնաց Փոանկների մոտ, որոնք Լվով քաղաքում են, մանավանդ նրանց մոտ, որոնք ծիզվինների կարգին են պատկանում, միաբանվեց նրանց հետ եւ անլուծելի ստորագրություն տվեց, թե՝ «Ես հայոց Նիկողայոս Եպիսկոպոսս իմ կամքով միաբանվեցի Յոռմի Եկեղեցու հետ եւ մտա պապի հնագանդության ներքո իմ բոլոր հետեւորդներով կատարելու նրա բոլոր հրամանները»։ Առաքել Դավիթիթեցի, Պատմություն, էջ 294-295։
10. հմմտ Յակոբոս Գ 17:
11. Ա Կորնթ. Ժ 20:
12. Ա Կորնթ. Ժ 14-18:
13. Կողոս. Ա 24:
14. Եփես. Դ 5:
15. Երեմ. Ի Բ 3:
16. Սաղմ. Զ Ա 3:
17. Ա Պետրոս Ե 8:

**Արեւելահայերենի Վերածեց, ծանոթագրեց
Յակոբ Քյոսեյանը
«Սյունյաց Երկրի» պատվերով**



Սովոր Գ կաթողիկոսի, Խաչատուր Եպիսկոպոս Կեսարացու Եւ Արիստակես Վա- րդապետի առ Ու- րբանոս Ը պաա (2)

տեսուչ, որսողի (4) որոգայթից ճանապարհի անցորդներին գգուշացնող եւ հավատարիմ հազարապետ Աստծոն խորագույն (Խոսքերի), ծառայակիցներին (պատշաճ) ժամին կերակուր բաշխող եւ հոգեւոր հովիկ՝ քաջ Յովվապետից՝ Քրիստոսից կարգված այս բանավոր հոտի վրա, համաձայն այն խոսքի. «Եթե ինձ սիրում ես՝ արածիր իմ գառներն ու ոչխարներո» (5): Յավատարիմ վեմ սուրբ Պետրոս առաքյալի փոխանորդ եւ արքունակալ, Յոռմի Երիցս երանեալ մեծ հայրապետ Ուրբանոս Ութերորդ եւ յոթանասուներկու փառապանձ կարդինալներ։

Չեր նվաստ ու տառապած որդիները եւ Աստծոն ծառայիդ ծառաները՝ Մեծ Յայքի ու Փոքր Սյունիքի Մովսես արքեպիսկոպոսը, սրա համախոհ Խաչատուր Եպիսկոպոսը եւ Արիստակես Վարդապետը մեր աշակերտների հետ միասին եւ մեր համախոհ Եղբայրները, հեռվից իբրեւ մոտիկից հոգեւոր սիրով աստվածային սրբարար ողջունա եւ հոգեւոր համրույր ենք մատուցում (Զեզ) իբրեւ գլխի եւ Վերատեսչի, եւ շերմագին սիրով Չեր ողջությունն ենք հարցնում։

Եվ եթե վեհի անարժանաբար հարցնի մեր մասին՝ համաձայն մեր փոքր հոտի արժանիքների՝ չարչարանքներում եւ տառապանքներում կանք այլահավատների մեջ, ինչպես այցամը որսորդների, կամ ինչպես ոչխարները գայլերի մեջ։ Սակայն գոհանուն ենք Աստծուց, որ քրիստոնյա ենք եւ Քրիստոսի անունը մեզ վրա է դրված ու նրա վիճակի սակին (6) ենք, համաձայն սուրբ Պողոս առաքյալի, Եթե՝ «Յոժար եմ Ենթարկվել չարչարանքների, նեղությունների, գանակոծման, բանտերի ու մահվան» (7): Եվ մենք այս ամենը կրում ենք հանուն Քրիստոսի, եւ

Նամակ (1)

Յավատի գլուխ եւ առաջամարտիկ, Երջանիկ Քահանայապետի (3) օրինակ, քրիստոնյաների բոլոր Եկեղեցիների, բոլոր Եկեղեցիների սյուն եւ հաստատություն, աշտանակի գլխին Արարչից հաստատված արեգակնափայլ ջահ, որ ճառագայթներ եւ արձակում տիեզերքում: Ժայռի ծերպերի վրա կարգված

ուրախ ենք, որ Զեզնից խնդրում ենք մարտակից լինել մեզ աղոթքներում: Եվ թող սիրալիր նամակիցս Զերդ վեհանձնությունը՝ Շռոմի պատվական պապի, փառապանծ կարդինալները ու մեր տեր սիրեցյալ հայրերն ու եղբայրներն իմանան, թե հնավանդ սերը, որ կա մեր երկու ազգերի՝ Հայերիս ու Լատիններիդ մեջ, ինչը հաստատեցին մեր հայրերը՝ Շռոմի սուրբ Սեղբեստրոս պապը եւ Սեծ Հայքի սուրբ Գրիգոր Լուսավորիչը (8), Զեզնից խնդրում ենք նույնը հաստատել: Եթե որոշ հովիվներ կրվեցին մեկմեկու դեմ՝ լինելով մեր անջատման պատճառ. լինի դա Դիոսկորոսը, թե Փլարիանոսը, կամ էլ որեւէ մեկը՝ նրանք պատասխան են տալու Քրիստոսին: Բայց մենք մեկմեկու սիրենք հոգեւոր սիրով, ինչպես ասաց Տերը. «Սրանից կիմանան, թե իմ աշակերտներն եք, եթե սիրեք իրար» (9), որովհետեւ մենք անդամն ենք մեկմեկու, համաձայն Պողոս առաքյալի, թե՝ «անդամներն իրար չեն հակառակվում, եւ ոտքը ձեռքին չի ասում, թե ինձ պետք չես, եւ գլուխը ոտքին, թե ինձ պետք չես, այլ բոլորս մեկմեկու անդամներ ենք միացած ու հարմարեցված գլխին՝ Քրիստոսին» (10), (ուստի) պարտավոր ենք խնդրակից ու ցավակից լինել իրար, ինչպես ասում է առաքյալը, եթե մեկ անդամը վշտանա՝ նրա հետ կվշտանան բոլոր անդամները: Մենք ոչ թե հերետիկոսներ կամ հերձվածող ենք, ինչպես կարծում եք դուք, այլ ուղղափառ ենք, համաձայն մեր հոգեւոր հայրերի դավանության, եւ անոն առ անոն նզովում ենք բոլոր հերետիկոսներին՝ Արիոսին, Մակեդոնին, Նեստորին ու Եվտիքեսին (11), եւ սրանց բոլոր համախոհներին: Որովհետեւ թեպես Քրիստոսի համար ասում ենք, թե մի բնություն է, եւ (ըստ այս) կարծում եք, թե Եվտիքյան ենք, սակայն դրա կողմին դնում ենք, թե անշփոր է. Եթե չասենք՝ «անշփոր»՝ չար հերձվածող կիմենք: Որովհետեւ, ինչպես դուք եք ասում, երկու բնությունը, որ Նեստորի (ուսմունքն) է, ասում եք, թե անքաժամնելի է. Եթե չասեիք, թե երկու բնությունն անքաժամնելի է՝ չար հերձված կիմենք: Սակայն մենք ասում ենք՝ մեկ անշփոր բնություն, եւ դուք ասում եք՝ երկու անքաժամնելի բնություն, եւ երկու խոսքերի իմաստը նոյնն է, եւ ճշմարիտ է:

Իսկ տարվա տոների եւ պահոց օրերի ետեւառաջությունը վնասակար չէ, որովհետեւ ազգային ավանդություններ են, որոնք (կարող են) այսպես կամ այնպես լինել (12): Սակայն մենք ընթանանք սիրո հետ, քանզի «սերը երկայնամիտ է, քաղցրաբար է, չի հապատանում» եւ այլ (13): Որովհետեւ մենք այստեղ սիրում ենք մեր սիրելի եղբայրների՝ ծեր պարեներին իրեն մեր հարազատ եղբայրների, նույն սերն ենք հայցուն ձեզանից յուրայինների հանդեպ, որ այդտեղ են: Եվ լսում ենք, թե այդտեղ ուխտի կամ վաճառականության նպատակով եկող մեր հոգեւորականների եւ աշխարհականների վրա ոնանք բռնանում են՝ (ասելով) թե՝ նզովիր քո հայրապետին եւ դավանիր մեր դավանությունը, որի պատճառով էլ ծեր անունը տոմարդու եւ հակառակվողի համբավ ունի: Այս պատճառով նամակովս աղաջում ենք այլեւս նման սովորություն չունենալ, այլ կամքին թողեք. Եթե մեկը հոժար կամքով դավանի ու խոստովանի եւ սրբություն խնդրի՝ տվեք, եւ եթե՝ ոչ՝ մի բռնանաք չիմածածյանողների վրա: Եթե առաջնորդի հրամանով ու նամակով չի եկել՝ մի ընդունեք: Աղաջում են ընդ-

հանուրի հորո, Շռոմի պապի՝ մեզ իիշել քո սուրբ, արժանավոր աղոթքներում եւ Պատարագում, որովհետեւ մեր փոքրիկ հոտը ցրված է այլահավատների մեջ, Տեր Աստված ձեր կենդանի աղոթքով (նրան) անփորձանք եւ անսասան պահի եւ իր փարախում հավաքի. ամեն: Ողջ եղեք Տիրոջ մեջ՝ ողջուն ստանալով Սուրբ Հոգու:

Սիրո այս նամակը գրվեց Հայոց 1075 (1626) թվականին, օգոստոսի 17-ին:

Ծանոթագրություն

1. Նամակների աշխարհաբար թարգմանությունն ըստ՝ Կարապետ Եպս. Ամասունի, Ուկան վարդապետ Երեանցի եւ իր ժամանակը. Լուսաւոր էջ մը ժէ դարու հայ Եկեղեցական պատմութենէն, Հայագիտական մատենաշար «Բազմավէպ» . 9., Վենետիկ-Ս. Ղազար, 1975, էջ 267-275:
2. Շռոմի պապ, որ աթոռակալել է 1623-1644թթ.:
3. Քահանայապետի՝ Քրիստոսի:
4. Որոտի՝ սատանայի:
5. Հովհ. ԻԱ 16, 17:
6. սակը/թին-արաբերեմ՝ բնակիչ:
7. Ք Կորնը. 2 5:
8. Այս տեղեկությունը բերված է համաձայն «Դաշանց թղթի» (տպ. «Թողթը սիրոյ եւ միաբանութեան մեծի կայսերն Կոստանդիանոսի եւ սրբոյն Սեղբեստրոսի վեհագումի փափին եւ Տրդատայ Հայոց արքայի, եւ սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչին: Ծարագրեցեալ յամի Տեան երեք հարկի եւ տասն եւ վեց. վագրեցեալ ի թոփին Փոլչին 1683, ի Վենետիկի քաղաքի»), որը կյանքի է կոչվել կիլիկյան իրականության մեջ, ԺԱ-ԺԴ դարերում, երբ հայոց մեջ լատիններից ակնկալիվող օգնությանը փորձում էին պատմահրավական հիմք տալ՝ Դդարի սկզբներում Շռոմի Կոստանդիանոս Մեծ արքայի ու Սեղբեստրոս պապի, իսկ մյուս կողմից Հայոց Տրդատ թագավորի ու Գրիգոր Լուսավորչի միջև կնքված կիսապատմական, կիսապատապելական դաշնագրի վկայակոչմամբ (տեսն Հ. Ս. Անասյան, ժէ դարի ազատագրական շարժումներն Արեմտյան Հայաստանում, Եր., 1962, էջ 50-51): Սովուս Տաթեւացին փորձում է, հիշյալ թղթի վկայակոչմամբ, վերակենդանացմել Արեմուտքից ակնկալիվող օգնության հայոց վաղնջական հոյսերը:
9. Հովհ. Ը 31:
10. Ա Կորնը. ԺԲ 21:
11. Դիշվածները պարագուիմներն են հերձվածողական շարժումների. ըստ Արիոսի (+ 336) Աստծո Որդին անսկիզ չէ, հավերժակից չէ Յորը, ըստ Նեստորի (որ 428-431թթ. Կ. Պոլսի արքեպիսկոպոս էր) ս. Սարհամը Աստվածածին չէ, այլ Քրիստոսածին, եւ Քրիստոս աստվածային շնորհը ստացել է հետագայում, ըստ Սակեդոնի, որ 342-360թթ. Կ. Պոլսի Եպիսկոպոս էր, Ս. Հովհն արարած է, կամ Աստված չէ, ըստ Եվտիքեսի, Քրիստոսի աստվածմարդկային բնության մեջ մարդկային մի կաթիլ է Աստվածության ծովում:
12. Սովուս կաթողիկոսի այսօրինակ մոտեցումը հիշեցնում է ս. Պոլիկարպոս Հմյուտնացու (+156/167թթ.) և ս. Իրինեոս Լուգդոնացու (+ 202թ.) համա-

պատասխան դիրքորոշումը այս խնդրի նկատմամբ:
Յակառակ Յոռմեական եկեղեցու պարտադրանքի,
նրանք հաստատում են, որ տարրեր եկեղեցիների
որդեգրած տոնների ու պահերի զանազանությունը
չի կարող խոչընդոտել հավատքի միությանը. տես
Եվսեբիոս Կեսարացի, Պատմութիւն եկեղեցական,

Ե, 24, 16-17, 23, 3, 24, 11-17/:

13. տես Ա Կորնթ. Ճ 4:

**Արեւելահայերենի վերածեց, ծանոթագրեց
Յակոբ Քյոսեյանը
«Սյունյաց Երկրի» պատվերով**



Յոռմի Սուրբ Պետրոս տաճար (իտալ.՝ Basilica di San Pietro)

Յոռմի կաթոլիկ տաճար, որը Վատիկանի ամենամեծ շենքն է եւ մինչեւ վերջերս համարվում էր աշխարհի ամենամեծ քրիստոնեական եկեղեցին: Յոռմի չորս հայրապետական տաճարներից մեկն է եւ կաթոլիկ եկեղեցու հանդիսավոր կենտրոնը: Տաճարի ընդհանուր բարձրությունը 136 մետր է:

Ըստ կաթոլիկ ավանդության՝ տաճարը կառուցվել է Պետրոս առաքյալի շիրիմի վրա: Նա համարվում է Յոռմի քրիստոնյա համայնքի առաջին եպիսկոպոսը եւ, դրանով իսկ, առաջինը Յոռմի պատերից: Տաճարի տեղում եկեղեցի է գոյություն ունեցել դեռևս չորրորդ դարից սկսած: Տաճարի ներկայիս շենքի շինարարությունը սկսվել է 1506թ. ապրիլի 18-ին եւ ավարտվել 1626թ. նոյեմբերի 18-ին:

ԶԱՐԱՐԻՍ ՔԱՆԱՔԵՌՈՅԻ

ՄՈՎՍԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ (ԿՅԱՆՔԻ) ԿԱՐՃ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ (1)

Այն ամենի մասին [ինչ վերաբերում] է Մովսես կաթողիկոսին՝ սկսած նրա ծնունդից մինչեւ մահը, գոել է Առաքել պատմիչը: Իսկ մենք այստեղ կհաղորդենք այն, ինչ լսել ենք նրա մասին Հակոբ կարողիկոսից (2): Ինչպես գրում է Առաքել պատմիչը, Մելքիսեք կաթողիկոսը անարգում է Մովսես վարդապետին եւ ասում. «Յեռացիր այս երկրից, եւ զնա, ուր ցանկանում ես»: Եվ նա գնաց Խնկելոնձոր, որ հինա կոչվում է Չորագեղ, Երեւանի ամրոցին մոտ, եւ սկսեց այնտեղ քարոզել Տեր Քրիստոսի խոսքը՝ մինչեւ որ իր համար ընկերներ գտնի, որպեսզի նրանց հետ Յունաստան ուղեւորվի: Եվ այդ խոսքը Փրկչի ցուցումով էր, որ ասում էր. «Զախշախսված եղեգք թող չկոտրվի եւ առկայժող պատրույզը թող չնարի» (3):

Երեւանում ապրում էր մի մարդ Յովհաննես անունով, եւ նա ուներ կիճ՝ Աջափիսան անունով: Եվ Աջափիսանի Յուսմիխան անունով քույրը Ամիրգունա խանի կինն էր: Եվ Աջափիսանը ատում էր իր ամուսին Յովհաննեսին, ինչպես գեղեցիկը՝ տգեղին, բարձրատոհմիկը՝ ռամիկին: Եվ նա այսպես էր ապրում՝ միշտ հանդիմանելով ու ատելով [նրան] ու չէր հաղորդակցվում իր ամուսնու հետ: Նա չէր անսում քահանայի հորդորներին. նոյնիսկ խանն էր ողջախոհության կոչ անում նրան, սակայն նրան չէր լսում:

Մի անգամ Աջափիսանը գնում է Չորագյուղ՝ ունկնդրելու վարդապետի քարոզը: Իսկ ժողովական ներին հասցեագրված նրա քարոզում այսպիսի խոսքեր կային. «Եթե կինը բաժանվի իր մարդուց... շնացավ» (4): Երբ Աջափիսանը լսեց այդ, երկու ծեռքերով բռնեց գլուխը եւ ասաց. «Վայ ինձ, քանզի ես եւս շուն

եմ»: Եվ մինչ վարդապետը կարդում էր քարոզը, նա խորհում էր այդ խոսքի մասին: Իսկ երբ ավարտեց քարոզը ու բաց բռնեց ժողովրդին, Աջափիսանն ասաց երեցին, որ ծեռք էր մեկնել օրինելու համար. «Մի բան պիտի ասեմ վարդապետին: Աղաջում եմ թեզ, մնա այստեղ, որպեսզի քո շուրթերով ես խոսեմ վարդապետի հետ»:

Երբ վարդապետը դուրս եկավ, նա բերանքսիվ վայր ընկավ ու համբուրեց նրա ոտքերը, եւ հեծկլտալով պատմեց իր զանցանքի մասին: Եվ երանելի վարդապետը նրան սրափեցրեց Աստծո խոսքով: Իսկ առավոտյան նա բերեց նրա ամուսնուն, ու նրանցից խոստում ստացավ, որ նրանք կապրեն Աստծո երկյուղով եւ ողջախոհությամբ:

Այս մասին լսեց Ամիրգունա խանը եւ ասաց. «Ես բազմիցս եմ հորդորել իմ քենուն, եւ նա չէր լսում ինձ, այժմ ինչպես նա հաշտվեց»: Եվ ասում են. «Այդ տեղի է ունեցել Մովսես վարդապետի հորդորների շնորհիվ»: Խանն ասում է. «Կանչեք նրան ինձ մոտ, որպեսզի ինանամ, թե ինչ մարդ է նա, որ նրա [միջոցով եմ] լսում այս բարի լուրը»: Ու երբ նա տեսավ վարդապետին, չափից ավելի սիրեց նրան: Եվ սա սկիզբը եղավ, որից հետո վարդապետը ծանրացավ շահի հետ ու դարձավ կաթողիկոս:

Իսկ Յովհաննեսն ու Աջափիսանը որոշ ժամանակ ապրեցին միասին, իսկ հետո, կարողիկոսի թույլտվությամբ խաղաղ բաժանվեցին: Յովհաննեսն ուղեւորվեց Սեւան կղզի ու դարձավ անապատական, իսկ Աջափիսանը, վերցնելով իր դստերը՝ Շուկային, մտավ կուսանոց՝ [մաս կազմելով] այն կանանց դասի, ովքեր ուխտ էին արել, ու նրան անվանեցին Արանասիա:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. տե՛ս Հաքարեայ Սարկաւագի Պատմութիւն, Վաղարշապատ, 1870, գլ. L, նաև՝ Զակարի Կանակերպ, Հրոնիկա, Պերևոծ ս արմանակութեան պատմութեան մասին պատմութեան մասին, մտավ կուսանոց՝ [մաս կազմելով] այն կանանց դասի, ովքեր ուխտ էին արել, ու նրան անվանեցին Արանասիա:
2. Յակոբ Դ կաթողիկոս Ամենայն հայոց. աթոռակալել է 1655-1680 թթ.:
3. Եսայի, ԽԲ 3:
4. Մարկոս, Ժ 12:





Գտնվում է Երեւանի կենտրոնում՝ Աբովյան և Սայաթ-Նովա փողոցների խաչմերուկում:

Եկեղեցու հին կառույցի պատերին եղած արձանագրություններից վաղագույնը թվագրված է 1264 թվականով: Նոյն Եկեղեցու արեւմտյան ձակատին կան 1284, 1229 և 16-րդ դարով, իսկ հյուսիսային պատին՝ 1609 թվականով թվագրված արձանագրություններ: Ըստ Աշխարհեկ Քալանթարի՝ Եկեղեցու բազիլիկն ըստ կառույցի տեսակի դասական բազիլիկայի խիստ բնորոշ եւ կայուն տիպ է եւ ամենաուշը 7-րդ դարի կառույց, իսկ ներկայումս պահպանված Սուրբ Աստվածածին մատուռը, որ շարունակում է կրել Կաթողիկե անունը, կառուցվել է 10-րդ դարում:

Սուրբ Աստվածածին Եկեղեցի (Կաթողիկե)

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԱՍԱԽԵՑԻ /ՂԱՐԱՆԱՂԻ/

ԺԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Էուրբ Լուսավորչի Աքոռի եւ աթոռակալների, սուլը, աստվածահած կաթողիկոսների՝ առ Աստված հանգուցյալ տեր Մովսեսի եւ նրանից հետո նրա հոգեւոր ծեռնասուն զավակի, խստակրոն, խարազանազգեստ խաչակերտի]մասին, որ հաջորդեց նրան այդ տեղում՝ նրա հրամանով, նաեւ անապատականների համար պատճառ ու նախասկիզբ եղողների մասին, թե ովքեր էին

75. Եվ արդ, ինչպես գրել էի Հայոց ՈԾԵ /1606/ թվականին, Վերին Հայոց վանքի մասին, որ Տարեւ է ասվում՝ Եվստաբեսոս առաքյալի վանքի վերաբերյալ, ուր Հովհաննես Որոտնեցու եւ նրա լսարանի աշակերտ, Աստվածաշունչ գիրքը լուսաբանող եռամեծ Գրիգորի դամբարանն է, որ մոտիկ եւ կպատ է վանքի վերին մասին, ինչը կես օրվա /Ճանապարհի/ չափ հեռու է անապատից, որ այժմ Տարեւ է կոչվում:

Սրանք եղան նախասկիզբը /անապատականների/. տեր Կիրակոս Տրապիզոնցի խստակրոն ճգնավորը եւ տեր Սարգիս Եպիսկոպոս Սաղմոսավանցին: Արդ, ինչպես գրեցի գրքիս մեջ՝ ՈԾԵ /1606/ թվի տակ. եթե կամենաս այնտեղ գտիր ու կարդա: Եվ երբ դուրս են գալիս Երուսաղեմից, Վերադառնում են Վերին Հայոց Երկիր, մեր Մարկոս նույնական նրանց հետ գմում է Հալեպ (1): Եվ այն ժամանակ նա, մանկահասակ եւ պատանի լինելով, ստիպեց մեզ, թե՝ վերադարձիր ու գնա վարդապետի մոտ: Եվ մենք այն ժամանակ հայրենադարձ եղանք մեր աշխարհ, իսկ նա գնաց Ստամբուլ եւ այնտեղից դարձյալ եկավ մեզ մոտ, հայրենիք:

Եվ նրանք թափառական եղան, չիմանալով իրենց գնալու տեղը, մինչեւ որ Տերը ցույց կտար նրանց, ինչպես Աքրահամին՝ իր որդու գրիաքերման ժամանակ, երբ, որդու փոխարեն, խոյը կախվեց ծարից. նույնպես եւ սրանք իրեշտակի առաջնորդությամբ գնալով գտան այն վայրը, որ գեղեցիկ անապատ էր ու հոժարեցին այնտեղ բնակվել խստակրոն ճգնությամբ: Եվ այնտեղ էր Պողոս անունով խարազանագգեստ խստակրոն մի վարդապետ, որ առաքելաբար էր շրջում եւ ոչ մեկից բան չէր վերցնում, առանց ձանձրույթի ուսուցանում էր եւ անաշար հանդիմանում էր արդարությունից շեղվողներին: Ու երբ իմացավ նրանց գալու եւ լեռան վրա անապատում

բնակվելու մասին, փութով գնաց նրանց տեսնելու, եւ հոժարեցի բնակվել նրանց հետ, որ որոշ ժամանակ մնաց այնտեղ: Ժամանակ անց Մովսես վարդապետը գնաց այնտեղ, որ հետո կաթողիկոս եղավ: Եվ միասին մնացին շատ տարիներ ու դարձան Հայոց Վերին աշխարհների լուսավորիչները, այր եւ կին անապատականների գարդերն ու զարդարողները, բոլոր կանոնների օրինակարգողները:

Եվ այս ջանքերից հետո սատանան վերցնելով իր օգնականին՝ սուտանուն կաթողիկոս Մելքին եւ ոչ Սեղեկին (2), հարձակվեց Աստծո սրբերի վրա, հորձանքի նման բազում փորձություններ բերեց նրանց վրա՝ նրանց վարքի, առաքինությունների եւ կանոնների չար թվալու պատճառով, քանզի խեթ հայացքով էին նայում արդարներին՝ նրանց սպանելու նպատակով: Սակայն Տերը նրանց ծեռքը չտվեց, որպեսզի իսպառ դատապարտեն նրանց: Նախ մատնեցին Ամիրգունա խանին, որ Երեւան աշխարհի եւ Արարատյան բոլոր գավառների իշխանն էր: Նա իր պահանջերին ուղարկեց, որ բերեն նրանց, որպեսզի սպանի նրանց: Եվ նրանք գնացին ու գտան անապատի խորթում, բազմերան եղբայրների մեջ, ծերբակալեցին նրանց եւ առնելով տարան: Ասում են, թե ճանապարհին մեծաքանչ իրաշըներով զարմացրին իրենց տանողներին. Երբ ճանապարհին երեք վայրի երեներ են արածել, գորականները ցանկացել են նրանցից մեկին նետով որսալ, սակայն վարդապետները չեն բողել նետահարել նրանց, այլ [սոսկ] խոսքով ասել են. «Հիսուս Քրիստոսի անունով, կանգնեք»: [Երեները] տեղում կանգնած են մնացել, եւ վարդապետները կարգադրել են, որ մեկին վերցնեն, մյուսներին բողնեն: Եվ այնպես են արել, եւ ապա իրենց ճանապարհիր շարունակել են մինչեւ խանի մոտ հասնելը: Եվ նրանք սկզբից մտան ու պատմեցին ճանապարհին տեղի ունեցած երեների սքանչելի հրաշքի, նրանց խարազանազգեստ հանդեմանքի կոշտության, բոլոր անապատականների չորակերության ու վարդապետների ուղքով, մերկ ու բոկոտն իրենց ետեւից գալու մասին: Եվ երբ խանը ծառաների բերանից լսեց, սարսափից դողաց ու հրամայեց նրանց կանցել իր մոտ: Ու երբ կանցեցին, եկան, ամիրայի առջև կանգնեցին ուրախ երեսներով՝ կարծելով, թե նահատակությամբ ծերբազատվելու են այս կյանքի [ունայն] գրաղումներից: Եվ երբ ամիրան տեսավ նրանց, երկյուղեց ու ասաց. մի վախեցեք. դուք ինձնից պատիժներ չեք ստանալու, այլ, ըստ ձեր արժանիքների, պատիժներ: Եվ հարցուի արեց նրանց ու անվեհեր համարեց իրենց պատասխաններում, ու մահապատժի պատճառ չգտնելով նրանց մեջ՝ կարգադրեց թողմել նրանց, որ գնան ուր եւ կամենան, եւ թող մեկը նենգությամբ չիամարձակվի մի վնաս հասցնել նրանց: Այսուհետեւ ամիրան ծանոթացավ Մովսես վարդապետի հետ, ու միշտ տանում էր իր մոտ եւ խրատ էր խնդրում նրանից: Եվ Պողոս վարդապետը (3) գնաց անապատ՝ ընկերներին բարի լուր հասցնելու: Եվ դեռ այն ժամանակ տեր Կիրակոսն ու Սարգիս Եպիսկոպոսը ողջ էին. նրանք էին հայրերի գլուխն ու անապատականների զարդը:

Ու Երեւանի մեծահարուստները խանից խնդրեցին, որ Մովսես վարդապետին չքողնեն գնա անապատ, այլ մնալով իրենց մոտ ու բարության

օրինակ լինելով նրանց՝ տեսական [գիտելիքով] ու գործնական [կյանքով] միշտարի նրանց: Եվ ամիրան հրամայեց նրան կատարել ժողովոյի խնդրանքը ու մնալ: Եվ դա եղավ մենք տեր Մովսեսի հռչակ սկիզբը: Ու երբ տեր Կիրակոս եւ տեր Սարգիս եպիսկոպոս քարի վարքով ու քարի մահվամբ վախճանվեցին անապատում եւ մեզ համար քարեխոս եղան ի քրիստոս, Պողոս վարդապետն ու տեր Մովսես վարդապետը երեխն գալիս էին, միասին մնում էին որոշ ժամանակ, հոգում եղբայրների աետքերը, ու կարգավորում անապատականների ընթացքը, ու երբեմն էլ գնում էին աշխարհ՝ ուսուցանելու եւ ուղղելու եկեղեցականների կարգն ու պաշտամունքը:

Սատանան կրկին փորձություն բերեց սուրբ Վարդապետների՝ Պողոսի եւ Մովսեսի վրա. Երբ Շահը մանկահասակ տղաներին թույլ է տալիս, որ խոպաններ թողնեն՝ նրանց ճորտ ու ծառա լինելու պատճռով, [ասում են] իբր թե վարդապետները խրատել են, թե քրիստոնյային վայել չէ այդպես վարվել: Եվ մի քահանա ջանք է քափում, որ տղաների գլխից վերացնեն դիվական նշանները: Եվ շահը տեղեկանում է այս մասին, ուղարկում է բերել քահանյային, կամ էլ ինքն է գնում այն գյուղը, բռնում, պատռում է քահանյայի փորդ ու բռնում է մի արեղայի քահանյայի հետ՝ իբր թե նա նրա հետ խրատառու է եղել: Արեղան խկույն ուրանում է հավատը ու դաշնում է նրանց օրենքին: Նա մատնում է վարդապետներին, թե՝ նրանք են սովորեցրել մեզ այնպես ասել: Եվ [Շահը] երեցի կնոջն ու նրա անքողջ տունը տալիս է չարեղային, ու դրանից հետո պահակ ուղարկելով, երկու վարդապետներին չարաչար տանջելով, տանում են կտտամահ անելու: Սակայն Զուղայի մեծահարուստները, բազում կաշառքով ու բազում աղաքանքով միջնորդելով, հազիվ կարողացան առյուծի երախից ազատել նրանց, ու փրկվելով գնացին անապատ, եղբայրների մոտ:

Եվ շատ օթեր անց Պողոս վարդապետը հանգչեց ու գնաց բոլորի հույսի (4) մոտ: Եվ մնաց միայն Մովսես վարդապետը, որ բոլորին՝ ուխտավորներին, եկեղեցականներին, աշխարհականներին, տղամարդկանց եւ կանանց, հեռավորներին ու մերձավորներին եւ բոլոր արեւելցիներին, հորդորում էր [իաստառուն մնալ] կարգի, պաշտամունքի, պահքի եւ աղոթքի մեջ: Ու նրա հռչակը տարածված էր բովանդակ Հայոց աշխարհով, եւ բոլոր կողմերից նրա մոտ էին գնում տղանարդիկ, կանայք, նաև եպիսկոպոսներից, երեցներից, նրա մոտ էին գալիս նաև կերպարանափոխված վարդապետներից ոմանք, որ ծափված մտնում էին կրոնավորական կարգի մեջ, ինչպես Ներսես Վանեցին վարվեց: Այսպես վարվեց անցյալ տարի՝ 1634 թվականին, Թոխատցի Մաղաքիա վարդապետը, որ ծափվելով եւ ազատվելով ամեն տեսակ ունեցվածքից՝ գնաց Վանա կղզի եւ այնտեղ վախճանվեց:


76. Եվ տեր Մովսես վարդապետը բնակվեց Սահարի-փոսում եւ շատ վիշտ կրեց չար կարողիկուներից ու ստանուն եպիսկոպոսներից. շատ անգամ փոս փորեցին ու խորամանկեցին փոսի մեջ գցել, բայց իրենք ընկան իրենց փորած փոսի մեջ, ըստ այն խոսքի, թե «Փոսը, որ փորեցին [իրենց համար էր]:» (5): Թե՛ Եցմիածնում, թե՛ Երեւանի մոտ, ուր Անանիա առաքյալի գերեզմանն է, այնտեղ միաբանական

վանքեր սահմանակարգեց: Եվ Աստծո տնօրինությամբ այսպես եղավ, ինչպես Աստծո սովորությունն է՝ մի պատրվակով փրկել մարդկային ցեղը, ինչպես [այդ վիճակվեց] Յովսեփին, Դանիելին, Դորաբարելին (6), նոյնպես եւ սրան:

Եվ եղավ, որ մի օր, քանի որ վարդապետը մոմ սպիտակեցնել գիտեր, ծշմարտությունը մենք [ստույգ] չգիտենք. կամ շահի պահակի՝ վարդապետին հանդիպելով, կամ խանին ընծա տալով եւ նա էլ շահին այն նվիրելով, կամ էլ ինչ որ կերպ այդ սպիտակեցրած մոմերից նրա ծեռքն անցնելով, նա խստ զարմանում է դրանց սպիտակափայլ, ծյունածերմակ որակի վրա, եւ հարցնում է ընծայաբերներին, թե՝ որտեղից շենք նրանց ծեռքը, կամ ո՞վ տվեց ձեզ: Պատասխանելով ասում են, թե Երեւանի աշխարհում, Եցմիածնում մի վելարավոր կա, որ հայերի վազվերան է, այսինքն՝ քարոզիչը: Նա խկույն հրաման է տալիս, թե փութով գնացեք եւ նրան ինձ մոտ բերեք. որպեսզի գա մեր սպասավոր ծառաներին նմանապես սովորեցնի: Եվ խկույն կատարելով շահի հրամանը, տեր Մովսես վարդապետի մոտ գալով, նրա ծեռքն են հանձնում շահի հրամանը: Եվ նա, անհապաղ վեր կենալով, ուրախությամբ գնաց նրանց հետեւից՝ կարծելով, թե այդ պատրվակով նրան [իրապես] նահատակության համար են տանում: Եվ երբ հասնում են այն տեղը, ուր շահն էր, տանելով կանգնեցնում են նրա առջեւ, ու համաձայն իրենց կարգի, ողջունում է նրան: Եվ ողջունից հետո շահն ուրախությամբ ողջունում է վարդապետին ու մեծապես պատվում: Եվ ապա հարցնում է, թե՝ դո՞ւ ես այսպես սպիտակեցրել: Վարդապետը պատասխանում է. Եթե թեզ հաճելի է ու կամենում ես տեսնել՝ կարող եմ այդպես պատրաստել եւ, իմ Աստծո կարող զորությամբ, կարող եմ ներ ավելին անել: Եվ շահը հրամայում է նրա համար բնակության վայր պատրաստել, որպեսզի նրա գործին անհրաժեշտ պետքերը դյուրությամբ հոգացեն ու վայրն է՝ հարմար լինի: Եվ շահի ծառաները կատարեցին այն ամենը, ինչ հրամայված էր՝ թե՝ գործին անհրաժեշտ նյութերը, թե՝ վայրի խաղաղ, մարդկանցից հեռու ու քարեհարնար կամ բնությանը ներդաշն դալար խոտերով ծածկված լինելը: Եվ կատարեցին այն ամենը, ինչ խնդրել էր վարդապետը: Ու գործադրեց մոմը ներմակեցնելու արվեստը, որ սովորել էր սուրբ Երուսաղեմ քաղաքում, եւ մեջ ու փոքր ջահերը լցրեց բյուրավոր ու բազմապատիկ մոմերով: Եվ շահի մոտ տարան լցված մոմերը, որոնք տեսքով խիստ գեղեցիկ ու պայծառափայլ էին, ու որակով էլ ավելի գունագեղ, քան սկզբի մոմերը: Ու երբ շահը տեսավ մոմերը, խիստ հոժարելով ու հավանելով կատարված գործը, հրամայեց, որ իր փոքր մանուկներին վերցնի եւ սովորեցնի: Եվ այնպես արեց, ինչպես հրամայեց, ու նրանց սովորեցրեց կարծ ժամանակի ընթացքում, եւ շահի առջեւ մատուցեցին իրենց արվեստով ստեղծածները: Եվ տեսնելով նրանց ու նրանց ստեղծած արվեստը՝ է՛լ ավելի ուրախացավ, քան սկզբից էր, եւ ավելի սիրեց վարդապետին, քան իր բազավորության բոլոր մեծամեծներին:

Եվ հրամայեց վարդապետին, թե՝ ինձանից խնդրիր՝ ինչ որ կամենաս: Եվ վարդապետը խնդրեց այս, թե՝ թեզանից այլ բան չնմանում է, բայց միայն հետեւյալը, որ դյուրի է տալը եւ ոչ դժվար, այն՝ որ

**Մթագործված՝
նաեւ Սովոր Տաթեացու հուշով**



**Սյունյաց աշխարհի
Գողթն զավառի Ազուլիսի
Սբ Թովմա Առաքյալի
վանքը**

Կա մեկ ուրիշ եկեղեցի եւա՝ Սբ Աստվածածին:
Ազուլիսում նույնպես Մովսես Տաթեացին հիմնադրել
է դպրոց:
Ներկայումս Ազուլիսը մտնում է Աղրբեջանի կողմից
բռնազավթված Նախիջեանի Օրդուրադի շրջանի մեջ:



Գտնվում է Աշտարակի շրջանի Օհանավան գյուղում՝ Թասախ գետի կիրճի եզրին: Այրարատյան աշխարհի հնագույն մշակութային կենտրոններից է: Ըստ ավանդության՝ Ղազար Փարպեցին այստեղ է գրել իր «Պատմությունը»:

17-րդ դարասկզբին Մովսես Տաթեւացու նախաձեռնությամբ նոր կյանք է ապրել Հովհաննավանքի դպրոցը, որը ղեկավարել է Տաթեւացու աշակերտ (Երեանի Անանիա Առաքյալի անապատում) Զաքարիա Վաղարշապատցի վարդապետը, ում հաջորդել է Զաքարիա Քանաքեռցի պատմիչը:

Հովհաննավանք

հաստատում կնիքով ինձ տաս քո հրամանագիրը Սուրբ Էջմիածնի վերակացության, նրա նորոգության ու նրա բոլոր եկեղեցիների ու վաճերի նորոգության համար, ինչ կամենամ օրենքով կատարել իմ հրամանի համաձայն, թող ոչ ոք չընդդիմանա ինձ հակառակությամբ ոչ քոնիններից եւ ոչ էլ յուրայիններից: Եվ շահը հրամայեց, թե Ուչքիլիսայի /Էջմիածնի/ խալիքայությունը, որ կարողիկոսությունն է, թեզ եմ տալիս: Եվ վարդապետը պատասխանելով ասում է. Ոչ այդպես, քանզի որքան որ նրանք ողջ են, նրանցից ոչինչ չեն կարող վերցնել, որովհետեւ գժտություն կլիմի մեր մեջ, այլ նախ ինչպես խնդրեցի, այնպես կատարիր, եթե կամենաս, իսկ եթե չես կամենա՝ ողջ եղիր: Ապա շահը հրամայում է՝ ասելով. Թող այնպես լինի, ինչպես եւ կամենում ես: Այնժամ նրան տվեց մատանիկով կնքված հրովարտակ եւ հրաման ու խստագույն պատվեր, թե իմ հրամանները չընդունողներին այսպիսի պատիժների կարժանացնեմ: Եվ հրովարտակի պատճենն այս էր, թե՝ «Ես Շահ Արքաս իմ հրամանի գիրը տվեցի Մուսա խալիֆին / Մովսես կարողիկոսին/, որ իմ հրամանով գնա նստի Էջմիածնում: Եվ թե այնտեղ ով էլ որ լին՝ մեծերից ու փոքրերից, թող շահանարձակվի հակառակ լինել կամ պատասխան տալ դրան, այլ ինչ որ կամենա թող անի իր կրոնի համաձայն, եւ ինչքան կարողանա թող վերստին նորոգի վնասված եկեղեցիներն ու նոր եկեղեցիներ հիմնադրի ու կառուցի: Եվ թող մեր ազգերին ու պարսիկներին հակառակ չլինեն ու վնասել ջանան, ինչպես թուրքերը, իսկ եթե ոչ. համոգնեն ու հակառակվեն իմ հրամաններին ու չկամենան լսել ինձ, թող Տեղը կատարի եւ թող ավելացնի, եթե այնպիսիներին շընաջնջեմ եւ ազգացինջ չանեմ ու չկորցնեմ նրանց հիշատակը երկրի վրայից»:

Եվ երբ այս հրամանագիրն առավ ու դրւու գալով նրա մոտից եկավ Արարատյան գավառ, տանելով ցոյց տվեց Ամիրկոնա խանին: Եվ նա ուրախությամբ ընդունեց հրովարտակի հրամանը, եւ ինքը երկրորդ հրամանագիրը տվեց նրան, թե՝ ինչպես կամենում ես, այնպես արա, եւ բնավ որեւէ մեկից երկյուղակի կասկած մի ունեցիր, եւ ով թեզ հակառակ լին՝ ինձ տեղյակ պահիր, որ ես խոսեմ նրանց հետ եւ պատժեմ: Սակայն դու գնա՝ նստիր ուր եւ կամենաս. ամբողջ երկիրը քո առջեւ է: Եվ ապա դորս գալով նրա մոտից՝ վարդապետը բազում ուխտականներով ու ժողովրով նախ գնաց Վաղարշապատի Սուրբ Էջմիածնին: Եվ շահի ու խանի ահից ոչ որ նրան չընդիմացավ՝ ոչ կարողիկոսներից եւ ոչ էլ այլ եկեղեցականներից կամ աշխարհական ժողովրոնց՝ հակառակորդ թշնամիներից, այլ շուրերով, երեսանց մեծարում էին, բայց ոչ սրտով: Եվ նա սկիզբ դրեց շինությունների հիմնարկության ու վնասված [կառույցների վերականգնման], եկեղեցականների, ուխտավորների եւ աշխարհականների խեղված կարգերի վերստին նորոգության, ժամանացությունների, պատարագի արարողությունների խափանված օրենքների, հացերույթի սեղանների ու դպրատների [վերականգնման]: Ու գնալով Սաղմոսավաճք եւ Շովիանավաճք, որ հրաշալի ու հռչակավոր էին բոլոր վանքերի մեջ, կամեցավ դպրատներ կառուցել եւ ուշիմ մանուկներ հավաքել դպրոցների համար, ինչը հետո իրապես կատարեց, եւ ամեն ինչ, որ կամեցավ,

կատարեց Աստծո հաջողությամբ:

Եվ վասնի արեղաները, ովքեր արհասարակ սուս եափսկոպոսներ էին դարձել մեկմեկու նախանձելու պատճառով ոչ այլ կերպ, քան ստանուն կարողիկոսների միջոցով, թողնելով լուսազարդ վաճերը, տարածել էին գյուղերում ու ձեռք էին բերել դաշտեր, այգիներ, բուրաստաններ, խաշների հոտեր, բազում արջաներ: Նրանք դարձել էին մեծահարուստ աշխարհականների նման, եւ հացթուխի անվան ներքո վարձել էին տանտիկին կանանց: Եվ ես՝ բոլորից խորուկս, սուկ անունով միայն Գրիգոր Դարանացիս 1600 թվականին գնացի այն երկիր ու երեք տարի բնակվեցի Սաղմոսավաճքի անապատում, եւ այս ամեն տեսակ անկարգություններին, որոնց մասին գրեցի, ինքս ականատես իսկ եղա: Եվ իմ սիրտը ցավում էր նրանց անօրեն գործերի համար, ու չէի դադարում անաշառությամբ հարատեւ հանդիմանել նրանց նաեւ ծիրականության պատճառով, որ բոլորն անխտիր ուտում էին պահոց օրերին ու պղծում բոլոր կերպուրներոց: Այդ պատճառով բազում վիշտ կրեցի թույլ եւ անկատար բոլոր կարողիկոսներից, մանավանդ Մելքից եւ ոչ Սեղեկից: Եվ Դավիթը, որ թեպետ թուլամորթ ու ցոփախոս էր, սակայն հնազանդ էր վարդապետներին եւ հակառակ չէր Աստծո օրենքը քարոզողներին (7):

Այս ամենը, որ ասացի ու գրեցի, [Մովսեսը] ջանում էր խափանել եւ խստությամբ հանել գյուղերից, բռնավորներին հափշտակել էր տալիս նրանց արտերն ու այգիները, նրանց բոլոր կալվածքներն ու տները ավարի էր մատնում եւ նրանց բռնի կերպով մտցնում էր խստակրոն կարգի մեջ: Եվ շատերը, ապավիմելով Մելքի կարողիկոսին, չէին կամենում դուրս գալ իրենց տեղերից ու հրաժարվել կալվածքներից: Նա այս բոլորն անում էր տակավին վարդապետ լինելով:

Եվ անառակ եափսկոպուները խորապես նեղվեցին ու մտնուացին Մելքիի հետ կարողիկոս ծեռնադրել նրա Սահակ անունով տգետ եւ անառակ եղբոր որդուն, որն իրենից շատ ավելի թույլ եւ անկատար էր, որովհետեւ կարծում էին, որը նա, նեխած, փտած ու ծերացած լինելով, չլինի թե հանկարծամահ լինի ու նրա տեղը Մովսեսին նստեցնեն: Այդ պատճառով ամբողջ երկրի համար ատելի եղամ, արհամարհեցին, եւ մի պատար հացի արժանի չհամարեցին նրանց, անհամ աղի նման անափիտան դարձան ու կոխան եղան բոլորից, համաձայն տերունական հրամանի (8): Եվ նրա տեղը կարգելով Սահակին՝ ինքը մի քանի եափսկոպուների հետ դիմեց Արեւուտք, համախոն Զաքարիայի նոտ (9): Կերն արդեն նկատեցինք, թե ինչ էին մտածել եւ ինչ էին կամենում անել եւ ինչպես Աստծով խափանվեց այդ ամենը:

77. Եվ երկրի մեծն ու փոքրը, բոլորը արժանի տեսան, նաեւ անապատականները, այլեւ մերձակա երկրներն ու գավառներն արժանի համարեցին տեր Մովսես վարդապետին, որ կարողիկոս լինի ու նստի սուրբ Գրիգորի Աթոռին, որպեսզի նորոգի թերահավատության ու մեղքերի տգիտության պատճառով շեղվածներին եւ դեպի լույս բերի մեղքերի անզղությամբ խավարածներիս: Եվ ովքեր լսեցին, շատ ուրախ եղան, եւ աստվածային ընտրությամբ, աշխարհագումար ժողովով՝ վարդապետներով,

Եափսկոպոսներով, բազմախումբ կրոնավորներով, բազմաթիվ քահանաներով ու ժողովուրդով ձեռնադրեցին կարողիկոս եւ նստեցրին սուլր Գրիգորի Արութիւն Աղուհացից պահքի օրերին, իինաշաբթի օրը [Հայոց ՈՉԸ= 1078+551], 1629 թվականին:

Եվ երբ կարողիկոս նստեց, շատ բարեկարգություններ ավելացրեց, քան առաջ էին, որոնք կատարել էր վարդապետ Եղած ժամանակ: Եվ վաճքերում, լեռների վրա անապատներում ավելացրեց կրոնավորների թիվը, ու կարգեց կուսանաց երեք վանք: Եվ հոգրւմ էր նրանց բոլոր պետքերը՝ սկզբից կանանց հոգաց եւ ապա՝ տղամարդկանցը, որովհետեւ ասում էր, թե կանանց ցեղը տկար, անձարակ ու ենթակա է փորձանքի: Եվ շտապում էր ոչ միայն նրանց հոգ տանել, այլև վշտակի ազգին տառապյալ գերիներին՝ տղամարդկանց, կանանց ու մանուկներին, որոնց հնարավոր էր, ազատել գերող թուրքերից ու պարսկիներից: Եվ Էջմիածինն ու Երեւանի աշխարհն իր բոլոր գավառներով երկու բագավորությունների մեջ է՝ պարսից եւ թուրքաց, նաեւ Կարս քաղաքը, որ ճանապարհորդների համար երկու օրվա ճանապարհ է, իսկ ասպատակողների արշավանքի համար՝ մեկ օրվա կամ մեկ գիշերվա: Այլևս չեմ խոսում մարաց ազգի մասին, որ քոյերն են. սրանք, մոտիկ լինելով վերին աշխարհներին, տեսապես ասպատակում են նրանց ու գերի վարում Բաղեշ, Արծեշ, Վաճ ու բովանդակ Ոստան: Եվ նրանք միշտ Պարսից տերության հայերին են գերեվարում: Ահա երեսուներկու տարի է, որ տեսական թշնամիներ են պարսիկները եւ թուրքերը, ու չեն դադարում սաստկագին պատերազմով հարձակվել մեկմեկու վրա: Ինչպես այս տարի, որ ՈԾԴ /1635/ թվականն է, սուլթան Մուրադը, բոշակակեր զորակաների պատճառով թուրքերի ամբողջ աշխարհը անապատ դարձնելով, հրաման տվեց մինչեւ կես ստակ (10) ուստողներին դուրս գալ պատերազմի եւ իր հետ գնալ պարսիկների վրա (11): Եվ ձմեռվա սաստիկ ցուրտ օրերին հավաքվեցին ու դարձան մեծ բանակ՝ անթիվ, անհամար: Փետրվար ամսից նրանք կուտակվում են Սկյուտարում (12), ու մինչեւ մարտ ամսվա վերջ տակավին բանակ են դնում այնտեղ, ու կամենում են փութով գնալ պարսիկների եւ երից թշվար տառապյալ իմ հայոց ազգի վրա: Ըստ այս ամենախնան, բարեգութ Տիրոջից հայում ենք, որ մեզ անսայթաք պահի ինչպես Յովնանին կետի փորում, ինչպես Խորաբելի ազգին՝ փարավոնից ու Կարմիր ծովում, ինչպես երեք մանուկներին՝ հնոցում եւ Սակարայեցիներին՝ Անտիոքոսի չար խորհուրդներից (13):

Եվ ահա այսպես երկու գերող ազգերի մեջ գտնվող տառապյալ իմ ազգին լուսահոգի տեր Մովսեսի ազատում էր: Ինչպես պատմում է մեր Սարգիս վարդապետը, ով երկու տարի այնտեղ՝ հոգեւոր տեր Մովսեսի մոտ էր: Երբ [Սարգիս] ուղարկել էր ինձ մոտ [ինգեւոր] ունկնդրության համար, նա մեզ սիրով ողջույնի գիր էր ուղարկել ու նաեւ հիշել էր, թե անտեղի է մեր որպատությունն ասել, քանզի ահա քաշակերտ, ինչն ու ինչպեսը, որ տեսավ, մեր ընդհանուր որպատությունը, բող Աստծով պատմի թեզ: Եվ նա մի առ մի պատմեց նրա ամբողջ ընթացքն ու գործերը, որոնք եւ համառոտիվ գրեցի կարծ ի կարծո: Եվ /տեր Մովսեսի հաստատած/ այսպիսի կարգերի

սահմանադրություն փոքրագույն չափով իսկ հազիվ թե Եղած լիներ Տրդատի ու Լուսավորչի ժամանակներից մինչեւ Մեծն Ներսեսի օրերը, երբ խնամածուն եւ կարգադրից խաղն էր (14): Եվ սուլր Ներսեսի մահից հետո, այն ատելության պատճառով, որ Պապ բագավորն ուներ նրա հանդեպ, իր սրտի չարության հետեւանքով հրամայեց խափանել սուլր Ներսեսի բարեկարգական սահմանադրությունը: Սակայն կարծ ժամանակ անց ինքն էլ չարաչար մահով գրկեց կյանքից թենողու Փոքր արքայի ձեռքով (15): Բայց դպրատներ երբեք չեն եղել մեր ազգի մեջ, ինչպես գանգատվելով ասում է Գրիգոր Մագիստրոսն իր «Քերականի մեկնության» մեջ (16): Արշակունիների օրոք մենք գիր չունեինք, այլ պարսիկների եւ հույների գրերով էինք առաջնորդվում մինչեւ Մեծն Ներսեսի որդի Սահակը ու նրա աշակերտ Մեսրոպը, որոնց ձեռքով ու քրտնաջան աշխատանքով Աստված մեզ հայերեն գիր ու բարգմանություն շնորհեց, որ կատարեցին հունարենից եւ ասորերենից [թարգմանելով] բովանդակ Աստվածաշունչ գրքերը:

Երբ Արշակունիներն անցան, վլոյվմունքը դարձալ սկսվեց, ինչի մասին պատմում է Եղիշեն՝ խոսելով Վարդանանց, Ղետոնյանց ու բոլոր իշխանների մասին (17), ինչպես ասում է Ներսես Կլայթցին իր տաղի երգում, թե՝ Սուլր Սահակից սկսեալ մինչեւ մեր օրերը վլոյվմունքը չի դադարում (18): Եվ գոհություն ու փառք ամենահնար եւ ամենակարող Արարչին, որ վերջին, անբարի ժամանակներում, Դայոց աշխարհի կործանման պահին՝ տեսապես գտնվելով երկու մահմետական բագավորների՝ թուրքերի ու պարսիկների /վարած/ պատերազմի արանքում, մենք մի գյուղի ոստիկանի իշխանություն իսկ չունենալով, Նա /Աստված-Զ. ք. / օտարահավատ թագավորի սրտում գութ եւ խնամք առաջացրեց ազգին նկատմամբ (19), մինչեւ հասան տեր Մովսես կարողիկոսի /օրերը/: Եվ ապա պարսից արքաների ձեռքով նրան ընծայվեց ողորմության շնորհը, ինչպես Կյուրոսի (20), Դարեհ Փոքր Առաջինի (21), Արտաշես Երկայնարազուկի օրոք (22)՝ Զորաբարելի (23), Եզր քահանայի՝ դպրի (24) [միջոցով] տաճարի ու Երուսաղեմ քաղաքի նորոգությունը եղավ, նույնական եղավ: Ու նրա կյանքն ամփոփվեց այս երկի վրա, եւ սուլր Գրիգորի Աթոռին նստեց չորս տարի, ու փոխադրվեց բոլորի Շույսի՝ իր քաղաքականությունը նոտ ՈՉԲ /1633/ թվականի Շոգեզալուստին՝ Պենտեկոստեին: Եւ մեզ՝ բոլոր հավատացալ համար բարեխոս է, մանավանդ՝ Հայոց ազգին հոգեւոր որդիների՝ Հայր Աստծո, Որդի Աստծո: Եւ Սուլր Շոգի ճշմարիտ Աստծո նոտ հավիտյանս հավիտենից: Ամեն:

Ծանոթագրություն

1. Սահմանի Մարկոսի մասին Դարանադցին հիշատակում է բազմից: Մենք «Ժամանակագրութիւն Գրիգորի վարդապետի Կամախեցոյ կամ Դարանադցոյ» /հրատ. Մեսրոպ Վրդ. Նշանեան, Երուսաղեմ, 1915, էջ 27, 70, 104-106, 162, 173 եւ այլու:
2. Սելիսեղեկ Գառնեցի կաթողիկոս Հայոց /1593-1626թթ. / եղել է Դավիթ Դ կաթողիկոսի աթոռակիցը: Եկեղեցու պատմության մեջ հայտնի է իր անփառունակ ընթացքով: Էջմիածնի պարտ-

քերը մարելու նպատակով գնացել է Կ. Պոլիս, ուր մեկ տարի պատրիարքությունը վարելուց հետո 1600-ին արտաքսվել այնտեղից: Էջմիածնում նոյնպես մերժվեց: Այնտեղից անցավ Սպահան, Ծահ Աբրասի բանակն առաջնորդեց Յայաստան: 1605-ին գերի տարվեց Սպահան, սակայն մազապուրծ լինելով վերադարձավ Երեւան, Սայր Աթոռը մատնեց անուշադրության: Յապատակության նամակ գրեց Հոռոմի Պոլոս և պային: Կածառելով ու վատնելով Ս. Էջմիածնի ունեցվածքը՝ արժանացավ շատերի անարգայից վերաբերմունքին: Սահացել է փախուստի մեջ, Լեհաստանում, 1626թ.: Նրա «գործունեության» մասին մանրամասն տես Սաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, § 1609, 1624, 1628, 1631, 1634, 1639, նաեւ՝ Յր. Աջառյան, Յայոց անձնանունների բառարան, հտ. Գ, Եր., 1946, էջ305-306: Անվան /Սելիխսեղեկ/՝ «քագավոր արդարութեան»/ այսօրինակ երկատումով ու նրա մասնիկների իմաստային զատորչումով Դարանացին նրան հակադրում է աստվածաշնչական նոյնանում նահապետի բարձր կերպարին, որ իինկութակարանյան Շննդոց ժԴ 18-20/ նախօրինակն էր Քրիստոսի, «որ է քահանայ յափտեան ըստ կարգին Սելիխսեղեկի». տես «Բառարան Սոլոր Գրոց», Կ. Պոլիս, 1881, էջ 351-352:

3. Պոլոս վարդապետ Սոկացին, որ Սովես վարդապետի խոհակից բարեկամն էր, հայտնի էր բարեգործական նվիրատվություններ հորդորող իր բարոգիսական լայն գործունեությամբ, որով արժանացել էր Սելիխսեղեկի թշնամական վերաբերմունքին. տես Սաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, § 1623:
4. Նկատի ունի Քրիստոսին:
5. տես Երեմիա Բ 13:
6. Յին Կոտակարանի նշանավոր անձինք, որոնք խիստ կարենոր դեր են կատարել իրեկ ժողովրդի հոգեւոր, քաղաքական կյանքում. նրանց մասին մանրամասն տես «Բառարան Սոլոր Գրոց», Կ. Պոլիս, 1881, էջ 394-395, 128-129:
7. Նկատի ունի Դավիթ Դ Կաղարշապատեցի կաթողիկոսին, որ Գրիգոր ԲԲ Կաղարշապատեցու կողմից արոռակից է ընտրվում 1584-ին, Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1590-1629թթ. նրա մասին մանրամասն տես Սաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, § 1581-1652:
8. Ակնարկում է Մտթ. Ե 13, Արկ. Թ 49, Ղուկ. ԺԴ 34:
9. Նկատի ունի Զաքարիա Վանեցուն, որ, մերժված լինելով վանեցիների կողմից, գտնվում էր Սելիխսեղեկի մոտ: Վերջինիս կողմից 1610 թվականի մայիսի 1-ին նվիրակ է կարգվում Լիովի, Կամենեցի, Սեչովի, Յաշի ու շրջակայից հայության մեջ, որ այստեղ հանգանակություններ անելուց հետո, պետք է «հտային գաղթականներուն անցնի, եւ յարմար յարաբերութիւններ մշակելով Հոռոմ ալ հանդիպի, եւ պապութեան հետ շահաւու ու շահաւու կապեր արդինատրելու շանայ». տես Սաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, § 1601:
10. Ստակ/ ակչէ/. բուրքական դրամական միավոր, արծաթե դրամ:
11. Պարսկաստանի ու Թուրքիայի միջեւ տեսական պատերազմները դադարեցին 1639թ. սովթան Մոլադ

Չորրորդի /1611-1640թթ. / ու Սեֆի Արաջինի /1628-1642թթ. / միջեւ կնքված դաշնագրով, որը հարաբերական խաղաղություն բերեց բազմաչարչար Յայոց աշխարհին:

12. Ակյուտար. Կ. Պոլիսի թաղամասերից մեկը:
13. Այստեղ ակնարկվում են աստվածաշնչական հայտնի դեմքերն ու դեպքերը. Փոքր մարզարեներից մեկի՝ Յովնանի երեք օր կետ ձկան փորում մնալու միջոցով փրկվելը /տես՝ Յովնանի մարզարենությունը/, Փարավոնի հալածանքից, եգիպտական գերությունից իսրայեացիների Կարմիր ծովով անցնելու ու փրկվելը /տես Ելից գրի ԺԴ, ժԵ գլուխներ/, բարելոյնան գրության ժամանակ, Նարուգորոնուորի պալատում ծառայող երեք հրեա երիտասարդների՝ Սեղրաքի, Միսարի ու Աբեղնագովի՝ հակառակ կռապաշտների սպառնալիքի, Աստծուն հավատարիմ լինելու պատճառով հնոցի մեջ նետվելու եւ կրակի ծիրաններից հրաշքով փրկվելը /տես՝ Դամիելի մարզարենություն գլ. Գ/ ու Սակարայեցիների/ իրեկ մի ընտանիքի անդամների գլխավորությամբ Ն. Բ. 168 թվականից սկսված/ պայրաբն ընդդեմ Անտիոքոս Եպիփանեսի իշխանությամբ /Ն. Բ. 175-164թթ. / իրականացվող ասորական բռնապետությամ/ տես Ա Սակար. Ա 10-14 Բ 1-5, Հ 1-16, Բ Սակար. Դ 7-8/:
14. Ս. Գրիգոր Լուսավորիչ. հայոց առաջին հայրապետ. աթոռակալել է՝ 302-326թթ.: Տրդատ Գ, թագավոր հայոց. գահակալել է 287-330թթ.: Նրանց սերտ համագործակցությամբ քրիստոնեությունը Յայաստանում հրաշկվում է պետական կրոն: Մեծն Ներմսն հայրապետի օրոք /353-373թթ./ իրականացվում են քրիստոնեությունն ամրացնող եկեղեցու դերը շեշտող բարենորոգական ծեռնարկներ, բացվում են դպրանոցներ, հիվանդանոցներ, սահմանվում կրոնական կարգեր եւ այլն: Խաղը եղել է Մեծն Ներմսն կաթողիկոսի աշակերտը, հավատարմորեն կատարել նրա ցուցամները, ծեռնադրվել եպիփանուս, կաթողիկոսի բացակայության ժամանակ նրան է վստահվել տեղապահությունը:
15. Այս իրադարձությունների մասին հանգամանալից խոսվում է Փավստոս Բուզանդի Յայոց պատմության մեջ. Դպրություն Յիմգերորդ, գլուխ ԼԱ, ԼԲ. տես Փավստոս Բուզանդ, Պատմություն հայոց, թարգմանությունը, Ներածությունը եւ ծամորագործյունները ակաղեմիկոս Ստ. Մալխասյանցի, Եր., 1968, էջ 267-272:
16. Գրիգոր Մագիստրոս /990-1058թթ. / գիտնական, փիլիսոփա, բանաստեղծ, ռազմաքաղաքական գործիչ: Թողել է բազում երկեր, որոնց մեջ իր ուրուց տեղն ունի «Սեկնութիւն քերականին» աշխատությունը: Դարանացին մկատի ունի Մագիստրոսի տվյալ երկի հետեւյալ տողերը. «Նոյնպէս եւ ի վարժարանն եւ ի դպրոցսն ի բազում տեղիս, զոր այժմ մերոյս սակա ինչ խափանեալ, յունաց ասեմ եւ մերոյս ազգի, եթէ՛ ի ծովութենէ եւ եթէ՛ յառաջնորդաց մերոց քամակելոյ յարութսոցս յայսցանչ+». տես «Սատենագիր հայոց» հտ. ԺԶ, դար ԺԱ, Եր., 2012, էջ 411:
17. Այս մասին մանրամասն տես նրա «Վարդանի եւ Յայոց պատերազմի մասին», Եր., 1989:
18. Տողերը բառացիորեն բաղված են ս. Ներմսն Ծնորհալու «Վիպասանութիւն»-ից. տես տպ. աշխատա-

- սիրությամբ Մանիկ Մկրտչյանի, Եր., 1981, էջ 106, տող 1073-1074:
19. Անտարակուս նկատի ունի Ծահ Արքաս Ա-ին /1557-1628 թթ. / ու նրա հանդուրժող վերաբերմունքը հայոց նկատմամբ. տես Աշոտ Շովիաննիսյան, Դրվագներ հայ ազատազրական մտքի պատմության, Գիրը երկրորդ, Եր., 1959, էջ 107-108:
20. Մեծն Կյուրոս Բ Պարսից թագավոր Ղ. Ք. 550-529/. քանի որ հրեաներին ազատեց բարելական գերությունից, Աստվածաշնչում հիշատակվում է իրեն ազատարար. Եսայի ԽԴ 28, ԽԵ 1-7, Բ Մնաց. ԼՀ 22, 23, Եզր. Ա 1-4, Դանիել Զ 28:
21. Դարեհ Ա Վշտասյան Պարսից թագավոր Ղ. Ք. 522-485թթ. / նա է տվել Երուսաղեմի տաճարը վերստին կառուցելու հրամանը. տես Եզրաս Դ Է:
22. Արտաշես Երկայնաբազուկ Պարսից թագավոր Ղ. Ք. 464-425թթ. / սրա թագավորության օրոր Եզրասը գերյալ հրեաներին բերում է Երուսաղեմ. տես Եզրաս Է, նաեւ՝ Նեեմիա Բ 1, Ե 14:

ՀԱՅԻ

Առաքել Դավիթեցի

Պատմություն

**Տեր Սովուսի վարդապետության ու
կաթողիկոսության մասին, միաժամանակ
Էջմիածնի լուսակառուց Սուրբ աթոռի
նորոգության մասին**

Ո նեահավատ, սրբասնունդ եւ բարեփառ մեր տեր Սովուս կաթողիկոսը Սյունյաց Երկրի Բաղը (1) գավառի, որ այժմ Արանան է կոչվում, Խոտանան կոչված գյուղից էր: Դեռեւս տասն հինգ տարեկան էր՝ ավել կամ պակաս, նրան քահանայության աստիճան տվին եւ օրինեցին կուսակրոն արելա: Նրան բախտ վիճակվեց հանդիպել տիեզերալույս վարդապետ Սրապիոնին, որին առնչակից դաշնալով՝ աշակերտեց նրան: Բայց Սրապիոնի վախճանը շուտ վրա հասավայդ ժամանակ տեր Սովուսը ուսմամբ ու տարիքով տհաս էր: Բայց Սրապիոն վարդապետը մտքով նկարել եւ հոգով իմացել էր, որ տեր Սովուսի վրա աստվածային շնորհք է երեւում, որի համար սրտացավորեն հոգաց նրա մասին: Իր մոտ կանցեց իր ավագ աշակերտ կեսարացի Գրիգոր վարդապետին եւ տեր Սովուսին նրան հանձ-

նարարեց՝ ասելով. «Սրան քեզ եմ հանձնում, որպեսզի իմ փոխարեն սրան հովվելով պահես եւ հասցնելով արդունքի հասակի եւ վարդապետական ուսման, տաս վարդապետական գավազան ու պատիվ, իսկ իմ օրինությունը լինի քո եւ սրա վրա»:

Սրապիոնի վախճանից հետո տեր Սովուսը մնաց Գրիգոր վարդապետի մոտ իրեն նրա աշակերտ: Քիչ տարիներ անց տեր Մովսեսը Թույլտվություն խնդրեց Գրիգոր վարդապետից, որպեսզի գնա Երուսաղեմ ուխտի ու Երկրագության մեր աստված Քրիստոսի մարդեղության վայրերին: Նա բույլատրեց, իսկ տեր Մովսեսը եկավ, գնաց հասավ Երուսաղեմ եւտիրոջ բոլոր մարդեղության տեղերին ուխտ արեց: Ապա այնտեղից գնաց Եգիպտոսի Երկիրը եւ շրջեց ղատիների վաճքերն ու անապատները, որովհետեւ շատ վաճքեր ու անապատներ կան, որտեղ բնակված են բազմախումբ միաբաններ կրոնավորական կարգերով ու դրվածքով, որոնք անեն ինչով կարգավորված են եկեղեցների, բնատեղերի, գգեստների, խցակցության, կրոնավորական ժումկալության եւ այլ ամեն բաների: Նրանց մեջ շրջելով, հարցնելով ու տեսնելով՝ ամեն ինչին տեղեկանում էր. թեպես ինքը՝ տեր Մովսեսը, այդ բաների նկատմամբ անհոգ ու անփոյք էր, բայց տնօրինող տորբ հոգին ման տապով շրջեցնում էր այսպիսի կրոնավորական կարգերի մեջ նրան ուսուցանելու ապագա ժամանակների համար, որպես եւ պետք է եկավ Մեծ անապատի կարգավորության ժամանակներում: Տեր Մովսեսը, Եգիպտոսից դաշնալով, եկավ Երուսաղեմ եւ եղավ Սուրբ Հարության տաճարի լուսարար:

Այդ ժամանակ պատահեց, որ պարուն Սարգիսը եւ տեր Կիրակոսը այնտեղ էին, որոնց մասին գրեցինք, թե եղան անապատի ու կրոնավորական կարգերի սկզբանավորողներ: Սրանք գտնվում էին Երուսաղեմում, շրջում էին այն Երկրում, հունաց վաճքերում,

Հորդանան գետի եզրերին, Փորձության լեռան վրա եւ որոնում էին ուշադրությունից զերծ ու անգայքակից անապատի տեղ, բայց ըստ պատշաճի չին գտնում: Այդ առթիվ տեր Մովսեսը ասաց. «Այդպիսի տեղ, որ որոնում եք, (հայոց) արեւելան երկրում շատերը կան, ճանավանդ Սյունյաց աշխարհում, որոնց ես իսկն ականատես եմ. այն աշխարհում շատ ավելի պատշաճ է անապատ շինել, որովհետեւ բուն Շայաստանն է. վաճքեր, գյուղեր ու քրիստոնյա ժողովորդ շատ կան, ուստի անապատի բոլոր կարիքները կրացվեն: Նաեւ ինքը՝ տեր Մովսեսը, հանձն առավ, որ երբ նրանք ժամանեն այն երկիրը եւ որեւէ տեղ անդորրանալով գետեղվեն, որտեղ էլ ինքը՝ տեր Մովսեսը լինի, ամեն ինչ կրողնի այնտեղ, նրանց մոտ կժամանի եւ նրանց հետ կրնակի իբրեւ միաբան: Այդ՝ այսպիսի հորդորող խոսքով նրանց ուղարկեց Արեւելան վերին աշխարհը (Սյունիք), ինքը մնաց Երուսաղեմում: Սուրբ Գրիգոր Եպիսկոպոսի, որ սուրբ Շակորի առաջնորդն էր, հրամանով (Մովսեսը) գնաց նվիրակության Երուսաղեմի համար եւ, քրիստոնյաներից մեծ քանակությամբ արյունքներ հավաքելով, բերեց Երուսաղեմ՝ Գրիգոր Եպիսկոպոսի արջեւ:

Ապա Երուսաղեմից ելավ, եկավ իր վարդապետ Գրիգոր Կեսարացու մոտ, որը Կոստանդնուպոլսում էր, քանզի թագավորական հրամանով նստել էր իբրեւ քաղաքի առաջնորդ՝ պատրիարք կոչումով: Մի քանի տարի մնալով իբրեւ Գրիգոր վարդապետի աշակերտ պարկեցած եւ սրբակրոն վարքով՝ ոչ պերճապաճուց եւ փափուկ հագուստով, որպես այդ ժամանակ ուրիշներն էին, այլ կոշտազգեստ էր, պահեցող, որ շաբաթ եւ կիրակի օրերն էր (պասը) լուսում նավակատիքի (2) կերակուրներով՝ զերծ մսից ու գինուց, մշտապես սաղմոսերգող եւ պատրարագամաստուց:

Այս քանին հավանելով ու հաճելով Կոստանդնուպոլսի ողջ ժողովուրդը՝ Եկեղեցականներ, աշխարհականներ եւ երեւելի մարդիկ, օրինակ՝ Ծահին շալաբին (3), որ թագավորի արքունիքում ճշանավոր մարդ էր, եւ ուրիշ շատեր: Նաեւ Արեւելան երկիր Վաճառականները, որոնք պատահեցին Կոստանդնուպոլսում, մանավանդ ջուղայեցիներն ու գողբնեցիները, քանի որ գիտեին, թե Մովսեսը Արեւելան աշխարհից է, ամենքը, մոտենալով Գրիգոր վարդապետին, խնդրում էին տեր Մովսեսին վարդապետություն շնորհել:

Իսկ Գրիգոր վարդապետը ահարկու եւ շատ գոռոզ մարդ էր եւ դժվարահավան, բայց տեսնելով տեր Մովսեսի քաղցր, սրբասեր բարքը եւ պարկեցտ վարքը, նաեւ ժողովորի վկայությունը, չեղավ չլսող, այլ ըստ նրա անձի եւ ողջ ժողովորի վկայության նրան վարդապետական գավազան տվեց մեծ հանդեսով: Այնուհետև տեր Մովսես վարդապետը բոլոր Եկեղեցիներում անխափան, վճիռ ու պայծառ քարոզությամբ քարոզում էր Քրիստոսի ավետարանը:

Տարիներ հետո Գրիգոր վարդապետի հրամանով Մովսես վարդապետը ուղարկվեց գնալ ինքնագույն քարոզությամբ շրջագայելու: Նա ելավ Կոստանդնուպոլսից եկավ հասավ Տիգրանակերտ քաղաքը, որտեղ էր Մրապիոն վարդապետի տապանը: Նրան սուրբ տապանի միջոցով համբուրեց եւ, նրանց օրինություն առնելով, եկավ այնտեղից Վասպուրական (Վան) քաղաքով եկավ Թավրիզ եւ այնտեղից իր հայ-

րենի աշխարհը՝ Սյունյաց գավառը, Տաթեւի վանքը: Մարգարաց գալատյամբ եղավ անպատճելի ուրախություն ամենքի համար՝ Եկեղեցականների եւ աշխարհականների: Նրան առաջինը սիրով ընդունեցին Տաթեւի վանքի միաբանները՝ Եպիսկոպոսներ, արեղաներ, բայց հետո ետ կանգնեցին նրանից, քանզի նրա քարոզությունը չընդունեցին: Այդ պատճառով Տաթեւի վանքից դուրս գալով՝ գնաց Սեծ անապատը՝ Մարգարաց եպիսկոպոսի եւ տեր Կիրակոսի մոտ ըստ իրենց նախկին ուխտադրության, որ Երուսաղեմում պայմանավորված էին: Այնտեղ, անապատում, իր բնակության համար դադար առավ եւ ժամանակ առ ժամանակ ելած շրջում էր քրիստոնյաների մեջ (հայերի) եւ քարոզում աստծու պատվիրանը, վերստին վերադառնում անապատը, որովհետեւ ինչպես որ ծովով ջրից դուրս գալով մոտենում է մեռնելու եւ նորից ջուրով ընկնելով կենդանանում է, այնպես էլ սա անապատից ելնելով եւ անապատ մտնելով:

Իսկ Մովսես վարդապետի քարոզությունը ողջ ժողովուրդը խնդրությամբ էր ընդունում, իրով էր կատարում եւ ուրախությամբ փառավորում էին աստծու՝ մարդկանց այդպիսի շնորհներ տվողին: Բայց գավառի Եպիսկոպոսները եւ վանքերի արեղաները չեն ախտորժում Մովսեսի քարոզությունը, որովհետեւ Մովսես վարդապետը ինչպես ինքը մերկ էր ամեն աշխարհիկ Ծյութականությունից, պասով, սրբությամբ եւ կրոնական վարքով էր ապրում ըստ գրքերի պատվիրանների, սույնպես էլ քարոզում էր, որ բոլոր վանքանները լինեն: Իսկ նրանք, արհամարհելով նրա խոսքերը, չընդունեցին, որովհետեւ հայոց ազգի բոլոր վանքերում յուրաքանչյուր սեւագլուխ ուներ իր սեփական հարստությունը՝ այգի, ծաղկատան, փերակ, տուն, մառան, ամբարներ, եկամուտներ: Նաեւ ընդիհանուր վանքի եկամուտը բաժանում էին իրար մեջ: Եվ այդ ամենը ծախսում էին իրենց, իրենց ազգականների, իրենց համելի մարդկանց կարիքների համար: Եվ աստծուն նվիրված վայրերը, որոնք սպանչելագործ սրբերի եւ աստծու շնորհները կրող հրաշքների բնակարաններ են, լցված կին կանանցով, տանտիկներով եւ իրենց ազգականներով:

Բնավ զգիտեին, որ կրոնավորը պարտավոր է վերար ու փիլոն կրել կամ կոշտ ու բրդյա հագուստ հագնել, այլ որպես աշխարհական եւ մարմնավոր իշխաններ, թանկագիտ հագուստներով պանվում էին, անդրավարտիք, կապա, թանկագիտ գլխարկ գլխուներուն եւ մեկնոց էին վրաները առնում: Նաեւ չին համարում, թե վանականները պարտավոր են պասով, ծոմական տքնությամբ կյանք վարել, այլ ամբողջ տարին անխտիր ուտիս ճաշեր, միս էին ուտում եւ գիշեր մինում:

Այդպես էլ գյուղական քահանաները անունով էին միայն քահանաներ, բայց ոմանք ստանձնում էին մելիքության, ոմանք տանուտերության իշխանություն, ոմանք պառնիներու ու երկանայք էին, ոմանք միանում էին այլազգի իշխաններին եւ դաշնում նրանց չար գործերի արքանյակներ, քրիստոնյաների մատնիչներ: Ունանք մարմնական արհեստներով եւ հողագործությանը էին զբաղվում իբրեւ աշխարհականներ՝ բոլորովին լքելով ժամն ու պատարագը: Աղոթքի ժամին Եկեղեցի չին գնում, եւ գյուղերում ժամկոչի (4) ծայն չէր լսվում, նրանցից լրիվ վերացել էր քա-

հաճայության շնորհքը, բայց տակավին իրենց քահանաներ էին անվանում եւ քահանայական գործ էին անում ոչ իրեւ քահանաներ, այլ իրեւ արհեստավորներ իրենց նարմնական վարձի համար:

Ոչ միայն գյուղական քահանաներն ու արեղաները ըստ ասածիս անուղղա կարգուկանոնվ թափառում էին, այլև կարողիկոսները, որովհետեւ մեկը չէր, այլ երեք եւ չորս կարողիկոսներ եւ այն էլ՝ փառամոլության ու ազահության պատճառով իրեւ մաքսավորներ կապալով ու հարկով պարսից թագավորից գնում էին կարողիկոսական իշխանությունը եւ Սուլը արոր էջմիածինը: Եվ ժողովրդի մեջ շրջագայելի թագավորական ծառա եւ այլազգի գորականներ էին շրջեցնում իրենց հետ եւ ժողովրդի տուրքը, հասր ծշտիվ եւ ուժի բռնությամբ աշնում էին ինչպես Յեղիի որդիները (5): Եվ կարողիկոսները, ինչպես իրենք դրամով ու կաշառքով կարողիկոսական աստիճան էին ստանում, այդպես էլ իրենց ծեռնադրած եափսկոպոսները, քահանաները տգետ, խոտան, անպետք ըստ Սաղմոսի, որոնք որովայնի պաշտոնաներ (6) էին, մշտապես գինարբութի մեջ շրջում էին գուսաններով ինչպես նարմնավոր իշխաններ առավոտից մինչեւ երեկո, հետեւում էին կատակների, վկտի խոսակցությունների եւ դատարկամտության:

Եվ սրանց բոլորի պատճառը ոչ այլ ինչ էր, եթե ոչ հեռացումը Աստվածաշնչից եւ աստծու երկյուրից. բնավ գրքեր չէին կարդում, աստվածային մատյանները փակվել ու լուլ էին, որովհետեւ խափանվել էր Աստվածաշնչի ընթերցումը, որ արհամարհված էր նրանց աչքում, հողով ու մոխրով պատված ընկած էին որեւէ անկյուն, որովհետեւ ըստ տիրոջ խոսքի ոչ դիր էին ճանաչում, ոչ էլ գրքերի գորությունը (7):

Արդ՝ եթե Եկեղեցականները այսպես էին, ի՞նչ ասեմ աշխարհականների մասին, որոնք բնավ չգիտեին, թե քրիստոնյանները պարտավոր են խոստովանել, հաղորդվել, կամ ամեն օր աղորատեղ այցելել, նաեւ պար ձեռքով ու գինիով փշացնում էին. ոմանք կնարող էին, ոմանք երկին, չհաս եւ ազգապղծության մեղերով շաղախված:

Իսկ Եկեղեցիներն ու վանքերը՝ բոլորն անշուր ու անպատիվ, զարդերն ու սպասքները՝ բոլորովին կողոպտված, մինչեւ իսկ սուրբ սեղանը՝ ամեններին մերկ ու բաց: Երկար ժամանակ փակված դժմերով, խավար ու անլուս, պաշտամունքից ու պատարագից լուր, շնչառքով ավերված ու խախտված, տանիքն ու պատերը իրեւ անտեր ու այրի՝ զոլված փեսայից, օտարացած որդիներից, նստած թախծոտ ոգով ու անմիջիթար լալիս էին մարդու երեսին (8):

Արդ՝ բազմապատիկ ավելի քան ինչ որ շարադրեցինք, աղավաղված ու եղծված էր բարեկարգությունը հայոց Վերին աշխարհից (9): Դրա փոխարեն արձանացել ու արմատացել էր անկարգությունը: Այս պատճառով վշտանում եւ հոգու չափ ցավում էին այս տգետ մոլորությունների վրա այս երկու սուրբ վարպետները՝ Մովսեսն ու Պողոսը, որի որպահությունը անցյալ գլխում ծանրացրինք: Պողոս վարդապետը Մովսեսից քիչ ժամանակ ավելի առաջ էր Եկել Վերին երկիրը (Սյունիք) եւ իր մենակության պատճառով հակառակորդները ճնշում էին նրան, իսկ երբ Մովսես վարդապետը Եկավ, իրար զորավիզ լինելով բոլոր գավառներում համարձակ քարոզում էին:

Այս երկու վարդապետները՝ պարոն Սարգիսը եւ տեր Կիրակոսը՝ իշշված մյուս մարդկանցով, որոնց Սեծ անապատի գլխում իշշատակեցինք, նախ՝ անապատի ու կրոնավորության այն ամեն կարգն ու դրվագքը սահմանեցին, որոնք գրքերի ընթերցումով գտան եւ որոնք Մովսես վարդապետը դիմիների անապատում տեսել ու սովորել էր, ապա նրանք, անապատում մնալով, աղորում էին աշխարհի փրկության համար եւ նոյն աղործով նպաստում էին վարդապետներին՝ խնդրելով սուրբ հոգուց օժանդակելու նրանց կենաց խոսքի քարոզության մեջ: Իսկ երկու վարդապետները՝ Պողոսն ու Մովսեսը, հավատքի ամոլներ լինելով, շրջեցին մեր Արեւելյան աշխարհի բոլոր գավառները, ամենքին քարոզում էին ծշմարտությունը, շինուած էին Եկեղեցիներ, կարգում էին քահանաները, որովհետեւ առաքելաբար հետիւտն շրջում էին՝ գնալով. որեւ մեկից ոչինչ չին վերցնում, այլ միայն ուտելիք, իսկ ամբողջ շաբաթը պաս էին պահում, միայն կլոր տարին շաբաթ եւ կիրակի օրերն էին նավակատիքի կերակուրներով ծաշակվում, իսկ գինուց ու մսից ամեններին հեռու էին:

Իսկ Վերին աշխարհի (Սյունիքի) քրիստոնյաները (հայերը), լսելով նրանց ծշմարիտ քարոզները եւ տեսնելով նրանց գործերը, բոլորը ետ կանգնեցին իրենց բյուր ճանապարհից, հնազանդվեցին նրանց կարգերին ու սահմանադրությանը՝ իշխաններ, եականակոսներ, քահանաներ եւ նշանավոր մարդիկ բոլոր ռամիկներով հանդերձ: Բայց շատ անվանի մարդիկ՝ Եկեղեցականները ու աշխարհականները, ոչ միայն ընդունեցին նրանց քարոզները, այլև հակառակվում էին, կենսամոլ ու խարերա անվանում, եւ նրանց սահմանած կարգերը իրենք եւ իրենց արբանյակներն էին խանգարում, ուր որ հասնում ու կարողանում էին:

Բայց հակառակության այս գործը անում էին թյուր ու օրինազանց մարդիկ, որոնց հաճելի չին ծշմարտության ճանապարհները. վարդապետների մասին չարահամբավ լուրեր էին տարածում եւ նրանց անբաստանում. Նրանց անբաստանության լուրը մինչեւ անգամ հասավ Երկրի այլազգի իշխաններին՝ խանին ու սուլթանին, մանավանդ Սելջիւք կարողիկոսին, որը թագավորական բռնությամբ էր վարում կարողիկոսության իշխանությունը: Որովհետեւ իմքը նոյնպես ուղիղ ճանապարհի վրա չէր, այդ պատճառով տեղի էր տալիս այնպիսիների ամբաստանությանը եւ նրանցից նյութ առնելով նեղում էր վարդապետներին: Շատ անգամ կարողիկոսը պատհելով այստեղ-այնտեղ՝ նրանց սահմանած կարգ խափանում էր եւ նրանց կողմից առաջ քաշված անձանց եւ էր ուղարկում:

Նաեւ վարդապետները հանդիպեցին կարողիկոսին եւ նոյն անարգալից խոսքերը լսեցին նրանից: Որովհետեւ թագավորական իշխանությամբ էր խորիստանում վարդապետների վրա, եւ այնքան վտանգեցին վարդապետներին, մինչեւ որ Պողոս վարդապետից սողորագրություն առաջ, որ այլևս չի շրջի քրիստոնյաների (հայերի) մեջ եւ չի քարոզի, ինչպես նախօրոք պատմեցին նոյնին վերաբերող գլխում:

Իսկ երբ այնպես եղավ, որ Պողոս վարդապետին

մի կողմ մղեցին եւ Մովսես վարդապետին միայնակ գտան, սկսեցին սաստիկ մրցանքով մաքառել նրա դեմ եւ նրան այնքան նեղը լծեցին, մինչեւ որ Մովսես վարդապետը ինքն իր փիլոնը, գավազանը եւ գորգը ուղարկեց Մելքիսեթ կաթողիկոսին՝ ասելով. «Որովհետեւ չես կամենում մեր քարոզությունը, ահա եւ առ քեզ մեր իշխանությունը, իսկ մենք լռելով կղաղաքենքը քարոզելուց, եւ եթե դրա առիթով որեւէ մեղք լինի, դրև պատասխան կտաս աստծուն»: Իսկ բարիքներ կամեցող աստված, որ ամեն ինչ տնօրինում է, Մովսեսի արարքը հաճելի չարեց Մելքիսեթի խորհրդակիցներին, դրա համար համոզեցին Մելքիսեթին՝ Մովսեսի իշխանությունը չառնել, այլ իր գավազանը իրեն վերադարձել եւ հրաման տալ քարոզության: Մելքիսեթ այդպես է արեց:

Թեպետ Մելքիսեթը Մովսեսին քարոզելու հրաման տվեց, բայց նենգելուց չդադարեց, քանզի անընդհատ ճնշում էր, դատափետելով պարտավոր էր դարձնում ու գրպարտում, ինքն ու իր համախոհները անխայուն նրա վրա նեղություններ էին բարդում:

Մովսես վարդապետը՝ դրանց արարքներից զգված, ոգով չափ դարմացած, ծանծրացած, սրտով վիհատված ու լրված, մտածում էր տիրոջ խոսքը, թե՝ «կիհալածեն ձեզ այս քաղաքից, փախսեք նյութը» (10): Մտածեց հեռանալ Արեւելյան աշխարհից եւ զնալ արեւմտյան աշխարհը եւ այնտեղ գտնված քրիստոնյաներին քարոզել: Այս դիտավորությամբ ելավ, եկավ Երեւան քաղաքը, որպեսզի այնտեղով անցնի, գնա թեռորուպիլիս, որ Կարին քաղաքն է:

Այս ժամանակ Երեւան քաղաքի եւ Արարատյան աշխարհի մեջ ու հզոր իշխանն էր Ամիրգունա խանը, որը պատահմանը ու դիպվածով տեսավ Մովսես վարդապետին, խանը սրա մասին հարցրեց իր առջեւ ծառայող քրիստոնյաներին. սրանք պատասխանեցին որտեղից եւ ինչպիսին լինելը: Եղավ, որ մի անգամ էլ խանը պատահեց վարդապետին եւ որքան տեսնում ու խոսում էր վարդապետը, խանին հաճելի էր քվում, որովհետեւ աստծու խնամքը իր ծառային բռնավորի առջեւ շնորհալի է ցույց տալիս: Խանը Մովսեսին չքողեց զնալ արեւմտյան աշխարհը, այլ այնտեղ Երեւան քաղաքում արգելեց: Օրավոր խանը գալիս էր եւ լսում էր պատարազը եւ գալիս էր ժամակարգության այլ արարողությունների պահերին եւ խոսում էր նրա հետ երբեմն իմաստության, երբեմն հավատքի վերաբերյալ եւ լսում վարդապետի պատասխաները, որոնք ախտործելի էին ու հաճելի եւ լի աստծու շնորհներով: Նրա պարկեշտ վարքի համար խանը նրան սիրեց, այդ պատճառով նրան պահեց Երեւան քաղաքում՝ նշանակելով Կաթողիկե եկեղեցուն երեք տարի:


Կաղեմի ժամանակներից սուրբ առաքյալ Անամիայի դամբարանի վրա մի վայելուշ նատուր կար շինված, որ Երեւան քաղաքի հյուսիսային կողմում՝ այգիների մեջ էր. սա ավերակ ու անմարդաբնակ էր. սրա համար խանը վարդապետին ասաց. «Տեսնում ես, այս եկեղեցին, որ ամայի կանգնած է. այժմ լսիր ինձ ու մի զնա ուրիշ երկիր, այլ սա դարձրու քեզ բնակավայր եւ դադարիր այստեղ, որպեսզի իրար մոտիկությամբ ու տեսակցությամբ միշտարվենք»: Նաեւ ողջ ժողովուրդը՝ քաղաքացիներ, վաճառականներ, աղաքելով նույն էին խնդրում վարդապետից: Սրանց

խոսքը հաճելի լինելով վարդապետի հանար՝ գործի ձեռնարկեց շիմելու տեղը քրիստոնյա տեղացիների ու վաճառականների արդյունքներով ու օգնությամբ, որոնք սիրահոժար տալիս էին ողորմության տուրք տեղի կառուցման եւ վարդապետի սիրու համար, որպեսզի բնակվի իրենց մեջ: Այդ պատճառով շտապ շինեցին շուրջանակի պարիսա, խուցեր, ժամատուն, սարավույթ եւ այլ շատ տներ: Վերջացնելով բոլոր շինվածքները՝ վարդապետը իր միաբաններով բնակվեց այնտեղ այն կարգուկանոնով ու դրվագներով, որ կարգել էին Սեծ անապատում: Նրա մոտ հավաքեցին բազմաթիվ միաբաններ, մենակյացներ, Սուրբ գորի հմաստուն ու սրբակյաց աշակերտներ: Սեծ եւ փոքր միասին սիրով ու խաղաղ մնում էին խցում՝ միշտ կատարելով աղոքներ եւ Սուրբ գորի ընթերցում:

Սրա ուղիղ ուսմունքի եւ բարի կենցաղավարության համբավը աշխարհում ծագեծած տարածվեց՝ Շունաստան, Ջուրդիստան, Վրաստան, Պարսկաստան, որովհետեւ բոլոր երկրներից վաճառականներ էին գալիս այնտեղ, տեսնում էին ու համբավը տանում: Մելքիսեթ կաթողիկոսը, Մովսես վարդապետի այս բոլոր հաջողություններն ու առաջադիմությունը տեսնելով, չարությամբ լցվում, սրտում փոթորկվում էր, բայց չետ կարողանում Մովսեսին որեւէ չար բան անել խանից երկյուղելով, որովհետեւ նա վարդապետին շատ էր սիրում:


Մելքիսեթ կաթողիկոսը իր խորհրդակիցներով արեց այսպիսի խորհրդ. սա ոչ թե աստծու փառքի ու Մովսես վարդապետի օգտի, այլ իրենց շահի ու օգտի համար էր, որպեսզի շատ ինչք ու արծար գումարվի իրենց: Սահմանեցին, թե Սուրբ արու էջմիածնում մեռոնօրինեք ենք անում եւ այն Մովսես վարդապետի ձեռքով, որպեսզի նրա համբավով շատ երկրներից բազմաթիվ մարդիկ հավաքվեն, որոնցից մեզ շատ ինչք ու արծարի շահ լինի: Այս պատճառով Մելքիսեթ կաթողիկոսի նախորդը անի: Մովսես վարդապետը այդ ժամանակ տակավին եպիսկոպոսության աստիճան չուներ, այդ պատճառով Մելքիսեթ կաթողիկոսն ասաց. «Եթե պատճառը եպիսկոպոսությունն է, ես իրեն եպիսկոպոս կօրինեմ, որպեսզի պատրիկ չըռի եւ զա մեռոնը օրինի»: Իսկ Մովսեսը հրաժարվում է եպիսկոպոսության աստիճանից՝ իրեն անարժան համարելով, բայց նրա աշակերտները, բոլոր քահաններն ու ժողովուրդը թախանձում էին հանձն առնել եպիսկոպոսության աստիճանը, որի համար Մովսես վարդապետը հանձն առավ լինել եպիսկոպոս:

Ապա Մելքիսեթ կաթողիկոսը եկավ սուրբ առաքյալ Անամիայի դամբարանը, որտեղ Մովսես վարդապետի բնակությունն էր, որը եւ անվանեցին անապատ. այնտեղ (Մելքիսեթը) նրան օրինեց եպիսկոպոս ավագ երկուշաբթի օրը: Ապա կաթողիկոսն ու վարդապետը եկան էջմիածին, եւ բոլոր եկեղեցականները, աշխարհականներ ու ավագ հինգշաբթի օրը մեռոն օրինեցին: Մեռոն օրինելուց հետո



Պատմագրության մեջ Կարբի գյուղը հիշատակվում
է նաև գյուղաքաղաք, ունեցել է Եկեղեցիներ,
մենաստան եւ կուսանաց անապատ:
Եկեղեցիներն են՝ Սր Աստվածածինը, Ծիրանավորը,
Թուխ Մանուկը, Սր Կիրակին կամ Սր Գետրգը:
Կուսանաց անապատը հիմնադրել է Մովսես
Տաթեւացին (նրա հիմնադրած երեք կուսանաց
անապատներից մեկն է):

**Կարբի գյուղի Սր
Աստվածածին Եկեղեցի**



Սաղմոսավանք

Աշտարակի շրջանի Սաղմոսավան գյուղում՝ Քասախ
գետի ափին: Վանական համալիրի կազմում են
Սբ Սիոն եկեղեցին, Սբ Աստվածածին փոքրաչափ
եկեղեցին:

շտապ ճանկու դրին ժողովրդին, քանզի բազմաթիվ երկրներից ժողովուրդ էր եկել, որոնք, սուրբ մեռնի եւ Եջմիածին օրինությունը առնելով, գնացին իրենց տեղերու:

Իսկ ջուղայեցի վաճառականները, հասնելով Սպահան քաղաքը՝ իրենց համազգային-ների մոտ, ամենքին պատմեցին բարեվայելու արարողությունների մասին, որ տեսել էին Մովսես վարդապետից: Իսկ ջուղայեցինները՝ եկեղեցականները ու աշխարհականներ, լսելով այդ, տենչում էին վարդապետի սիրուն եւ խանճակար սրտով փափազում էին նրա տեսությունը: Նրանք պատրաստեցին նշանավոր մարդիկ՝ քահանաներ ու աշխարհականներ, եւ ուղարկեցին իրեւ հրավիրակ Մովսես վարդապետի, որպեսզի գա Սպահան իրենց մեջ: Նաև ջուղայեցինների գլխավորը՝ Քրիստոսի ողորմությունները իրեն արժանի խոջա Նազարը, գրեց իր ողորուն՝ խոջա Սաֆրազին, որ այդ օրերին Աստրապատական երկրում էր, մեծարել Մովսես վարդապետին Սպահանում: Նրանք եկան, Մովսեսին առան, տարան Սպահան: Իսկ նա այնտեղ ըստ քրիստոսական վարդապետության եւ ավետարանական քարոզության ափոփելով՝ մշտիքարում էր նրանց եւ հաստատում քրիստոսական հավատքի մեջ, ոչ միայն քաղաքի բնակչներին, այլև ամբողջ շրջակա գավառին: Այնտեղ որոշ ժամանակ մնալով՝ մեծ փառքով փառավորվեց նրանցից, ապա այնտեղից վերադարձավ Երեւան քաղաքը՝ իր տեղը:

Մինչդեռ Մովսես վարդապետը անհոգ միամտությամբ մնում էր Երեւան քաղաքում՝ իր տանը, Մելքիսեկ կաթողիկոսը նենգություն նյութեց նրա դեմ հետեւյալ ձեւով: Մի քուղը մեծացել հանեց իրուեւ ստացագիր, որտեղ գրված էր, թե՝ «Ես՝ Մովսես վարդապետս, պարտը եմ Մելքիսեկ կաթողիկոսին հարյուր թունան, գնան Սպահան, այնտեղից վերադարձամ, տաճ»:

Այս քուղը տարան Ամիրգունա խանի դիվանը եւ ճշտիվ պահանջում էին հարյուր թունան: Իսկ Մովսես վարդապետը ինչպես որ անպարտ էր, նոյնն էլ պատասխանում էր, թե անպարտ եմ դրանից, որովհետեւ այդ քուղը ես չեմ տվել, այլ դավադրությամբ ու ինչ-որ հնարքով են սարքել այդ գրությունը: Եվ թեպետ Մովսես վարդապետը բազում խոսքերով պատասխանում էր, սակայն փրկություն չէր լինում, որովհետեւ զրպարտիչների կողմը ճարտասան էր եւ չարիքներուն փորձված: Իսկ խանը իր իշխաններով եւ բոլոր քրիստոնյաները վերահասու եղան, որ այդ քուղը ինչ-որ հնարանք է, իսկ Մովսեսը անպարտ է, ուստի ամենքը ջանում էին փրկել Մովսեսին, բայց չին կարողանում: Այս գործի դատը Երկարաձգվեց Երկու ամիս, բայց ազատարար աստված նրան փրկեց հետեւյալ ձեւով:

Մելքիսեկը եւ իր Եղբորորդի Սահակ կաթողիկոսը դիս ունենի Յանազասա եպիսկոպոսի դեմ, որ Յավուց թափի վանքի եւ Երեւան քաղաքի առաջնորդն էր: Սա խորխտ եւ ճարտարաբան մարդ էր, որ ճարտարախոսությամբ վախեցնում էր Մելքիսեկի կողմին եւ իշխում էր նրանց վրա: Մելքիսեյանները այս քենի պատճառով վնասը գցեցին Յանազասա եպիսկոպոսի վրա:

Մի օր, երբ դատական ատյանում էին, Սահակ կաթողիկոսը խանի առջեւ ատյանի մեջ կանգնեց եւ

ասաց ի լուր ներկաների: «Այդ քուղը ամբողջովին կեղծ է, որովհետեւ ոչ իմ հորեղբայր Մելքիսեկ կարողիկոսը գիտի, ոչ էլ ես, այլ ես գիտեմ, որ Համազասպ եպիկոպոսն է այդ նենգությունը արել»:

Այս ժամանակ խանը եւ այնտեղ գտնված բոլորը ցնծությամբ օրինեցին աստծուն, որ անպարտին զրպարտիչների ձեռքից ազատեց: Նույն ատյանում այդ քուղը պատրաստեցին, իսկ Մելքիսեյանները կորագլուխ ու անոթապարտ գնացին իրենց տեղերու: Սրանցից հետո անցան քիչ ժամանակներ, երբ մեծ Շահ-Արա արքայից Ամիրգունա խանին Մովսես վարդապետի վերաբերյալ հրովարտակ եկավ հասավ, որի մեջ գրված էր, թե՝ «Ամիրգունա խան, ճանաչիր Մովսես անունով վարդապետին, որ բնակվում է քո քաղաքում՝ քեզ մոտ, շտապ նրան ինձ մոտ ուղարկես, ես ուր որ լինեմ, թող գա՝ ինձ գտնի»:

Այս որոնման պատճառը սպիտակեցրած մոմն էր, որովհետեւ այն ժամանակ, երբ Մովսես վարդապետը Երուսաղեմ քաղաքում էր, այնտեղ սովորեց մոմն սպիտակեցնելու արհեստոց եւ ներկայումս ինքը ամեն տարի (մոմնը) սպիտակեցնում եւ եկեղեցում պատարագին եւ բոլոր ժամերգություններին սպիտակ մոմն էր վառում, որ տերունական եւ նշանավոր սրբերի տոնները կատարում էր մեծ հանդեսով, սպիտակ ու պայծան մոմերով, մեծ ցնծությամբ, ինչպես որ գրված է սուրբ Յովիհան Օծնեցու պատմության մեջ (11):

Դարձյալ՝ թագավորները սովորություն ունեն, որ տղաներ ու աղջիկներ հավաքեն բոլոր երկրներից: Այս սովորության համաձայն՝ նաև Շահ-Արա թագավորը իր նախարարներից մեկին, որի անուն էր Բայինդուր թեկ, սրա հետ նաև այլ ներքինիներ ուղարկեց Աստրապատական Երկիրը թագավորի համար հավաքելու տղաներ ու աղջիկներ: Նրանք գալով եկան, հասան Երեւան քաղաքը: Մի օր Բայինդուր թեկն ու Ամիրգունա խանը միասին գրուանքի ելած շրջում էին. գրունելով եկան այն անապատը, որ բնակվում էր Մովսես վարդապետը: Այնտեղ Մովսես վարդապետը թերեց սպիտակ մոմից յոթ մոմ նվիրեց Բայինդուր թեկին, յոթն էլ Ամիրգունա խանին: Բայինդուր թեկը, տեսնելով մոմի առավել պայծան, չընաղ, հրճվալի սպիտակությունը, իշխու սքանչացավ, հաճելիություն գգալով հավանեց եւ ասաց. «Պահեմ սա եւ տամեմ, նվեր մատուցեմ շահին»: Երբ Ամիրգունա խանը այս լսեց, ասաց. «Որովհետեւ այդպես ասացիր, ինձ էլ բաժին են դոնուն քոնի հետ, որպեսզի դրա հետ նվեր մատուցվի թագավորի առջեւ»:

Իսկ երբ Մովսես վարդապետը լսեց իշխանների խոսքերը եւ տեսավ նրանց գործերը, ասաց. «Որովհետեւ այդպես արիք, յոթ մոմ եւս թերում, ավելացնում եմ դրանց վրա, այդպես կմատուցես թագավորին»: Իսկ Բայինդուր թեկը գործերը վերջացնելուց հետո գնաց թագավորի մոտ եւ շատ ու զանազան նվերների հետ թագավորին մատուցեց նաև սպիտակ մոմերը, որոնք թագավորը տեսնելով՝ ձեռքն առավ մոմները, նայում ու զննում էր եւ հարցում, թե որտեղի՞ց է: Իսկ Բայինդուր թեկը ասաց, թե որտեղից է: Արդ՝ դրա համար թագավորը հրովարտակ գրեց Ամիրգունա խանին, որ Մովսես վարդապետին ուղարկեց շահի մոտ:

Դրա համար Մովսես վարդապետը Երեւանից



Ծոռոթ

Սյունիքի Երմջակ գավառի գյուղերից է (այժմ Նախիջենի Զովֆայի շրջանի մեջ է մտնում): Հոչակվել է 15-18-րդ դարերում, երբ գյուղում մի շարք արհեստների հետ մեկտեղ զարգացել են գրչարվեստը, մանրանկարչությունը, որմնանկարչությունը: Ծոռոթի յոթ եկեղեցիներից ու վանքերից պահպանվել են Սր Յակոբ եկեղեցին, Սր Աստվածածին, Սր Լուսավորիչ եւ Սր Ստեփանոս վանքերը: Այս գյուղադարձում եւս Սովոր Տաթեացին դպրոց է հիմնել:

ելավ, գնաց Բաղրադ քաղաքը, որովհետեւ այնտեղ էր Շահ-Արաս թագավորը, որ կամենում էր Բաղրադ քաղաքը եւ գրավել օսմանցիներից, որը եւ գրավեց քիչ օրեր անց: Մինչ տակավին չեր գրավել Բաղրադը, այլ նստած պատերազմում էր նրա շուրջը, այնտեղ Մովսես Վարդապետը ներկայացավ թագավորին, երբ մեր թվականության 1075 (1626) տարին էր: Թագավորը հարցրեց մոմի սպիտակության մասին, իսկ Վարդապետը առջեւ կանգնած ըստ պատշաճի պատասխանում էր:

Ապա շահը հրովարտակ գրեց, տվեց Մովսես վարդապետին եւ ուղարկեց Սպահան քաղաքը՝ Լալարեկ իշխանի մոտ, որ թագավորի կողմից Սպահանի քաղաքապետ էր նշանակված, որ Մովսես վարդապետին տա հարյուր լիտր (12) մոմ, թագավորի ծառաներից երեք ծառա եւ նրանց բոլոր ծախսերը հոգա: Իսկ Մովսես վարդապետը այգիներից որին հավանի, անպատճառ տան նրան, որպեսզի այնտեղ մոմ սպիտակեցնի, ծառաներին սովորեցնի, տանի թագավորի մոտ, ուր էլ նա լինի:

Մովսես վարդապետը, առնելով արքունական հրովարտակը, եկավ Սպահան քաղաքը, ցույց տվեց Լալարեկին, իսկ նա կատարեց թագավորի բոլոր հրամանները. Մովսեսին մոմ եւ երեք ծառաներ տվեց, որոնց անուններն էին՝ Ֆառուխ, Ղարշխա, Բեկզադ, եւ այն այգին, որը կոչում են Թիրլիմ խանի այգի: Մովսեսը այնտեղ ուր ամիս աշխատեց, մոմը սպիտակեցրեց, ծառաներին սովորեցրեց, ապա սպիտակեցրած մոմն եւ ծառաներին առավ, գնաց Ֆարիապատ, քանդի շահը այնտեղ էր, որովհետեւ Բաղրադ քաղաքը գրավել էր եւ դարձել, գնացել էր Ֆարիապատ այնտեղ ձմեռելու համար. այս պատճառով Մովսեսը գնաց այնտեղ:

Այդ նույն օրը այնտեղ էր մեծ փառավոր իշխան ջուղայեցի խոջա Խազարը, որ խիստ բարեկամ էր Մովսեսին եւ հարգված Շահ-Արաս թագավորի առջեւ: Սրա ձեռքով Մովսես վարդապետը սպիտակ մոմն ու սովորեցրած ծառաներին ներկայացրեց թագավորին, որը տեսնելով արքան շատ ուրախացավ, ձեռքը առավ եւ գվարճանում էր նրանցով ու բազում հուսադրական խոսքերով անմիջապես ճամփու դրեց վարդապետին:

Այդ օրերին եկավ, վրա հասավ մեր Քրիստոս աստծու ծննդյան հայտնության տոնը, եւ որպես Մովսեսը սովորություն ուներ մշտապես մեծ համեստով էր կատարում տերունական տոները: Եվ ավելի առավել այս տոնը (նախատեսել էր) մեծ պատրաստությամբ շատ ավելի պատշաճ կարգավորությամբ, քանզի ինքը՝ թագավորը եւս պատրաստվել էր գալ տեսնելու եւ գվարճանալու, որ եւ եկավ: Մովսես վարդապետը թափեց երկու մարդաշավի մոմ եւ ճրագալույցի գիշերը լույս տոնի օրը վարեց երեկոյան սուրբ Աստվածածին անունով, իսկ ինքը ոտքի կեցած մինչեւ առավոտ հսկում էր կատարում ջերմագոլյն սիրով եւ հաստատում հավատով: Հորդարուխ արտասուրերով աղթում էր առ տերը՝ տիրանայր սուրբ Աստվածածին բարեխսու բռնելով տիրոց մոտ, որպեսզի տոնախմբությունը շնորհալի ցույց տա այլահավատ թագավորին եւ նրա սիրտը գուրով ու խղճով լցնի քրիստոնյա ազգի հանդեպ: Աստծու ողորմությամբ եղավ ըստ վարդապետի խնդրանքի, որովհետեւ տո-

նի օրը մինչեւ արքան նստած էր զվարճանքին, իսկ վարդապետը զգեստավորված իր պաշտոնյաներով, կատարում էր ջրօրիների կարգը, արքան մեծ հաճույք էր ստացել եւ հավանել տոնախմբությունը: Մովսեսի նկատմամբ համակրանք էր առաջացել, ուստի թագավորը վարդապետի մասին հարցրել էր խոջա Խազարին, իսկ նա բարի խոսքեր էր ասել եւ թագավորի մոտ շատ էր խոսել Մովսեսի մասին:

Օրեր հետո արքան ասաց խոջա Խազարին. «Զեր վարդապետը ի՞նչ խնդրանք ունի, որ կատարենք, գա՞նձ, կալվածք կամ ուրիշ որեւէ բան, ինչ ինքը կամենում է»: Խոջա Խազարը պատասխանել էր, թե՝ «Տա այնպիսի մարդ է, որ աշխարհն ու նրա հարստությունը զանց է արել, եւ դրանցից ոչ մեկի պետքը չունի: Իսկ եթե շնորհ անեն, սրան իբրեւ պարգև տուր էջմիածնի լուսարարությունը, որպեսզի այնտեղ այն եկեղեցուն սպասավորելով՝ աղոթի թագավորի կյանքի համար»: Նրա (Խազարի) խնդրանքը հաճելի եղավ, եւ արքան շատ հավանեց, ուստի թագավորական հրովարտակով Սուրբ Էջմիածնի լուսարարությունը տվեց Մովսեսին:

Ապա Մովսես վարդապետը Ֆարիապատից դուրս եկավ մեծ փառքով եւ անպատմելի ցնծությամբ, ոչ միայն իր, այլև բոլոր քրիստոնյաների (ցնծությամբ) եկավ, հասավ երեւան քաղաքը, ապա Սուրբ Էջմիածնին եւ առանց հապաղելու ձեռնարկեց Սուրբ արուի վերանորոգության. մեր թվականության 1076 (1627) տարին՝ վարդապատի պասի երկուշաբթի օրը, սկիզբ դրին շինության ու նորոգության:

Կրո՞ տեսնում ես նորոգությունը, բայց չգիտես, թե ինչպիսին էր ավերակությունը. դրա համար հարկադրված գրում եմ ավերակության մասին, որպեսզի ծանոթանան Սուրբ արուի թշվառությանը, սրանով նաեւ այն ցավին ու կիսիժին, որ ունեին ողջ հայ ազգն ու վարդապետները ժամանակին Սուրբ արուի համար: Սրա հետ նաեւ (ծանոթանան) Մովսես վարդապետի եւ իր աշակերտների աշխատանքներին, քրիստոնյաների նվիրատվություններին ու ողորմություններին Սուրբ արուի նորոգության համար:

Ինչպես ասում է Դավիթ մարգարեն, թե՝ «Երուսաղեմը դարձեն ինչպես մրգապահների հյուլեր» (13): Իսկ եսայի մարգարեն Սիոնի մասին ասում է. «Սիստեմների մեջ իբրեւ հովանի» (14): Սրա նման համարի նաեւ աստվածաբնակ Սուրբ արուը, որովհետեւ բոլորովին դատարկվել էր ունեցվածքից, կողոպտվել էր զարդերից. ոչ գիրը կար, քանի որ այնտեղ ժամանացություն չկար, եւ ոչ էլ ընթերցում, ոչ զգեստ ու շուրջաւ, որովհետեւ ժամակարգություն ու պատարագ չկային: Մինչեւ անգամ Քրիստոսի իջնան տեղմ ու սուրբ սեղանը ծածկոց չունեին: Ոչ կաճեղենը, որովհետեւ լույս չկար, այլ մշտապես խավարի մեջ էր, բայց նի այլազգի մահմեդական ձերի ճրագ էր վառում եւ դրում թեմի վրա, այն էլ երեթմն-երեթմն անցորդ-ճամփորդների համար, որպեսզի տեսնելով այն՝ իրեն ողորմություն տան: Ոչ խնկարկություն, որովհետեւ բուրվառ ու խունկ չկար: Եկեղեցու սալարկած հատակը քանդրնելված էր, դարձել էր գեղունների ու սողունների բոյն, իսկ ունեցած մեծամեծ լուսամուտները բոլորը բաց էին առանց շրջանակի, որտեղից թռչունները ներս էին մտնում, եկեղեցին լցնում ծիրտերով ու ծեղերով եւ այլ աղբե-

րով, որոնք ամեն օր հարկադրված սրբում էինք: Իսկ առավոտյան լուսանալիս թոշունների ձայները խլացնում էին ժամանացությունը:

Իսկ դրսից զմբեթի գագաթը, ամբողջ տաճիքը, պատերի երեսները քանդաղված էին ու քարերը՝ թափված, պատերի հիմքի քարերը՝ փշրված ու ծակոտված: Վաղեմի ժամանակներից եկեղեցու շուրջ եղած շինությունները դարձալ ավերված են եւ մինչանց վրա փլված: Չողն ու մոխիրը այնքան էին բարձրացել, որ եկեղեցու շուրջը ամեն կողմից աղբն ու հողը յոր կանգուն բարձրացել. եկել ծածկել էր եկեղեցու հիմքերն ու աստիճանները, որ դրսի կողմից են:

Իսկ եկեղեցու կամ տաճ զարդերը, սպասքներ ու անորներ բնավ չկային, որովհետեւ ինչ որ եղել էին հիմ ժամանակներից, կաթողիկոսները բոլորը վաճառելով կամ գրավ դնելով վատնել էին, եւ այժմ նույնպես գրավ դրված անորներ կային մահմեդական իշխանների մոտ: Մրանք Մովսես վարդապետը ազատեց, դրանք էին ստրոք Գրիգոր Լուսավորչի որդի Արիստակես հայրապետի աջը, նաեւ Աղջուց վաճիք ստրոք Ստեփանոսի աջը, որոնց հետ խաչ սկիի, բուրվառ, շուրջառ եւ այլ իրեր:

Ին ասած խոսքերը ցույց են տալիս, որ տեղը թափուր էր մարդկանցից. ճիշտն ասեմ, ամենեւին անբնակ չէր, իսկ դու համարիր իբրեւ անբնակ, որովհետեւ կաթողիկոսները այնտեղ՝ Էջմիածնում, չին բնակվում, այլ Երեւան քաղաքում՝ Կաթողիկե եկեղեցուն կամ Երկրներում շրջագայում էին: Իսկ ոմն սեւազլուխներ՝ սինօքորներ, գրեհիկներ, ինչպես գյուղացի հողագործներ, ստորին մշակների հետ բնակվում էին Էջմիածնում եւ տարվա շատ օրերը ավելի գյուղերում էին անցկացնում, քան Էջմիածնում:

Երբ Մովսես վարդապետը սկսեց նորոգումը, հողի ու մոխրի համար տարակուսում էին, որ բլրացել էր շուրջանակի, թե ինչպես կլինի պեղել: Բայց որովհետեւ աստծու կամքը քաղցրացել էր, եւ գործի ձեռնարկությունը նրա հաճությամբ էր, ոյուրին եղավ հողի վերացումը: Որովհետեւ գետից վարար ու հորդ ջուրը բերին, հողի մի կողմը կապեցին եւ բազմաթիվ մշակները գործի դրին. մշակները սկսեցին հողը փորել եւ խառնել ջրին. այդպես անելով՝ ջուրը հողը առաջ տանում էր, իսկ քարը՝ մնում: Քիչ օրեր հետո շուտափույք ամեն կողմից հողը վերացավ եւ ամբողջ տեղը բացվեց, դարձավ հարթահատակ գետին: Մնացած քարերը շարեցին տների պատերում, որ գործին օգտակար եղավ: Ապա շուրջանակի լայն ու ընդարձակ պարհապ քաշեցին՝ նրա վրա ութ բուրգ կառուցելով:

Իսկ շինված պարհապ այսպես ձեւեցին: Ինչպես որ եկեղեցու մեջ տեսնվում են եկեղեցու չորս խորաններ, որոնք հորինված են նրա մեջ աշխարհի չորս կողմերը ուղղված, եկեղեցու արտաքին կողմից այս չորս խորանների ճակատներից (սկսելով): Նախ չափեցին արեւելյան ճակատից դեպի արեւմուտքի քառասունինգ գագ (15), որ անում է վարսուներեք հալարի (16), ապա քաշեցին արեւելյան կողմից պարհապ. այսպես ինացիր նաեւ արեւմում կողմինը: Սույնպես եւ հյուսիսային կողմի խորանի ճակատից չափեցին դեպի հյուսիս քառասուն գագ, որ անում է ի հիսունվեց հալարի, ապա պարհապ քաշեցին. այսպես ինացիր նաեւ հարավային կողմինը: Ապա

արեւմում կողմում պարսպի մեջ շինեցին դարբաս, տներ իրենց եւ հյուրերի պետքերի համար: Յյուսիսային եւ արեւելյան կողմերում շինեցին միաբանների բնակության խցեր, իսկ հարավային կողմում շինեցին սեղանատուն, փուռ, տնտեսատուն, ցորենի եւ այլ նյութերի ամբարանոց: Այս բոլոր շինվածներից միայն պարհապ է հողից շինված, իսկ մնացած բոլոր շինեցին տաշված քարով, թրծված այուսով, կրով ու գաջով, գեղեցիկ ու վայելուց հորինվածքով:

Մրանից հետո եկեղեցու գմբեթի տաճիքը նորոգեցին, քանզի սալերը քանդվել եւ տեղերից հեռու էին թռել: Իսկ եթե նեկը ցանկանում է իմանալ Սուրբ Էջմիածնի լուսակառուց, քրիստոսանկար, աստվածաբնակ տաճարի չափը, այսքան է. հիսուն հալարի չափ Երկայնքն է արեւելքից դեպի արեւմուտք, քառասունութ հալարի լայնքն է հյուսիսից դեպի հարավ, երեսունինգ հալարի բարձրությունն է՝ ներսի կողմի գմբեթի պատից մինչեւ գետին: Այս չափերը եկեղեցու մեջ ներսի կողմինն են առանց պատերի:

Եվ օրավուր նորոգում, հաստատում էր Սուրբ արողը, որով (հաստատում էր) քրիստոնեության հավատի ամեն կարծ ու կրոն:

Որովհետեւ Սուրբ արողի նորոգման լուրը հօչակվելով ծավալվեց ողջ աշխարհում՝ Յունաստանում, Պարսկաստանում, Քրդաստանում, Վրաստանում, ուստի ամենքն էլ ուրախանալով ցնծում էին:

Սովուն վարդապետը նաեւ իր աշակերտներից ուղարկեց ամեն կողմ քարոզության, որոնք գնացին հոգեբուլ քարոզությամբ եւ բարեկրոն վարքով հաստատեցին քրիստոնեական հավատի եւ եկեղեցական ավանդության կարգերն ու կրոնը, որովհետեւ ուր էլ գնում էին, ըստ իրենց վարդապետի ննանության ծշմարիտ գործեր էին ցույց տալիս: Շինում էին եկեղեցներ, կարգում էին քահանաներ եւ պարտելով կործանում էին ծշմարտության հակառակողներին, որի հետեւանքով գորանում, առաջանում էր ծշմարտությունը: Այլեւ այս հոգելից սուրբ վարդապետ տեր Մովսեսը հաստատեց դպրոց Օհանավանքի (17) մեծափառ Սուրբ Ուխտում, որտեղ հավաքեց բազմաթիվ մանուկներ եւ ամենի ծախսն ու պետքերը ինքն էր հոգում, իսկ մանուկները անօքանունք ու անխափան սովորում էին եկեղեցական ուսումն, աստվածաշնչական գործերը, իմաստափրություն: Մրանք բոլորը եղան երկրին պիտի մարդիկ եւ օգտակար՝ վարդապետներ, եպիսկոպոսներ, արեղաներ, քահանաներ եւ բոլոր վաճառերը, որ ամայացել ու խավարի մեջ էին, լցվեցին միաբաններով, արեղաներով, կրոնափորներով, իսկ գյուղերը՝ հմուտ քահանաներով: Այս պատճառով ողջ ժողովուրդը, որ ամբողջ աշխարհում բնակված է, առաջին կաթողիկոսի ամկարգությունից ծանձրացած, իսկ սրա բարեկարգությունից միշիքարգված, սիրով ու հոժարությամբ, կաթողին սրտով կամենում էին, որ մեր սուրբ հայո Մովսես վարդապետը լինի կաթողիկոս: Ամեն տեղերից գրություններով ու աղաշանքներով թախանձում էին վարդապետներ, եպիսկոպոսներ եւ նշանավոր մարդիկ, որ հանձն առնի կաթողիկոսության աստիճան, բայց նա հրաժարվում էր՝ իրեն անարժան հանարելական աստիճանին:

Բայց աստծու մարդ այս տեր Մովսես վարդապետը մշտապես իր հոգում վարանում, տիրում ու ցա

վում էր հարյուր թուման տուգանքի համար, անտառնելի ծանր բեռ ու անխօնելի շղթա եղավ Եջմիածնի Սուրբ արորի վրա. ոչ միայն նա, այլև ողջ հայոց ազգը (տիկրում ու ցավում էր): Քրիստոնակ Սուրբ արորի փրկության համար Մովսես վարդապետը չժուլացավ՝ իրեն կամ իր տկար ծերությունը խնայելով, այլ ելավ գնաց արքայի արքունիքը՝ Ղազրին քաղաքը, քանզի այնտեղ էր Շահ-Արքաս թագավորը մեր թվականության 1077 (1628) տարում: Եվ դիմելով այստեղ-այնտեղ՝ թագավորների նախարարների նոտ, աղազում էր նրանց իմացնել արքային հարյուր թուման հարկը վերացնելու Եջմիածնի վրայից: Նախարարները հարմար չհանարեցին, ասելով. «Այս թագավորը շատ փողասեր է եւ ագահ, փողի այդքան շահից չի հրաժարվի, մանավանդ որ այդ գործը ինքն է հաստատել, որով ավելի երեւում է, որ չի հրաժարվի դրամից: Այս պատճառով դու պարտավոր ես լուել այս ժամին եւ օրերին: Իսկ մենք, հարմար ժամանակ գտնելով, կխոսենք արքայի առջեն»: Այս պատճառով թախժալից սրտով վերադարձավ Ղազրինից, եկավ Սուրբ Եջմիածնի:

Իսկ Շահ-Արքաս արքան ելավ Ղազրինից, գնաց Ֆահրապատ քաղաքը, որ կոչվում էր Աշոավ, այնտեղ ձմեռելու: Եվ մարդկային հյուծվող բնույթին համապատասխան հիվանդացավ, մեռավ մեր թվականության 1078 (1629) տարվա հունվար ամսի 7-ին եւ կտակով հաստատեց, որ թագավորությունը տրվի իր թորին: Քանզի արատամիտ ու բազմախորհուրդ Շահ-Արքաս թագավորը իր որդիներից ունաց սպանեց, ոմանց կուրացրեց՝ երկյուղելով, թե միհորւց (նրանցից մեկնումելին) իշխանները թագավորեցնեն: Մնացել էր մի բռո՛ իր ավագ որդու որդին, այս պատճառով թագավորությունը տվեց իր թորին: Բոլոր նախարարները, թագավորի տան հավատարիմները հավաքվեցին թորին թագավորեցրին եւ նոր թագավորի անունը կոչեցին Շահսեֆի, քանի որ վիճակով դրին նրա անունը, վիճակն ու կոչումը անվան հարմարվեց, որովհետեւ նորընծա թագավորի հոր անունը Սեֆի էր: Նորընծա թագավոր Շահսեֆին թագավոր նատավ նույն թվականին՝ 1078 տարվա հունվար ամսի 19-ին:

Այս ժամանակ պատշաճ ու հարմար պահ եղավ հարյուր թուման տուգանքը վերացնելու համար: Այդ պատճառով Սպահան քաղաքում բնակված ջուղայեցի ժողովուրդը, մանավանդ աստծու ողորմությունների արժանի քրիստոնասեր մեծ իշխան խոչա Նազար նամակ գրեցին եւ արագանքաց սուրբանդակի միջոցով հասցրին Եջմիածնի Մովսես վարդապետին, որ շուտափութ հասնի նորընծա թագավորի պալատը հարյուր թումանը վերացնելու համար: Մովսես վարդապետը անհապաղ շտապանքով գնաց Սպահան քաղաքը՝ թագավորի պալատը եւ թագավորի պալատում ուր ամիս մնալով, տեսնելով բոլոր նախարարներին՝ հներին ու նորերին, եւ նրանց սրտերը գրավեց բազմանվեր աղերսանքով:

Ապա աստծու սուրբ մարդը պատրաստեց ընծառ որպես վայել է թագավորներին, սկսուելով զուտ ու կի դահեկան եւ այլ թանկագին իրեր, խնդրագիր, որ կոչվում է արգա: Կարդապետն ու խոչա Նախարարների միջնորդությանը ներկայացրին թագավորին: Կարդապետի վերաբերյալ արքայի հարցու-

մին խոչա Նազարը նրան տեղեկացրեց՝ պատմելով վարդապետի ազնվուրյան մասին, նաեւ թե նախածանոր եւ հաճելի ծառա էր նախորդ մեծ թագավորին՝ քո պապին, եւ այժմ աղորող է թագավորի կյանքի համար, բայց այս խնդրանքը ունի, որպեսզի արքան քննելով գրա իր տառապայալ ժողովրդի վրա եւ ծանր բեռը, որ անտեղի եւ զուր դրվեց մեզ վրա, այսինքն՝ հարյուր թուման տուգանք, արքան հրամայի վերացնել:

Եվ արքա Շահսեֆին այնտեղ ատյանում շատ բան խոսեց խոչա Նազարի հետ, Մովսես վարդապետից հարցրեց հարյուր թուման տուգանքի մասին եւ աստվածային ողորմությամբ ու շնորհներով վարդապետի բոլոր խոսքերը դյուրին ու ախորժելի թվացին թագավորին, քանզի ամենաթագավոր աստված, որ իր ձեռքում պահում է թագավորների սրտերը, թագավորի կամքը հաճելի դարձրեց ու քաջցրացրեց, ուստի ի լուր ամբողջ ատյանի ասաց. «Զիջեցի հարյուր թուման տուգանքը, որ պիտի տայիք թագավորի դիվանին, այսուհետեւ կացեք ազատ եւ աղորեցեք մեր կյանքի ու հաջողության համար»: Այն ժամանակ խոչա Նազարն ու Մովսես վարդապետը եւ բոլոր իշխանները, որ կանգնած էին թագավորի առջեւ, ձեռքերը բարձրացրին, գոհության ձայնով օրինեցին աստծուն ու թագավորին: Եվ ուրախությամբ ատյանից արձակվեցին, գնացին իրենց տեղերը: Այնուհետեւ Մովսես վարդապետը եւ խոչա Նազարը, ամեն օր շրջելով իշխանների պալատները եւ դիվանական մատյանների վերակացուների ու գրադիրների մոտ, այնքան չարչարվեցին, մինչեւ որ բոլոր մատյաններից, որտեղ որ գրված էր այդ բանը, ամեն տեղից հանին, դուրս գրեցին:

Ապա խոչա Նազարը գրեց մի այլ խնդրագիր եւ մատուցեց թագավորին՝ խնդրելով, որ տա թագավորական կնիքով հրովարտակ հարյուր թուման տուգանքը վերացնելու մասին, սրա հետ արքայից խնդրեց Մովսես վարդապետին տալ կարողիկոսության իշխանությունը: Վրա Շահսեֆին կատարեց նրանց բոլոր խնդրանքները, քանի որ թագավորական կնիքով, ազդու եւ հասու խոսքով հրովարտակ տվեց, թե՝ «Քող վերացվի հարյուր թուման տուգանքը, որը մեր թագավորներից դրված էր ձեր Եջմիածնի արժորի վրա, այլև տրվի իրաման Մովսես վարդապետի կարողիկոսության ըստ ամենայն հայոց ազգի խնդրանքի»: Արդ այսպես մեծ չարչարանքով եւ շատ դրամ ծախսելով, մոտ հազար թուման, հազիվ կարողացավ վերացնել հարկի ծանր բեռը Սուրբ արքուց:

Սուրբ վարդապետ Մովսեսը թագավորական հրովարտակը առավ, վերադարձավ մեծ ուրախությամբ, եկավ հասավ աստվածաբնակ արոռ Սուրբ Եջմիածնին: Սուրբ արքուն ազատության լուրը տարածվեց ընդհանուր աշխարհի հայ ազգի մեջ. ամենքը լցվեցին անպատճելի ուրախությամբ, ցնծության ծայնով գոհանուն էին աստծուց:

Այնուհետեւ ամբողջ աշխարհի՝ երեւելի մարդիկ, եկեղեցականներ, աշխարհականներ (խոսքը հայերի մասին է) սկսեցին առավելապես աղերսագիր ուղարկել Մովսես վարդապետին. խնդրում, աղազում էին, որպեսզի նաեւ մի այլ պատճառ հնարի հավատի հաստատության եւ եկեղեցու կարգի համար, հանձն առնի կարողիկոսությունը: Այս խնդրագրերը

ուղարկվեցին Պարսկաստանից, Վրաստանից, Քուրդիստանից, Հռոմանապատանից: Իսկ մեր սուրբ հայրը ոչ թե անձնական փառքի, որ փառավորված էր աստծուց եւ մարդկանցից, այլ աստծու ժողովորի օգտի եւ հոգեւոր կրոնի հաստատության համար լսող եղավ ամենի աղաքանքներին, ընդունեց կաթողիկոսական աստիճան եւ աստծու ամենասուրբ հոգու օժնամբ օծվեց ամենայն հայոց ազգի հայրապետ՝ պայծառ եւ պանծալի ժառանգորդ Սուրբ Էջմիածնի քարծրագահ արռողի մեր թվականության 1078 (1629) տարվա հունվար ամսի 13-ին՝ տիրոջ տնօրինության (մարդեղության) օրը: Եվ տիրոջ խոսքի հանաձայն լուսավորող ճրագ (18) դրվեց բարձր աշտարակի մեջ գերագահ աթոռում՝ լինելու լուսատու մեր Արամյան տան. եւ իր աստվածաշնորհ վարդապետությանը միշտարում էր բոլորին քաղցր քարոզությամբ՝ ուղղելով արդարության ճանապարհը:

Եվ մեր սուրբ հայրը մաքրակենցաղ էր ու սրբասուն, երկայնամիտ էր ու ողորմած: Սրա ձեռքով շատ գերիներ ազատվեցին գերիշներից, որովհետեւ սրա ժամանակ անհաշտ խռովություն կար պարսիկների ու օսմանցիների միջեւ, ուստի ավար ու գերություն շատ էր լինում երկու կողմերից: Գերիներից ում էլ տեսնում էր, անպատճառ գնում էր եւ ազատում:

Սա մնաց Քարծրագահ արռողի վրա՝ Սուրբ Էջմիածնում ուղիղ վարդապետությամբ, նորոգեց ավերակները նոր շինությամբ, պայծառացրեց միշտաներով ու վարդապետներով, պատշաճ ու հաստատուն ժամանակագրությամբ. հարստացրեց եկեղեցական անորներով, նյութական հարստությամբ: Սա կաթողիկոս մնաց երեք ու կես տարի եւ 1081 (1632) թվի մայիս ամսի 14-ին վախճանվեց. այս կյանքից մահով պակասեց եւ հանգստով ավելացավ տիրոջը. գնաց իր անձկալի քրիստոսի մոտ, որ հանապազ, մշտապաղաս եւ սրբանվեր աղոթքներով կրում էր հոգում:


Այնպես պատահեց, որ սրա մահը տեղի ունեցավ Երեւան քաղաքում՝ Սուրբ առաքյալ Անանիայի դամբարանի վանքում, այս պատճառով տարան ընդհանուր գերեզմանատուն՝ Կողենոն կոչված թլուրը, որ Կողեր վարդապետի՝ այնտեղ գտնվող գերեզմանի համար այդպես են կոչում թլուրը: Կողեր եւ Սելքիսեր վարդապետների գերեզմանին կից, այս երկուսի մեջտեղում պատրաստեցին այս սրբի հանգստյան շիրինը. այնտեղ երկու փակված տապանների միջեւ դրին նրա սրբասուն մարմնի նշխարները մեծ պատվով ու փառքով՝ ի փառ քրիստոսի եւ ի բարեփոխություն քրիստոնյաների:

Եվ ինչպես սրա կենդանությամբ, ամեն որ ուրախանալով ցնծում էր, այդպես էլ սրա մահով ամեն որ սպով տոգորված տիսրեց, ոչ միայն քրիստոնյաները (հայերը), այլև մահմեդականները, նաեւ ինքը քաղաքապետ Սահմանդուլի խանը՝ Ամիրգունա խանի որդին, եւ իր բոլոր իշխանները, որոնք եկան Մովսես կաթողիկոսի քաղման եւ սգակից լինելով քրիստոնյաներին, ողբում էին նրա մահը, որովհետեւ այնպիսի աստվածահաճ եւ աշխարհաշեն նարդ պակասեց երկրից, որի հիշատակը թող օրինությամբ լինի եւ նրա աղոթքներով տերը մեզ ողորմի. ամեն:

Ծանոթագրություններ

- Բաղրը Մեծ Յայրի Սյունյաց նահանգի գավառներից մեկն էր: Բաղրը համապատասխանում է Աերկայիս Ղափանի շրջանի մի մասին: Իսկ խոտանանը Բաղրի գյուղերից է, որ առաջին անգամ հիշատակվում է 9-րդ դարի վերջերին:
- Նավակատիրի կերակուրների մեջ միայն մսեղեն կերակուրներ չեն մտնում:
- Չալարի հայերին տրվող պատվանուն էր Թուրքիայում:
- Ժամկոչ կարծում եմ պետք է ժամականչ (Եկեղեցի կանչելը) հասկանալ, որ կատարվում էր զանգահարությամբ:
- Յեղին իրեաների քահանայապետն էր եւ միաժամանակ քառասուն տարի դաստավորություն արեց: Բայց իր զավակների վերաբերյալ անհոգ ու անտարբեր, ուստի պատժվեց աստծու կողմից:
- Զի այդպիսիր տեսան մերոյ քրիստոսի ոչ ծառայեն, այլ իրեանց որովայնին (Յոռվմ. Ժ2 18):
- Պատասխանի եւն նոցա Յիսուս եւ ասէ. Սոլորեալը, ոչ գիտէր զգիրս եւ ոչ գօրութիւն Աստուծոյ (Մատթ. ԻԲ 29):
- Այստեղ Դավիթեցին հիշում է Խորենացու «Ողբի» խոսքերը, «Ողորմին քեզ եկեղեցի Յայաստանեաց, խորմացեալ ի բարեզարդութենէ քեմին, ի բաջէն զրկեալ ի հովուէ եւ ի հովուակցէտ»:
- Վերին աշխարի Յայոց արտահայտության տակ պետք է հասկանալ Սյունիքը, եւ ոչ թե Բարձր Յայրը՝ Կարինը:
- Սատթ. Ճ 23:
- Յովիան երրորդ հմաստասեր Օձնեցի: Այժմյան Ակավերու շրջանի Օծուն գյուղից էր: Կաթողիկոս դարձավ 717-728 թվերին: 719 թվին գնաց Դամասկոս Օմար Բ ամիրապետի մոտ եկեղեցին հարկից ազատելու եւ քրիստոնյաների դեմ հայծանքը դադարեցմենու համար: Նա նշանակր մատենագիր է: Յայտնի երկասիրություններն են՝ «Ալտենաքարանութիւն», «Կանոնը», «Անկոնթիւն ժամագորոց», «Յիմնարկէր եւ օրինութիւն եկեղեցւոյ» եւ այլն: «Պատմութիւն» ասելով (այստեղ) պետք է հասկանալ «Յաղագ կարգա եկեղեցւոյ» (Յովհաննու հմաստասիրի Անձնեցւոյ «Մատենագրութիմքը», Կեմենտիկ 1953, էջ 98-120) գործը:
- Լինրը մոտավորապես 4 800 գրամ է կամ 12 ֆունտ:
- Սաղմ. ՅԸ 1:
- Ես. Ա 8:
- Գազը մեկ մետր 12 սմ է:
- Յալարի-արարական երկարության չափ է, որ մոտավորապես հավասար է 94 սմ:
- Օհանավանք կամ Յովիաննավանք Մեծ Յայրի Այրարատյան նահանգի Արագածոտն գավառի վանքերից է, որ այժմյան Աշտարակի շրջանի Օհանավանք գյուղուն է գտնվում: Ըստ ավանդության վանքը գյուղուն ունի հնուց ի վեր: Ղազար Փարպեցին է եղել վանքի առաջնորդը եւ իրենից հետո առաջնորդ է կարգել Յովիաննես ամունով մեկին: Ներկայիս եկեղեցին հիմնովին ավարտվել է 1217 թվականին:
- Ծննդոց Ա 14, 15, 17:

Երեւան, 1988



ԽՈՐՎԻՐ ՎԱՆԻ ԽՈՏՈՎԱՑՈՒՄ ՀՅՈՒ

Եղել է գրչության վայր, այդտեղ եւս Մովսես
Տաթեւացին դպրոց է հիմնել (դպրոցը գործել է Սր
Վարդան Եկեղեցում): Մեկ այլ դպրոց էլ գործել է
Սր Ստեփանոս վանքում: Բազմաթիվ ձեռագրեր են
ընդօրինակվել 17-րդ դարասկզբին:
Ներկայումս Նախիջեւանի տարածքում է:

**Աստապատի
Կարմիր վանքը
(Վասպուրականի
Քաջքերունիք
գավառում)**

Սիսական

ՀԱՏՎԱԾ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՏԻ ՀԱՄԱՍՈՒՐ
ԳՐՔԻՑ, ԳԼՈՒԽ Դ



2 յս բոլոր գյուղերն ու վայրերը մյուս ների հետ միասին, որ հիշվեցին եւ չիշշվեցին սահմանների նկարագրություններում եւ վճռագրերում, ցույց են տալիս Տաքեւի ծորի բարեշն ու բարգավաճ վիճակը Սյունյաց իշխանների տերության ժամանակ 9-11-րդ դարերում(1), տկարանալը 12-րդ դ., դարձյալ բարգավաճնը 13-րդ դ. Օրբեյանների հարստության օրոք(2) եւ նորից անկում ունենալն ու անշքանալը, շատերից խապար մոռացվելն ու անտեսվելը [հետագայում]: Սակայն սրանց փոխարեն որոշ վայրեր եւ ավեր շինություններ վերանորոգվեցին ու պայծառացան հետագա ժամանակներում՝ 17-րդ դարասկզբին: Դրանք խաղաղ, հոգեթեն վայրեր էին՝ Անապատներ կամ սրբաւեր այրերի եւ կամաց ճգնարաններ, [անձինք], որոնց ծիգն ու հաստատուն ընթացքը Յայոց եկեղեցական պատմության, մասնավորաբար 17-րդ դարի հիշարժան իրողություններից են, երբ արեւնութուն եւ արեւելքուն նշանրվում է նորոց եւ բարգավաճ կյանքի ընդիանուր աշխուժություն: Մեզ համար եւս հաճելի է այդ նկատել Ծղովկ գավառի սահմաններում, ուր հասանք համաձայն Առաքել վարդապետի խնամքով շարադրած Պատմության: [Այստեղ] Միանձնական (Վանական) կյանքի հիմնադիրներն ու նորոգողները եւ չորս [հզոր] հիմքերը դարձան Սարգիս Եպիսկոպոս Ամբերդացին՝ Արենի գյուղից, Կիրակոս երեց Տրավահոննեցին, Պողոս վարդապետ Մոկացին, Արիստակես վարդապետ Շամբեցին: Առաջինը, Արագած Լեռան ծերպերից մեկում գտնելով մի վախճանված անձանոթ ճգնավորի, թաղեց նրան այնտեղ եւ փափագեց նույնպիսի կյանքի: Միայնության համար վայր փնտուելուց հետո, հրաժարվելով աշխարհից, նա գնաց Երուսաղեմ ուխտի: Այս մասին

իմանալով՝ Երկրորդը գնաց, նրան գտավ սուրբ քաղաքում: Միաբան ու համախոհ լինելով նրանք վերադարձան ու փնտուեցին բոհուբորից եւ աղմուկից գերծ մի վայր, եւ լսելով, թե այդպիսի վայրերը կան Սյունիքում, եկան Տաքեւի վանքը, եւ մի կարճ ժամանակ մնացին Ցրվանքում կամ Չորովանքում, ապա թանահատի վանքում, հետո... իրենց բնակությունը կամ մենարանը հաստատեցին այնուեղ, որ անվանվեց Մեծ անապատ կամ Յարանց անապատ, ուր շինվեցին մի փոքրիկ եկեղեցի ու խցեր: Նրանց համբավի մասին լսելով [Վանականների] մոտ եկան վերոիիշյալ երրորդ եւ չորրորդ հիմնադիրները եւ այլ հոգեսեր անձինք՝ Մովսես վարդապետը, ով հետո Կաթողիկոս դարձավ(3), Ներսես Մոկացի (Բեխլու) քերթողը, ով պետք է Լիճ անապատը հիմնադրեր(4), Տաքեւի, հետագային Շամախու Թովճան Եպիսկոպոսը, Կարապետ Եպիսկոպոսը, ով նորոգեց Մեւանա անապատը, Արիստակես վարդապետ Բարկուշատցին, ով Տամանափարախի անապատը հիմնադրեց, Շամբորի ազնվագարմ Դավիթ Եպիսկոպոսը, ով հիմնադրեց Յարեքաբերդի անապատը եւ ոչ քիչ թվով այլ անձինք: Սրանց մեջ հրչակավոր դարձավ Ներսես Մոկացին, ով ոչ միայն Լիճ անապատը հաստատեց, այլև նրա նման հիմնադրության պատճառ դարձավ նաեւ Կտուց անապատի, եւ մեր դպրության մեջ թողեց այն ժամանակի համար ոչ անտեսելի, այլ՝ գովելի տաղաչափված հիշատակարաններ (բանաստեղծություններ), այդ թվում հանգավորված ներբող՝ նվիրված այս չորս հիմնադիրներ, որի համար մեզ հարկ եղավ հիշել սրանց, ըստ որում՝ չորրորդ հիմնադիրը Սարգսի, Կիրակոսի եւ Պողոսի հետ ոչ այլ ոք է, քան մեծ իշխան Յախնագարի՝ Շահ Արասի(5) մտերիմ պաշտոնյայի որդին՝ Յայկազն իշխանը, ով քաջանարութիկ, հմատուն այր էր ոչ այն պատճառով, որ նրանց հետ ճգնեց այս անապատում, այլ որովհետեւ էր:

«Տողու ներքին մասներով երկյուղած եւ զգասպ, Բարգով խոնարի եւ հեզ, սիլոդ ասրբածաւ պաշտության,
Անապատի սյունը դարձավ եւ գուրգուրում էր հսարական գուրով,
Եվ լինելով միշին իշխանության մեջ՝ չանք էր գործադրում անապատական»(6):*

Բավսկան թվով միաբաններ հավաքվելուց, (նրանց համար) բնակարանների կառուցումից հետո, Յարանց Վարդերի(7), նախնյաց ժառանգության քննությանը կանոնակարգելով հաստատեցին անապատական կենցաղավարության ստույգ սահմանները, նաեւ որոշեցին բանքակից հյուսված զգեստների տարազը**, աղոթքի, ընթերցվածների յոթ ժամերը, ազգային ծեսի համաձայն Պատարագի (հաստատումը՝ օրվա մեջ մեկ անգամ սարկավագների ու դպիրների հետ (սուրբ հաղորդության) միաբան ճաշակմանը, մսից եւ գինուց ազատ մշտնջենավոր պահքով, նաեւ ծեռքի աշխատանքի արդյունքով, որ մատակարարում եւ հոգ էր տանում Սարգսի Եպիսկոպոսը, իսկ ուսումնական հրահանգները՝ նրան խոհակից հայր Կիրակոսը, որոնց օգնականը հետագայում, մանավանդ ճգնական կենցաղավարության մեջ, դարձավ հայր Պողոս Մոկացին՝ մի բազմերախտ այր՝ կարգակիցների եւ կաթողիկոսների կողմից նախանձից հալածված: Սրանց մյուս

գլխավորները որոշ տարիներ անց բաժանվելով՝ մասնավոր վաճքեր են հաստատում տարբեր կողմերում. սրանց մեջ էր նաեւ ինքը՝ հայր Կիրակոսը, ով Թումա Եպիսկոպոսի հետ գնաց Քշտաղ եւ հաստատելով Հօնաքի անապատը՝ այնուեր մնաց մինչեւ իր մահը՝ 1621թ., երբ վախճանվեցին նաեւ երեք իիմադիրները (Սարգիսը, Պողոսը եւ Յայկազն իշխանը)՝ կարծեն.

«Նաև մահվածք ուիսր անելով նոյն տարւա մեջ առ Տեր փոխադրվեցին»

Այս չորս սյուները խարսխվելով՝ Տիրոջ աթոռով դարձան

Խոհեն, արի եւ արդար ողջախոհությամբ առաքինացան...

Քատաղեմ կրտքի նման, որ արծիվ եւ եղ անվանվեցին»

Մարդու եւ արծիվի նման, Փութով Տիրոջ մոտ պատճան»(8):

Սրանց հետ էր Ներսես Մոկացին, ով նրանց մոտ մնաց չորս տարի***, եւ նրանց վախճանից մեկ տարի առաջ Եկավ հաստատվեց Լիճ անապատում, եւ իր խոսքերին ավելացնելով [նոր բաներ] Երկարորեն դրվատում է նրանց հրճելով զույգ հարազատներով.

«Որոնցով եկեղեցու կարգերը կանոններով սահմանակարգվեցին»

Երկու պատրիարքան ակնեղեն, որ ընդելուզված էր ահարոնյան երկու թեւերի վրա...»

Երկու սաղարթակամիր ձիթենիներ, որ նոր հողի վրա արտադրացան,

Բոցավառ զունդն աջից եւ ձախից ձյուղերով բարձրացավ

Վյնպես որ բազում ախտացյալներ հավաքվեցին՝ նրա հովանու դրակ

Թանահարի անապատում, եւ այս ձեռով քծկվեցին,

Պարարտ ձիթենի լինելով՝ Տաթեսի գավթում դրվեցին

Եւ պարարտացված պղողով Քրիստոսին ընծայվեցին իրեւն ձյուղ

Փոխարինողները լինելով՝ Ենութիւն եւ Եղիայի, երկրուն շշեցին,

Թեւպեր կյանքով տարբերվեցին, սակայն գործերով իրավ նմանվեցին

Իրենց դեմքով, ձեւով, կոչի հանդելանքով՝ Մարդկանց որդիներին բացարքեցին աշխարհի ընդունայն վայելքը

Կենդանիների լուսողական երկու դոները, որ Արարից հաստարվեցին,

Մասնահարկորեն միասին լինելով՝ լուսիլիք միեւնույն շավով են ընթանում

Կատալարվեցին իրեւն մեկ կամք, մեկ կարգ, մի կրոն, մի հոգի,

Տայարան պարտավոր է ցնծալ եւ խայրալ հոգեւորի մեջ,

Շուրջապար բռնել հուսով ու երգել հումերական երգեր

Վաղուց կոծկած գրքերն ընթերցեցին եւ ոնոց բացարքերը՝ թե՝ զնուուզնի, մինչեւ որ

Եղիայի գույների բնակիչները ծայնը լսել են եւ ելել իրենց գյուղերի հանդիպակաց տեղը եւ տեսել այդ արհավիրքը: Յավիտենական հաստակերտ ժայռերը միմյանցից ճեղքելով բաժանվում են: Ի սկզբանե իրար վրա կառուցված քարերը, որ գետնի հիմքն էին, եռալով բարձրանում էին գետնի երեսը. այդպես նաեւ տարիների բոլոր ծառերն ու տունկերը՝ թե՝ զնուուզնի, թե՝ կաղճի, սրանց հետ մեծամեծ քարեր մերժեւ սուզվելով՝ անդունդմերում կլանվելով աներեւութանում էին: Մեծամեծ քարերը, լեռնից պոկվելով, միմյանց հետեւից գլորվելով, ցած էին գալիս, որոնք միմյանց բախվելով փշրված, խորտակված հեռու էին ցրվում: Սրանց բախման ուժգնու-

ի շահ մեզ նրանք իբրև նախատիրիներ

հայրնվեցին ալեկոծ ծովում

Ընթացան հոգու թեւերով, եւ հասան անրավ իրության...

Թեկուեկ սերմանողներն ընկան, սերմանված ները հոյժ արդյունավորվեցին

Մարմնով հետացան մեզանից, բայց հոգու չզարվեցին մեզանից:

Միայն հայրանակ շահեցին, ախտավից լյանքից փոխադրվեցին

Այսու մեզ համար բարի բարեկուս կարգվեցին Տիրոջ մուր...

Ձո՞դ սրանց համար ինչուն ապահոված պահի խաղաղության մեջ» (10):

Սրանց մեջ գլխավորը եւ վերջինն Արիստակես Շամբեցին էր, ով հաջորդեց Սարգսին Երկար տարիներ, նրան եւ Մովսես կարողիկոսին աշակերտած մյուս բոլորին իշշում է իր աշակերտակից Զաքարիա Վաղարշապատեցին: Նրան անվանելով «Նախակարապետն ու առաջնորդ Եվստաբեռսի մեծ անապատի, արի եւ ճգնազգաց Արիստակեսն Շամբեցի»(11):

Ըստ Առաքելի՝ վարքով հրչակված սրանց մյուս ընկերը «Ճգնավոր եւ ընտիր, առաքինի գործեր կատարող տեր Բարսեղ արեղան էր»(12), ով նրանց հետ երկու գրգակին մոտիկ բաղվեց մի մասնավոր մատուցի մեջ՝ անապատի արեւմտյան կողմում, եղբայրության գերեզմանոցում, եւ իրեւ կենաց ու մահվան ուխտով շաղկապված՝ նրանք իրարից անբաժան եղան նաեւ մահվան հոդի մեջ, միատար գետնի մեջ՝ միաբան հանգչելով՝ չտարորոշվեցին: Որովհետեւ Մեծ անապատի հաստատվելուց 45 տարի անց, այն է՝ 1658 թվականին, մի սուկալի բան կատարվեց, նախ երկրի հյուսիսային սահմանը ճեղքվեց՝ ամբողջ լեռից լեռ, արեւմուտքից արեւելք, «Եւ պատռվածքը շատ է՝ լայն, ընդարձակ ու խոր, եթե պատահեր եղ, ծի կամ այլ անասուն ընկեր պատռվածքի խորաքոսը, չէր կարող դուրս գալ»(13): Ապրիլ ամսին անձրեւային եղանակի ժամանակ, պատռվածքը սկսեց լայնանալ, այնպես որ բոլոր հասկացան «Քե այսօր-գուց սահելով հոսելու է այս Անապատի տակի գետինը»: Եվ իսկապես, ապրիլի 25-ին «Երեկոյան եկեղեցի գնալու ժամանակ, արեւմուտքի մոտ գետինը սկսեց պատռվել անապատի հարավային կողմից՝ բարձր լեռնից այն կողմ եւ իրեւ մրրկաբեր ամպ շարժված գալիս էր լեռան բարձունքից ահավոր դուրումով, թնդյունով, որոտումով ու ծայթումով, ինչպես կայծակնացայտ ամագերի որոտում: Որոտումն ու թնդյունն այնքան ահավոր էին, մինչեւ որ Շինուայր եւ Յալիձոր գյուղերի բնակիչները ծայնը լսել են եւ ելել իրենց գյուղերի հանդիպակաց տեղը եւ տեսել այդ արհավիրքը: Յավիտենական հաստակերտ ժայռերը միմյանցից ճեղքելով բաժանվում են: Ի սկզբանե իրար վրա կառուցված քարերը, որ գետնի հիմքն էին, եռալով բարձրանում էին գետնի երեսը. այդպես նաեւ տարիների բոլոր ծառերն ու տունկերը՝ թե՝ զնուուզնի, թե՝ կաղճի, սրանց հետ մեծամեծ քարեր մերժեւ սուզվելով՝ անդունդմերում կլանվելով աներեւութանում էին: Մեծամեծ քարերը, լեռնից պոկվելով, միմյանց հետեւից գլորվելով, ցած էին գալիս, որոնք միմյանց բախվելով փշրված, խորտակված հեռու էին ցրվում: Սրանց բախման ուժգնու-

թյունից սաստիկ ցնցվում էին բոլոր վայրերը. սրանց դրդողալու եւ որոտնան ձայնն ականջ էր խլացնում եւ ամենքին սրտաճար անում:

Եվ որովհետեւ օրը երեկոյացել էր եւ ցերեկվա քիչ ժամանակն էլ աճնավ, եւ եկավ գիշերը, սկսեց ամձորեւ թորալ եւ սաստիկ մթնագիշեր լինել այնպես, որ իրար կողք կանգնածները միմյանց չէին տեսնում: Անապատի բոլոր բնակիչներն անապատից ելան եւ գնացին հավաքվեցին անապատի արեւելյան կողմը՝ քարքարուտ լեռը, եւ այնտեղ տեղավորվելով՝ ճրագներ եւ նեծամեծ մոմեր վառեցին: Անապատի սարսափով կանգնած սպասում էին վերջին եւ տենչում առավոտյան լուսին:

Շատերը համարեցին, թե անապատը միանգամից քանիվեց սահած այլ գետնի հետ, բայց գքացող Աստծու արարչական խնամքը նայելով խեղճ միաբանների մշտապաղատ մաղթանքներին, չքողեց խապա ավերվի, այլ՝ մասնակի: Անապատի արեւմտյան կողմը՝ պարիսպն ու հյուրատունը, անասունների ախոռը, ամբարները, միաբանների սենյակից մի մաս եւ արեւմտյան մեծ եկեղեցու արեւմտյան այուների հետեւ կողմից բոլորն ավերվեցին:

Գործված աղետը խիստ սարսափելի ու երկյուղագրու էր, քանզի ինչպես ծովի ալիքների լեռնացած կոհակներ, որոնք, միմյանց հետեւից սահելով, ընթանում են, այդպես էլ հաստակին վեճները, այդ վայրերի քարը, հողը եղան: Եվ վերից եկած հոսքն իր ուժով եւ ուժգին հոսանքով իր առջեւի վայրերը բնական տեղից հեռու թքմնելով՝ իր հետ առաջ միասին, միմյանց հետեւից ընթանում էին իբրև ծովի հորձանք վերուվար անելով: Եվ այսպես սահելով գնացին հասան Որոտան մեծ գետին, որ ծորի միջով անցնում է, եւ արգելեցին ջրի ընթացքը մոտ ուր ժամ: Իսկ գետի ջրուրը, որ վերեւից իջնում էր, եկավ, ծովացավ եւ տեղը լցրեց: ապա ինչ-որ կողմից իրեն գնալու տեղ գտավ, գնաց: Իսկ քարերը, հողերը, որ արգելվեցին գետեզրում, եղան մեծ բլուր:

Իսկ անապատականների գերեզմանոցն անապատի արեւմտյան կողմից էր. տեղանքի հոսելու հետ այս գերեզմաններն առհասարակ միանգամից բոլորը միասին իրենց խոր ու անդրդային հատակով թռան իրենց տեղից, սահելով գնացին մեծ հեռավորությամբ մի վայր, դադար առան, կանգնեցին: Նաեւ սույն տեղում էին քաղված սուրբ վարդապետ Պողոսը, որի պատմությունն արել ենք մի այլ գլխում, եւ պարոն Սարգիսը, որի մասին պատմեցինք, եւ Արիստակես վարդապետը, ով պարոն Սարգսից հետո եղավ անապատի առաջնորդը, նաեւ ճգնավոր ու ընտիր, առաքինի գործեր կատարող տեր Բարսեղ արեղան: Սրանք չորսն էլ միմյանց կից էին թաղված, ու նրանց վրա մատուր էր շինգված: Գերեզմանատան տեղի հոսելու ժամին Աստծու խնամքը սքանչելագործություն արեց այս սրբերի վրա, որովհետեւ սրանց գերեզմաններն ամենեւին չխախտվեցին, նույնիսկ տապանաքարերը չքեքվեցին, այլ իրենց դիրքը դեպի ուղիղ արեւելք ընդունելով կանգնեցին, ինչպես որ նախապես թաղված էին, բայց սրանց վրայի եղած մատուրը փլուզվեց, ցրիվ եկավ:

Այս ամբողջ սոսկալի գործերը լինելով՝ այնուամենայիվ ամենակալ Աստծու խնամքով ոչ մեկի վնաս չեղավ, ոչ մարդու, ոչ անասունի, միայն մի

միաբան մնաց իր խուղում, այնտեղ հողի տակ մեռավ, որովհետեւ եր երեկոյան ժամին սկսվեց հոսքը, ոմանք միաբաններից գնացին, նրան հայտնեցին, որ ելնի այնտեղից, որ չմնա հողի տակ, բայց նա երկար ժամանակ ցանկանալով սպասում էր մահվան, դուրս չեկավ, այլ մնաց այնտեղ՝ հույսով ակնկալելով Տիրոջը, որպեսզի թերեւս իր ամենի մահվան համար ընդունվի իր բազմագործ Տեր Աստծուց իր հոգու այցելությունը:

Իսկ անապատի մյուս բոլոր բնակիչները հավաքված էին լեռան վրա, որ անապատի արեւելյան կողմն էր, հորդաբուխ արտասուրներով եւ ծանր հառաշամքներով կոռում էին իրենց եւ աղաքում էին Աստծուն, որ թերեւս ազատվեն մահից, եւ անապատի շինվածքները փրկվեն փլուզումից, որովհետեւ կատարված արհավիրքից հուսահատված էին. մինչեւ լուսանալն առավոտվա լույս երկուշարքի իբրեւ պաղտավորներ երկոյուղի մեջ էին: Իսկ նա, որի գրությունը ի բնե ողորմության աղբյուր է, Տեր Աստված ոչ միայն նրան մահից փրկեց, այլև ողջ անապատը պահեց եւ չքողեց ավերվի, իր ամենազոր աջով անապատն անխախտ պահեց, բացի նախապես իիշտակված ավերվածքներից»(14):

Սակայն, ինչպես երեւում է, գետնի ցնցումը կասկածելի համարվեց, քան ձեռակերտ շինությանը եւ հարկ եղավ այն լքել ոչ շատ տարիներ անց, որի պատճառով էլ «Հակոբ կարողիկոսը միաբաններին բերեց Ներքին Տարեւ, եւ այնտեղ հիմնադրեց Անապատն ու Եկեղեցին, բայց հետո այն ավարտի հասցեց Արիստակես վարդապետը», եւ համաձայն առաջինի կոչվեց Մեծ անապատ իբրեւ գլուխն ու առաջնեկը բոլոր անապատների, տարբեր գավառներում, իսկ իին Մեծ անապատն այնուհետեւ անվանվեց Հարանց անապատ, ի հիշտակ կրոնի Նախասկիզբ հիմնադիրների, սակայն Սոռքելը, Զաքարիան, Թովմաս Կանանդեցին եւ ուրիշներ, որ գրեցին երկրորդ կառուցումից առաջ, միայն Մեծ անապատ են անվանում, կամ Տարեւի անապատ, կամ Վերին Տարեւի անապատ, կամ սոսկ Անապատ, բայց նկատի ունենալով Տարեւը, ինչպես Վանանդեցին, հողի հոսքից երեք տարի իր ուխտավորների Տարեւ այցելությունից հետո, ասում էր.

«Եվ այնորեղից Անապատ դիմելու»

Որ սրբոց բնակարան է դարձնել»(15):

Ինչպես նորի կողդին իին քաղաքի ավերակներն են պատկառելի եւ հետախուզելի ուսումնասիրողների համար, այնպես էլ այս վայրերը, սակայն ավաղելին այն է, որ նորն էլ արդեն հնացել եւ ամայացել է: Արրահամ կարողիկոսը(16) այս վաճք այցելության ժամանակ 1735թ. մարտ ամին, մի քանի օր մնաց այս նոր անապատում, եւ իր հետ վերցնելով միաբաններից ու վարդապետներից մի քանի սին. «Գնացի, ասում է, ուխտի Հարանց նախակին Մեծ անապատը, որ ազգի, արեւելքում եւ արեւմուտքում գտնվող, անապատների մայրն է, եւ այն մատուռը, ուր թաղված են սուրբ վարդապետներ Պողոսի, Սարգիսի, Արիստակեսի եւ Սարգիս արեղայի պատվական նշխարները... եւ իմ ուխտագնացությունից եւ անապատը տեսնելուց հետո անցա բարձր լեռան խորտակված վայրը, ուր կիսված էր լեռը եւ ցնցված գետինը, գերեզմանատունը տեղաշարդ-

ված, եւ անցնելով նետածիգ մի տարածք եւ ապա հանգրվանելով՝ [տեսա] նաեւ նատուռը, ուր թաղված էին վերոհիշյալ սրբերի մարմինները: Սեր ուխտագուցությունից հետո ճաշու ժամերգություն կատարեցինք անապատում, եւ ապա օարիվայր իջանք նատուռը, որ մի փոքրիկ եկեղեցի է, ուր գտնվում էին հիշյալ սրբերի դամբարանները, եւ այնտեղ կատարեցինք երեկոյան ժամերգությունը: Եվ այնտեղից ձիով անցանք Որոտան գետը, որ մատուռի եւ Ծնիերի կուսանաց անապատի մեջտեղում է»(17) եւ այլն:

Զգիտեմ, Արքահամ կարողիկոսից առաջ (ինչպես հավանական է քվում), թե հետո, Սյունյաց եպիսկոպոսներ են եղել տեր Հովհաննի Աղուերծեցին, Փիլիպպոս կարողիկոսի համանուն աշակերտի եղբորորդի տեր Ներսեսը, որոնցից առաջինը շիմեց «Սեօ անապատի միաբանների խուցերը» եւ երկրորդն այնտեղ ինչ-ինչ շիմուրյուններ կառուցեց: Այժմ Հարանց անապատն իսպառ ամայացել է, եւ ըստ Զալայանի՝ աղոթանքու վայրերը դարձել են «գազանների որջ»(18): Մեծ անապատի մասին նա գրում է. «Այն կառուցված է Տաթեւի վանքի լայնածոց ծորակով անցնող Որոտանի հորձանուտ վտակի մի հարբաւավայր լեզվակի վրա. Ճեւզ շքեղազարդ է, շիմվածքն ամբողջապես սրբատաշ քարերով է, կառուցված է վեց վայելադիր սյուների վրա, առջեւն ունի կիսաբաց գավիթ, որ կառուցված է երկու սյան վրա, ուր են այնտեղ միաբանված երեւելի վարդապետների գերեզմանները, շրջապատված է ամուր եւ լայնանիստ կրաշաղախ պարսպով, զարդարված է մեծամեծ աշտարակներով: Այդ պարսպի մեջ գտնվում են միաբանների վարսունչորս կամարաշեն սենյակները, ինչպես նաեւ չքնաղակերտ սեղանատունը եւ մեծ շտենարանը: Անապատիս դիրքը եւ սենյակների շիմուրյուններն ավելի գեղեցիկ են, քան Տաթեւի վանքի դիրքը: Զուրը, որ իշնում է Տաթեւի վանքի հարբաւավայր կողմից, սահեւով բափկում է այս անապատի մոտ, ոռոգում է այգիները եւ պտտում ջրաղացները: Որոտան գետը, որ լի է համեղաճաշակ ձկներով, որոտալով անցնում է առջեւից՝ հիրավի բավականություն լապատճելով բոլոր տեսնողներին: Այս մեծաստանի շրջապատը ծառազարդ է, պարսպի մեջ եւս կան մրգաբեր բազում ծառեր, որոնց մեջ ի պէտու միաբանների բիւել է սառնորակ մի աղբյուր, իսկ այժմ այն պիտանի է միայն վայրի գազաններին ու երկնքի թրչուներին: Բյուր անգամ ափսոս ասենք, սակայն հ՞նչ օգուտ, երբ այսպիսի հրաշակերտ անապատն ամայի է մնացել, որ ժամանակին բնակավայրն էր բազմաթիվ միաբանների եւ սկզբնապատճառը մյուս մենաստանների, այժմ իբրև միայնակ այրի, գլխին հող ցանելով լացակումած խոնարիվել է»(19): ճանապարհորդական այս ճշգրիտ նկարագրությունը, այլև արվեստով արված տեղագրությունն ընթերցողներին նախ հորդորում է տենչալ եւ ապա ճեռնարկել այդ սուրբ տեղերի նորոգությանը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- * Սրա մմամ Յովհաննավանքի առաջմորդ Զաքարիա Վարդապետը ես դրվատում է սրա եղբորը՝ Խոջա Սաֆորավին ըստ նրա աստվածապաշտության:
- ** Իր ինքնամեղադրությանը նվիրված մեկ այլ ողբական քերթվածում Ներսեսը, իր անձի մասին խոսե-

լով, ակնարկում է սրբմի տարագի վերաբերյալ:
Արքայ անունը ստացա, աշխարհից հեռացա տարազով
իրեւ խաչ ուսով կրելով՝ խաչալին հետեւցի
Ներքնամասում հանդերձ կրեցի, ժումկալի կերպով
ներկայացա
Խորահայաց կնգուղով հեզ հայրերին նմանվեցի
Սայրասուր սաղավարտուումով՝ միշտ այսպես վեր
խոկացի
Ուրար եւ փիլոն կրելով՝ լծովս խոր խոնարհվեցի
իրեւ սգավոր յինելով անձովս համակ սեւ գումա-
վորվեցի
Եւ սիրամարգի նման սիգալով պժնվեցի»(9):

- *** Քերթվածի վերնագրում ասվում է. «Սա այն Ներսեսն է, որ էր Մոլացի, եւ գնաց Տաթենի անապատ, մնաց չորս տարի եւ այնտեղից եկավ եւ հաստատվեց Լիմ անապատում ՈՇ (1621) թվականին»:
- 1. Այդ ժամանակաշրջանի հանգամանալից քննությունը տեսն Յ. Ովմազյան, Սյունիքը 9-10-րդ դարերում, Եր., 1956:
- 2. Այդ ժամանակաշրջանի մանրակրկիտ հետազոտությունն իրականացված է Գր. Գրիգորյանի «Սյունիքը Օրբեյանների օրոք» (XIII-XV դդ.) մենագրության մեջ (Եր., 1981):
- 3. Նկատի ունի Սոլվես Գ Սյունեցի կամ Ածանանցի հայրապետին, որ առողակալել է 1629-1632թթ.:
- 4. Ներսես Մոլացու մասին տեսն Ներսես Մոլացի, Բանաստեղծություններ, Եր., 1975, Ա. Դոլովսանյանի ներածությունը, էջ 8-33:
- 5. Նկատի ունի Ծահ Արա Ա-ին, ով իշխել է 1587-1629 թթ.:
- 6. Տեսն Ներսես Մոլացի, Բանաստեղծություններ, էջ 49, տող 117-124:
- 7. Զարանց վարդերն անապատական հայրերի (որոնց մեջ առավել նշանավոր են Պողոս Թեքայեցին, Անտոն Անապատականը, Պարովիոսը) կյանքի, կենցաղավարության, կանոնական սահմանաների մասին պատմող ժողովածուներ են. տեսն «Վարք սրբոց հարանց եւ քաղաքավարութիւնը նոցին», Յու. Ա. Բ, Վենետիկ, 1855:
- 8. Տեսն Ներսես Մոլացի, Բանաստեղծություններ, էջ 69, տ. 173-190, էջ 70, տ. 217-221:
- 9. Տեսն Ներսես Մոլացի, Բանաստեղծություններ, էջ 61, տող 411-428:
- 10. Տեսն Ներսես Մոլացի, Բանաստեղծություններ, էջ 57-58, տող 319-352:
- 11. Զաքարիա Վաղարշապատեցին քարտուղարն է եղել Դավիթ Դավիթի Սոլվես կարողիկոսների, Յովհաննավանքի առաջնորդ՝ 1637-1659 թթ.: Այս տողերը, ինչպես երեսում է, բերվել են նրամից մեզ հասած միակ երկից, որ ընդարձակ պատմական մի Յիշատակարան է, տեսն Յ. Ածառյան, Յայոց անձնանունների բառարան, Յու. Բ, Եր., 1944, էջ 199:
- 12. Տեսն Առաքել Դավիթեցի, Գիրք Պատմութեանց, աշխատասիրությամբ Լ. Ա. Խանլարյանի, Եր., 1990, էջ 224, նաև Առաքել Դավիթեցի, Պատմութիւն, աշխարհաբար թարգմանությունը, առաջարանը եւ ծանոթագրությունները Վարագ Առաքելյանի, Եր., 1988, էջ 209:
- 13. Տեսն Առաքել Դավիթեցի, Պատմություն, աշխարհաբար թարգմ., էջ 207:

14. Տե՛ս Առաքել Դարիիժեցի, Պատմություն, քնն. բնագ, էջ 223-225, աշխարհաբար թարգմ., էջ 208-210:
15. Յավանաբար սա քաղված է Թովմա վրդ. Կանանդեցու «Ոտանատոր ներրող սրբազն տեղեաց Յայոց աշխարհի» Երկից (1655թ.) տե՛ս Յ. Ածառյան, Յայոց անձնանունների բառարան, Յու. Բ, էջ 341:
16. Նկատի ունի Արրահամ Գ Կրետացի հայրապետին, ով այռուավարել է 1734-1737թթ.: Նրա մասին տեղեկություններ է հաղորդում Միմեռն Երեանցին («Զամրո գիրք... ի Սիմէռնէ ցաւահար եւ վշտահար կաթողիկոսէ Երեանցոյ», Վաղարշապատ, 1873, էջ 30-31):
17. Տե՛ս Արրահամ Կրետացի, Պատմութիւն, քննական բնագիր, ոռուերեն թարգմանություն, առաջարան եւ ծանոթագրություններ Ն. Կ. Ղորդանյանի, Եր., 1973, էջ 153-154:
18. Տե՛ս «Ճանապարհորդութիւն ի Սեծ Յայաստան աշխատասիրութեամբ տեառն Սարգսի Սամահնեցույ Զալալեանց՝ թեմակալ արքեպիսկոպոսի Յայոց Վրաստանի հմէրէթի եւ այլոց», մասն Բ, Տփոյիս, 1858, էջ 306:
19. Տե՛ս «Ճանապարհորդութիւն ի Սեծ Յայաստան... », էջ 304-305:

Աշխարհաբարի վերածեց եւ
ծանոթագրեց Յակոբ Քյոսեյանը,
պատվիրատու՝ «Սյունյաց Երկիր»



Մրագործկած՝ ճաեւ Սովոր Տաթեւացու հուշով



Յալիձորի բերդ

Կառուցվել է 17-րդ դարի առաջին կեսին՝ որպես կուսանաց անապատ: Դա Մովսես Տաթեւացու կառուցած երեք կուսանաց անապատներից մեկն է: 18-րդ դարասկզբին իր անառիկ դիրքի շնորհիվ դարձել է Դավիթ Բեկի ազատագրական պայքարի գլխավոր եւ Սյունիքի հայկական իշխանության կենտրոնը: Ամրոցի անսամբլում իր տեղադրությամբ եւ չափերով գերիշխողը Եկեղեցին է՝ կառուցված անմշակ բազալտի խոշոր քարերով ու կրաշաղախով:



Սյունիքի հնագույն եւ հոչակավոր մենաստաններից է:
1618-20թթ., ըստ որոշ աղբյուրների, միաբանության
առաջնորդ է Եղել Մովսես Տաթեւացին:

Տաճախարակի եւ Բեխի անապատի նույնությունը
մեկ անգամ եւս շեշտում է Առաքել Դավիթիցին:
Դեռևս միջնադարում Տաճախարակն եղել է
մշակութային կենտրոն: Այնտեղ գրել են ձեռագրեր:
Այդտեղ է աշխատել Գրիգոր Տաթեւացու աշակերտ
Մաթեևոս Վարդապետը: Այդտեղ է տեսական
ժամանակ մնացել Սիսական տոհմի Զագիկ մեծ
իշխանի որդի Կահանը մինչեւ իր անունը կրող
Կահանավանքի հիմնադրումը (911):
Անապատը կառուցված է Կահանավանքից մոտ 5
կմ արեւելք կամ Կապան քաղաքի Բեխ թաղամասից
4 կմ արեւմուտք՝ բարձր լեռան արեւելյան լանջին՝
անտառի մեջ:

**ԲԵԽԻ ԿԱՄ
ՏԱՆՃԱՎԻԱՐԱԽԻ
ԱՆԱՊԱՏ**

Զամբռ



Սիմեոն կաթողիկոս Երեւանցի

Ապա երբ հասավ հայոց 1078 (1629) թիվը, որի ժամանակ մեր Երկրի արեւելյան մասը եւ Սուրբ Աքոռը գտնվում էին պարսից արքա Շահ Արասի տիրապետության տակ, որի հրամանով եւ մանավանդ Աստծու նախասահնանումով եւ Սուրբ Հոգու տվչությամբ Մովսես Սյունեցին 1076 (1627) թվին նախ դառնում է Սուրբ Աքոռի լուսարար: Իսկ Շահ Արա Առաջինի վախճանվելու ժամանակ, երբ նրա թոռը՝ Շահ Սեֆին է նստում, այլեւ Թուրքիայում իշխում էր սուլթան Մուրադը, դառնում է կաթողիկոս հայոց 1078 (1629) թվին: Սա շնորհալի մարդ էր, առաջինությամբ զարդարված եւ Սուրբ Հոգու շնորհների բնակատեղի, սիրված Աստծուց եւ մարդկանցից, որ երբ նստեց Սուրբ Աքոռին, գրեթե հիմնովին նորոգեց Սուրբ Աքոռը, եւ (այն) պայծառացրեց հոգեւորական կարգերով եւ նյութական միջոցներով: Այնպես որ մեր Լուսավորչից եւ նրա թոռներից եւ մեր քարգմանիչներից հետո մյուս հայրապետներից գրեթե ոչ ոք սրա ննան երախտավոր ու բարեգործ չեղավ Սուրբ Աքոռին եւ մեր ազգին, եւ նրան հաջորդող Փիլիպոս եւ Շակոր հայրապետների (նման էլ), որոնց մասին իրենց տեղում պիտի տեսնենք:

Արդ՝ այս երանելի Մովսեսն ամենից առաջ վերացրեց Աքոռի 100 թուման հարկը, որ նախորդներից մնացել էր իբրեւ հարկ Սուրբ Աքոռի վրա՝ տարի առ տարի տալու արքունիքին: Սա հեշտ ու փոքր բան չկարծեք, որովհետեւ անվանապես թեև 100 էր հաշվում, սակայն մուտքումը 1000-ով չէր վերջանում, եւ մանավանդ նորը հնին էր ավելանում, կուտակվելով մնում Սուրբ Աքոռի վրա: Այլեւ Սուրբ Աքոռի չորսբոլորը հողաթմբով պարսպապատեց, այլեւ

Սուրբ Աքոռի հյուսիսային կողմը գեղեցիկ եւ թրծված այսուներով միաբաններին խուցեր կառուցեց, եւ արեւմտյան կողմում՝ նախարահները քարե կամարով, եւ այլ շինությունները: Հարավային կողմում՝ տնտեսատուն եւ երկու սեղանատուն (ամառայինը՝ փայտյա), փոքր, ցորենի եւ ուրիշ մթերքների ամբարներ եւ խցերի մյուս մասը՝ արեւելյան (կողմում): Նա հիմնեց նաեւ մանուկների դպրոց, որը տվեց բազում խելանիտ եւ շնորհալի վարդապետներ: Զարդարեց Սուրբ Աքոռը նաեւ ուրիշ շատ հանգամանքներով, ինչպես ասացինք:

Սա կառուցեց նաեւ Անանիա առաքյալի եկեղեցին Երեւանում եւ ստեղծեց վաճատուն միաբանակիցների համար: Նույնպես եւ մեր ողջ ազգը զարդարեց եկեղեցական եւ հոգեւոր կարգերով: Նրա բարեգործությունների մասին ավելի ընդարձակ տես՝ Առաքել պատմագրի (Երկում): (Մովսես Սյունեցին) իր ժամանակին ստացել է արքունական, դատական եւ այլ կարգի փաստաթորեր՝ հօգուտ Սուրբ Աքոռի, որոնց մասին հետո պիտի գրենք:

Եվ հայոց 1081 (1632) թվին այս երանելին վախճանվում է Երեւանում եւ բաղված է Կոգեռն գերեզմանատանը. թող օրինությամբ լինի նրա հիշատակը:





Նիմնադրել է Մովսես Տաթեւացին: Գտնվում է Շինուհայրի հին գյուղատեղիի հարավային կողմում՝ Որոտանի ձորի եզրին: Բաղկացած է եկեղեցուց, գավթից, սեղանատնից եւ պարիսպներից:

**ՇԻՆՈՒՀԱՅՐԻ
ԿՈՒՍԱՆԱց
ԱՆԱՊԱՏ**

ԱԶԳԱՊԱՏՈՒՄ



**Հայրված Մաղաքիա արքեպիսկոպոս
Օրմանյանի համանուն աշխարհությունից,
հավոր Բ, մաս Ա**

1632. ՄՈՎՍԵՍԻ ԳՈՐԾԵՐԸ

Մովսէս Ս. Անանիայի վանքին կատարելապէս տուած էր Սեծ-Անապատի ձեւը (1621), կրօնաւրական բարեկարգ միաբանութիւն ալ կազմած էր, որուն համբաւը տարածուեցաւ ի Հռոմաստան, եւ Քրդստան, ի Վրաստան, ի Պարսկաստան, եւ յամենայն աշխարհաց վաճառականք գային, եւ նուէրներ ալ կու տային, ինչ որ Սելքիսեղեկի ծանր կու գար, զշարէր եւ հեղձամաղձուկ լինէր, բայց Անիգունայի պաշտպանութեան պատճառով ոչ կարէր զշար ինչ անել Մովսէսի: Մտածեց գոնէ Մովսէսի անունով ինքն ալ օգտուիլ, եւ անոր հետ միւռունօրինէք կատարել, եւ արդիւնքը ինքը գանձել: Այդ նպատակով յատուկ պատգամաւոր եպիսկոպոսներ դրկեց Ս. Անանիայի վանքը, սակայն Մովսէս հրաժարեցաւ յայտնելով, թէ ինքն տակաւին եպիսկոպոս ալ չէ: Սելքիսեղեկ փութաց դժուարութիւնը լուծել, անմիջապէս Ս. Անանիայի վանքը եկաւ, եւ աւագ երկուշաբթի օր, 1623 ապրիլ 7, որ Արեւմտեան տօն ալ էր, Մովսէսը եպիսկոպոս ձեռնադրեց, եւ աւագ իննօշաբթի օր, ապրիլ 10-ին միասին միւռուն օրինեցին, որ լաւ արդիւնաւոր եղաւ նուէրներու կողմէն, եւ Սելքիսեղեկի արծաթասիրութիւնը գոհացուց: Զուղայեցի վաճառականներ Ասպահան դառնալով այնչափ բարձրացուցին Մովսէսի արժանիքը, որ անենքը փափաքեցան անգամ մը գոնէ զայն տեսնել, ուստի յատուկ պատգամաւորութեամբ գինքն Ասպահան առաջնորդեցին, ուր մնաց ժամանակս ինչ, թէ քաղաքին եւ թէ շրջակայից մէջ

եղող Յայ գաղթականութեանց այցելեց, քարոզեց, միխթարեց, եւ փառօք փառաւորեալ ի նոցունց, դարձաւ Երեւան Ս. Անանիայի վանքը, իր կրօնաւորական կեանքը շարունակել (ՂԱՎ. 227): Այդ պարագաներուն մէջն էր, այսինքն միւռունօրինէքի յաջողութենեն ետքը, եւ Ասպահանի այցելութենէն առաջ, որ Սելքիսեղեկ կաթողիկոսութիւնն ալ Մովսէսի փոխանցելու գաղափարը չղացաւ, եւ անոր յայտարարեց թէ ազգս Յայոց երես դարձուցին յինէն, մինչ ընդհակառակն գեղ սիրեն եւ ընդունին: Արդ հարկն արքունի պարտը եղեւ եւ բազմացաւ, ես չեմ կրնար վճարել, վասն զի չեն տար, դուն կրնաս վճարել, որովհետեւ կրնաս հաւաքել, ուրեմն տամ քեզ զսուրը արռոն Եջմիածին եւ զկաթողիկոսութիւնն, դուն պաշտօնը վարէ ու պարտքը վճարէ, եւ ինձ տուր ամյան դարման պիտոյից եւ զմի ի վաճորից (ՂԱՎ. 171): Մելքիսեդէկ մինչեւ այն ատեն միշտ նենգութեամբ էր գործած, ուստի իր առաջարկին անկեղծութեան հնար չէր վստահանալ, եւ ամէն տեսակ դարձուածներ միտք անցընել ներեալ էր: Մովսէս ալ հրաւամք կրնար կասկածով վերաբերուիլ իրեն եղած առաջարկութեան թէպէտեւ գործն ալ ըստ ինքեան ախորժելի պայմաններու մէջ չէր: Ուստի Մովսէս հրաժարելով հրաժարեցաւ (ՂԱՎ. 172), եւ անկէ ետքը կատարած պիտի ուլայ Ասպահանի ուղեւորութիւնը, եւ հոն անցուցած 1623-ի վերջին եւ 1624-ի սկիզբի օրերուն տօնական միջոցը:

1644. ՄՈՎՍԵՍԻ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԸ

Մովսէս կը շարունակէր իր առանձնական, բայց միանգամայն գործունեայ կեանքը վարել Ս. Անանիայի վանքին մէջ (1633), երբ 1625-ին օր մը այնտեղ իրեն կը հանդիպի Բայինդուր թէկ անուն պալատական մը, որ Երեւան եկած էր ժողվել զտղայս եւ զաղջունս վասն թագաւորին, եւ Անիգունա կուսակալին հետ ի զքսանս ելեալ շրջէին (ՂԱՎ. 220), Մովսէս հիւրերը պատուելու համար եօթնական հատ սպիտակ մոն նուէր ներկայէց: Բայինդուր հիացած մնաց մոներուն ճերմակութեան վրայ, որ անծանօթ էր այն կողմերը, եւ որուն արիեսսը Մովսէս սորված էր Երուսաղէմ եղած ատեն (1603): Բայինդուր յայտարարեց թէ մոները կը պահէ որ շահին ընծայ տանի, եւ Անիգունա իր եօթը մոներն ալ յանձնեց նոյն նպատակին, եւ Մովսէս ալ իր կողմէն եօթը հատ եւս աւելցուց: Բայինդուր իր պաշտօնը լրացնելով Շահարապին դարձած ատեն, անոր ներկայացուց 21 ճերմակ մոները, պատրաստողին վրայ ալ գովութեամբ խօսուեցաւ: Շահարաս խկոյն Անիգունայի գրեց որ Մովսէս եպիսկոպոսը իրեն դրկէ, ինչ որ գործադրութեացաւ, եւ Մովսէս մինչեւ Պաղտատ գնաց, ուր կը գտնուէր Շահարաս, եւ շուրջ նստեալ պատրագմէր 1626 գարնան սկիզբը: Թագաւորը հրովարտակով հրամայեց Ասպահանի քաղաքապետ Լալա թէկի, որ Մովսէսին յարնար տեղ մը ցուցնէ, երեք յարմար աշակերտներ ընտրէ, եւ 100 լիտր մոն տայ, որ արիեսսը անոնց սորվեցնէ: Ըստ այսն ալ գործադրութեացաւ: Ասպահանի մէջ Թիլիմիսանի այգին Մովսէսին յատկացուեցաւ, Ֆառուխ եւ Ղաքչայ եւ Բեկաս Պարսիկներ աշակերտ նշանակուեցան, եւ մինչեւ տարւոյ վերջերը Մովսէս աշակերտները վարժուեցուց, եւ ճերմկցած մոներուն հետ ու խօջայ Նազա-

որ միջնորդութեամբ ներկայացան Շահաբասի, երբ Ֆահրապատի ձմեռոցը կը գտնուէր: Շահաբաս յոյժ զուարծացաւ, եւ մոները ի ձեռ առեալ զքունոյր, եւ որովհետեւ Աստուածայայտնութեան տօնի մօս էր, խօցայ Նազարի յանձնարարեց, որ Մովսէս մեծաւ հանդիսի պատրաստ Ֆահրապատի Եկեղեցին, ուր հնքն ալ ներկայ պիտի գտնուի: Շաբաթ օր կիյանը 1627 յունուար 6-ին տօնը: Մովսէս ոչ միայն ամենայն խնամքով պատրաստութիւնները կատարեց, եւ թափեաց զերկու սախտակ մոնմ մարդաշափ, այլև գիշերը հսկումով անցուց, որպէս զի Աստուած շնորհալի ցուցց զտօնախմբութիւնն այլահաւատ թագաւորին (ՂԱՎ. 231): Իրօք ալ Շահաբաս չափազանց գոհ մնաց, եւ երբ կուզեր դրամով կամ կալուածով վարձատրել, խօցայ Նազար դիտել տուաւ, որ Մովսէս զաշխարհաւ եւ զընչիք նորա զանց արարեալ է, եւ թելադրեց անոր տալ զլուսարարութիւնն սուրբ Եջմիածինի թագաւորական նոնոսիւ (ՂԱՎ. 232): Սահակ տեղեկութիւն առնելով զանց գործը արգելել, առարկելով թէ զուլում արարեալ էր ինձ, եւ դիւանթէկին այսինքն արքունի քարտուղարին եւ մեծամեծներու մօս աշխատեցաւ, սակայն ոչինչ օտեցաւ, եւ իրեն ըստեցաւ, թէ թէպէս Մովսէսի տուաք զէջմիածին, զնորին լուսարարութիւն տուաք, եւ ոչ զկարողիկոսութիւնն (ՂԱՎ. 178): Ամէն դժուարութիւններ հարթուելով Մովսէս Ֆահրապատ Երեւան եւ Երեւանէ Եջմիածին Եկալ, եւ մեծաւ փառօք, եւ անապատում ցնութեամբ՝ ոչ միայն իւր, այլ եւ ամենայն քրիստոնէից, գործի ձեռնարկեց ի Վարդավառի պահոց Երկուշաբար աւուրճ որ է 1627 յունիս 25, եւ ոչ 23 ինչպէս աւելցուցեր է Ուկանի օրինակը (ՂԱՎ. 232):

1645. ԷՇՄԱԾԻՆԻ ՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆ

Դավիթեցին աղիոնորմ շեշտերով կը նկարագրէ Եջմիածինի մայր տաճարին այն օրուան վիճակը, եւ կարեւոր կը սեպենք զայն քաղել, իբրեւ մտադրութեան արժանի պատմական պարագայ մը: Պէտք է նախ յիշենք, որ ինչ ինչ կտորներ քանի քանդուած ու տարածուած էին (1610), եւ հարկաւ հետզին մեծացած էին պատառուածները եւ լքուած շէնքը հետզին վնասներ կրած էր: Ուրիշ կողմէն կարողիկէին կամ զմրէին գագաթը ինկած էր, տանիքին եւ չորս կողմի պատերում քարերը քանդուած եւ թափուած էին, յատակներու քարերը փշրուած եւ ծակոտուած, լուսամուտներուն վանդակները պակսած, այնպէս որ ներսի կողմէն թշչուններուն ծռուովք եւ ծըռովք եւ այլ գրեխովք լեցուած էր, գեռուններու եւ սողուններու որջ դարձած, եւ աղտեղութեանց համբարնոց եղած: Մայր տաճարին բակը աւերակներով եւ աւելորդներով հետզին դիզուած էր, եւ հողն ու մոխիրը եւ աղիսը մինչեւ եօրը կանգուն բարձրացած՝ գոցած էր տաճարին վարի մասերը եւ շուրջանակի եղող աստիճաններոց: Ծածկոց եւ զարդ չեր տեսնուէր բնաւ Եկեղեցւոյն մէջ, եւ ոչ ալ կանքեն կամ մշտավառ լոյս, այնպէս որ հազիր թէ այլազգի մահմետական ոմն վառէր զօրագ ձերոյ եւ դնէր ի վերայ բեմին, եւ այն եւս Երեւան երթեմն: Իբրեւ սպաս ալ բան մը չկար, ոչ գիրք, ոչ զգեստ եւ շուրջառ, ոչ բուրվառ եւ խունկ, եւ ոչ ուրիշ կարեւորներ: Աւանդատունն ալ գրեթ դատարկուած էր, զի ինչ որ կար՝ կարողիկոսներ վաճառելով եւ գրաւ դնելով վատնեալ էին, խաչ եւ սկիի եւ բուր-

վառ եւ շուրջառ եւ ամենայն ինչ, եւ վերջին աջերն ալ Սելքիսեղեկ մեկնելէն առաջ փոխառութեան համար գրաւի էր տուած (1634): Տաճարին շուրջը եղող բնակութեան շէնքերն ալ աւերեալ եւ ի վերայ միմիանց փլուզեալ էին (ՂԱՎ. 233): Կարողիկոսներ Երեւան կը բնակէին, եւ վանքին մէջ մնացած էին միայն քանի մը հատ սեւագուլս սինլիքորը եւ գրեհիկը, որոնք որպէս զգեղական հողագործս վարնորդ մշակօք ատեն կանցնէին, եւ անոնք իսկ զաւուրս զբաղ-նունս՝ շրջակայ գիտերու մէջ կը շրջէին (ՂԱՎ. 234): Մովսէս Տաթեւացի գործի ձեռնարկելով նախ բակին դիզուած աւելորդ ջանաց վերցնել տալ, եւ գործը դիւրացնելու համար օգոստեցաւ գետին ջուրէն, զոր կապեցին ի կողմն ինչ, եւ փորուած մասը հոսանքին տուին, որ հողը կը տանէր եւ քարը կը մնար, եւ այսպէս եղեւ հարթապակ գետին, եւ քարերը հետզին իրենց տեղերը շարուեցան պատերուն վրայ: Անկէ ետքը գմբերն ու տանիքը նորոգեցին, քանդուած եւ պակսած սալերը լրացնելով: Այդ առթիւ կը յիշուին տաճարին չափերը, ներսի կողմէն, պատերէն զատ, 50 կանգուն Երկայնութիւնը, 48 կանգուն լայնութիւնը եւ 35 կանգուն բարձրութիւնը մինչեւ կարողիկէին պարտը (ՂԱՎ. 235): Անկէ վերը շրջապատ պարիսապ մը կանգնեցին ի հոգոյ տաճարին պատերէն՝ արեւելքէն ու արեւնուտքէն 63 կանգուն, եւ հիւսիսէն ու հարաւէն 56 կանգուն հեռու, եւ ութը բուրգեր կամ աշտարակ-ներ անկիւնները եւ մէջտեղները: Պարիսապին ներսի կողմն ալ՝ արեւնուտակողմը շինուեցան դարպասը եւ տունք այսինքն է պաշտօնատուն եւ հիւրանոց, հիւսիսակողմ եւ արեւելակողմը խցեր ի բնակութիւն միաբանից, եւ հարաւակողմ սեղանատուն, փոնատուն, տնտեսատուն, եւ համբարանոցներ: Այս ամէն մասերը շինուեցան լընտեալ քարի եւ թրծեալ աղիսով, կրով եւ բռով եւ վայելուշ յօրինուածով (ՂԱՎ. 234):

1646. ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ ԵՒ ՆՊԱՏՈՒՆԵՐ

Մովսէս այդ գործերը լրացնելու համար իրեն զօրավիզ եւ օգնական ունեցաւ նախ՝ աստ եւ անդ գտնուած հոգեսէր եւ բարեսէր Եկեղեցականներ, որոնք իր շուրջը հաւաքուեցան, եւ որոնց շատերը իւրոց աշակերտաց խումբն էին, եւ Երկրորդ՝ զտուրս եւ զողորնութիւնն քրիստոնէից, որոնք զցաւիլն եւ զկսկնեալն ունեին, եւ ոչինչ խնայեցին ի նորոգումն սրբոյ արօսոյն, վստահ ըլլալով Մովսէսի անմենգ եւ ճշդապահ աշխատութեանց վրայ (ՂԱՎ. 232): Նա Մայրառոյոց նիւթական նորոգման հետ, անոր բարոյական բարեկարգութեան ալ հետամուտ եղաւ, վանական կենցաղ հաստատեց, աւանդի դրուած կամ վաճառուած սպասներ վճարելով ազատեց եւ զիսաւոր գործերն մին եղաւ դպրատուն մը բանալ Յովիանավակնի մէջ՝ իբրեւ կատարեալ դպրանաց կամ դպրէվանը, ուսկից առաջ եկան վարդապետը եւ եախսկապուր արեղայր եւ Երիցունք, ամէնն ալ արք պիտանիք եւ օգտակար աշխարհի, զորս հետզին շրջուեց զանազան կողմէն: Ասոնց մէկ կողմէ հոգեբուլս քարոզութեամբ եւ բարեկրօն վարութ հաստատին զկարգ եւ զկոսն քրիստոսական հաւատոյս եւ Եկեղեցական աւանդութեան, եւ ընկրկեալ կործանէին զիակառակորդս ճշմարտութեան, եւ միւս կողմէն շինէին զեկեղեցիս, եւ կը նորոգէին ու կը պայծառնի վանքերը՝ որք ամայացեալք ի խաւարի

կային: Այս կերպով Մովսէսի ճախանձայոյց աշխատութեանց շնորհիս, վաճքեր կը լեցուէին միաբանօք եւ արեղափառ եւ կրօնաւորօք, իսկ գեղօրայ՝ վարժերիցամբք (ՂԱՎ. 235): Սովորսի ստանձնած պաշտօնը լոկ լուսարարութիւն էր, որ է փակակալութիւն իին բառով, կամ լուսարարպետութիւն նոր կոչմանք. բայց Եջմիածին իրմէ զատ տէր չուներ, եւ անպատշաճ կարողիկոսութիւն էր իր ըրածք: Այն որ պաշտօնապէս գահակալ կարողիկոսի անուն ունէր, Ասպահան կը գտնուէր, ամէն գործ ծեռնթափ, եւ իննանձնայ զառանեալ տարիքի մէջ, իսկ այն որ արքունի հրովարտակով ճանցուած գործունեան արռուակիցի պաշտօնը պիտի վարէր, հարկահանի դերը կը վարէր կարեւոր զաւառներու մէջ, եւ երկութէն ոչ մէկը եկեղեցւոյ եւ ազգի հոգածութեան գործերով կը գրադրէ: Իրաւունք ունէին ուրեմն ժողովուրդը Հայոց յընդհանուր աշխարհի բնակեալը, որ այդ կարողիկոսաց անկարգութենէն ծանձրացեալը, կամ լաւ ես առանց կարողիկոսի մնացած, կամօք եւ յօժարութեամբ եւ կարողի սրտիւ կը փափաքէին, եւ վարդապէտը եւ եպիսկոպոսը եւ երեւելի արք գորովք եւ աղաչանօք թախանձէին եւ կը խնդրէին Մովսէս, զի յանձն առցէ զաստիճան:

1648. ՀԱՐԿԻՆ ՎԵՐՁԱՆԱԾ

Կատարեալ եկեղեցական անիշխանութեան տառի մը կրօնանք ըստէ 1628 տարին, երբ Սայրաթոռը ըստ ամենայնի անտէր եւ անտէրունց վիճակ մը ունէր պաշտօնապէս, թէպէտ իրապէս Մովսէսի խնամքի ներքեւն էր, բայց նա կարողիկոս չէր: Իսկ կարողիկոսութեան անուն կրողներէն մէկը զառանմած՝ ծեռնթափ կապորէր Ասպահան, միւսը փախստական՝ առանձնացած էր Վան: Մովսէս, կարողիկոսութեան թէկնածու չէր, բայց սրտացաւ հոգածութեամբ պէտք եղած ջանքերը կը ներ Եջմիածինը վերականգնելու: Այս կողմէ յատուկ մտադրութեան կէտ մը դարձած էր տարեկան 100 թունանի տուրքը, որ չվճարուելով բարդուած էր, եւ պարտքը կը մնար միշտ, թէպէտն պաշտօնապէս պարտական մը չէր մնացած մէժտելու: Մովսէս դիմեց Շահարասի սիրական խոճոյ Նազարի, Եղանակ մը գտնելու համար, բայց նա խորհուրդ տուաւ պատեհ առիրի սպասել, դիտել տալով թէ այս թագաւորս յոյժ արծարաւէր եւ ազահ է, յայթան շահուց արծարոյ ոչ զանց առնէ (ՂԱՎ. 236): Ենիդ այդ օրերուն տեղի կունենայ Շահարասի մահը Ֆահրապատի մէջ, որ Դավիթեցին 1629 յունուար 7-ին կը դմէ (ՂԱՎ. 237), սակայն օտար պատմագիրներ 1628-ին կը դմէն (ՏՊԵ. 357): Դավիթեցին թուականը յայտնապէս գրիշի կամ գրչագիրի սիսալանք է, զի իմբն իսկ, Շահարասի մահումն ետք ամիսս ութ Մովսէս արքունիքի մէջ դեգերած (ՂԱՎ. 237), եւ անկէ երեւան եկած է, եւ զանազան գործեր կատարած ըստէ ետքը, 1629 յունուար 13-ին զայն կարողիկոս օծուած կը դմէ (ՂԱՎ. 2399): Շահարաս իր որդիները կասկածով մեղոնել կամ կուրցնել տուած էր, որով իրեն յաջորդեց Սամ-Միրզա թոռը, որուն անունը Սէֆի փոխուեցաւ Սէֆեանց հարստութեան նախահայրին անունովը (1521), եւ եղաւ ու կոչուեցաւ Շահ-Սէֆի, կամ Շահսէֆի, (ՂԱՎ. 237): Նազար եւ Զուլայեցիք պարագայէն օգտուելու համար սըրընթաց փայեկաւ Մովսէսը Ասպահան հրաւիրեցին, որովհետեւ նոր

գահակալութեանց առիթով մեծ շնորհներ ընդունելու պատեհն էր, սկսուելուամբ գուտ ուսկի դահեկան, եւ այլեւս ինչս պատուական ընծայ, պատրաստեցին, նախարարներն ալ շահեցան պատեհ միջոցներով, եւ ամիսս ուր (ՂԱՎ. 237) բազմաերկ աշխատութեամբ եւ յոյժ բազում գանձս ծախսելով, իբր թէ հազար թունան (ՂԱՎ. 239), յաջողեցան ստանալ գրագաւորական նոմոս, որով կը ներունէր եւ կը ջնջուէր Եջմիածինի վրայ ծանրացող հարիւր թունանի տարեկան տուրքը: Ասոր վրայ Մովսէս ու Հայ իշխաններ բոլոր պետական պաշտօնատուները շրջելով, այնքան աշխատեցան, մինչ զի յանենայն մատենից, ուր եւ գրեալ կայր թան այն, յանենայն հանեալ արտաքսեցին (ՂԱՎ. 238): Այսպէս թագաւորական կնքով, ազդու եւ հատութանի, ոչ միայն ջնջեցին զիարիւր թունան նուղադէն, այլեւ ստացան զիրաման կարողիկոսութեան Մովսէսի վարդապէտին ըստ հայցուածոց ամենայն ազգին Հայոց (ՂԱՎ. 239): Այս կէտէն սկսելով կերպարանափոխ կը լլայ Հայոց հայրապետութեան եւ կարողիկոսութեան Մայրաքողին վիճակը, եւ գրեթ դարագլուխ մը կազմուի ազգային եկեղեցւոյ համար, եւ մենք այդ կէտերը կը վերապահենք պատմել Մովսէս Գ. կարողիկոսին անունին ներքեւ:

1653. ՄՈՎՍԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Սայրաթոռին անտէրունց եւ անիշխան վիճակը, կարողիկոսի անունը կրողներուն տկարութիւնն ու խուսափիլը, եւ Մովսէսի շնարար գործունեութիւնը եւ հարիւր թունան տարեկանը ջնջելու անօրինակ յաջողութիւնը, այնպիսի բացարիկ պարագաներ էին, որ իրաւամբ Մովսէսը երկնառար հրեշտակի մը պէս կը նկատուէր ամբողջ Հայութեան կողմէն, եւ այդ հանրային կարծիքին թարգմաններն էին Նոր-Զուղայի եւ ուրիշ քաղաքներու իշխանաւորները, որոնք Շահսէֆէ Մովսէսի կարողիկոսացման համար արքունի հաւանութիւնը իմնդրեցին եւ ստացան (1648): Բայց կերեւի որ Մովսէս տակաւին կը վարանէր պաշտօնապէս անունն ու օծունը ընդունիլ, թէպէտ գործով կարողիկոսութիւնը կը վարէր, եւ Սայրաթոռի ամէն տեսակ հոգածութիւնները կը կատարէր: Որոշ կերպով չի յշեր պատմիչը թէ անձնական համեստութեան գգացումն էր, որ Մովսէսի վարանումին պատճառ կը լլայր, թէ ոչ կամոնական երկիրածութիւն մըն էր, որ զինքն կը կասեցնէր, երբ անդին երկու անձեր կային, որոնք կարողիկոսութեան անունը կը կրէն, Դաւիթ Ասպահանի եւ Սահակ Վանի մէջ: Որն եւ ըլլայ բուն շարժարիթը Մովսէս 1628 աշունին յաջողութեամբ Ասպահանէ Եջմիածին դառնալով եւ ազգային կամքը գիտնալով եւ արքունական հաւանութիւնը ստացած ըլլալով ալ, տակաւին ժամանակ մը անցուց իր վերջնական որոշումը եւ զիջողութիւնը յայտնելէ առաջ: Այդ միջոցին կիյան այն թուրքը աղերսանաց, զորս պատմիչին վկայութեան համեստ, արք երեւելիք, եկեղեցականք եւ աշխարհականք, ստիպաւ կը որկէին ի Պարկաստանայ, ի Վրաստանայ, ի Քոռոմստանայ, եւ յամենայն աշխարհաց, եւ խմբրէին եւ աղաչին զի նի եւս պատճառս յօդեսցէ, այլ վասն հաստատութեան հաւատոյ եւ կարգի եկեղեցւոյ յանձն առցէ զկարողիկոսութիւնն (ՂԱՎ. 239): Այդ վերջին ակնարկները, թէպէտ քողարկեալ ոճով, բայց յայտնի միտքով կը

Վկայէին, թէ Եկեղեցին անտէր անտէրունց էր Եւ այսպէս մնալ հնար չէր, պարագաներն ալ դժուարին էին, ուստի այդ կացութեան վերջ տալու կտրուկ միջոցը, պաշտօնապէս ընդունի Եւ հռչակելու էր, ինչոր Մովսէս իրապէս Եւ գործնականապէս կը կատարէր, Եւ որուն համար պէտք եղած հաւանութիւնն ալ ստացուած էր տիրող կառավարութենէն: Այդ պատճառաբանութիւնն է հարկաւ, որ Վերջիվէրջոյ Մովսէսի միտրին վրայ ալ ազդեց, Եւ զիջան ընդհանուր թախանձանքին, Եւ 1629 յունուար 13-ին, Ծննդեան ուրօնքին, Երեքշարքի օր, օճնամ ամենասուրբ Հոգույն Աստուծոյ օծառ հայրապէտ Ամենայն ազգինս Յայոց (ՂԱԿ. 239): Յարկաւ այդ առքի լիակատար կերպով գործադրուեցան բոլոր ծիսական Եւ կանոնական պայմանները, որոնց ամենէն նախանձախնդիր պաշտպանը՝ ինքը Մովսէսն էր, բայց մեզ չեն հասած մասնակցող 12 եպիսկոպոսներուն Եւ անոնց երիցագոյնին անունները: Նմանապէս ընտրութեան Եւ օժման մասնակցող իշխանաւորներուն Եւ բագմութեան մասին ալ որոշ տեղեկութիւններ չունինք: Մովսէսի օժման թուականը 1629 յունուար 13-ին որոշ գորուած է Դավիթիցին, Եւ նոյնութեամբ կրկնուած զանազան տեղեր (ՂԱԿ. 338) Եւ համեմատուած ուրիշ թուականներու հետ, Եւ հաստատուած Երեւանցին (ԶԱՍ. 20-21), ուստի տարօրինակ կը թուի Ալիշանեն զայն 1630-ին յետաձգելը (ԱՐԱ. 231): Անշուշտ այս բանին պատճառ տուած է Դավիթիցին մեջ տեսնուած շփորութիւնը, որով 1629 յունուար 7-ին կը դնէ Շահարասի մահը (ՂԱԿ. 237), Եւ 3-ին Մովսէսի օծումը (ՂԱԿ. 239), Եւ 19-ին Շահէֆի գահակալութիւնը ուղղելու համար աւելորդ էր Մովսէսի օժման թուականը փոփոխել, քանի որ արտաքին պատմագիրներու հետեւողութեամբ պէտք էր 1628-ին կանխել Շահարասի մահը Եւ Շահէֆի գահակալութիւնը, ինչպէս մենք ալ գիտել տուինք (1648):

1654. ԳԱՐԱԿԱՆԻ ԻՐԱՒՈՒՔ

Մովսէս կարողիկոսը իր օժման թուականէն իբր գահակալ կը նկատենք, թէպետեւ մենք ամեն առիթի մեջ գահակալի մը մեռնելէն կամ ժողովով մերժուելէն առաջ ուրիշ մը գահակալ ընդունելէ խորչած ենք: Այս պարագայիս մեջ ալ գիտենք, թէ Դաւիթ Դ. Վաղարշապատեցին, որ Վերջին գահակալ էր, տակաւին կենդանի էր Ասպահանի մեջ, Երբ Մովսէս կօծուէր Էջմիածին: Գիտեմք Եւս թէ կանոնական ժողով մը զգունարուեցաւ Էջմիածինի մեջ, կանոնապէս Դաւիթ գահընկեց հրատարակելու Եւ Մովսէսը գահակալ հռչակելու համար: Սակայն բացարիկ պարագաներ, բացարիկ կնճիռներ բացարիկ լուծում կը պահանջեն, Եւ այս հանգամանքը կը ծնմարտուէր այդ միջոցին: Տարի մը ամբողջ անցեր էր, որ աբոռը տիրապէս անտէրունց էր: Անիկա որ բուն գահակալ կը նկատուէր, սկիզբէն իվեր կամկար ու ապիկար, շատոնցուընէ իվեր խսպար ծեռնբափ իննանամեայ զառամեալ վիճակի մեջ, կապրէր հեռաւոր Ասպահանի մեջ, Եւ կար իբրեւ թէ չկար, ոչ իրաւունքին տիրութիւն կըներ Եւ ոչ տիրութիւնը ընելու կարողութիւն ուներ: Միւսն ալ՝ որ կարողիկոսութեան իրաւունք էր առաջ փախստեան Մելքիսեդէկի կամքով միայն, ազգին ոչ մի բաժին կողմէն ընդունելութիւն չէր գտած, ամենէն մերժուած էր, Եւ միայն աբօւնական իրամանին վրայ

կը կիմնուէր: Սա ալ իրովի փախած ու ծերնբափ եղած ըլլալէ զատ, իր միակ ոյժն եղող արքունի իրաման ալ կորսուած էր, Մովսէսին կարողիկոսութեան Շահէֆի հաստատուելով: Այս պարագաներ լուսաւոր կերպով կը հաստատեն թէ Մայրաքոռին նոր կազմակերպութիւն տալը անհրաժեշտ պահանց էր, իսկական պարագաներէ առաջ եկած: Միւս կողմէն դիրութիւն Եւ հնարաւորութիւն ալ չկար, զամազան երկիրներէ եպիսկոպոսներ Եւ վարդապետներ Եւ իշխանաւորութիւն հաւաքելով կանօնական ժողով կազմելու, Եւ գահընկեցութիւն Եւ գահակալութիւն վճռելու, Եւ պէտք էր հնարաւոր եղած գործնական միջոցներով գոհանալ: Պէտք եղած փաստերն մէկն էր՝ կարողիկոս կարծուողներուն գործնականապէս զահազուրկ նկատուիլը, Եւ ընտրելի կարողիկոսին գործնական գահազուրկ գահին տէր գտնուիլ: Խկ ժողովական որոշման տեղը կը բռնէր ընդհանուր կարծիքին առանց բացառութեան համամիտ Եւ համակամ Եւ համաձայն յայտնուիլը, ամեն կողմէրէ գրաւոր դիմումներ հասնիլը, Եւ ոչ մի կողմէ հակառակութիւն լսուիլը: Այս պարագաները կշռադատելէ Եւ ուսումնասիրելէ ետքը, մենք ալ վճռաբար կրնանք ըսել, որ եթէ ոչ նիւթապէս հաւաքուած ժողովով, ժողովական որոշման համահաւասար գօրութեամբ՝ ամենայն ազգ Յայոց, որը յԱբեւելս Եւ յԱբեւմուս կային, միաբանեցան թոքով Եւ բանիւ, Եւ արարին զՄովսէս վարդապետն կարողիկոս, Եւ հաստատեցին ի սուրբ արռուն Եջմիածին (ՂԱԿ. 182): Ահա թէ ինչու իր օժման օրեն իբրեւ գահակալ կարձանագրէնք Մովսէս Գ. Տարեւացի կարողիկոսը: Անոր մակրիր անունը ոմանք Սիւնեցի կը գրեն, հայրենական նահանգն առնելով (ԱՐԱ. 231), ոմանք ալ խոտանանցի գուցին ծննդավայր գիւղէն առնելով (ԶԱՍ. Բ. 233), սակայն մենք կը պահենք Տարեւացի կոչումը, իր առաջին գործունեութեան տեղին առնուած (1615), որ ծիսական կիրաւութեամբ ալ նուիրագործած (ՃԱՍ. 591) Եւ ընդհանրացած է:

1657. ՄՈՎՍԷՍԻ ԳՈՐԾԵՐԸ

Մովսէս Տարեւացի կարողիկոսական գործունեութիւնը պատմելու մտած ատեննիս, պէտք է նախապէս յիշենք թէ Մայրտաճարին Եւ Մայրաքոռին նիւթական Եւ բարոյական բարենորոգման Եւ բարեկարգութեան մասին յիշուած ծնունարմները, որոնք 1627 յունիս 25-ին սկսան, Եւ որոնց նանրամասնութիւնները տուինք (1645) հնար չէր որ մինչեւ 1629 յունուար 13 լրացած ըլլային, մանաւանդ որ միջանկեալ տարիուկս ժամանակին մեծ մասը Ասպահան անցուց 100 թուական տուրքը ներել Եւ զնօնել տալու համար: Եթետեւարար անոնց շարունակութիւնը Եւ լրունը կարողիկոս օծուելն ետքը կատարուած պիտի ընդունինք: Այդ առքի գիտցաւ Մովսէս օգտուիլ այն մեծ խանդակառութենէն, որ ազգին մեջ բորբոքցաւ իր կարողիկոսանալուն պատճառով, Եւ իր շուրջը գտնուող բազմաթիւ միաբանները Եւ աշակերտները՝ նուիրակ ցրուեց ամեն կողմէր, որ նպաստներ հաւաքեն Եջմիածինի նորոգութեան համար, որ նոր էր սկսեալ, կը շեշտ Դավիթիցին ալ (ՂԱԿ. 182), ինչպէս մենք ալ դիտել տուինք: Եւ որովհետեւ ամենքը միանգամ բացարիկ լուծում կը կազմեն Մովսէսի գործունեութեան մի մասը կարգանական նաեւ գարատական իրամանին վրայ

Եւ զայլս գրեանս ստանալու համար ըրած աշխատութիւնները եւ թափած ջանքերը, որոնք մեծ նշանակութիւն ունին Մայրաթոռին կալուածական եւ ստացական իրաւունքներուն համար, եւ զորս երեւանեցին մանրանանորէն կը քաղէ (ՂԱՍ. 22), այլ մեծ դժուար է այդ մանրանանութեանց հետեւիլ: Բաւական ժամանակէ ի վեր Մայրաթոռի մէջ տիրող անկարգութիւնները, նանաւանդ վերջի ժամանակներուն մէջ Դաւիթի եւ Մելքիսեդէկի եւ Սահակի անխորհուրդ վատուննելը եւ գրաւի տալը, ազգային ստացուրեանց մեծ մասը վտանգի ենթարկած էր, ուստի մանրազնին եւ խճանին գործունելութեան պէտք կար, պատշաճ կերպերով եւ օրինական ձեւերով անոնք ազատել, ապահովել եւ հաստատել վաւերական կալուածագիրներով: Թեպէտ այդ մասին Մովսէսի յաջորդներն ալ գովանի փութաջանութիւն ունեցան, բայց անոնց սկզբնաւորութիւն տուած ըլլալու եւ ուղղութիւն հաստատած ըլլալու պարժանքը իրաւամբ Մովսէսի պիտի վերագրուի:

1658. ՔԱՂՈՒԱԾ ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

Մովսէսի Եկեղեցական բարեկարգութեանց կարգին կը յիշուի եւս թէ Եկեղեցին պայծառացոյց յարնար եւ հաստատուն ժամակարգութեամբ (ՂԱՎ. 210), որ կը ցուցնէ թէ հասարակաց աղօրից կարգաւորութեանց մէջ ալ Մովսէս հաստատուած կանոններու հետո մը պէտք է տեսնել, սակայն չենք ուզեր հետեւցնել, թէ Մովսէս նոր կարգադրութիւններ աւելցնելու միտք ունեցած ըլլայ, այլ միայն խաթարեալ եւ խանգարեալ կարգերը խնամով իրենց նախնի դրութեան վերլուծելու աշխատած է: Մէկ կարգադրութիւն մը միայն իրեն կը վերագրուի, այն է Օրինութիւն շարականներուն քաղուածը, որուն համար խաչատուր Կեսարացի վարդապետ, Մովսէսի աշակերտն ու գործակիցը կը վկայէ, թէ սա ինքն սուրբ հայրս մեր սահմանեաց տասն շարական ասել Օրինութիւն, գլխաւոր պատճառ ցուցնելով Ստեփանոս Սիւնիի պատրաստած տասը պատկերով Աւագ օրինութիւնները: Բայց որչափ ալ խաչատուր Կեսարացի կը կրկնէ թէ սրբազն հայրս կանոննեաց (ԺՄԳ. 694), սակայն այդ կարգադրութիւնը Մովսէսի ինքնաստեղծ գիւտը եղած չէ, վասնգի անկէ առաջ Սարգիս Պարոնտիր Մեծ-Անապատի մէջ սահմաներ էր ըսել Օրինութիւն ըստ խորհրդյու աւուրճ, եւ ի վերայ քաղուածը շարականաց (ՂԱՎ. 196), որով Մովսէս անոր հետեւողութեամբ ընդարձակած կըլլայ Մեծ-Անապատի սովորութիւնը, ուր ինքն ալ միաբանած էր (1620): Միայն թէ Մովսէս ալ քաղուածը իր պարտաւորիչ չէ իրամայած, զի խաչատուր Կեսարացին ալ կը գրէ: Եթէ հաճեսցի կամք եղբայրութեան ձերոյ, Տեամն գոհութիւն, եւ եթէ ոչ ախորժիցէ՝ կամք ձեր Եղիշին (ԺՄԳ. 694): Մովսէսն ետքն ալ նոր պատուէր մը չունինք քաղուածին մասին, այնպէս որ այժմ լոկ հնացեալ սովորութեամբ իր պարտաւորիչ նկատուած է, մինչ պէտք էր զայն իր կամաւոր հանդիսականութիւն կամ իր քարեպաշտական նկատել Մովսէսի կարգադրութեամբ:

1659. ՀՈՌՄԻ ՀԵՏ

Ինչինչ յարաբերութիւններ ալ կը վերագրուին Մովսէսի յօնոմի պապութեան հետ, որոնց մեծ կարեւորութիւնը կծառայեն հոռմէադաւանները՝ յօգուտ գոր-

ծածելով անոր անունն ու հրչակը: Չամչեամի անորոշ եւ անստուգեկի աղբիւրներէ քաղած պատմութեան համեմատ, Մովսէս առաջին թուղը մը գրած կըլլայ 1629-ին իր հայրապետութեան սկիզբը, դարձեալ միւս եւս թուղը անկէ ետքը, որուն վրայ 1631-ին Պողոս Փիրօմալլի (padre Paolo Piromalli) լատին Դոմինիկեան քահանայ մը կը դրկուի Ուրբանոս պապէն, որուն Մովսէս շատ մը լատինամիտ յայտարարութիւններ օրած եւ որուն ձեռքը կը յանձնէ նոր թուղը մը, 12 եախսկոպոսներէ ալ ստորագրուած: Եթէ թէ Փիրօմալլի այդ թուղը կը տանի Նախիջեւանի Ունիթորներուն, եւ անկէ կը դրկէ Յօնոմ, եւ կրկին Եօմիածին դարձած ատենը, այլազգի իշխանին կողմէ կասկածաւոր կը նկատուի, կը գանակոնուի եւ կը բանտարկուի, եւ հազի 22 ամիս ետքը կրնայ ազատութիւն ստանալ (ՂԱՍ. Գ. 611): Մովսէսի 12 եախսկոպոսներու հետ գրած վերջին թուղը, որ Չամչեամի պատմութեամբ 1631-ին գրուած էր, ուրիշներ 1629-ին կը տանի Դոմիոմալլի գալուստը, որ Չամչեամ 1631-ին գրկուած էր, ուրիշներ 1640-ին կը յետաձգեն (ԿԱԹ. 162): Խևկ գրչագիր մը, որ ժամանակակից է, 1628-ին կը դնէ հանդերձ երկոտասամիւթ եախսկոպոսօր Մովսէսի նամակը (ՏԱԸ. 111), եթէ Մովսէս ներ կաթողիկոս չէր: Մովսէսի նամակներն ոչ մի պատճեն յառաջ բերուած չէ, որ անոնց թիւն ու թականը ու պարունակութիւնը ստուգէինք, իսկ իրարու հակառակ տեղեկատուններ օրինաւոր կասկածի իրաւունք կու տան ըստածներուն ստուգութեան վրայ, կասկած մը որ աւելի եւս կը գօրանայ ազգային պատմիններու պահած լրութեամբը: Մելքիսեդէկի նամակներուն համար ըրած դիտուննիս, թէ անոնք Մելքիսեդէկի արգելքի ներքեւ եղած ատեն Զաքարիայի ձեռքով կազմուած էին (1608), հաւանական կը ցուցնէ, թէ կաթողիկոսներու անունները շահագործող ուրիշ լատինամոլ գործիչներ եւս եղած են, եթէ տեղերու հեռաւորութիւններ եւ յարաբերութեանց դժուարութիւններ անհնար կընէին որեւէ բաղդատական ստուգութիւն: Բայց առանց այս դիտողութեանց ալ, իրարմէ շատ տարբեր բաներ են, նամակի մը մէջ շրայլուած քաղաքավարի բացատրութիւններ, եւ հաւատոյ պաշտօնական դաւանութիւններ: Մովսէս իր հայադաւան Եկեղեցւոյ գրութիւնը բարձրացնելու եւ պայծառցնելու աշխատող մը, երբեք զայն ուրանալու կամ փոփոխելու միտքը չէ ունեցած, այլ եղած է միշտ ինչ որ էր, հայադաւան Եկեղեցւոյ հաւատարիմ ախոյեան: Բայց կրցաւ Լատին աշխարհին բարեացականութիւնը փնտուել, թէ իր դիրքին ոյժ մը գտնալու յուսով, եւ թէ Եւրոպիոյ մէջ եղող Յայ գաղութերու դիրքը պաշտամնելու համար Մովսէս կրնար ալ, Չամչեամի պատմածին համեմատ, Փիրօմալլի յայտարարել թէ անխախտ ու մինք զիկակութիւն սիրոյ ընդարձական կը պահուի միւս Եկեղեցիններու հետ, առանց անոնց դաւանութիւնը ամբողջաբար ընդգրկելու, բաւականանալով հիմնական կտերու վրայ համաձայնութեամբ: Մովսէս կրնար եւս պապութեան հետ յարաբերութիւնները մշակել, Ուրբանոս Ը. պապէն Արեւելցիններու համար բացուած դպրատունն օգտուելու համար (ՂԱՍ. Բ. 24): Օտարազգի վարժարաններ դիմելը նպատակ ունի միայն ուսում-

նական զարգացումը, եւ ոչ թէ օտար դաւանութեան հետեւողութիւնը, բան մը որ միջնեւ մեր օրերն ալ կը ճշմարտուի:

1660. ԼԵՅՎՈՅՑ ՀԱՍՄԱՆ

Ուրիշ պարագայ մըն ալ կար, որ Մովսէս կը ստիպէր Արեւմտեաններուն հետ յարաբերութեան մտնել: Գրիգոր Կեսարացի, իր Կամենից վտարուելէն (1641) եւ Զաքարիա Վանեցիի պատրիարք ըլլալէն ետքը, Կեսարիա գացած էր, իր սեփական վիճակը (1642), եւ ինն լած էր Մովսէս Տաթեւացիին՝ իր նախկին ծեռնասումին (1603) Մայրաբռոյ կարողիկոսութեան բարձրանալը: Այդ առթիվ Գրիգոր Մովսէսն կը խնդրէր, որ բարձր իրամանաւ սուրբ Էջմիածնի եւ կաթողիկոսական իշխանութեամբ (ԴԱՎ. 284) Նիկոլը բանադրէ, զի նոր պարագայ մը վրայ Եկած էր, որ Կեսարացին կաթողիկոսական բանադրանքի մըն ալ պէտքը կը զգար, իր արձակած բանադրանքին վրայ (1641): Որչափ ալ Նիկոլ կարեւրութիւն չէր տուած Կեսարացիի բանադրանքին սակայն իր ժողովուրդին զգածուելուն եւ իրմէ զգուշանալուն վրայ, կը ստիպուէր ու կը պատրաստուէր անոնք շահելու համար 3000 զուրուշ ժողովուրդէն ճանապարհածախս ստանալով, Իլվովէ մեկնիլ, Կոստանդնուպոլիսն եւ անկէ Կեսարիա երթալու համար, որ տացէ մեղայ եւ առցէ արձակումն Կեսարացիէն: Բայց Պրուսա հասած ատեն կը հանդիպի Արիստակէս Խարբերդցի Վարդապետին, որ Կեսարացիին դէն բարկացած էր, անոր փոխանորդներուն իրեն դէն համած հայածանքին համար (1640), եւ Նիկոլ կը համոզէր թէ պէտք չունի Կեսարացիին երթալ, եւ թէ ինքն ալ կրնայ արձակել, որով Նիկոլ կը հաւանէր չերթալ, այլ միայն թուղթով արձակում կը խնդրէր պատճառելով թէ աստեն հիւանդացայ եւ անկեալ կամ ի մահիճս: Կեսարացին կը հաւատայ կը խորհայ, կը գրէ թուղթ արձակման եւ օրինութեան, եւ կը դրկէ Պրուսա, եւ Նիկոլ զայն ասնելով կը դաշնայ իլվով, ուր Իլվովցիք գիրը տեսնելով ուրախացան եւ միաբանեցան ընդ Եպիսկոպոսին (ԴԱՎ. 205): Մինչ այս մինչ այն Կեսարացին լուր կառնէ, թէ Խարկանօք լիւած է իրմէ արձակման թուղթը, ուստի հսկոյն կը փուրայ նզովքը նորոգել եւ Իլվովցիներու ալ կը գրէ, թէ առաջին նզովքն եւ բանադրանքն կայ ի վերայ այդո Եպիսկոպոսիդ (ԴԱՎ. 286): Ահա այդ առթիւ է որ աւելի հաստատութեան համար Մովսէսն ալ կը խնդրէ կաթողիկոսական իշխանութեամբ Նիկոլը բանադրել: Իրօք ալ Մովսէս՝ Վստահ իր նախկին վարդապետին վրայ եւ համամիտ անոր ուղղութեան հսկոյն գրեաց գիր բանադրանաց եւ առաքեաց ի Վերոյ Նիկոլ Եպիսկոպոսին (ԴԱՎ. 284): Մովսէսի բանադրանքը կարձակուել 1629-ին, որ պապին ալ գրուած նամակին թուականը կը ցուցուի (1659), եւ այդ գործնիպութիւնը կը բաւէ բացատրել թէ ինչ կրնար ըլլալ Մովսէսի նպատակը, եթէ իրօք գրած է այն նամակը, որուն մասին ստոյք եւ վաւերական տեղեկութիւններ կը պակսին: Մովսէսը ուզած է իր իշխանութիւնը պահել Արեւմուտք գտնուող Շայերուն վրայ, եւ ոչ թէ հնքիմքը հպատակեցնել Արեւմուտքի պապութեան ներքեւ: Որովհետեւ բանադրանաց գիրին ետեւն Լեհաստան կը դրկէր Խաչատուր Կեսարացի Վարդապետը, եւ քանի որ Նիկոլ կը յանդգնէր Կաթողիկոսական վճիռն ալ անարգել, Մովսէս պաշտօն կու

տար նուիրակուին ընկենուլ զՆիկոլ ի պաշտամանէ (ԲՌՆ. 155) եւ Գրիգոր Կեսարացին ալ նուիրակը կը զգուշացէր, որ մի գուցէ թէ ընկալցի զՆիկոլն ի կարգս եւ ի պատիւ Եպիսկոպոսութեան (ԴԱՎ. 286): Իլվովցիք բացարձակապէս դէմ դարձած էին Նիկոլի, եւ ոչ միայն իրմէ կը խորշէին, այլ եւ խորհիմ դատաւորքն ինել զնա ի բանտի, եւ հանել ի նմանէ զաստիճան արքեպիսկոպոսութեան (ԲՌՆ. 22): Խաչատուր վարդապետն ալ, թէպէս այր հեց եւ հանդարտ եւ քայցրաբարոյ (ԴԱՎ. 286), սակայն չկարենալով Նիկոլի նախատինքներուն եւ կարողիկոսական հրամաններու դէմ ըմբոստանալով, ինքն ալ ամէծքը կը կրկնէր, որուն վրայ քաղաքին դատաւորներ Եկեղեցին կը փակին եւ դատաստամի կը նստէն Նիկոլը դատելու նուիրակին նախագահութեանք: Խաչատուր խնդիրին զայրանալը տեսնալով, հաշտելու եւ հաշտեցնելու միջոցներ կը փնտուէր, բայց դատաւորներ անողոք կը մնային, եւ երո Նիկոլ կը սպառնար արքունի դատարամի դիմել, Յայազգիները կը պնդէին, թէ իրենց իրաւունք տրուած է որ իրենց գործերուն Յայոց ազգի դատաւորքն արասցեն գդատաստանս, եւ ոչ թէ դատաւորք ազգին Ֆռանկաց: Նուիրակը սրտապնդելու համար ալ կաւելցնէին, այլեւ ունիմք ապրանք ընդ ապրանաց նոցա, եւ խելք ընդ խելաց նոցա, եւ դու զի՞ եւս երկնչիս (ԴԱՎ. 289): Այսպէս կը շարունակէր վեճը, զի ոչ Նիկոլ կը հպատակէր, եւ ոչ ալ ազգայինք կը զիշանէին:

1664. ՄՈՎՍԷՍԻ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ

Կարողիկոսի մասին Խուլին ըսածը կը հաստատէ, թէ Մովսէս ոչ համամիտ էր հոռոմեական դաւանութեան եւ ոչ կամակից հոռոմեական գործունեութեան, մինչ անոր պապին գրած նամակին գօրութեամբ բոլոր հոռոմեական գրողները, Զամչեան, Պալճեան, Ըստկարեան, Ազարեան, Գալէնքեարեան եւ ընկերը՝ կը սիրեն կարծել, թէ Մովսէս ուղղափառամիտ, իրենց միտքով՝ լատինամիտ էր, եւ Թորոսեանին Նիկոլի ըրածներուն հաւան (ԸՍ. 380): Բայց բոլորովին ուրիշ նապատակով գրուած էր Մովսէսի նամակը, ինչպէս վերեւ յիշեցինք, այսինքն Եթեաստանի հայադաւանները չնեղելու համար: Այդ գիրը տարբեր միտքի տանիլը՝ դիւրաւ կը մրճնենք Սիմեոն Սեբաստացիին գրչին տակ, որ իր Սոյց արթօն պաշտպանելու նպատակով ամէն տեսակ նախատական լուտանքներ կը գրէր Եջմիածնի դէմ, բայց չինք ուզեր նոյն հոգին տեսնել նաեւ անոնց մօտ, որոնք լուրջ գրողի կերպարանքով կը պարծին: Սեբաստացիին գրածին համեմատ, Մովսէսի նամակը Յոռմի մէջ կը տեսնէ Խուլը, եւ գրեալ զօրինակ՝ ի Ստամբուլ յղեալ կը լլայ, ուսկից իմքն Սիմեոն ալ ընդօրինակելով պահած եմ կը սէ (04. ԱՐՌ. 723): Կը յիշէ եւս թէ Խուլին Յոռմ դրկած օրինակին լուրջ Գրիգոր Կեսարացիին ալ կը հասնի, որ մեղադրական գիր մը կը լուրջ Մովսէսի. իր նախկին ծեռնասումին: Սակայն Կեսարացին Մովսէսին գրած թուղթը տեսած եւ պարունակութեան տեղեւակ եղած չէ, որովհետեւ պարզապէս անախորժելի համբաւ եւ տրտմագոյն զորյց եւ ցաւագին ասացուածս լսելով կը գրէ, իբր թէ Մովսէս Քաղկեդոնի ժողովն ալ ընդունած ըլլայ, եւ կամ Նիկոլի ու Խուլի նման պաշտօնապէս հոռոմեական դաւանութեան յարած ըլլայ (ԶԱՄ. գ. 611): Բայց այսպիսի յայտարարութիւն

բնաւ գոյութիւն չունէր, եւ թէպէս պատճենը մէջտեղ չկայ՝ որ մօտէն զննենք, սակայն դիւրին է մալարերել, թէ պապին անձին գովեստներ եւ Յօնին արուշին փառաբանութիւններ էին, յորս մերայինք կառատային չափազանցելու աստիճան, երբ որ Յօնին կողմէն պաշտպանութիւն կամ օգնութիւն կը խնդրէին կամ կը յուսային: Ներկայ պարագայից մէջ ալ Սովուսի Լեհաց թագաւորէն եւ Յօնին պապէն խնդրածն ու սպասածը՝ իր ազգակիցներուն եւ դաւանակիցներուն պաշտպանութիւնն էր, որպէսզի անոնց վրայ ստիպում եւ բռնութիւն չգործուի դաւանութիւնին փոխելու, եւ հռոմէականութիւն կամ լատինականութիւն կամ քաղկեդոնականութիւնն ընդունելու, այլ ազատ թողովին իրենց հայրենական դաւանութեան մէջ, որ կատարելապէս ուղղափառ եւ ծշմարիտ է: Մովսէս իրաւամբ կրնար աւելցնել, թէ Յայ Եկեղեցին հիմնական եւ էական կտտերուն մէջ հռոմէական դաւանութեն տարբեր չէ: Միանգամ ընդմիշտ պէտք է ըմբռնեն

Յայ Եկեղեցւոյ հակառակորդներ հայագի ըլլան թէ օտարազգի որ Յայկական Եկեղեցւոյ ներողամիտ եւ թոյլատու հոգին, ուղղափառութիւնը քրիստոնեական ծշմարտութեանց եւ քրիստոսական տնօրինութեանց էական կտտերու վրայ կը հիմնէ, վարդապետութեանց երկրորդական կտտերու մէջ իրաքանչիւր Եկեղեցւոյ պատութիւնը կը յարգէ, անոր համար ուրիշ Եկեղեցւոյ հետ հոգեւոր հաղորդակցութենէ չի խորշիր, անոնց արտաքին առաւելութիւններուն եւ աշխարհային կարողութիւններուն վկայելու չի դժուարանար, եւ մինչեւ մէկ աստիճան յարգանք ընծայելէ ալ չի քաշուիր բայց ոչ իր Եկեղեցւոյ հնաւանդ ուղղափառութիւնը կը զոհէ, եւ ոչ ուրիշ Եկեղեցւոյ իր վրայ իշխանութիւնը կընդունի: Երբոր այդ կտտերը ըմբռնուին, շատ դիւրին կըլլայ, մեր կարողիկոսներուն եւ մեր վարդապետներուն ըսածներուն եւ քրածներուն իսկական միտքը թափանցել, եւ քաշկըստութերով չխեղաթիւրել:

Մրագործված՝ նաեւ Սովուս Տաթեւացու հուշով



Յոշանց անապատ

Հիմնադրել են Տեր Կիրակոսն ու Թումա (Թովմաս) Եպիսկոպոսը՝ Սյունյաց մեծ անապատից:

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ



ՄԻՔԱՅԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ ԶԱՄՅԱՆ

ա. 1628թ. Սպահանում եւ Զուղայում բնակվող հայերը լսելով, թէ Սահակ կաթողիկոսը փախել է, ու թափուր է Աքռոք, եւ թէ Մովսես վարդապետը նախանձախնդիր է շենացնել Եջմիածինը՝ Յայոց մեջ ու փոքր բնակչութերին գրեցին՝ նրանց հորդորելով կաթողիկոս ընտրել նրան իսկ՝ Մովսեսին, որի շնորհաբուխ ուսմունքի եւ հրաշալի վարքի վերաբերյալ փորձառաբար բազմից հավաստիացել էին: Եվ նրանք եւս ամբողջ սրտով հոժարամիտ էին նույն միակամությամբ, որովհետեւ ամեն տեղ տարածված էր նրա անվան բարի համբավը: Եվ դրանից հետո Եջմիածին, Մովսեսին էին հանում ազգի երեւելիների բազում նամակները Յայոց, Պարսից, Վրաց աշխարհներից, նաեւ Յունաստանից եւ այլ վայրերից, որպեսզի նա ստանձնի կաթողիկոսությունը հանուն ժողովրդի շահի:

Իսկ Մովսես վարդապետը թեպետ բազմաթիվ ձեւերով սկզբից ընդունացավ եւ չկամեցավ հանձն առնել, բայց տեղի տալով ազգի բախանձանքներին եւ սրտի բազում գորովանքին, որ ուներ Եջմիածինի հանդեպ, հարկադրվեց ընդունել այն իշխանությունը: Եվ այնտեղ հավաքված բազում եպիսկոպոսների ու վարդապետների ներկայությամբ կաթողիկոս օծվեց մեծաշուրջ հանդիսանքանը Տիրոջ 1629 եւ Յայոց Ո՞ՇԹ /1078/ թվականի հունվարի 13-ին:

Եվ նույն օրերին Շահ Արաւ Ղազվինից չվելով գալիս է Վահրապատի Աշուակ քաղաքը, եւ այնտեղ

մեռնում հունվարի 7-ին: Եվ քանի որ նա սպանել էր իր որդիներին եւ ոմանց էլ կուրացրել, որպեսզի նրա իշխանները չապստամբեին նրանից ու նրանցից /որդիներից/ մեկին թագավոր չկարգեին, նրա մեռնելուց հետո հունվարի 19-ին թագավորեց նրա թոռ՝ տղայահասակ Խսմայելը, որը եւ իր հոր՝ Շահ Արաւ անդրանիկ որդու անունով կոչվեց Շահ Սեֆի: Այն ժամանակ հայերը մոտենալով նոր արքային՝ հրովարտակ խնդրեցին ի հաստատություն Մովսեսի իշխանության: Եվ անմիջապես գրեցին Եջմիածին Մովսես կաթողիկոսին՝ փութալ հասնել Սպահան, որպեսզի թերեւս հնար լինի նոր արքայից ընդունել ազատություն տարեկան հարկերից, որ այն ժամանակ հասել էր հազար թումանի: Ու երբ Մովսեսն այնտեղ հասավ, հայերը շատ դրամ եւ մեծագին ընծաներ պատրաստեցին եւ թագավորին ու ավագանուն հազար թումանի չափով առատ նվերներ տալով՝ ծանր հարկերից ազատվելու թուղթ վերցրին նրանից: Այնուհետեւ Եջմիածինը ձերբազատվեց այդ բեռան ծանրությունից: Իսկ Մովսես կաթողիկոսը շուրջ ուր ամսից, աշնան օրերին վերադարձավ իր Աքռոք՝ ձեռնարկելով կատարել Եջմիածինի նորոգությունը, ինչը սկզբից իսկ նպատակադրվել էր: Եվ նա ուներ բազում ընտիր աշակերտներ, որոնցից էր Փիլիպոս վարդապետ Աղբակեցին, որ առաջինի ու զգոնամիտ մարդ էր (1), նրանց նվիրակությամբ առաքեց աշխարհի տարբեր կողմերուն գտնվող հայերի մոտ, որպեսզի միջոցներ հանգանակեն շինությունների նորոգման համար, որովհետեւ շատ ծախսի կարիք կար:

Բ. Եվ եղավ, որ այս թոլորը լսեց Սահակ կաթողիկոսը, որ նստած էր Վաճում, տարակոյսի մեջ ընկավ եւ սկսեց այցելել հարուստներին՝ նրանց հաճոյանալով նվերներով, որպեսզի ինքը եւս Վաճում իր կաթողիկոսությունը վարի Օսմանցիների իշխանության տակ գտնվող հայերի նկատմամբ: Եվ մինչդեռ նա զբաղված էր այսպիսի գործերով, այնտեղ եկավ Մովսեսի աշակերտ Փիլիպոս վարդապետը, ու տեսնելով Սահակի արարոք, խստ զարմացավ, նաեւ վախեցավ, թէ գուցեց սրա հետեւանքով շատ խռովություններ ծագեն ազգի մեջ եւ հակառակություն՝ Աքռում: Այս պատճառով հորդորեց հայոց մեծամեծերին, որ Վաճում էին, խոսել Սահակի հետ եւ հանդարտեցնել նրան: Եվ նրանք գնալով Սահակի մոտ՝ շատ բաներ խոսեցին բազում օրեր ու նրան հորդորեցին հանգիստ մնալ: Ասում են. այս տառապայլ ազգի համար ինչո՞ւ ես խոռվության եւ բաժանման պատճառ դարնում: Նրան սիրաշահելու համար խոստացան տալ իր պետքերի համար պաշար՝ տարին երեք հարյուր դահեկան՝ որքան նա կենդանի լինի, ու երդումով ստանձնեցին՝ նրան համձնել թուրուպաշ կոչվող բնակավայրը՝ նրա հասությի հետ միասին, որպեսզի այնտեղ նստի խաղաղությամբ:

Բայց Սահակը նրանց չլսեց, այլ գտնելով իրեն բազում համախմներ եպիսկոպոսների ու վարդապետների մեջ, որոնցից էր նաեւ մի վարդապետ Պողոս անունով, որ եղբորորդին էր Սսի Յովհաննես կաթողիկոսի, շանաց նրանցով գլուխ բերել իր մտադրությունը: Այս նպատակով Պողոսին իսկույն Կոստանդնուպոլիս ուղարկեց Զաքարիա պատրիարքի մոտ, որպեսզի նա աջակցի ու կատարի իր խնդրանքը: Եվ քանի որ Զաքարիա վարդապետը հակառակ

Եր Մովսեսին ու բարեկամ՝ Սահակին, շուտափույթ ջանք գործադրելով, նրա համար թագավորական հրովարտակ Վերցրեց Մուլրադ Չորրորդ սուլթանից, եւ առաքեց նրան ու հորդորեց նրան, որպեսզի կարողիկոս նստի Տարոն երկրի Սուլր Կարապետ վաճքում եւ իշխի Օսմանցիների իշխանության տակ գտնվող հայերին: Բայց քանի որ, երբ պատրիարքն այսպիսի հրովարտակ էր վերցնում, եպարքոսը, այսինքն՝ վեգիրը, Կոստանդնուպոլսում չէր, այլ՝ Ամիդում էր. այս պատճառով Սահակը Պողոսի հետ գնաց նախ Ամիդ, որպեսզի նաեւ եպարքոսից հավանություն ստանա, ու նրա հրամանով Սուլր Կարապետ գնալով, որը Մուլչում է, նստի այնտեղ, քանզի առանց նրա համաձայնության չէր կարող գործադրել այն իշխանությունը:

Երբ այս իմացան Ամիդում բնակվող հայերը, որոնցից նշանավոր էին այս երեքը՝ Երեմիան, Սաղստուր ու Եպարքոսի հանդերձապետ Ուուիջանը, սրանց հետ նաեւ վարդապետներ, քահանաներ՝ ջանացին խափանել Սահակի մտադրությունը, նրան աղաքցին ետ կանգնել այդ գործից, եւ սրա համար նրան խոստացան ամեն տարի տալ իինզ հարյուր դահեկան եւ մի մեծ թեմ այն քաղաքներից, որ ինքը կուլգի: Եվ ոչ միայն այսքան. այլեւ նույն ինքը՝ Մովսես կարողիկոսը, նաեւ Փիլիպոս վարդապետը նրան դարձալ գործին բազում աղաքանքներ ու նրանից խնդրեցին՝ ազգը երկու մասի չքաժանել, ստում եմ՝ բավական եղավ այն, ինչ մեր ազգը կրեց եւ կրում է, եւ խոստացան շատ բաներ ի շահ նրա ամձի ու Պողոսի, եթե նրանք հրաժարվեն իրենց խորհուրդներից:

Այսուամենայնիվ Սահակի կամքի խստությունը չնվազեց, այլ գրված աղերսանքի նամակը համձեւեց Եպարքոսին ու խոստացավ արքունի գանձարան վճարել տասը հազար դահեկան, եթե նա համաձայնի ըստ թագավորի հրովարտակի հաստատել իր կարողիկոսությունը: Կարդալով այդ նամակը՝ Եպարքոսը հոժմարությամբ համաձայնեց կատարել նրա խնդրանքները, սակայն իսկույն չհոժմարեց հայտնել իր համաձայնությունը: Օրեր անց Եպարքոսին ներկայացրին աղաքանքի մի նամակ նաեւ նրանք, ովքեր Մովսես կարողիկոսի կողմից էին, եւ նրան լիովին տեղեկացրին Սահակի ամձի ու նրա գործակցի որպիսին լինելը, ու խնդրեցին նրանց, որպեսզի չկատարի նրանց կամքը:

Սրանց նամակը եւս կարդալով՝ Եպարքոսն ասում է. ինչո՞ւ նրան չտամ այն կարողիկոսությունը, որովհետեւ նա խոստացավ արքունի գանձարան ներմուծել տասը հազար դահեկան: Այն ժամանակ Ուուիջանը, որ այնտեղ էր ու համարձակ Ելունուտ ուներ Եպարքոսի մոտ, առաջ գալով աղերսեց նրան եւ ասաց. եթե գանձի համար նրան պիտի վաճառես ողորմելի ու տառապատ մեր ազգը, ապա ինձ վաճառիր, եւ ես ոչ թե տասը հազար դահեկանով, այլ քսան հազարով կգնեմ:

Ավելի շատ հոժմարելով սրան՝ Եպարքոսը ժամ սահմանեց, որպեսզի իր առջեւ դասի կանգնեն Սահակը, Պողոսը եւ Մովսեսի կուսակիցները: Ու երբ հասավ պայմանավորված ժամանակը, եւ դատը նախապատրաստվեց, Սահակի ու Պողոսի գալու պահին Եպարքոսը հարցրեց Սահակին եւ ասաց. դու իսկապե՞ս թագավորությունից ընդունեցիր կարողիկոսու-

թյան հրովարտակը: Եվ նա ասում է՝ այս: Եպարքոսը նրան ասում է. դու չգիտե՞՞ր, թե ես այստեղ եմ, ապա ինչո՞ւ առանց ինձ տեղյակ պահելու սկզբից զնացիր այդպիսի հրովարտակ առար. թերեւս կամենում էիր իշխել նաեւ ինձ վրա: Այս ասելով՝ իսկույն դահմաներին հրամայեց գանձութել նրա եւ Պողոսի ոտքերը՝ մինչեւ մեռնեն, ասում է, կամ էլ ընդունեն ին օրենքը եւ ազատվեն:

Եվ դահմաները փութով պատրաստվեցին կատարել Եպարքոսի հրամանը ու սկսեցին երկու կողմերից հարվածել, եւ ամեն անգամ հարվածելուց հարցնում էին. ձեր հավատից դառնալով՝ եք մեր կրոնին, թէ՞ ոչ: Այս տեսնելով հայերն, ովքեր Մովսես կարողիկոսի կողմնակիցներն էին, իսսաւ վախեցան՝ չկին թե նրանց ուրանան իրենց հավատը, եւ դա անդառնալիորեն ժանրանա նրանց խղճմտանքի վրա՝ համոր իրենց ազգի: Այդ պատճառով ոմանք այնժամ Եպարքոսի ոտքերն ընկան եւ նրան աղաքցին, իսկ ոմանք էլ դիմեցին մեծամեծ իշխանների՝ խոստանալով բազում նվերներ, նրանց միջնորդ դարձրին՝ Սահակին ու Պողոսին ազատելու համար, եւ հազիվ իշեցնելով Եպարքոսի բարկությունը՝ նրանց ազատեցին դահմաների ծեռքից, եւ վերցնելով նրանց տարան իրենց տները: Եվ նրանք Ամիդում մի քանի օր մնալուց հետո, այնտեղից հեռացան տարբեր տեղեր. Պողոս վարդապետը գնաց Հունաստան եւ այնտեղից՝ Լեհաստան, եւ այնտեղ վախճանվեց: Իսկ Սահակը գնաց Վրաց աշխարհ եւ այնտեղ մնաց մոտ մեկ տարի, եւ հետո գալով Վրարատի աշխարհ՝ նստեց Եզմիածնում խոնարհության եւ ապաշխարական սուրգի մեջ, հետո Փիլիպոսի կարողիկոսության ժամանակ սուրելի ուռելուց բազում վշտագին ցավ կրեց, որովհետեւ օրեցօր ավելացան ուռուցքները եւ հասան մինչեւ նրա փորը: Տեսնելով, որ մահվան դրանն է մոտենում՝ Սահակը խնդրում է իրեն վերցնել ու տանել Եկեղեցի՝ Քրիստոսի իշման տեղը, ու երեսը հպելով գետնեմ՝ դառնապես լալիս ու փղձկագին սրտով հառաչում էր, եւ իր անձը խորտակում Տիրոց առջեւ, թողություն էր խնդրում իր բոլոր հանցանքների համար, եւ իրեն հանձնում Տիրոց խնամքին, աղաչում էր, իսկ ինչպես որ բարի է նրան՝ տակավին մնալ առողջության կամ հիվանդության մեջ՝ թող անի՝ ինչպես հաճելի է իրեն. իսկ եթե քո կամքն է, ասում է, որ մեռնեմ, ցանկանում եմ, որ ես փութով հասնեմ մահվան: Եվ այնժամ կանչել է տալիս մի ծերունի Եպիսկոպոսի, եւ այնտեղ նրան արտասարքով խոստովանելով՝ հաղորդվեց Աստծո Որդու պատվական մարմնին եւ արյանը, եւ ապա Վերադարձավ իր սենյակը, եւ նույն գիշեր վախճանվեց՝ 1639 թվականին՝ ինձ տարի մնալով կարողիկոսության մեջ մինչեւ Մովսեսի ընտրությունը, իսկ նրա վտարանդիրությունն ու առանձնությունը տեսեց տասը տարի:

զ. Բայց Մովսես կարողիկոսը, որ հետամուտ էր Եզմիածնի շինությանը տակավին իր փակակալության օրերից, ամենայն ջանահրությամբ շտապում էր կատարել այն: Նախ երբ կամեցավ մաքրել Եկեղեցու շուրջ բլից նման դիզված ու բարձրացած փլատակը, շատ տարակուսեց, որովհետեւ դրա համար հազարվոր մշակներ բավական չէին քանի դեռ ու մաքրելու այլշափ ավերակը եւ տանել հեռու: Սակայն հետո միտք հղացավ ու գտավ ելքը. մերձակա գե-

տից ավերակի կողմը առու փորել տվեց, որով ջուրը սաստկությամբ հորդելով՝ ողողեց վայրը եւ առավ տարավ ավերակույտը, ու մնացին միայն քարերը, որոնք հետո պիտանի եղան շինարարությանը: Դրանցից հետո շուրջօրոնը հողից լայն ու ընդարձակ պարիսպ կառուցել տվեց ու նրա վրա ութ բուրգ կանգնեցրեց, ու քանդելով խարխված շինությունները՝ ծեռնարկեց ամենն ի նոր կառուցել քարով, թրծված այսուսով եւ կրով: Հյուսիսային եւ արեւելյան կողմերում սենյակներ շինեց միաբանների բնակության համար, եւ հարավային կողմում՝ սեղանատուն, փոատուն եւ տնտեսատուն եւ համբարանոց, եւ արեւմտակողմում՝ հյուրանոցներ, տարբեր օքեւաններ: Մասամբ նորոգեց նաեւ եկեղեցին, նրա գմբեթը, ուր տեղ-տեղ երեւում էին վնասվածքներ:

Ապա /1630թ. / սկսեց զարդարել Եջմիածնը տարբեր սպասքներով եւ անորներով, որոնցից լիովին զուրկ էր, եւ էլ ավելի պայծառացրեց, քան առաջ էր, հանեց գրավից, որ Զախիկին կարողիկոսները վերցրել էին այլազգիներից Եջմիածնի սուրբ անորների դիմաց. դրանց մեջ էին սուրբ Արիստակեսի աջը (2) եւ Աղջոց վանքի սուրբ Ստեփանոսի աջը (3): Եջմիածնի միաբանների համար սահմանեց կարգ ու կամոն, համաձայն կարգի որ կիրառել էր մենաստանում, եւ անխոնց կերպով հարատեւում էր աղոթքի եւ Սուրբ Գրոց ընթերցումների մեջ: Նաեւ մի դպրատուն բացեց Հովհաննավանքի սուրբ ուստին կից, ուր հավաքելով բազում մանուկներ՝ նրանց ուսուցանել էր տալիս աստվածային գործեր՝ ինքն իսկ հոգալով նրանց բոլոր ծախսերը:

Դ. Բայց այն ժամանակ այդ կողմերում թերի էր արտաքին /աշխարհիկ/ գիտությունների ուսուցումը, նաեւ՝ քերականության, եւ ոմանք ի նոր ջանք էին գործադրում ուսանելու դրանք, որի մասին երկարորեն գրում է Առաքել պատմիչն [իր Պատմության] Իթ գլխում (4): Նախ Բարսեղ Վարդապետը, որ նստում էր Բաղեշի Ամրոդու վանքում (5), իր ջանքերով ու քրտնավաստակ տքնությամբ սովորել էր Դավիթ Անհաղթի գրվածքների մի քանի սկզբունքները, դրանք ավանդում էր իր աշակերտներին, որոնց մեջ միայն Ներսես Մոլացին ստացավ [թող որ] ոչ լիակատար տեղեկություն, եւ դա ուսուցանեց իր աշակերտներին Լիմ անապատում, ինչպես ասացինք ԺԸ գլխում: Ներսեսի աշակերտներից էր Սելիխսեթը՝ Արարատյան աշխարհի Վժան գյուղից, որ սահմանակից էր Երեւանին. նա անխոնց կերպով հետեւում էր նրան՝ փափագելով ավելին սովորել, սակայն չէր գտնում քաջագիտակ ուսուցիչ: Այս պատճառով վշտագին հոգով տառապում էր ու զգտնելով այլ հնար՝ օրուգիշեր տեսապես աղոթում էր եւ Աստծուց անդադար խնդրում գոհացում տալու իր փափագին, եւ ավելացնելով իր ճիգն ու աշխատությունը՝ իրեն անմնացորդ հանձնեց Դավիթ Անհաղթի գրվածքների ընթերցանությանը, եւ բազում անգամ կարդալով գրվածքի նոյն գլուխը (6), ու մի փոքր լուսավորվելով՝ ավելի էր մեծացնում իր ջանասիրությունը:

Այնուհետեւ իր հոգին ամբողջապես կապվեց այն ուսմանը. [այնպես որ] ոչ կերակուրի մասին էր հիշում, ոչ ցանկանում էր խոսել, նույնիսկ, ըստ Առաքելի խոսքի, երկու տարի լրության մեջ մնալով՝ մեկի հետ չխոսեց (7): Այսպես նա տասնինգ տարի աշխատելով, հասավ նրան, ինչին փափագում էր, եւ համարյա իմբնուրույնաբար թափանցեց փիլիսոփայական գիտությունների մեջ, հասու եղավ նրա բոլոր մասերին, ինքնուրույնաբար սովորեց տարբեր ազգերի տոմարական արվեստի գիտությունը, եւ մեկ անգամ մտքում ամբարածք հաղորդեց շատերին: Եվ լսելով, թե Մովսես կարողիկոսը դպրոց է բացել եւ ջանում է հայոց մեջ ծաղկեցնել գիտությունների ուսուցումը, դուրս գալով Լիմ անապատից, գնաց նրա մոտ: Եվ նրա հրանանով սկսեց շատերին ուսուցանել Հովհաննավաճում, ապա՝ Եջմիածնում Սահմանաց գիրքը (8), Պորփյուրը (9), Ստորոգությունը (10), Պերիարմենիասը (11) եւ մյուսները, որ հետո եղան: Եվ սրա աշակերտներից մեկը դարձավ Սիմեոն անունով մի մասուկ՝ Նոր Զուլայից, այսինքն՝ Սիմեոն Զուլայեցին, որ հետո ի նոր հորինեց Քերականությունը եւ Տրամաբանության գիրքը (12): Եվ ինքը՝ Մելքիսեթը, 1631թ. Վախճանվելով Անանիա առաջյալի վանքում, թաղվեց Կողեւն կոչվող Հովհաննես վարդապետի (13) գերեզմանի մոտ:

Ե. Նոյն թվականին արեւմուտքից Յայաստան եկավ մի լատին կրոնավոր Պողոս անունով՝ Դոմինիկյան կարգից՝ հորջորջված Կալամբրիայի Փիրոնալի Սիդերնացի, որ Ուրբանոս Ութերորդ պապի (14) հրամանով առաքված էր արեւելք քարոզելու համար: Սա արեւելյան հանդերձանքով շրջում էր Սիցազետրում, ապա Վասպուրական աշխարհում եւ Արարատում, մի փոքր սովորեց հայոց լեզուն, եւ հետո լսելով Մովսես կարողիկոսի առաջնայնությունը եւ միաբանական սեր չունեն եկեղեցու գլխի նկատմանը: Խակ նրանք պատասխանում են. քավ լիցի. այդ ամենը թշնամիների չարախոսություն է: Սակայն նա չէր կարողանում դեռևս հավաստ ընծայել նրանց խոսքներին: Այս խոսակցությունը հասավ Մովսես կարողիկոսի ականջին, եւ նա իր մոտ կանչելով Պողոսին՝ նրա հետ շատ բան խոսեց եւ ասաց, թե մենք մեր սուրբ Լուսավորչի օրերից մինչեւ այժմ անխախտ պահել ենք Հոռոմի մեջ Արոռի հետ սիրո միականությունը, եւ պապին ճանաչում ենք որպես առաջինը բոլոր պատրիարքների մեջ եւ համընդհանուր հրամանատար:

Այնժամ Պողոսն ասում է. ապա ինչո՞ւ չէք թրակցում քահանայապետի հետ: Կարողիկոսը պատասխանում է նրան. սիրո բազում նամակներ ենք հոյել նրան, ինչպես գրեցի իմ հայրապետության սկզբում 1629թ.: Սակայն զգիտեմ, այն հասա՞վ, թե՞ ոչ: Վերջերս գրեցի նաեւ մեկ այլ նամակ եւ առաքեցի Լվով: Խակ մեր ոչ հաճախակի գրելու պատճառ այն է, որ շրջապատված ենք օտար ազգերի իշխանությամբ, արեւմուտքի հետ մեր թղթակցության մասին նրանց իմանալը կարող էր կարծիք ստեղծել մեր ապստամբ լինելու մասին, [որի հետեւանքով] կնեղեին մեզ,

որովհետեւ մանավանդ մեր աշխարհում խաղաղություն չկա, այլ հարատեւրեն հալումաշ ենք լինում սրածության ու գերության մեջ, եւ մեզ համար խիստ դժվար է հարմար պահ գտնել [Նամակագրության]: Սակայն դու, եթե կարող ես ապահով եւ անվտանգ մեր նամակը տանել, այժմ կգրեմ մեկ այլ նոր նամակ եւս, եւ թեզ կտամ Հռոմ հասցնելու համար:

Ու երբ նա հոժարությամբ հանձն առավ, Մովսեսը հարազատ ու քաղցր խոսքերով սիրո եւ հպատակության մեկ այլ նամակ գրեց Ռւրբանոս սրբազն պատին, [որի տակ] ստորագրեցին հայրապետանոցի տասներկու Եախսկոպոսներ, եւ տվեց Պողոսի ծեռքը: Եվ այն վերցմելով՝ տարավ Սախիջեւան եւ ուրախությամբ պատմեց Զահկեցի ունիթորներին (25), եւ հավատարիմ նարդկանց ծեռքով նամակը արեւմուտք ուղարկեց, եւ ինքը ճանապարհ դուրս եկավ՝ գնալու էջմիածին:

Այս անցուդարձի վերաբերյալ ունիթորների եւ այլոց շշուկները հասան Նախիջեւանի այլազգի իշխանին, որ դժգոհելով սրանց ու կասկածելով, թե այդ լատին կրոնավորը եկել է նշխարներ կամ գանձեր գտնելու համար, բարկացավ, նրա հետեւից որոնողներ ուղարկեց: Եվ նրանք հասնելով ծերբակալեցին Պողոսին եւ տարան իշխանի մոտ, ու նրա իրամանով նրան բանտ նետեցին, եւ որպես լրտեսի ու խռովարի բազում անգամներ ծենեցին, եւ ոչ կարողելուի միջնորդությամբ, ոչ է այլոց աղաչանքներով հնար չեղավ նրան ազատել երկու տարի, քանզի նա այնտեղ մնաց՝ քամներկու ամիս, եւ հետո հազիվ ազատվեց: Բայց քանի որ Պողոսի սիրուղ խանդապարզ էր սովորելու հայոց լեզուն, բովանդակով հետամուտ եղավ դրան իր բանտարկության ժամանակ, եւ հատվածական քաղվածքներով հայերի բառերի ցանկ ստեղծեց՝ պիտանի բառերը խառնելով բազում անախտանների հետ՝ ի մի բերելով երեսունինգ հազար բառ, ինչպես գրում է նրա Եղբայրը՝ Հովհաննես Սիդերնացին (16):

Այս ժամանակ պատրիարքությունից գրկված Գրիգոր Կեսարացին, լւելով, թե Մովսես կարողիկոսը լավ հարաբերության մեջ է լատինների հետ, խիստ նեղվեց, որովհետեւ նա ատելությամբ էր լցված նրանց հանդեպ, մանավանդ, որ, ինչպես ասում է Առաքելը Ի՞՛ գլխում, նա խիստ բարկացկու ու դժվարահած մարդ էր (17), ու նաեւ սրտում քեն էր պահել Մովսեսի նվիրակ Խաչատուր Վարդապետ Կեսարացու նկատմամբ այն պատճառով, որ նա ասել էր, թե մեր եւ քաղկեդոնականների դավանանքը նույնը է, ու միայն բառերի ու ծեսերի մեջ են ինչ-ինչ տարբերություններ: Այս պատճառով Գրիգորը կասկածելով նամակ գրեց Մովսես կարողիկոսին՝ մեղադրանքի շատ խոսքեր ասելով Խաչատուրի մասին՝ միաժամանակ զգուշացնելով Մովսեսին [զերծ մնալ] այդայիսի կարծիքներից: Սակայն երբ ճշտեց, թե Մովսես կարողիկոսը սիրո ու հպատակության քուրը է գրել պատին (18), նրան վերստին [այս անգամ արդեմ] մեղադրական նամակ է հղում: Ասում է. «Զեր մասին լսել եմ տիհած լուրեր, տիսուր պատմություններ, ցավագին խոսքեր. ասում են, թե Մովսես կարողիկոսը միաբանվելով քաղկեդոնականներից՝ ուխտ եւ դաշինք է կնքել նրանց հետ ու միաբանության բազում նամակներ է իղել նրանց՝ Հռոմի եկեղեցու հետ հավա-

տի միաբանության եւ Քաղկեդոնի ժողովն ընդունելու վերաբերյալ: Եվ մենք լսելով այս մասին՝ առավել վիշտ ու տրտոնություն ունեցանք, եւ ցավ ցավի վրա, վիշտ վշտի վրա եղավ. մինչեւ իսկ լավ համարեցի մեռնել, քան կենդանի մնալ եւ այսպիսի աղետալի բաններ լսել... որ քավ լիցի, Տերը թող չանի, ինչը վայել չէ քո խոհեմությանը»:

Մինչեւ երանելի Մովսես կարողիկոսն, անտեսելով նրա այս խոսքերը, իր հոտն առաջնորդում էր ծշնարտության ու բարի վարքի ճանապարհով՝ բոլորի համար լինելով արդարության ու սրբության հայելի, ու անարտությամբ ավարտելով իր կյանքի ընթացքը, համգեավ ի Քրիստոս Տիրոց 1632 եւ Հայոց ՌՎԱ /1081/ թվականի մայիսի 14-ին՝ արժանավոր կյանքով կարողիկոսության մեջ մնալով երեք տարի չորս ամիս: Եվ նա վախճանվեց Երեւան քաղաքում Անանիա առաքյալի վանքում, ու նստած էր սկզբից մի որոշ ժամանակ, ու նրա մարմինը թաղվեց ընդհանուր գերեզմանատանը մնտիկ բլրի վրա, որ կոչվում էր Կողեռն, որովհետեւ այնտեղ էր Հովհաննես Կողեռն վարդապետի գերեզմանը: Երբ Էջմիածնի միաբանները մահամերձ Մովսեսին հարցրին, թե նրանից հետո ում կարգեն Հայոց կարողիկոս՝ նա հորդորեց կարգել սրբությամբ եւ իմաստությամբ բոլորից ճանաչված իր աշակերտ Փիլիպոսին, որ փոքր Աղքակի Երևական գյուղից էր, ով եախսկոպոս էր ծեռնադրվել երկու տարի առաջ:

1. **Փիլիպոս Ա Աղքակեցի. կարողիկոս Ամենայն հայոց աթոռակալել է 1632- 1655թթ. նրա մասին հանգամանալից տես Ս. արք. Օրմանեան, Ազգապատում, 1666-1722:**
2. **Արիստակես Ա Պարքեն. Հայոց կարողիկոս. աթոռակալել է 325-333թթ.: Մասնակցել է Նիկիայի Ա Տիեզերաժողովին: Հայտնի է եղել իր ծգնական խստակեցությամբ, հերամուսության դեմ պայքարով, Ավետարանի քարոզությամբ: Վախճանվել է՝ ընդունելով նահատակության պասկը:**
3. **Աղջոց վանքը գտնվում է Գեղարդավանքից յոր կմ. հարավ-արենելք, լեռան լաճջին: Ըստ ավանդության ս. Գրիգոր Լուսավորիչը այստեղ՝ Տրդատ Գ արքայի հալածաներից խոյս տված Ստեփանոս քահանայի նահատակությամբ վայրում, իհմեն է կուսանաց վանք: Այս վանքում են պահվել Ստեփանոս քահանայի եւ Արիստակես հայրապետի Աշերը: ԺԵ դարավագրում Շահ Արասի արշավանքների ժամանակ վանքը կողոպտվել է, Արիստակես հայրապետի Աշը տարվել Թավրիզ, որտեղ այն փրկագնել է բաղիշեցի մի հայ վաճառական ու վերադարձել Աղջոց վանքին: Այս այժմ պահվում է Ս. Էջմիածնում:**
4. **տես' Առաքել Ղավրիեցի, Պատմություն, էջ 306-324**
5. **Բաղեշը /Բիթիխ/ գտնվում է Սեծ Հայքի Աղձնյաց նահանգի Սալմոնձոր գավառում: Բաղեշի Ամրդոյու վանքը հայտնի էր իր գրչության դպրոցով/Ճե դար/, դպրանցով, հարուստ գրադարանով, ուր պահվել են բազում ձեռագիր մատյաններ: Այստեղ են ընդորինակվել Փավստոս Բուզանդի, Կորյումի, Ղազար Փարացեղու, Սեբեոսի, Ղետնի Երեցի, Ասողիկի, Արիստակես Հաստիվերցու, Թովմա Սեծովեցու եւ այլոց աշխատությունները: Բարսեղ վարդապետ Աղքակեցին այստեղ գրավել է փիլիստիվայական**

6. Երկիրի սերտողությամբ, մասնավորաբար Ե-Զ դդ. մեծանուն հեղինակ Դավիթ Անհաղթ փիլիսոփիայի հոչակավոր «Սահմանը իմաստափրութեան» երկասիրությամբ: Ինչպես երեսում է, հենց Բարսեղ վարդապետի ջանքերով այստեղ դասավանդվել են իմաստափրություն, քերականություն, ձարտասանություն: Դետագայում դպրոցն էլ ավելի մեծ ծաղկում ապրեց հատկապես Վարդան Բաղդեցու /մահ. 1704թ. / օրոք:
 7. տե՛ս Առաքել Դավիթ Անհաղթի «Սահմանը իմաստափրության» աշխատությունը, որը բարդացած է քսանմեկ պրակից/զիմից/, որոնք նա վերընթերցում էր նյութը լավ յուրացնելու համար:
 8. Նկատի ունի Դավիթ Անհաղթի «Սահմանը իմաստափրության» երկը, որ հայտնի է հունարեն բնագրով ու հայերեն բարգմանությամբ՝ «Եռամեծ եւ Անհաղթ փիլիսոփա Դավիթ փիլիսոփայության սահմանումները եւ բաժանումները՝ ուղղված Պիհուն իմաստակի չորս դրույթների դեմ» լրիվ խորագրով. տե՛ս Դավիթ Անհաղթ, Երկեր, բարգմանությունը, առաջարանը եւ ծանրագրությունները՝ Ա. Արեւատյանի, Եր., 1980, էջ 33-126:
 9. Պորփիոր Փյունիկեցի /233-304/. նորպատոնյան փիլիսոփայության հիմնադիր Պլոտինի հետեւորդը: Ջրաղվել է Պլատոնի եւ Արիստոտելի Երկերի մեկնությամբ: Չամչանը նկատի ունի Պորփիորի նշանավոր Երկասիրությունը՝ «Արիստոտելի ստորոգությունների ներածությունը», որ քննության է առնված Դավիթ Անհաղթի կողմից. «Վերլուծություն Պորփիորի ներածության», տե՛ս Դավիթ Անհաղթ, Երկեր, էջ 127-248:
 10. Նկատի ունի Դավիթ Անհաղթի «Մեկնութիւն», «Սոորոգութեանցն Արիստոտելի» աշխատությունը. տե՛ս «Մատենագիրը հայոց», հու Գ, Զ դար, Անթիլիս, 2004, էջ 286-353:
 11. «Պերիարմենիասը» /Յաղագս մեկնութեան/ պատկանում է Արիստոտելի գրչին: Այն հայերեն է բարգմանվել Ե-Զ դարերի սահմանագծին:
 12. Սիմեոն Զուղայեցի /1600-1657/. փիլիսոփա, տրամարան, քերական եւ մանկավարժ: Այստեղ հիշատակված են նրա Երկու կարեսոր աշխատություն. «Գիրը որ կոչի քերականութիւն» /գրել է 1637-ին, հրատարակվել է 1725թ. / եւ «Գիրը տրամարանութեան» /գրել է 1649-ին, հրատարակվել է 1728թ. /:
 13. Ժ-ԺԱ դդ. հայ նշանավոր մատենագիր, աստվածաբան, տոմարագետ, որի Երկերը հրատարակված են՝ «Մատենագիրը հայոց», հու. ԺԶ, ԺԱ դար, Երևան, 2012, էջ 25-82:
 14. Հոռմի Ուրբանոս Ութերորդ պապ. գահակալել է 1623-1644թթ.:
 15. Ումիթորները կաթոլիկ եկեղեցու կողմից արեւելք ուղարկված գործիչներ էին, որոնց նպատակն էր քարոզական լայն գործունեությամբ կյանքի կոչել պապական արքունիքի ծավալապաշտական նկրտումները: Նրանք հայոց մեջ գործել են ԺԲ-ԺԷ դդ.՝ հրապարակ հանելով բավական հարուստ քարգմանական գրականություն:
 16. Ինչպես ծանուցում է Լեռն, Պողոս Պիրոմալին «1632թ. հաստատվեց Յայաստանում, 20 տարի աշխատեց Յայաստանում եւ ծանոթանալով հայ կյանքին հավաքեց 35000 հայերեն բառեր եւ կազմեց հայ-լատիներեն բառարան, որը, սակայն, անտիպ էլ մնաց», Լեռ, Յայկական տպագրութիւն, հու. Ա, 1901, էջ 126 ըստ. Գ. Գասպարյան, Յայ բառարանագրության պատմություն, Եր., 1968, էջ 57:
 17. տե՛ս Առաքել Դավիթ Երեցի, Պատմություն, էջ 227:
 18. Սաղաքիա արք. Օրմանյանը բացառում է նման մի նամակի գոյությունը, որովհետեւ Սովուսին լատինափրության մեջ մեղադրող Գրիգոր Կեսարացին ոչ թե տեսել, այլ սոսկ ականջալուր լինելով է հանդիմանել նրան: Այդ են վկայում Սովուսին հասցեագրված նամակի «Ձեր մասին լսել եմ տիած լուրեր, տիսոր պատմություններ, ցավագին խոսքեր» բառերը: Օրմանյանն իրավացիորեն նկատում է, թե հայոց վիճակված անապահով դրույթուն էր ստիպում կաթողիկոսին օգնություն ակնկալել արեւուտքից: «Ներկայ պարագայից մէջ ալ, նկատում է նա, Սովուսին Լեհաց թագաւորէն եւ Հոռմի պապէն խնդրածն ու սպասածը՝ իր ազգակիցներուն եւ դաւանակիցներուն պաշտպանութիմն էր, որպեսզի աննոց վրա ստիպում եւ բռնութիւն չգործովի դասանութիւններին կամ լատինականութիւն կամ քաղեղոնականութիւն ընդունելու, այլ ազատ թողովին իրենց հայրենական դասանութեան մէջ, որ կատարելապէս ուղղափառ եւ ծշմարիտ է»: տե՛ս «Ազգապատում», 1664:
- Աշխարհաբարի վերածես ու ծանրագրեց
ՀԱԿՈԲ ՔՅՈՍԵՅԱՆԸ
Պատվիրատու՝ «Սյունյաց Երկիր» թերթ



**Մըբագործված՝
նաեւ Սովորութեացու հուշով**



**Խանածախի
անապատ
(Անապատի ձոր)**


Յիմնադրվել է Սյունյաց մեծ անապատի
ազդեցությամբ:



Կառուցված Մելիք Յայկազն Երկրորդի
նախաձեռնությամբ:
Եկեղեցու նավակատիքին մասնակցել է նաեւ Մովսես
Տաթեւացին:
Նավակատիքը տեղի է ունեցել Սր Խաչի տոնին՝
1615թ. սեպտեմբերի 10-ին: Օծումը կատարվել է
մեծ շքեղությամբ: Յաջորդ օրը Յայկազն իշխանը
կազմակերպել է համայնքային ժողով, ինչպես
եւ խնջույք, որին մասնակցում էր նաեւ Խոջա
Ալանը: Ճաշկերույթից հետո կարդացվել է Գրիգոր
Կեսարացու հայտնի նամակը:

**Խանածախի
Սր Յոհիվսիմե Եկեղեցի**

ՄՈՎՍԵՍ Գ ՏԱԹԵՎԱՅԻ



**ԲԱԲԿԵՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր

ավիթ Դի պես անկարող, Մելքիսեդեկի Եւ Սահակի պես արծաթասեր կարողիկոսների պայմաններուն, երբ Մայր Արոռը պարզապես անշքացել էր, Եւ 100 թուման պետական տուրքը չեղյալ հայտարարելու պարագայում, որն անշուշտ Մովսես Տաթեւացու լուրջ հաջողությունն էր, նրա հեղինակությունն աներեւակայելիորեն աճել էր: Անքողը ժողովուրդը կամենում էր նրա կարողիկոսանալը: Դատկապես եռանդում էին գործում Նոր Զուլայի Եւ այլ քաղաքների հայ իշխանակորները, որոնք կարողացան շահ Սեֆիից արտոնություն ստանալ Մովսեսի կարողիկոսանալու համար: Նրանք, մի տեսակ, դարձել էին ժողովրդական կամքի արտահայտիչները: Թեեւ նա արդեն, ըստ Էտիքան, վարում էր կարողիկոսությունը, սակայն վարանում էր պաշտոնապես իր վրա Վերցնել այդ պաշտոնը, քանի որ դեռ ողջ էր օրինական կարողիկոս Դավիթ Դ Վաղարշապատցին: Պատմությունը լրում է այն մասին, թե դա բացարկույն էր նրա համեստությանը, թե՞ Եկեղեցու կանոնական կարգը չխախտելու մտահղողությանը, քանի որ դեռ ողջ էր նաև արոռակից Սահակ Գառնեցին: Այսպես թե այնպես՝ նա 1628 թվի աշնանը Սպահանց Վերադարձավ Էջմիածին, դեռ բավական ժամանակ չձեռնադրվեց, չնայած այն բանին, որ նրա

կաթողիկոսանալու համար շահի հրամանն արդեն կար: Խնդրագրեր են գալիս Պարսկաստանից, Քրդաստանից եւ, այսպես կոչված, Շոռնաստանից, որ նա, հանուն հավատի հաստատության, ընդունի կաթողիկոսությունը: Եկեղեցին, հրոք, անտերունչ էր, եւ բոլորը հասկանում էին, որ այդ Վիճակից նրան դուրս բերել կարող է Մովսես Տաթեւացին: Ի վերջո Մովսեսը տեղի տվեց ընդիանուր թախանձանքին Եւ 1629 թվի հունվարի 13-ին՝ Ծննդյան ութերորդ օրը, որ երեքարթի էր, ձեռնադրվեց Անենայն Շայոց կարողիկոս: Ձեռնադրմանը մասնակցեց 12 եպիսկոպոս, որոնց անունները, դժբախտաբար, պատմությունը չի պահպանել: Նույնիսկ հայտնի չէ, թե աշխարհիկներից ովքեր են մասնակցել ձեռնադրությանը, եւ այն ինչպես է ընթացել: Որոշ տեղեկություններ պահպանել են Արաքել Դավիթիցին եւ նրան հետեւող հեղինակները: Դ. Ալիշանը, տարօրինակ կերպով, նրա կաթողիկոսությունը դնում է 1630-ին: Մ. Օրմանյանը դա բացատրում է այն իրողությամբ, որ Ա. Դավիթիցին Շահ-Արասի մահը սխալմամբ դնում է 1629 թվին եւ այն էլ՝ հունվարի 7-ին: Իրականում Շահ-Արասը մահացել էր 1628-ին, եւ նրան հաջորդել էր շահ Սեֆին:

Մովսեսին իր ձեռնադրության պահից պետք է համարել կարողիկոս, չնայած դա չէր կարելի, եթե օրինական կարողիկոսը ողջ էր կամ էլ պաշտոնապես չէր հրաժարվել հովապետությունից: Ըստ օրում, դա էլ պետք է կատարվեր Եկեղեցական ժողովով: Մեզ քաջ հայտնի է, որ Դավիթ Դ Վաղարշապատցին Սպահանում դեռ ողջ էր, ուստի կանոնական կարգով Մովսեսը կարող էր լոկ արոռակից համարվել: Սակայն, իրոք, բացարձիկ պայմաններն անհրաժեշտ դարձրին Մովսես Գ Տաթեւացու կաթողիկոսանալը: Դավիթն 90-ամյա զառանյալ ծերունի էր՝ անկարող, որ իր գոյությունը քարշ էր տալիս հեռավոր Սպահանում: Նրա լինելը կամ չլինելը ոչ մեկի չէր հետաքրքրում: Սահակը, որին արոռակից էր հռչակել Մելքիսեդեկը, գտնվում էր փախուստի մեջ: Դայ հասարակությունը նրան չէր ընդունում, ավելին՝ մերժված էր բոլորի կողմից: Նրա կաթողիկոսությունը հիմնված էր շահական հրամանի վրա, բայց այդ հրամանն էլ իր ուժը կորցրել էր, քանի որ մեջտեղ էր Եկեղեցի հրամանը: Դիրավի, դժվար չէ տեսնել, որ Մովսեսի կարողիկոսությունը այլմտրանք չուներ: Դրամ գումարվեց այն, որ Եկեղեցականները տարբեր կողմերից հավաքվել էին եւ ժողով գումարել՝ գահակալության հարցը վճռելու համար: Պետք էր նաև մյուս կաթողիկոսների գահազրկությունն ընդունել եւ հաստատել: Այնպես որ՝ 1629 թվից էլ պիտի հաշվել Մովսես Գ Տաթեւացու հովապետությունը: Որոշ հեղինակներ նրան տալիս են նաև Սյունեցի, իսկ որոշներ էլ՝ Խոտանացի մականունը: Սակայն Մ. Օրմանյանը իրավացիորեն կամաց է առնում Տաթեւացի մականվան վրա, որը, մի տեսակ, նվիրագործված էր եւ ընդիանացած:

Իրեն շուտով զգալ տվեց Սահակ Գառնեցի արոռակից կաթողիկոսը, որը փախել էր Վան: Նա Բաղեշից այն կողմ չանցավ եւ Կ. Պոլս էլ չգնաց: Դժվար չէ կրահել, որ լավ ընդունելության չէր արժանացել: Սահակը, իմանալով Մովսեսի ձեռնադրության մասին, փորձեց ընդդիմադիր գործակիցներ գտնել, բայց ամենուրեք մերժվեց: Նրան պաշտպանեց միայն

Պողոս Այնթապցի վարդապետը, որը Կիլիկիայի Յովհաննես Այնթապցի կաթողիկոսի եղբօրորդին էր: Այլ խոսքով՝ նա չէր ենթարկվում Սայր Արոր Եջմիածնին: Նա հանձն առավ գնալ Կ. Պոլիս եւ սուլթանական կառավարությունից հրաման բերել՝ նրա կաթողիկոսությունը ճանաչելու վերաբերյալ: Բայց դա իզուր քայլ էր, քանի որ շահական իշխանությունները չէին ճանաչի սուլթանական հրամանը: Ծայրահետ դեպքում Սահակը Եկեղեցական նոր հերձված կարող էր հաստատել՝ նոր կաթողիկոսություն իհմնելով Գլակա Ս. Կարապետ վանքում: Զաքարիա Վանեցին հաճույքով ընդունեց Պողոս Այնթապցուն եւ հանձն առավ Սահակի գործն առաջ մնել: Պատճառն այն էր, որ Մովսես Տաթեւացին եղել էր Գրիգոր Կեսարացու, այսինքն՝ իր հակառակորդի աշակերտը: Միայն Կեսարացուն հակադրվելու համար նա պատրաստ էր ամեն ինչ անել: Եվ, իրոք, նա Սահակի համար ձեռք բերեց այդ հրովարտակը՝ Մոլորդ Դ սուլթանի կառավարության կողմից: Սակայն հրովարտակն ստացվեց առանց մեծ եպարքոսի համաձայնության, որը մեկնել էր՝ Միջագետքի ապստամք քրդերին ճնշելու եւ պարսիկների դեմ պատերազմներու: Վաճի հայ գլխավորներ՝ Ամիրիսան Խանենցը, Թումեն, Շիրակը, Միրաքը, Փոլադը եւ Սարուխանը, փորձեցին Սահակին այդ մտքից ես կանգնեցնել: Մովսես կաթողիկոսի ուղարկած նվիրակ Փիլիպոս Աղբակեցին էլ, նրանց միանալով, խոստացավ, որ Կուրուպաշի Ս. Խաչ վանքը՝ իր բոլոր հաստիքներով, կիանձնի Սահակին: Ավելին, նվիրակն էլ խոստացավ եւս 300 դուռուշ գումար, միայն թե Եկեղեցական նոր պառակում տեղի չունենա: Սակայն Սահակը լսել անգամ չէր ուզում: Նրան հաղորդել էին, որ գործակիցը բերում է իր բաղծալի հրովարտակը:

Սահակը եւ Պողոս Այնթապցի վարդապետը հանդիպեցին Դիարբեքիրում, որտեղ գտնվում էր Խուսրիւ մեծ Եպարքոսը: Նրանք ուզում էին, որ նա գործադրի բերած հրովարտակը: Այս անգամ էլ Դիարբեքիրի իշխանավորներից Երեմիան եւ Մաքսուտը, Ռահիջան Վանեցին եւ Քաղաքի առաջնորդ Բարսեղ Ամդեցին, որ Սրապիոնի աշակերտն էր եղել ու հաջորդը, խնդրեցին Սահակին այդ մտքից ես կանգնել եւ Եկեղեցին չքաժանել: Նրան խոստացան ուզած թեմը, 500 դուռուշ, եւ որ Եջմիածնի նվիրակը չի հաճախի նրա թեմ: Մովսեսն էլ նամակ գրեց Սահակին, սակայն վերջինս դրան չհամաձայնեց եւ դիմեց Խուսրեւին՝ հրովարտակը գործադրելու համար խոստանալով տարեկան 10000 դուռուշ տուրք մուտքել: Այդ ժամանակ Բարսեղ Եպիսկոպոսը եւ մյուս իշխանավորները դիմեցին Խուսրեւ փաշային՝ մեծ Եպարքում՝ բացատրելով Սահակի նպատակը եւ նրա բերելիք վճարությունը: «Անինք հայեր, ես ինչպես մերժեմ, երբ նա 10000 դուռուշ է խոստանում մուտքել պետական գանձարան»: Դրան Ռահիջան Վանեցին պատասխանում է, որ եթե նա մտադիր է 10000 դուռուշով հայ ազգը վաճառել, ապա ինքը պատրաստ է 20000 դուռուշ տալ:

Շիանակի օրինակ, թե ինչ սկզբունքով էին տրվում պետական հրովարտակները: Խուսրեւ փաշան որոշում է հարցը հետաձգել, իսկ Ռահիջան Վանեցին նրա ուշադրությունը սեւեռում է այն փաստի վրա, որ Սահակը, առանց նրան դիմելու, անմիջականորեն

դիմել է Կ. Պոլիս: Խուսրեւը դրանից մեղարտում է եւ Սահակին կանչելով՝ բացատրություն է պահանջում, թե ինչու նախապես իրեն դիմելու փոխարեն ձանձրացրել է սուլթանին: Սահակը գոհացուցիչ պատասխան տալ չի կարողանում, եւ փաշայի հրամանով ուղարկողին էլ, գնացողին էլ ֆալախայի մեջ են դնում եւ բրածեծ անում: Հրամանը դաժանորեն իրագործվում է, եւ ազատության համար կրոնափոխություն է առաջարկվում: Գանգատավորները վախենալով, որ Սահակը եւ Պողոս վարդապետը կարող են տկարանալ եւ իսլամանալ, շատ փող են խստանում եւ միջնորդի միջոցով դիմում են խուսրեւ մեծ Եպարքուսին: Այս ձեւով նրանք կարողանում են ազատ արձակել նրանց, իսկ վերջիններս ամորից այլեւ չեն համարձակվում շրջել ժողովորդի մնեց: Կիլիկիայի կաթողիկոսը փորձում է այս արիթով մեղադրել Մայր Աթոռին, թե Սահակին եւ Պողոս վարդապետին տաճկացնել են տվել՝ տարբեր տաճանքների Ենթարկելով, սակայն Արաքել Պավիթեցին պարզ ճշում է, որ Եջմիածնի կողմնակիցներն ամեն ինչ արել են, որ Եկեղեցական պառակտում թույլ չտան: Ավելորդ է ասել, որ Սահակի իրավունքը բռնաբարված չէր, քանի որ նա ուզում էր կաթողիկոս դառնալ օսմանյան Յայաստանում, ավելի ճիշտ՝ այն մասերում, որոնք գտնվում էին Կիլիկիայի եւ Աղբակարի կաթողիկոսությունների աղեցությունից դուրս: Սի խոսքով՝ Սահակի նպատակը հակառակ կաթողիկոսությունների աղեցությունից դուրս: Սի խոսքով՝ Սահակի նպատակը հակառակ կաթողիկոսությունները կատարվել են 1630 թվի ծմռանը, երբ Խուսրիւ մեծ Եպարքուսը գտնվում էր Դիարբեքիրում: Սահակը խայտառակ կերպով ձախողվեց:

Այդ ամբողջ ընթացքում Մովսես կաթողիկոսն զբաղված էր Մայր Աթոռի բարենորդությամբ: Անշուշտ, 1627 թվի հունիսի 27-ից սկսելով իր շինարարական գործունեությունն էջմիածնում՝ նա արդեն որոշակի հաջողությունների էր հասել, սակայն էլ ավելի բուռն թափով շարունակեց իր ձեռնարկները կաթողիկոսանալուց հետո: Նրան զգալիորեն օգնեց ժողովորդի մնեց տիրող խանդավառությունը՝ կապված իր կաթողիկոսական արող բարձրանալու հետ: Նրա ուղարկած նվիրակները շրջում էին երկրով մեկ եւ դրամ էին հանգանակում էջմիածնի վերանորոգման համար: Նա մեծ աշխատանք տարավ էջմիածնի կալվածական եւ ստացական իրավունքները պաշտպանելու ուղղությամբ: Սակայն դրանց մանրանասություններին անդրադառնալը դժվար է՝ նյուրի սակավության պատճառով: Դավթի, Սելջիսելեկի եւ Սահակի անխոհեմ կերպով վատնելը, Եկեղեցու սպասքը գրավ դնելը ծանր հարվածի տակ էին դրել ազգային ստացությունների մեծ մասը, ուստի պահանջվում էր խելոք եւ խոճմիտ գործունեություն, որ վիճակը շտկվեր, օրինական ծեւերով դրանք ազատվեին եւ հաստատվեին վավերական կալվածագրերով: Նրա այդ ազգանվեր գործը շարունակեցին նրա հաջորդները:

Մովսեսը Եկեղեցին պայծառացրեց հարմար եւ հաստատում ժամակարգությամբ, այսինքն՝ հասարակաց աղոթքը կարգավորեց: Նա ոչ թե նոր կարգադրություններ էր անում, այլ վերականգնում էր խարարված կարգերը: Սակայն, իրավամբ, նրան է պատկանում մի կարգադրություն՝ կապված «Օրինություն» շարականների հետ: Նրա աշակերտ եւ

գործակից Խաչատուր Կեսարացի վարդապետի վկայությամբ՝ նա սահմանել է օրինության տասը շարական՝ հենվելով Ստեփանոս Սյունիի պատրաստած տասը պատկերով «Ավագ» օրինությունների վրա: Բայց դա էլ, ըստ էռաքյան, նրա հնարացը չէր, քանի որ Մեծ անապատի առաջնորդ Սարգս Պարոնտերը դա սահմանել էր իր վաճրում: Դամաձայն տեղեկությունների՝ դա վճռական պահանջ էլ չէր, այլ թողնվում էր կատարողի կամքին:

Մովսեսին են վերագրվում նաեւ Հռոմի հետ ունեցած ինչ-ինչ հարաբերություններ: Դրանց մեծ կարեւորություն են տալիս հռոմեադավանները՝ փորձելով շահարկել թե՛ նրա անունը եւ թե՛ համբավը: Ս. Չամչյանի համաձայն՝ 1629 թվին նա արդեն նամակ է ուղարկել Հռոմի պային: Մեկ ուրիշ նամակ էլ նա թվագրում է 1631-ով, որն ստանալուց հետո Ուրբանոս պապը Պողոս Փիրոնավի դոնինիկյան քահանային ուղարկել է Մովսեսի մոտ: Մովսեսն իբրև թե նրան շատ լատինամետ հայտարարություններ է անում եւ նամակ հանձնում 12 եպիսկոպոսների անունից, եւ այդ նամակը հիշյալ քահանան տանում է Նախիջեւանի ունիթորներին եւ այնուհետեւ ուղարկում Հռոմ: Երկրորդ անգամ Էջմիածին գալիս նա մահմեդական իշխանի կողմից կասկածվում է եւ գանակոնվում: Նա բանտում մնում է 22 ամիս եւ ապա միայն ազատվում: Զմտնելով այդ նամակների ժամանակագրության մեջ, որ բոլորովին անտեղի է, նշենք, որ այդ նամակների պատճենները, եթե դրանք, իհարկե, գրվել են, չեն պահպանվել: Բնական է, որ ստուգելու հնարավորություն էլ չկա ասվածների կապակցությամբ: Իսկ մեր ազգային հեղինակները դրանց նասին լիակատար լրություն են պահպանում: Դամենայն դեպս, պետք է տարբերել նամակի մեծ ասված քաղաքավարական արտահայտություններն իրական պաշտոնական դավանության ուղղությունից: Դազիվ թե կարելի է կասկածել, որ Մովսեսը, որ այնքան ջանք էր թափել Մայր Աթոռը բարձրացնելու համար, կարող էր որեւէ զիջում կատարել Հռոմեական Եկեղեցուն: Սակայն այդ չի նշանակում, որ նա փորձ չի արել ծեռելու պապականության բարյացականությունը: Նա այդ կարող էր անել առաջին հերթին Եվրոպայի հայ հանայնքների դիրքը պաշտպանելու համար: Մովսեսը կարող էր անգամ հայտարարել Հռոմի Եկեղեցու հետ սիրո միաբանության նասին: Բայց դա բոլորովին էլ ոչինչ չէր նշանակում, քանի որ Դայոց Եկեղեցին սիրո միաբանություն պահպանում էր բոլոր Եկեղեցների հետ: Մովսեսին պապականության հետ հարաբերությունների մղել էր, թերեւս, Լեհահայության խնդիրը:

Գրիգոր Կեսարացին, որ զայրացած վերադարձել էր կամենեցից եւ իմացել, որ իր սանը կարողիկոս է դարձել, դիմում է Մովսեսին, որ նա բանադրանքի ենթարկի Նիկոլ Թորոսովիչին: Կեսարացին դրա կարիքն ուներ, որովհետեւ իր բանադրանքն անհետեւանք էր մնացել: Որքան էլ Նիկոլը ծեռ էր անուն, թե ինքը կարեւորություն չի տալիս Կեսարացու բանադրանքին, ելնելով ժողովրդական վերաբերնութից, 3000 դուռուշ ճամապահածախս հավաքելով ժողովրդից, Լվովից մեկնում է Կ. Պոլսի, իսկ այնտեղից էլ՝ Կեսարիա՝ մեղա գալու նապատակով: Սակայն Պրուսա հասած ժամանակ հանդիպում է Արիստակես Խարբերդից վարդապետին, որը զայրացած էր Կե-

սարացու վրա՝ փոխանորդների կողմից իր հալածվելու համար: Արիստակեսը խոստանում է նրա բանադրանքը վերացնել, եւ Նիկոլն էլ ուրախությամբ համաձայնում է: Նիկոլը միայն նամակով հայտնում է, որ ինքը հիվանդացել է եւ ընկել անկողին: Կեսարացին հավատում է, խոճում եւ բանադրանքը հանելու նամակ է ուղարկում: Նիկոլն էլ ստանալով իսկույն ետ է վերադարձնում Լվով, որտեղ ժողովուրդը, այն տեսնելով, միաբանվում է եպիսկոպոսի հետ: Կեսարացին լուր է առնում իրեն խարելու նասին, ուստի նզովքը վերանորոգում է եւ լվովցիներին հայտնում, որ առաջին նզովքը շարունակում է պահպանվել Նիկոլ Թորոսովիչի վրա: Ահա այդ ժամանակ է, որ իր բանադրանքն ամրապնդելու համար՝ Կեսարացին դիմում է Մովսես Տարեւացի կարողիկոսի օգնությանը, որ նա էլ բանադրի Նիկոլ եպիսկոպոսին: Մովսեսը, միանգամայն վստահելով իր ուսուցչին, բանադրում է Նիկոլ Թորոսովիչին՝ հավանարար 1629 թվին: Թերեւս այդ ժամանակ էլ գրել է պային: Մովսեսը կամենում էր իր իշխանությունը պահել Արեւմուտքում գտնվող հայերի վրա եւ ոչ թե հպատակվել պային: Նամակը գրելուց հետո Մովսեսը Լեհաստան ուղարկեց Խաչատուր Կեսարացի վարդապետին: Նիկոլը հանդինց անարգել նաեւ կարողիկոսական բանադրանքը, ուստի Մովսեսն իրավունք էր տվել իր նվիրակի՝ կարգալույթ անելու Նիկոլ Թորոսովիչ եպիսկոպոսին: Լվովցիները բացարձակապես երես էին թեքել Նիկոլից, ուստի Խաչատուր Վարդապետը, չիանդուրժելով Նիկոլի նախատինքները եւ ըմբռստանայլ կարողիկոսական հրամաններին, կրկնում է անեժքը, որից հետո քաղաքի դատավորները Եկեղեցին փակում են եւ դատ սկսում Նիկոլի դեմ՝ Էջմիածնի նվիրակի նախագահությամբ: Տեսնելով, որ հարցը բարդանուն է, Խաչատուր Կեսարացի վարդապետը կամենում է հաշտության եզրեր գտնել: Նիկոլը սպառնում է դիմել արքունի դատարան, սակայն դատավորներն ասում են, որ հայերի գործերը քննելու համար արքունիքից արտոնություն ունեն: Վեճը շարունակվում է, որովհետեւ երկու կողմն էլ զիջելու միտք չուներ:

Ինչեւ, այս ամենը տարավ այն բանին, որ Նիկոլը որոշեց կարողիկանալ, որպեսզի այդ ճամապարհով հակառակորդներին հաղթի: Նա լատին ճիզվիտ հոգեւորակամների օժանդակությունն ստանալու համար հրապարակավ կարողիկություն ընդունեց: Դա տեղի ունեցավ 1630-ին: Սակայն նա իրավունք չուներ Լվովի ժողովորին կարողիկ հայտարարելու: Լեհական արքունիքն ուժով ստիպեց հայերին կարողիկանալ: Լեհ պաշտոնյաները ջարդեցին Եկեղեցու դուռը, քանի որ հայերն այն չին բացում Նիկոլի առաջ, եւ նրան համձնեցին Եկեղեցին՝ իր ողջ ունեցվածքով: Միայն բանգարանում հազարից ավելի գիրք կար՝ ուսկետուի կազմով, Եկեղեցական զանազան զարդեր, սպասք ու հագուստներ, մոլորակներ եւ այլն, որոնք հանձնվեցին կարողիկ դարձած Նիկոլ եպիսկոպոսին, իսկ ժողովուրդը բռնի կարողիկացվեց: Սա էր հռոմեադավանների հայտարարած մեծ հաղթանակը:

Նիկոլի հակառակորդները լեհական իշխանությունների կողմից ենթարկվում էին հալածանքների: Շատերը բանտ նետվեցին կամ տուգանքի ենթարկվեցին: Սակայն Նիկոլը չարուցած ժողովորի համակարանքին: Բոլորը նրանց երես թեքեցին՝ բա-

ցառությամբ որոշ ազգականների եւ մեկ կամ երկու քահանայի: Նրանցից է Եղել Արսեն անունով մի քահանա:

Քօնությունների ենթարկվեց նաեւ Խաչատուր Կեսարացի նվիրակը, որին մի պահ Նիկոլն ուզեց իրեն կամակից դարձնել: Խաչատուրը չհամաձայնեց եւ անգամ փորձեց Նիկոլին հավատքի բերել, բայց ոչնչի չհասավ: Լեհերն օր առաջ Խաչատուրին երկրից վտարեցին՝ չնայած սառնամանիքին: 1631 թվին նրան արտաքսեցին, եւ նա եկավ Եջմիածին ու հաղորդեց իրերի վիճակը: Եթե Մովսեսը հռոմեադավանությանը հարած լիներ, ինչպես փորձում են ցույց տալ հռոմեադավանները, ապա նա ոչ պետք է սգար կատարվածի համար, այլ ուրախ լիներ: Նվիրակի հեռանալուց հետո Նիկոլը միայն հալածանքներն ուժեղացրեց: Այնպիսի հալածանքներ էին, որ հայերը տեսել էին մահմեդական իշխանների օրոք: Քահանաներին ու գլխավորներին բանտ էր նետում եւ 300-400 դրառու ստանալով՝ նոր միայն ազատ էր արձակում: Մեռել քաղելու եւ վրան քար քաշելու վրա արգելք էր դնում, մկրտությունն ու պսակն արգելում էր, եթե հռոմեադավանություն չընդունեին կամ եթե ծանր տուգանք չվճարեին: Մեռելները երբեմն օրերով անթաղ էին մնում: Ամեն ինչ խախտվում էր: Լվովցիները անդում էին իրենց արտոնությունների վրա, որոնցից կարեւոր դավանանքի ազատությունն էր: Ինչ վերաբերում է Մովսեսի նամակներին, ապա նա կամենում էր ողոք լեզվով խնդրել իր ժողովրդի համար, որ վերադարձնեն նրան իր Եկեղեցիները: Դրան ի պատասխան՝ Վլադիմար է-ն կարգադրեց Եկեղեցիներից մեկը հայադավաններին թողնել:

1632-ին Լեհաստանում էր գտնվում Յովհաննես Խուլը: Նրա գտնվելու ժամանակ էլ մահացավ Սիգիգանունդ քագավորը: Նա ականատեսն է Եղել այդ ամենի, թեեւ ո՛չ Դավիթիցին եւ ո՛չ էլ լատին հեղինակները նրա անունը չեն տալիս: Լոկ կարելի է ենթադրել, որ նա քաջալերել է Նիկոլին, չնայած պետք է որ հակառակ ընթացք որդեգրած լիներ:

Նա՝ որպես նախկին պատրիարք եւ եպիսկոպոս, չէր կարող անծանոր մնալ Լվովում, եւ նրա անվան շուրջը եղած լրությունն ավելի շուտ անարգանք է նրա հասցեին: Խուլին լավ է բնորոշել լվովցի մի հայ քահանա: Մեղավոր մարդ, որը դավանանել է Լուսավորչի օրենքին, գովել Նիկոլի բռնած դիրքը եւ որտեղ նստե՞ր հայերին էր հայինուր: Որոշ տեղեկությունների համաձայն՝ պատվել է լեհաց քագավորից եւ թագուհուց, բայց զարմանալի է, որ նրա մասին լրում են լատին պատմիչները:

Մովսես Տաթեւացին, չնայած հռոմեադավան հեղինակների հայտարարություններին (Ա. Չամչյան, Պալճյան, Ըստակարյան, Ազարյան, Գալեմբարյան եւ ուրիշներ), երբեք էլ հավանություն չի տվել Նիկոլի արարքներին: Եթե նա նամակ էր գրում, ապա՝ Լեհաստանի հայադավաններին չհալածելու համար: Կիլիկիո Սիմեոն Սերաստացի կարողիկոսը Սսի աթո-

որ պաշտպանելու համար ամեն տեսակի լուտանք է թափում Եջմիածնի դեմ: Նրա գործի համաձայն՝ Մովսեսի նամակը Հռոմում տեսնում է Խուլը եւ պատճենելով այն՝ պատճենն ուղարկում է Կ. Պոլիս, որից էլ ընդորինակել է նաեւ Սիմեոնը: Գրիգոր Կեսարացին այդ ընդորինակությանը ծանոթ չի եղել, որովհետեւ քննադատում է նրա անախորժելի համբավը, տրտմածայն գրույցը եւ ցավագին ասացվածքները: Եթե նրան հավատանք, ապա Մովսեսը, իբր, ընդունել է նաեւ Քաղկեդոնի ժողովը եւ որ, իբր, Խուլի եւ Նիկոլի պես պաշտոնապես հարել է հռոմեադավանությանը: Մովսեսի արածք պարզապես, Յովմի պապին շահագրգուելու միջոցով, հայադավանների պաշտպանությունն էր, որպեսզի նրանց վրա Լեհաստանում կամ այլուր բռնություններ չկիրառվեն, որ հայդավանությունը պահպանվի, որը կատարելապես ուղղափառ է եւ ծշմարիտ: Յնարավոր է, որ Մովսեսն ավելացրած լինի, թե Յայոց Եկեղեցին հիմնական եւ եկամա կետերում հռոմեականությունից տարբեր չէ:

Մովսեսը մահացավ 1632 թվի մայիսի 14-ին, սակայն մահվան պարագաները հայտնի չեն: Տարիքը շատ մեծ լինել չէր կարող, քանի որ Գրիգոր Սրապիոնի կարողիկոսության ժամանակ՝ շուրջ 1600-ին, 15 տարեկանում արեղա է ծեռնադրվել: Յետեւաբար նա մահացավ մոտ 50 տարեկանում: Նա իր ամրող կյանքում անխոնջ նվիրվեց Յայոց Եկեղեցուն եւ պայծառացրեց այն իր կարողիկոսական արդյունավետ գործունեությամբ: Յավանաբար նա իր մահկանացուն կնքեց որեւէ համեկարծահաս հիվանդությունից, երբ գտնվում էր Երեւան՝ իրեն շատ սիրելի Ս. Անանիայի վամբում: Երեւանցիները նրան հողին հանձնեցին կողերնի գերեզմանատանը՝ Կոնդում (Ար Զորավոր Եկեղեցու կողքին):

Մովսեսի մասին վկայված է նաեւ, որ նա մաքրակենցար էր ու սրբասնունդ, Երկայնամիտ ու ողորմած, զորավոր էր աստվածաշնորհ վարդապետությամբ եւ քաղցր քարոզությամբ: Նրա կարողիկոսությունը Յայոց Եկեղեցու համար մի ամբողջ դարագլուխ է կազմում, քանի որ նրանով փակվեց այն Եղելի շրջանը, որի մեջ գտնվում էր Մայո Արքոր Եջմիածինը:

Շատ քիչ միսիթարական արդյունքներ պարգևեց 1441-1629թթ. միջոցը, որը կազմում է շուրջ երկու դար: Միակ սփոփամբն այն էր, որ պահպանվեց արորի շարունակականությունը: Մովսեսն իրեն արռօսակից չվերցրեց եւ անգամ այդ մասին չնշութեց էլ: Եվ դրանով այդ տարադեպ սովորությունը վերջ գտավ: Եկեղեցին իր վերաբերմունքը Մովսես գ Տաթեւացու նկատմամբ արտահայտեց նրանով, որ նրա անունը հիշվում է ամենօրյա պատարագի մեջ՝ եռամեծ հովիվների ու հովվապետերի շարքում՝ Գրիգոր Տաթեւացու անվան կողքին: Լոկ զարմանալի է, որ ո՛չ «Տօնացոյց»-ը եւ ո՛չ էլ «Յայսմաւուրք»-ը տակավին չեն արձանագրել նրա անունը:

<http://krishayas.wordpress.com/>

ՀԱՅՈՑ ՄԵԾ ՄՈՎՍԵՍԸ

5

1610-ին տեղափոխվել է Երուսաղեմ եւ դարձել Ս. Յակոբյանց վաճքի միաբան, ներև Ս. Յարություն տաճարի լուսարար, տարբեր վայրերում՝ նվիրակ՝ «վասն Երուսաղէմի»:

1612-ին Գրիգոր Կեսարացուց, ով Մովսեսի ուսուցիչն էր Սրապիոն Եղեսացուց հետո, ստացել է վարդապետական գավազան:

1613-ին վերադարձել է Տաթենի վաճք, այնուհետեւ մտել նորահիմն Սյունյաց մեջ անապատ:

1620-ից քարոզել է Երեւանի Ս. Կաթողիկէ Եկեղեցում, վերաշինել տեղի Ս. Անանիա առաջայի անապատը, կարգավորել Այրարատի Եկեղեցիներն ու վաճքերը, վերարացել Յովհաննավաճքի եւ Սաղմոսավաճքի դպրոցները, պատրաստել բազմաթիվ աշակերտներ եւ նրանց ուղարկել տարբեր վայրերում դպրոցներ բացելու, տարածելու հայ գիրն ու դպրությունը:

1623թ. ապրիլի 7-ին, ձեռամբ Սեւլիսեդեկ Գառնեցի արքուակից կաթողիկոսի, ձեռնադրվել է Եպիսկոպոս:

1626-ին Պարսկաստան տարագրված հայերի հրավերով այցելել է Նոր Ջուղա՝ իր քարոզներով ոգեանդելով տարագիր հայությանը եւ ամրապնդելով նրանց ազգային ոգին ու հավատը:

1627-ի հունվարին պարսից Շահ Արաս 1-ինը նրան շնորհել է Սուլր Էջմիածնի վաճքը նորոգելու հրովարտակ: Վերադառնալով Յայսատան՝ 1627-ի հունիսին նշանակվել է Սուլր Էջմիածնի վաճքի լուսարար:

Այդ ընթացքում, կարելի է ասել, վարել է կաթողիկոսարանի գործերը: Եվ պատահական չէ, որ 1628-ի սկզբից Երեմն հիշատակվում է որպես ընտրյալ կաթողիկոս, սակայն պաշտոնապես օծվել է 1629-ի հունվարի 13-ին:

Իր լուսավորական, Եկեղեցաշինական գործունեության համար ժամանակակիցների կողմից անվանվել է «Երկրորդ լուսավորիչ հայոց»:

Զբաղվել է նաև մատենագրությամբ, հեղինակել թղթեր եւ մի Ողբ:

Իր անխոնց գործունեության համար արժանացել է ազգային-Եկեղեցական սրբի լուսապատճի:

Որոշ աղբյուրների համաձայն նահացել է մոտ 60 տարեկանում՝ կարճատեւ հիվանդությունից հետո, թաղվել Կոգեռնի գերեզմանատանը:

Մահվան մահճում հրահանգել է, որ իրենից հետո կաթողիկոսական գահ բարձրանա Փիլիպոս Ալբակեցին: Ահա, թե ինչպես է այդ պահը նկարագրում

Արաքել Դավիթիցին: «1081 (1632) թվականին, երբ հասավ Մովսես կաթողիկոսի վախճանը, նրա մոտ հավաքվեցին Եպիսկոպոսներ, վարդապետներ եւ երեւելի մարդիկ, նաև Թահմագողուի խանը՝ քաղաքի հշխանը, եւ ողբալով ասացին. «Որովհետեւ քո տերը եւ կյանք տվողը այդպես կամեցավ, որ դու հեռանաս ու գնաս մեզնից, ուստի այժմ խնդրում ենք քո հայրախնամ գութից, որպեսզի մեզ բոլորովին որք չքողնես, այլ հայտնես մեզ, թե ումն ես տալիս մեզ, որ քեզնից հետո լինի հայր եւ հովիվ»: Նա ասաց. «Դուք գիտեք, ում կամենում եք, ընտրեք»: Խոկ ժողովի բազմությունն ասաց. «Մենք ամբողջ աշխարհով քեզ ընտրեցինք, իսկ այժմ դու ում ընտրես, մեզ ընդունելի է»: Նա ասաց. «Ես կամենում եմ, որ Փիլիպոս վարդապետը լինի իմ փոխանորդը եւ Սուլր Էջմիածնի աթոռով հաջորդը»: Երբ նրանք բոլորը լսեցին, հոժար կամքով հածեցին եւ ընդունեցին, որ Փիլիպոսը լինի կաթողիկոս» (Պատմություն, Երեւան, 1988, էջ 249):

Պայքար՝ իր ուղղությունը պաշտպանելու համար

Մովսեսն իր կյանքի ու գործունեության ընթացքում անցավ բազում փորձությունների միջով՝ իր ուղղությունը պաշտպանելու համար: Նրա դեմ նիքանի ուղղությամբ ճակատամարտ էին վարում բարի իսկական ինաստով:

Այդ պայքարի մի քանի դրվագի մասին՝ ստորեւ:

Ագուլիսում Մովսեսի ու Պողոս Մովսեցու հիմնած դպրոցի եւ այնտեղ ուսուցիչ կարգված Անդրեասի հետ տեղի ունեցած ողբերգական միջադեպի մասին թերթի սույն համարում, անշուշտ, անդրադարձ կա: Բայց... Մովսես ու Պողոս վարդապետները, որ այդ ժամանակ (1617) Սյունիքում էին, մեղադրվեցին որպես Անդրեասի խրատառու եւ ուսուցիչ: Ինչպես Արաքել Դավիթիցին է վկայում՝ «.... Զորականները գնացին Մովսես վարդապետին բռնեցին, սրա հետ նաև Պողոս վարդապետին: Զուգափայտից օդակ սարքեցին, դրին նրանց պարանոցները, եւ Երկար ոտնակապեր՝ ոտքերը, ձյուն-ձմեռվացուրտ օրերին Երկու վարդապետներին բերին շահի բանակը եւ հայտնեցին նրան» (Պատմություն, Երեւան, 1988թ., էջ 284):

Չահը, սակայն, մահվան դատավճիռը փոխեց հինգ հարյուր թուման տուգանքով:

Վարդապետները կարողացան գումարը հավաքել ու փրկվել:

Մովսեսի դեմ հատկապես թշնամական գործունեություններ եր կատարում ոճրագործ կաթողիկոս Մելքիսեդը: Սա սպառնալիքներ եր ուղարկում նրան եւ պահանջում դադարեցնել քարոզությունը, փակում նրա բացած հիմնարկությունները:

Մովսեսը Երկար ժամանակ ուշադրություն չէր դարձնում դրան, բայց, ի վերջո, այնքան նեղացած զգաց իրեն, որ Վճռեց անցնել Երգրում...

Սի ուրիշ անգամ էլ Մելքիսեդը մի կեղծ պարտամուրիակ շինել տվեց Մովսես վարդապետի անունից, որով նա իր պարտավորվում էր հարյուր թուման տալ կաթողիկոսին: Երկու ամիս ճգճպվող դատավարության ընթացքում բացահայտվեց կեղ-



Ըստ Յին Կտակարանի՝ այդ լեռան վրա է Աստված
հայտնվել Մովսեսին եւ շնորհել Տասնաբանյան:

Ներկայիս լեռան նույնացումը Աստվածաշնչում
հիշատակվող Սինայի հետ կատարվել է
քրիստոնյաների կողմից մ.թ. 4-րդ դարի սկզբում:
Ծրջանառվում են Սինա լեռան տեղադրման այլ
տարրերակներ եւա:

Լեռան գագաթին են գտնվում Սբ Երրորդության
տաճարը եւ Փոքր մզկիթը:
Մովսես Տարելիացին այցելել է Սինա լեռան գագաթ:

**Սինա լեռ (լեռ Եգիպտոսի
Սինայի թերակղզում)**

Ժիքը:

Մովսեսը խնդիրներ ունեցավ նաեւ Տաթեւի վաճառում: Երբ Կ. Պոլսում Գրիգոր Կեսարացին նրան շնորհեց վարդապետական գավազան, ուղարկեց ինքնագլուխ քարոզության: Տիգրանակերտից, Վանից ու Թավրիզից հետո եկավ հայրենի Սյունյաց աշխարհ՝ Տաթեւի վաճար:

Աշխարհականների ու եկեղեցականների համար նրա վերադարձն անպատճելի ուրախություն եղավ: Սակայն հետո Տաթեւի վաճիք միաբանները՝ եախսկոպոսներ, աբեղաներ, հետ կանգնեցին նրանցից, քանզի նրա քարոզները չընդունեցին: Այդ պատճառով էլ գնաց Մեծ անապատ:

Հատ անվանի աշխարհականներ ու եկեղեցականներ ոչ միայն չեն ընդունում Մովսեսի ու Պոլոսի քարոզությունը, այլև հակառակվում էին, խարերա անվանում նրանց, վարդապետների մասին չարահամբավ լուրեր տարածում եւ ամբաստանում:

Թանիցս նրանց անարգալից խոսքեր ասաց Մելքիսեդ կաթողիկոսը:

Եվ մի պահ Մովսես վարդապետն այնքան նեղացավ (ինչպես նշեցինք վերեւում), որ իր փիլոնը, գավազանը եւ գորգն ուղարկեց Կարողիկոսին՝ ասելով. «Որովհետեւ չես կամենում մեր քարոզությունը, ահա եւ առ թեզ մեր իշխանությունը, իսկ մենք լոելով կրտադենք քարոզելուց, եւ եթե դրա առիթով որեւէ մեղք լինի, դու պատասխան կտաս աստծուն» (Առաքել Դավիթեցի, Պատմություն, Երեւան, 1988թ., էջ 232):

Մելքիսեդը, սակայն, վերադարձեց գավազանը եւ չվերցրեց Մովսեսի իշխանությունը:

Մովսես՝ կրթական գործի եւ գրական կյանքի կազմակերպիչ

Մովսեսը Մեծ անապատում կրթական գործի հիմնադիր եղավ, երբ հասավ այնտեղ (1613թ.): Ըստ Ներսես Ակինյանի՝ «Քայական չհամարեցաւ Մովսես, որ միաբանները ապրին մեկ յարկին տակ տեսական կեանքին անձնատուր, այլ անհրաժեշտ տեսաւ, որ անոնք ծանօթանան նաեւ գրագիտութեան, կրթուին եկեղեցական ուսումներով, ըլլալու գործնական կեանքի համար ալ ընդունակ գործիչներ: Եկեղեցին եւ վաճքերը, որոնք լրուած էին, կը պահանջէին կրթուած եւ հոգեւոր իրահանգներով դաստիարակուած առաջնորդներ, իսկ ժողովուրդը կը կարօտէր կենդանի խօսքի եւ լուսամիտ հովիներու....» (Մովսես Գ. Տաթեւացի, Հայոց կաթողիկոսն եւ իր ժամանակը, Վիեննա, 1936, էջ 187):

Այդ նպաստակով էլ Մեծ անապատում իինք դրվեց դասախոսական ընթացքների: Կրթական գործին լծվեցին Տեր Կիրակոսը (Տրապիզոնից), Պողոս Վ. Մովսեսին, Ներսես Վ. Մովսեցին, Թովմաս Տաթեւացի եախսկոպոսը, Դավիթ Շամքորեցի եախսկոպոսը եւ, իհարկե, Մովսես Վ. Տաթեւացին:

Ուսուցանվող գլխավոր առարկաներն էին՝ գրչության արվեստ, ժամասացություն, Յին եւ Նոր կտակարանների բացատրություն: Արածադեմ աշակերտներին սովորեցնում էին նաեւ «արտաքին գրոց» ուսումը:

Աշակերտների թվում էին Փիլիպոս Աղքակեցին,

ով հետագայում դարձավ Հայոց կաթողիկոս, Ներսես Վ. Մովսեսին, ով հետագայում նույնպես դասախոսեց կրթարանում: Կար նաեւ Մելքիսեդ անվանը մի արենա, ով Ներսես Վ. Մովսեցու հետ գնաց Լիմ կղզին եւ նորաստեղծ անապատում եղավ Ներսեսի միաբան եղբայրը:

Յիշատակելի է գրչության արվեստի վարպետ Դավիթ Եախսկոպոսը, ում մասին իմանում ենք Տաճական ազգի գյուղում 1620թ. գրված Ավետարանից:

Այդ ժամանակ գրքերը շատ քիչ էին, իսկ պահանջը շատ էր, եւ կարիք եղավ արտագրել ու տարածել արևկա ձեռագրերը: 1600-ից սկսած Արեւելյան Հայաստանում գրված ձեռագրերը հազվագեց էին: Ուստի եւ Մեծ անապատում սկիզբ առավ ձեռագրերի արտագրումը: Եվ ասպարեզ եկան մեծ թվով գրիշներ, ծաղկողներ, որոնցից մի քանիսի անունը արժե իշխատակելի:

Մինաս Երեց, ով 1613-ին Եղինգյան գյուղի մեջ ընդորինակեց Հարանց վարքը: Հավանաբար նա է Եջմիածնի թ. 1678 ձեռագրի հեղինակը նույնպես:

Դուկաս գրիչ, ով Թուման Եախսկոպոսի խնդրանքով ընդորինակեց Վիեննայի Միսիք. նատենայարանի թ. 168 ձեռնադրության գիրքը: Նույն Դուկաս դպիրը Գետարադի Սր Աստվածածին եկեղեցու հովանու ներքո, Ղազար քահանայի եւ Սարգիս Եախսկոպոսի խնդրանքով, ընդորինակեց Ն. Լամբրոնացու «Խորիրդածությունքը»: Զաքարիա Կրոնավորի հորդորով էլ Գետարադ գյուղում ընդորինակեց մի Ավետարան:

Թովմաս Եախսկոպոս «տէր Սարգիսի ձեռօք» 1617-ին ստացավ Եջմիածնի թ. 801 Հարանց վարքը:

Խաչատուր գրիչ, ով 1619-ին «ի գիւղս Տանձաւրի» ընդորինակեց մի Ավետարան:

Մելքիսեդ Երեց, ով 1621-ին ընդորինակեց մի Մաշտոց «ի ժամանակս մեծ րաբունապետին մեծին Մովսեսի եւ Սարգիս պարոնտէր հօր»:

Սարգիս աշխարհական, ով Խոտանանում, «Իրամանաւ տէր Ուստակէսի ի խնդրոյ տէր Յակոբին», ընդորինակեց մի Սաղմոսարան: Նույն գրիչը նույն վայրում գրեց Եջմիածնի թ. 2635 Կանոնագիրը՝ Տաթեւի Հովհաննես Եախսկոպոսի հորդորով:

Ղազար քահանա, ով էր «նօտարն մեծի հայրապետին Մովսեսի» եւ ընդորինակեց Եջմիածնի թ. 1714 «Արտաքին գրոց» մեկ մասը:

Հովհաննես արեղա. 1624-ին Տաթեւի անապատի մեջ Արհստակես վարդապետի առաջնորդության օրով ծաղկեց մի ճաշոց գիրք:

Գրական այս շարժման մեջ գլխավորը, առանց տարակույսի, Մովսես վարդապետն էր, ով ամենաերեւելին էր «գորոց ուսուցիչներու» մեջ: Բազմաթիվ գրիշներ եւ ծաղկողներ հիշում են Մովսեսին:

Մեծ անապատն ու քույր մենաստանները ծաղկեցին ու համբավ վայելեցին 1613-20թք.:

1620-21-ին Վախճանակեցին «Անապատի հայր» տէր Սարգիս Եախսկոպոսը, Պողոս Վարդապետը: Տեր Կիրակոսն ու Թուման Եախսկոպոսը գնացին Հոչանց, շինեցին անապատ եւ այնտեղ բնակվեցին: Ներսես Մովսեսին մեկնեց Լիմ:

Մովսես վարդապետը մնաց առանձին եւ շարունակեց իր գործը:

Մինչ այդ Պողոս վարդապետի հետ դպրոցներ էին հիմնել Յայաստանի տարբեր վայրերում: Ինարկե, այդ դպրոցներից մեծ հաջողություններ չեն կարելի ակնկալել: Բավական էր, եթե ուսուցիչները կարողանային մանուկներին ուսուցանել գրագիտության առաջին տարրերը, պատրաստեին նրանց սաղմուերգության, ժամերգության, որպեսզի եկեղեցիների մեջ վերահաստատվեին իին կարգերը:

1620-ից Մովսեսը հեռացավ Սյունիքից: Ամիրգունա խանի աջակցությամբ նախ հոգեւոր դպրոց հիմնեց Սուլր Անանիայի անապատում, ապա Եջմիածնում, Յովիանավանքում...

Մովսեսն ուրիշ երեք անապատ էլ հիմնեց կանաց համար. Կարբի կուսաստանը, Յալիձորի եւ Շնիերի կուսանաց անապատները:

Ի դեպ, 17-րդ դարավակքին իրեւ գրչության վայր ճանաչում ձեռք բերեց Շինուհայրը: Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահպում են Շինուհայրում ստեղծված ձեռագրերը: Շինուհայրի գրիչներից հայտնի են նաև կանայք: Այնտեղ սովորում էր 80-150 աղջկի:

Շինուհայրի կուսանաց անապատը մինչեւ իինա էլ կանգուն է՝ 5-6-մ բարձրությամբ պարսպով շրջապատված: Անապատին կից կառուցված են եկեղեցի, սեղանատուն եւ խցեր:

Կապանի տարածաշրջանում գրչությամբ հայտնի դարձավ հոտտանանը (մեր ձեռքի տակ է այդ գյուղում գրված չորս ձեռագիր):

Ոչ պակաս հայտնի էր Աճանան երկրի Յալիձորի կուսանաց անապատը: Մեր ձեռքի տակ են այդ անապատում գրիչ Յովիսիմեի եւ Եղիայի կողմից գրված ձեռագրերը:

Չեռագրեր են ընօրինակվել նաև Խնձորեսկում, Խողնավարում:

Գրչությամբ աչքի է ընկնում Գորիսը: Ի դեպ, բնակավայրի անվան Գորիս ձեւն առաջին անգամ հենց այդ շրջանում է երեւան գալիս: Նկատի ունենք Մովսես գրիչի (այս Մովսեսը չշփորեն Մովսես Տաթեւացու հետ) կողմից 1652թ. գրված շարակնոցը (Վայրը՝ Սպահան), որի մեջ նշվում է Ծագաձորոյ երկրի եւ Գորիս կամ Գորես գյուղի մասին:

Զագեձորի եւ Գորիսի մասին հիշատակություն կա նաև Մովսես երեցի կողմից 1655 թվականին նորոգված մի Ավետարանում:

1657թ. գրիչ Սարգսի քահանան՝ Գորիս գյուղից, ով տեղափոխվել էր Գեղամա երկրի Բարկիս գյուղ, գրում է մի ավետարան: Սարգսի խնդրում է հիշել իր ծնողներին՝ Պետրոս քահանային եւ Գուլին, նաև իր եղբայր Յակոբ քահանային, ով եւ իր ուսուցիչն էր (Յայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ժե դար, 4 հատոր):

Մտավոր կյանքի այս հսկա բարեփոխումը, որ տեղի ունեցավ Արեւելյան Յայաստանի մեջ քան տարում, աննախադեպ էր:

Յակառակ քաղաքական կյանքի պլատության եւ ներքին կյանքի բազմաշիրո դրության՝ երկիրը հոգեւոր վերելք ապրեց՝ առաջնորդությամբ Մովսես Տաթեւացու:

Սյունյաց մեծ կամ Յարանց անապատում

Մովսես Տաթեւացու կյանքի եւ գրուներության

անենալուսավոր էջերից մեկն էլ առնչվում է Սյունյաց մեծ կամ Յարանց անապատին:

Առաջին անապատականները (բնակավայրերից հեռու հաստատված քրիստոնյա ճգնավորների մենաստան, Եղբայրական համակեցություն) ստեղծվել են վաղ միջնադարում Եղիպտոսում, Պաղեստինում, Փոքր Ասիայում, ապա Յայաստանում:

Անապատը վաճից տարբերվում էր իր խիստ ճգնավորական կանոնադրությամբ: Անապատի բնակիչները խարազնազգեստ էին, սնվում էին միայն բուսական կերակրով, բնակվում միայնակ: Անապատում չկար անձնական սեփականություն: Ընդունված է համարել, որ հայ առաջին անապատականը Գրիգոր Լուսավորիչն էր:

17-րդ դարավակքի անբարենպաստ պայմաններում ծնունդ առավ (1608-13) Սյունյաց մեծ անապատը (Յարանց անապատը), որով եւ սկիզբ դրվեց Արեւելյան Յայաստանի գիտամշակութային առաջնորդացին:

Քենց Մովսես Տաթեւացու հեռատես խորհրդով հեռավոր Երուսաղեմից Սյունիք են գալիս Սաղմոսավանքի Եպիսկոպոս Սարգսիը, Կիրակոս Տրավիգոնցի (Պոնտացի) քահանան եւ Յալիձոր գյուղի մոտ (Որոտան գետի աջ ափին) եկեղեցական նոր միարանության հիմք դնում: 1615թ. այստեղ է գալիս նաև Մովսես Տաթեւացին, եւ անապատը վերածվում է ուսման նշանավոր կենտրոնի:

Դրա համար, անշուշտ, կային որոշ նախադրյալներ: Մեծ անապատն իր աշխարհագրական դիրքի շնորհիվ մեկուսացած էր արտաքին աշխարհից, հեռու էր պատերազմական գործողությունների թատերաբեմից, վայելում էր Սելիր Յալկազնի բարյացական ուշադրությունը, այդտեղ կային դեռեւս բանինաց վարժապետներ, ովքեր ինչ-որ չափով պահել էին Սյունյաց հին դպրոցների գիտամանկավարժական ավանդույթները:

Կազմակերպական իր սկզբունքներով, դասավանդվող առարկաներով ուսումնական այդ կենտրոնը խոր հետք թողեց հայ դպրոցական կյանքի եւ մշակույթի պատմության մեջ:

Ըստ որոշ աղբյուրների՝ Յարանց անապատի դպրոցի հիմնադիրը Մովսես Տաթեւացին էր: Աշակերտների թիվը հասնում էր 60-ի:

Դպրոցը կրուի է կրոնական գործիչների, ովքեր հետագայում Յայաստանի տարբեր վայրերում հիմնել են նոր միարանություններ:

Յարանց անապատի դպրոցը նաև գրչության կենտրոն էր: Ընդորինակվում էին ոչ միայն պատրաստի ձեռագրեր, այլև կազմում դասագիրք-ժողովածուներ: Դրանցից մի քանիսը պահպանվում են Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում:

Միաժամանակ՝ Մովսես Տաթեւացին իր աշակերտներով շրջում էր Յայաստանի գավառները՝ ուսման եւ գիտության նկատմամբ ժողովրդի մեջ սեր բորբոքելու նպատակով: Պողոս Մովսեցու հետ համագործակցելով՝ դպրոցներ է հիմնում Աստանա տում, Շոռորում, Ագուլիսում:

Սյունյաց մեծ անապատը ճյուղավորվում եւ ծավալվում է Յայաստանի տարբեր վայրերում՝ Երեւան, Յովիանավանք, Եջմիածն, Սեւան, Տաճարավարախ, Տոռորում, Ագուլիսում:

Ծանքոր, Յոշազ, Խաճածախ, Լիմ, Կտուց, Նոր Զուղա...

Անապատը, կարելի է ասել, մեծապես տուժեց 1658թ. աշխարհակործան Երկրաշարժի հետեւանքով:

Ասվածին ավելացնենք անապատի նախապատմության առնչվող մեկ դրվագ. Մովսես Տարեւացին, մինչեւ Յարանց անապատի հիմնումը, Երուսաղեմ էր գնացել ուխտի եւ Երկրագության (Քրիստոսի մարդուության վայրերով), գնացել էր Եգիպտոսի Երկիր եւ շրջել դպտիների վաճքերն ու անապատները՝ Երանց մեջ շրջելով, հարցնելով ու տեսնելով, ամեն ինչին տեղեկանալով: Եվ երբ Վերադարձավ Երուսաղեմ ու եղավ Սուրբ Յարություն տաճարի լուսարար, համդիպեց պարոն Սարգսին եւ Տեր Կիրակոսին, ովքեր տեղ էին որոնում անապատի համար: Մովսեսն ասաց. «Այդպիսի տեղ, որ որոնում եք, հայոց արեւելյան Երկրում շատերը կան, մանավանդ Սյունյաց աշխարհում, որոնց ես իսկան ականատես եմ. այն աշխարհում շատ ավելի պատշաճ է անապատ շինել, որովհետեւ բուն Յայաստանն է....» (Առաքել Ղավիթեցի, Պատմություն, Երեւան, 1988, էջ 226): Արդ՝ այդպիսի հորդոր խոսքով Երանց ուղարկեց Սյունիք՝ հանձն առնելով, որ երբ Երանց ժամանեն եւ որեւէ տեղ անդորրանալով՝ գետեղվեն, ինքը կժամանի եւ Երանց հետ կրնակի իրեւ միաբան: Այդպես էլ եղավ...

Մովսես Տարեւացին՝ Ամենայն հայոց կարողիկոս

Մովսես Տարեւացու կյանքի եւ գործունեության ամենուշագրավ էօք, անշուշտ, Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում նրա գործունեության շրջանն է: Իսկ Էջմիածնում նրա գործունեությունը սկսվեց դեռեւս մինչեւ Յայոց կարողիկոս ծեռնադրվելը:

1627թ. Շահ Արտավազ Ա-ի հրովարտակով Մովսես Վարդապետը նշանակվեց Էջմիածնի լուսարարապետ:

Տեւական ժամանակ նրան առաջարկում էին ստանձնել կարողիկոսի պարտականությունները, քանզի ինքն էր վարում կարողիկոսարանի գործերը, կար նաև Սպահանի ու Նոր Զուղայի հայերի միջնորդությունը: Բայց նա չհամաձայնեց, քանի դեռ հայ Եկեղեցու ընդհանրական կանքն արտահայտված չէր:

1629թ. արքայական հրամանով հաստատվեցին Մովսես Վարդապետի կարողիկոսական լիազորությունները:

Նա Մովսես Գ անվանք Ամենայն հայոց կարողիկոս ծեռնադրվեց 1629թ. հունվարի 13-ին՝ Ծննդյան 8-րդ օրը: Զերծադրմանը մասնակցեց 12 Եպիսկոպոս, որոնց անունները չեն հիշատակվում:

Մովսես Տարեւացու ընտրությունը տեղի ունեցավ Եկեղեցեցական բարդ պայմաններում:

1441 թվականից ի վեր, երբ Միսից Յայոց ընդհանրական կարողիկոսության կենտրոնը տեղափոխվեց Էջմիածին, Յայ առաքելական Եկեղեցում պահպանվում էր արռօակից կարողիկոսների ինստիտուտը, ավելի ճիշտ՝ պահպանվութը, ինչը մոտ Երկու դար մեծ վնաս հասցրեց Յայոց Եկեղեցուն:

1629 թվականին, երբ օրակարգում դրվեց Մովսես Վարդապետին Ամենայն հայոց կարողիկոս ընտ-

րելու հարցը, դեռեւս կենդանի էր (թեև Սպահանում) 90-ամյա Ղավիր Դ Վաղարշապատցին՝ օրինական կարողիկոսի կարգավիճակով: Ողջ էր աթոռակից կարողիկոս Սահակ Գառնեցին՝ Վանում ապաստանած: Փախուստի մեջ գտնվող Մելքիսեդեկ գանձագող կարողիկոսը մահացել էր 1627-ի մարտին Լեհաստանի Կամենեց քաղաքում:

Մովսես Տարեւացու ծեռնադրմանը ու գործունեությամբ, նաև նրա Երաշխավորությամբ Փիլիպոս Ալբակեցուն Ամենայն հայոց կարողիկոս ընտրելով՝ վերց տրվեց արռօակից կարողիկոսի պահպանություն: Դա, անտարակույս, Մովսես Տարեւացու կարողիկոսական գործունեության ամենամշանակալից արդյունքներից մեկը պետք է համարել:

Այնուհետեւ՝ հենց 1629 թվականին, Մովսես Տարեւացին կարողացավ հասնել այն բանին, որ Շահ Սաֆիի հրամանով (Շահ Արտավազ 1-ինն արդեն մահացել էր) Էջմիածնին ազատվեց տարեկան 100 բռնան փիշքաշի պարտավորությունից, որը մեծ բեռ էր Էջմիածնի համար:

Զեռնարկեց Մայր աթոռի վերաշնորհությունը, ինչի համար հոժարությամբ նվիրատվություններ էին արվում:

Նախ՝ վաճրի տարածքը մաքրեց աղբակույտերից, ապա դրսից ու ներսից նորոգեց Մայր տաճարը, նորոգեց գմբեթը, կառուցեց օժանդակ շինություններ, կանգնեցրեց շրջապարհսակ, Էջմիածնում հիմնադրեց դպրոց:

Իր աշակերտների եւ հետեւորդների հետ՝ Փիլիպոս Ալբակեցի, Խաչատուր Կեսարացի, Ներսես Մոկացի, Պողոս Սոկացի, Եսայի Կարճավանցի եւ ուրիշներ, վերակենդանացրեց Արեւելյան Յայաստանի մշակութային, կրթական, լուսավորական եւ գրական կյանքը:

Եվ կարողիկոսական գահին, եւ դրանից առաջ, ինչը վկայում էն Գրիգոր վարդապետ Ղարանաղցին, Առաքել Ղավիթեցին, Ստեփանոս Լեհացին եւ բազմաթիվ այլ ժամանակադիրներ, շատ գերի հայեր ազատեց փիլական տալով: Այս Ղավիթեցու խոսքը. «Մա ծեռքով շատ գերիներ ազատվեցին գերիշներից, որովհետեւ սրա ժամանակ անհաշտ խռովություն կար պարսկեների եւ օսմանցիների միջեւ, ուստի ավար եւ գերություն շատ էր լինում Երկու կողմից: Գերիներից ում էլ տեսնում էր, անպատճառ փրկագին էր տալիս եւ ազատում....»: Ըստ Կարապետ Եպիսկոպոս Անատունու՝ «Մովսես այս նպատակին համար կըհալեցնէ ու կըվաճառէ մինչեւ իսկ Էջմիածնի արժաքեղէն ու ոսկեղէն սպասները» (Մովսես Գ. Տարեւացի կարողիկոս Էջմիածնի, Վեճեստիկ-Ա. Ղազար, 1992, էջ 37):

Ըստ մի քանի աղբյուրների՝ Մովսես Տարեւացու անմիջական նախածեռնությամբ գերությունից ազատվեց 4,5 հազար հայ:

Մովսեսը, նաև մինչեւ կարողիկոս դառնալը, աներեւակայելի մեծ աշխատանք կատարեց Եկեղեցահնության ուղղությամբ: Յոռմի Ուրբանոս Ը պապին հղած Երկորոր նամակում ինքն է գում, որ շինեց Երեք հայուր կամ չորս հայուր Եկեղեցի: Ի դեպ, այդ առուենով ինքը՝ Մովսեսը, կարեւորում էր հատկապես Էջմիածնի մայր տաճարի՝ կառուցված Տրդատի եւ Գրիգոր Լուսավորչի կողմից, նորոգումը:

Այնուհետեւ՝ նա մեծ աշխատանք տարավ էջմիածնի կալվածական իրավունքները պաշտպանելու ուղղությամբ:

Հայոց Եկեղեցու պառակեման վիճանգը

Մովսես Տաթեւացու կաթողիկոսության շրջանում մեծագույն մարտահրավերներից մեկը Հայոց Եկեղեցու պառակեման վիճանգն էր:

Սահակ Գառնեցի կաթողիկոսը, ով բնակվում էր Վասպուրականում, տիհանությամբ ընդունեց Մովսեսի կաթողիկոս օծվելը: Եվ միտք դրեց Օսմանյան Երկրում բնակվող հայերի համար նոր կաթողիկոսություն ստեղծել՝ անկախ Էջմիածնից:

Մովսեսը Փիլիպոս Վարդապետին, իրու նվիրակ, ուղարկեց Տաճկաստան: Նա Սահակ Գառնեցի կաթողիկոսին հանդիպեց Վանում եւ շատ ջանքեր գործադրեց, որ նրան հետ կանգնեցնի այդ ճանապարհից: Մովսես կաթողիկոսի անունից խոստացավ նույնիսկ Սահակ Գառնեցուն տրամադրել Ղուրուպաշայ վաճաքը՝ իր կալվածքներով եւ Էջմիածնից տարեկան երեք հարյուր ղուրուշ գումարով: Սահակ կաթողիկոսը, սակայն, չնահանջեց իր մտադրությունից:

Այդքանից հետո Սահակ Գառնեցին եւ Պողոս Այնթափից վարդապետը մեկնեցին Կ. Պոլիս՝ իրենց մտադրությունն իրականացնելու համար ստանալու վեզիրի թույլտվությունը:

Կ. Պոլսում Սահակ Գառնեցուն եւ Պողոս Այնթափցուն համախոհ դարձավ Զաքարիա Վանեցին, ով այն ժամանակ վարում էր Պատրիարքությունը:

Վերջինիս օգնությամբ, բայց վեզիրի բացակայությամբ, ձեռք բերեցին Սուլթան Մուրադ Դ-ի արտոնագիրը Թուրքիայի տարածքում ապրող հայերի համար Էջմիածնից անկախ կաթողիկոսություն հիմնելու մասին:

Գործող կարգի համաձայն, սակայն, պետք է անպայման լիներ նաև վեզիրի համաձայնությունը: Ուստի եւ մեկնեցին Տիգրանակերտ, որտեղ այդժման գտնվում էր վեզիրը՝ Խոսրով փաշան:

Տիգրանակերտում նույնպես անջատականները չլսեցին հայ ազգային գործիքների եւ հատկապես Երեւելիներ Երեմիայի եւ Սալսուլի հորդորը՝ հետ կանգնելու ոչ բարի այդ ճանապարհից: Եվ Սահակը ներկայացավ Խոսրով վեզիրին՝ առաջարկելով 10 հազար ղուրուշ, եթե վեզիրը տա նոր կաթողիկոսություն հիմնելու արտոնագիր:

Գործին խառնվեցին ամիոցիները, որ դեմ էին Աքռորդ Երկարակմանը: Եվ Խոսրով փաշային, ի նապաստ Մովսես կաթողիկոսի, ավելի մեծ գումար տալու պատրաստականություն հայտնեցին:

Վեզիրը, պատրիկ բռնելով, թե ինչու են Սահակ կաթողիկոսն ու Պողոս վարդապետն առանց իր գիտության ներկայացել Սուլթանին, հրամայեց բրածք անել նրանց: Եվ այնքան պիտի ծեծեին, մինչեւ նրանք մեռնեին կամ ընդունեին թուրքերի կրոնը: Ըստ Առաքել Ղավրիթեցու՝ մահվանից նրանց փրկելն Ամիրի իշխանների խնդրանքի շնորհիվ եղավ: Ժանանակակիցները, մինչդեռ, հաստատում են, որ նրանք փրկվեցին ուրացմանք: Դա 1629թ. նոյեմբեր ամսին էր:

Սահակ կաթողիկոսը դրանից հետո անցավ Վրաստան, որտեղ էլ զղալով ու ապաշխարությամբ

վախճանվեց 1639-ին:

Պողոս վարդապետն էլ վախճանվեց Լեհաստանում:

Հայ Եկեղեցու Երկիրեղիման գաղափարը Սահակը պատահական չէր առաջ քաշել: Գաղափարի կողմնակիցների կարծիքով Թուրքիան եւ Իրանը գտնվում էին պատերազմի մեջ: Էջմիածնի նվիրակները միջոցներ են հանգանակութ Թուրքիայում եւ հանձնութ Մայր աթոռին, որ Պարսկաստանի Ենթակայության տակ էր: Այսինքն՝ Թուրքիայի հայ բնակիչների գումարներն անցնում էին թշնամական Երկրին:

Նաեւ այս տրամաբանությամբ էր սնուցվում Էջմիածնի հանդեպ անջատողական տրամադրությունը:

Այդուհանդերձ, նոյն Թուրքիայի տարածքում բնակվող հայ Երեւելիների մեջ քիչ չէին մարդիկ, ովքեր Սահակ Դ կաթողիկոսին եւ հանախուների ձեռնարկումը համարում էին արկածախնդրություն:

Նոր կաթողիկոսության կողմնակիցների ու հակառակորդների միջեւ վեծի առարկա էր նաեւ հիմնադրվելիք կաթողիկոսական գահի նստավայրի հարցը: Սահակի համար նպատակահարմար էր Մշո Սուրբ Կարապետը, մյուսների համար՝ Կ. Պոլսի պատրիարքարանը:

Այդպիսի վերջաբան ունեցավ Էջմիածնի արուր Երկատելու համար պայքարը: Եվ Մովսեսը միապետ եղավ Սուրբ Աքռորդ վրա:

Այդ խմբին տեղյակ էր նաեւ Հռոմի Ուրբանոս Ը պապը: Երկու կաթողիկոսներն էլ փորձում էին ստանալ Սրբազն քահանայապետի իրավաբար վճիռը:

Հռոմը հաճությամբ էր ընդունել Մովսեսի ընտրության լուրը: Սուրբ ժողովը որոշեց նույնիսկ առանձին թուրք գրել՝ առ նորընտիր՝ շնորհավորելու նրան: Սուրբ ժողովի գրության մեջ մասնավորապես ասված է: «.... վասն զի կը յուսայ թէ անիկա իր եռանդովն եւ բարեացակամութեանբը, զոր ցույց տուած է իր նամակներուն մէջ, ի գլուխ պիտի հանէ Ս. Աքռորդ հետ միութիւնը» (Թուրք առ P. Dimas):

Մովսեսի ընտրությունը պաշտպանություն ստացավ նաեւ Սպահանում, որն արտացոլվեց Շահ Սաֆիի 1629թ. հունվարյան հրովարտակում (Վավերագիրը ներկայացնում ենք սույն համարում):

Մովսես Տաթեւացին՝

Հայոց Եկեղեցու բարեփոխիչ

Ներսես Ակինյանը, իիմք ընդունելով Գրիգոր Դարանացի ականատեսի վկայությունը, գրում է: «Երբ կը հիմներ Մովսես կաթողիկոս վանքեր եւ դպրատուններ, իր գլխաւոր նպատակն էր պատրաստել Եկեղեցւոյ համար հոգելից եւ լուսամիտ առաջնորդներ եւ պաշտօնեաներ: Բայց կային հրապարակի վրայ անթիւ եպիսկոպոսներ, վարդապետներ եւ Երեւելներ, որոնք ծեռնադրուած նախորդ կաթողիկոսներեն սիմոնականութեանը, գրաւած էին քաղաքներու եւ գիւղերու մէջ արուներ, եւ դարձեալ կը վիստային մէջտեղ բազմաթիւ վաճակամներ, որոնք հեռացած վանքերէ կը պարապէին վաճառականական գործերով եւ կալուածատիրական գգտումներով» (Մովսես Գ. Տաթեւացի Հայոց կաթողիկոսն եւ իր ժամանակը, Վենետիկ-Ս. Ղազար, 1992, էջ 223):

Եվ Մովսեսը, նախեւառաջ, պարտադրեց «անառակ եպիսկոպոսաց» մեկուսանալ անապատներում (բացի առաջնորդ եպիսկոպոսների):

Մովսեսը սրանց դեմ իսկական պատերազմ հայտարակեց, հարկ եղած դեպքում նաեւ բանի միջոցների դիմեց:

Նա անաշառ էր նաեւ թերուս եւ բափառական վարդապետների հանդեպ:

Անարժան եպիսկոպոսներին ու արեղաներին համակրում էին գործող կարողիկոսները եւ հատկապես Մելքիսեդ՝ Մովսեսին սպառնալով բանադրանքով: Դա էլ պատահական չէր. ըստ Գրիգոր Դարանադցու՝ հենց Մելքիսեդն ու Դավիթն էին մրցում սուտ եպիսկոպոսներ ձեռնադրելու մեջ, ովքեր, եկեղեցական գործերը թողած, օքալված էին իրենց ունեցվածի բազմապատճամբ: Այսպես որ՝ Մովսեսի բարեկարգությունը չէր կարող ընթանալ առանց ընդդիմության:

Խաչատուր վարդապետ Կեսարացու՝ 1642-ին տպագրված ժամագրքից իմանում ենք, որ Մովսես վարդապետը կարեւոր դեր կատարեց եկեղեցական պաշտամունքի վերանորոգության մեջ: Նա, փաստորեն, Յայոց եկեղեցին պայծառացրեց հարմար եւ հաստատուն ժամակարգությամբ, այսինքն՝ կարգավորեց հասարակաց աղոթքը, վերականգնեց խարարված կարգերը:

Նրան է պատկանում մի կարգադրություն՝ կապված «Օրինություն» շարականի հետ: Խաչատուր Կեսարացի վարդապետի վկայությամբ՝ նա սահմանել է օրինության տասը շարական՝ հենվելով Ստեփանոս Սյունիի պատրաստած տասը պատկերով «Ավագ» օրինությունների վրա:

Մովսեսը չէր կարող ուշադրության կենտրոնում չպահել թեմերի գործունեությունն ու նրանց ներքին բարեկարգությունը: Այդ նպատակով էլ թեմերի առաջնորդ էր նշանակում իր ձեռքի տակ մարզված առաջնորդներ: Իսկ եթե խոհեմությունը թույլ չէր տալիս փոփոխություններ անել, հրահանգներ էր գրում տեղական առաջնորդներին: Նման հրահանգական կոնդակների թիվը պիտի որ մեծ եղած լիներ, բայց պահպանվել է միայն Մաղարադա Ս. Նախավկա վաճքին հղած կոնդակը: Ըստ երեւույթին վաճքի առաջնորդի եւ ժողովրդի միջեւ ինը վեճ է գոյություն ունեցել հատկապես թեմի սահմանների հրցում: Եվ կարողիկոսը փորձել է կարգավորել այդ վեճը: 1631թ. նոյեմբերի 11-ին գրված կոնդակը, որն իր տեսակի մեջ եղակի է, սույն համարում ներկայացնում ենք ամբողջապես:

Յոռմի հետ հարաբերությունները

Մովսես Տաթեւացուն են վերագրվում Յոռմի հետ ունեցած ինչ-ինչ հարաբերություններ: Դրանց մեծ նշանակություն են տալիս հատկապես հռոմեադպանները՝ փորձելով շահարկել թե՛ նրա անունը, եւ թե՛ համբավը:

Յայսմի է հատկապես Յոռմի պապ Ուրբանոս Ը-ին հղած երկու նամակը: Ցավոք, մինչեւ իինա այդ նամակներն ըստ պատշաճի եւ բազմակողմանի քննության չեն առնվել:

Մի բան կարող ենք ասել այդ առիթով՝ պետք է

տարբերել նամակների մեջ ասված քաղաքավարական արտահայտությունները պաշտոնական դավանաբանական հարցերից: Մովսեսը, որ այնքան ջանք էր թափել Մայր աթոռը բարձրացնելու համար, չէր կարող որեւէ զիջում կատարել հռոմեական եկեղեցուն:

Այդ ամենը, սակայն, չի նշանակում, որ նա փորձ չի արել ձեռք բերելու պապականության բարյացականությունը: Նա այդ անում էր, մասնավորապես, հաշվի առնելով կարողիկ եկեղեցու՝ արեւելքում ունեցած դերակատարությունը, ինչպես եւ Եվրոպայի հայ համայնքների դիրքը պաշտպանելու համար, ասել է թե՝ հայապահպանության շահերից ելնելով: Այդ ժամանակ հատկապես սրված էր Լեհաստանի հայ համայնքի (Լվովի թեմ) վիճակը: Ըստ եւրյան ներեկեղեցական մի քանի հարցերում եւս Մովսեսը կարիք ուներ Յոռմի աջակցության:

Մովսեսը կարող էր անգամ հայտարարել Յոռմի եկեղեցու հետ սիրո միաբանության մասին, բայց Յայոց եկեղեցին սիրո միաբանություն պահպանում էր բոլոր եկեղեցների հետ:

Յանուն ճշմարտության պետք է ասել, որ միաբանության հարցը միշտ էլ եղել է օրակարգում Քաղեդոնի տիեզերական ժողովից (451թ.) հետո:

Պետք է հիշել, որ մինչեւ Մովսես Տաթեւացին Սուլը Ներսես Շնորհալին էր միաբանական խոսակցություն սկսել Կ. Պոլսի արորի հետ՝ Բյուզանդիայի կայսեր միջոցով (Նամականի ԺԲ դար, Յայ-բյուզանդական եկեղեցական բանակցություններ, Մը Ներսես Շնորհալի, Ս. Էջմիածին-2011): Եվ ոչ միայն Շնորհալին: Իսկ 1439-ին Ֆլորենցիայում Յայոց եւ Յոռմի եկեղեցների միջեւ կնքվել էր միաբանական դաշինք:

Միաբանություն ասվածն էլ յուրովի էին ընդունում

Յայոց, Յոռմական եւ Յոռմեական եկեղեցները:

Ինչպես նշում է Մաղարիա Օրմանյանը. «Յայոց եկեղեցին միաբանութիւնը հասկացավ միշտ բառին ծիչը եւ սեղմ նշանակութեամբ: Նա միաբանութիւն ըսելով, ուզեց եկեղեցներու միշեւ ունենալ հոգեւորական հաղորդակցութիւն, փոխադարձ հարաբերաթիւն, եւ իրարու դիրքին հանդէա յարգանք. իրաբանչիւն համար իւր շրջանակին եւ սահմաններուն մէջ ազատութիւն, եւ ամէնուն վրայ տիրապետող քրիստոնէական սուլը սէրը: Նա երբեք չուզեց հանդուրժել, որ միաբանութիւնը տիրապետութեան փոխուի. եւ մարդուրսութեան վերածուի» (Յայոց եկեղեցին, էջ 80):

Յունական եւ Լատինական եկեղեցները, օգտագործելով իրենց քաղաքական դիրքը, եկեղեցների միաբանությունն այլ կերպ էին ընկալում: Ավելի ծիչը միաբանություն ասելով նրանք տիրապետություն էին հասկանում, թենիւ մերողները տարբեր էին:

Յայ եկեղեցին, մինչդեռ, երբեք իր ուղղությունը չփոխեց եւ հաստատուն մնաց իր դավանության ու վարդապետության մեջ:

Վերոգրյալ եղրակացություններն ուղղակիորեն վերաբերում են նաեւ Մովսես կաթողիկոսի գործութեության շրջանին:

Այս, Մովսեսը բարեկամական հարաբերություններ էր պահպանում Սպահանի եւ Նախիշեւանի ունիթորների (միաբանների) հետ:

Այս, Մովսեսին Պապի անունից հանձնվեց շուր-

շառ՝ ի նշան բարյացակամության:

Այո՛, թույլատրվեց, որ երկու Եկեղեցիների միջեւ փոխհաղորդակցություն հաստատվի:

Այո՛, Մովսեսի նախածեռնությամբ «Ո՛վ իրաշալի նախահարք» շարականի հինգ հնավանդ տներին ավելացված երեք տոնը 1629-ին կամ 30-ին հանվեց, որ նզովք է եղել Քաղկեդոնի ժողովին:

Եվ, այդ բոլորով հանդերձ, կարելի է առանց վերապահումի ասել՝ Յայոց Եկեղեցին Մովսես Գ Տաթևացու գահակալության շրջանում հավատարիմ մնաց Նիկիայի տիեզերական ժողովի (325), Կ. Պոլսի տիեզերական ժողովի (381), Եփեսոսի տիեզերական ժողովի (431) որոշումներին եւ որեւէ զիջումի չգնաց դավանության ու վարդապետության հարցերում: Որեւէ փոփոխություն չեղավ Քաղկեդոնի ժողովի հանդեպ Յայոց Եկեղեցու որդեգրած դիրքորոշման մեջ, որ արտահայտվել էր Դվինի 506թ. ժողովում. այդ ժողովում Յայաստանյաց առաքելական Եկեղեցին հավատարիմ էր մնացել առաջին երեք տիեզերական ժողովների վարդապետությանը՝ դատապարտելով Քաղկեդոնի տիեզերաժողովի (451) որոշումները:

Իսկ ի՞նչ էին վճռել երեք տիեզերաժողովները:

Ըստ Մաղաքիա Օրմանյանի՝ «Երեք նախընթաց ժողովներ վժուցին Յիսուսի քրիստոսի աստուածութիւնը, Յօդույն Սրբոյ աստուածութիւնը եւ Սարդեղութեան խսութիւնը, որ է աստուածութեան եւ մարդկութեան միաւորութիւնը: Երեք ժողովներու վժիններով լրացած էին հիմնական հաւատալիքները, որ քրիստոնէական կրոնքին խսկութիւնը եւ իւր էական խորհուրդները կը կազմեն՝ երրորդութիւն, Մարդեղութիւն եւ Փրկագործութիւն» (Յայոց Եկեղեցին, էջ 132):

Փորձենք շատ համառոտ համենատել Սուրբ Երրորդության, Սարդեղության հանդեպ Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու եւ Մովսես Տաթևացու կարծիքները:

Գրիգոր Նարեկացի (ըստ «Մատյան ողբերգության» պետմի)

«Խոսպովանում, դայլանում ենք,

Պաշտում ենք ու երկրպագում

Անենասուրբ Եղբայրության

Միասնությունը գուգափառ... » (էջ 206):

Կամ՝ «Լիակատար մարդ եւ անպական աստվածություն», «Մեկը երեք անձնավորությունից». սա էլ Որդու մասին է (էջ 208):

Կամ՝ «Մշտապես օրինում, բարեբանում ենք

Յոր եւ Որդու հետ

Նրանց էակից Յօդուն» (էջ 210):

Ներսես Շնորհալի (ըստ Յօդունների թագավոր Մանուելի խնդրանքով գրված նամակի)

«Խոստովանում ենք... Յոր առանձնավորական հատկությունը՝ (որ Նա) անծին է եւ անսկիզբ, եւ Որդունը՝ որ անսկիզբ Յոր անստեղծ եւ անժամանակ ծնունդ է, այլեւ Յօդունը՝ որ Յօրից անձառ բխում, Ելում եւ արտառաքում է»:

«Խոստովանում ենք նաեւ, որ այս երեք Անձերը մեկ աստվածություն են ժողովված ու միավորված՝ ոչ որպես միմյանցից բաժան, այլեւայլ բնություններ... այլ հավատում ու ճանաչում ենք, որ Ամենասուրբ Երրորդությունը մեկ բնություն, մեկ տերություն, մեկ զորություն եւ մեկ փառ ունի»:

«.... Անձերը երեք ենք դավանում, երեքից ոչ ավել, ոչ պակաս, եւ բնությունը՝ մեկ եւ ոչ թե Երեքի բաժանված՝ ըստ անձերի: Երեք համապատակվ (Անձերից) ոչ մեկն իր հետ կարգվածներից մեծ չէ բնությամբ.... »:

Յիմա՝ Մովսեսի դիրքորոշման մասին:

Ուրբանու Ը պապին գրված Երկրորդ նամակում Մովսեսը, իբրեւ կարողիկոս, այսպես է դիմում. «Յիսուսավանդ ողջոյն եւ սուրբ համբույր ենք (մատուցում).... մեծության իբրեւ պաշտոնակցի ու գործակից հոգեւոր հոր եւ եղբոր.... »:

Այսուհետեւ՝ «Մի է քրիստոսի Եկեղեցին, եւ մի է Եկեղեցին»:

Ապա գրում է՝ «մեկ է Տերը, մեկ է հավատը, մեկ է մկրտությունը.... »:

«Յավատով Ընդհանրական Եկեղեցուն ենք, ու նզովում ենք բոլոր հերձվածողներին.... »:

«.... Սեր կողմներում եւս ազգությամբ հայ եւ դավանությամբ Քոանկ շատ քրիստոնյաներ կան, մենք նրանց.... իբրեւ եղբայր ենք ընդունում եւ մեծարում»:

Իսկ առաջին նամակում, որ գրվեց Խաչատուր Կեսարացու եւ Արիստակես վարդապետի հետ միասին, Մովսեսը իշխեցնում է հայերի ու լատինների միջեւ, դեռեւս Յօդունի սուրբ Սեղբեստրոս պապի եւ Գրիգոր Լուսավորչի ժամանակից, Եղած հնավանդ սիրո նասին: Նաեւ հորդորում է՝ «մեկմեկու սիրենք հոգեւոր սիրով»:

«Մենք ոչ թե հերետիկոս կամ հերձվածող ենք, ինչպես կարծում եք դուք, այլ ուղղափառ ենք, համաձայն մեր հոգեւոր հայերի դավանության, եւ անուն առ անուն նզովում ենք բոլոր հերետիկոսներին.... »:

Խոսելով Քրիստոսի բնության մասին՝ Մովսեսը գրում է. «Մենք ասում ենք՝ մեկ անշփոթ բնություն, եւ դուք ասում եք՝ Երկու անբաժանելի բնություն, եւ Երկու խոսքերի իմաստը նույն է, եւ ճշմարիտ է»:

Այսուհետեւ՝ «Իսկ տարվա տոնների եւ պահոց օրերի ետեւառաջությունը վճասակար չէ, որովհետեւ ազգային ավանդույթներն են, որոնք (կարող են) այսպես կամ այնպես լինել»:

Եվ՝ «Մենք ընթանանք սիրո հետ»:

Ինչպես տեսնում եք՝ ոչ մի զիջում դավանության ու վարդապետության հարցում:

Եվ՝ այդուհանդերձ, մի քանի հարցի ճշտման եւ հետազոտման կարիք ունենք:

Իբր 1625-ին Մովսես արքեպիսկոպոսը եւ նրա պաշտոնյաները ծածուկ, վկաների առջեւ, հավատքի դավանություն են տվել Կարողիկե (Կաթողիկ) Եկեղեցուն:

Իբր 1630-ին Մովսես կարողիկոսը եւ նրա պատուի կարողիկան ժողովը է գումարել Յօդունի Եկեղեցու հետ Եկեղեցական հաղորդակցության վերաբերյալ: Ի դեպ, հայ աղյուլները եւ ժամանակագիրները տեսոյակ չեն Մովսես կարողիկոսի կողմից գումարված նման մի ժողովի, առավել եւս՝ ծածուկ հավատքի դավանության մասին:

ԼՎՈՎԻ ՀԱՅ ԹԵՄԻ ԽՆԴԻՐԸ

Մովսես Տաթևացու կաթողիկոսությունը, ինչպես ասացինք, համընկավ Լվովի հայ թեմի դեմ պապականության եւ Լեհաստանի կաթոլիկների գորհի

սաստկացմանը:

17-րդ դարի առաջին կեսին Յայ Եկեղեցու դեմ ձեռնարկած կատաղի գրոհներում կաթոլիկ Եկեղեցին օգտագործեց քարձրաստիճան հայ հոգեւորականությամբ:

1626թ. Էջմիածնից փախած կաթողիկոս Սելիքսեղեկն ապաստան գտավ Լվովում: Այնտեղ նա լեհահայության Եափսկոպոսի ընտրությունը վերածեց խայտառակ դրամաշորթության: Մեծ կաշառք ստանալով լվովսկայ մեծահարուստ Թորոսովիշների ընտանիքից՝ նա տեղի հայ հասարակությունից գաղտնի 1627թ. հունվարի 8-ին Եափսկոպոս ձեռնադրեց 21-ամյա Նիկոլ (Նիկոլայ, Նիկոլայոս) Թորոսովիշ արեղային եւ նրան նշանակեց լեհահայ թեմի առաջնորդ. Լվովի թեմը թափուր էր 1625 թվականից:

Այդ գործարքը մեծ զայրույթ առաջացրեց հայ բնակչության մեջ: Ոչ միայն Լվովի, այլև մյուս բոլոր քաղաքների հայերը վճռականորեն հրաժարվեցին Նիկոլին ճանաչել որպես թեմի օրինական առաջնորդ: Զայրացած բնակչությունը գրավեց Լվովի հայոց Եկեղեցին եւ Թորոսովիշին թույլ չտվեց այնտեղ նտնել: Իսկ քաղաքի հայոց դատարանը, Էջմիածնի կարողիկոսարանի նվիրակ Խաչատուր Կեսարացի վարդապետի մասնակցությամբ, նիստ գումարեց, որպեսզի դատի Նիկոլին: Խաչատուր վարդապետը, սակայն, փորձում է հաշտեցնել Երկու կղզմին՝ ամբողջ գաղութը փրկելու համար: Լվովի հայ ավագները մերժում են վարդապետի այդ միջամտությունը: Նիկոլն էլ իր հերթին սպառնում է դիմել արքունի դատարան եւ հարկադրել՝ իրեն հնագանդվելու:

Լեհահայերի զայրույթի պատճառը ոչ միայն Եափսկոպոսի անօրինական ու խարդախ ճանապարհով ձեռնադրվելն էր, այլև Նիկոլի թեկնածության միանգամայն անընդունելի լինելը:

Պայքարի ամենասուր պահին Նիկոլին օգնության հասան ճիզվիտները եւ քաղաքային իշխանությունները, որոնք, օգտվելով հարմար առիթից, փորձեցին հարվածել հայ գաղութին, սահմանափակել նրա իրավունքները, վերացնել հայերի առեւտրական ու տնտեսական մրցակցությունը:

Յոռմի Եկեղեցու գործակալները Նիկոլին խոստացն օգնություն ցույց տալ միայն այն դեպքում, եթե վերջինս ընդունի կարողիկություն:

Նիկոլն ընդունում է այդ պայմանը, որից հետո ճիզվիտները եւ Լվովի քաղաքային իշխանությունը զինված ուժի միջոցով հայերին ստիպեցին թողնել Եկեղեցին ու հանձնել ապօրինի Եափսկոպոսին:

Լվովի հայերն իրենց ներկայացուցչին ուղարկեցին Էջմիածն՝ Մովսես կարողիկոսի մոտ, եւ խնդրեցին նրա օգնությունը: Մովսեսը նամակով դիմեց Լեհաստանի Վլադիսլավ թագավորին, Յանոմի պապին եւ խնդրեց չնեղել լեհահայերին ու Եկեղեցին վերադարձնել նրանց: Ստանալով կաթողիկոսի նամակը՝ Վլադիսլավ թագավորը հրամայում է Եկեղեցին վերադարձնել հայերին, սակայն ճիզվիտներն ամեն կերպ դիմադրում են՝ հայտարարելով, որ թագավորն աշխարհիկ իշխանավոր է, իսկ Եկեղեցին պատկանում է Յոռմի պապին, ինտեւարար միայն պապն է իրավասու տնօրինելու այդ հարցը:

Կարոլիկ Եկեղեցու եւ ճիզվիտների կողմից քաշալերվելով՝ Նիկոլ Թորոսովիշը հրաժարվում է հնագանդվել հայ ինքնավար մարմիններին եւ սկսում ամսնա վատնել Եկեղեցու հարստությունները:

Ճիզվիտները երանդում գործունեություն են սկսում լեհահայերի Եկեղեցական միությունն իրականացնելու նպատակով: Յոռմի թելադրանքով եւ օգնությամբ նրանք ճգոտում են կաթոլիկական դավանանքը հայերի մեջ տարածել իրենց իսկ՝ հայերի միջոցով: Այդ նպատակով Լվովում հիմնվում է դպրոց՝ հայոց Եկեղեցու համար սպասավորներ պատրաստելու նպատակով:

Խտրություն չգնելով միջոցների միջեւ՝ կաթոլիկները փաստորեն իրենց ծեռքը վերցրին Լվովի հայոց Եկեղեցու կառավարման գործը:

Նիկոլ Թորոսովիշի մահից հետո Լվովի հայ Եկեղեցու առաջնորդ ձեռնադրվեց Վարդան Յունանյանը, ով 1689թ. հոկտեմբերի 10-ին պապական նվիրակ Գանդելմիի նախագահությամբ հրավիրեց լեհահայ Եկեղեցու ժողով, որտեղ էլ Լեհաստանի եւ Արեւմտյան Ուկրաինայի հայոց Եկեղեցին պաշտոնապես եւ վերջնականապես հայուարարվեց Էջմիածնի մայր արքունից անկախ եւ Յոռմի կաթոլիկ Եկեղեցուն միացված:

Սուտ կես դար տեւեց լեհահայերի պայքարը Յոռմի եւ Լեհաստանի կաթոլիկական ռեակցիայի միացյալ ուժերի դեմ: Թեեւ պայքարը տեղի էր ունենում Եկեղեցու եւ դավանանքի շուրջ, սակայն իր եւրյամբ ազգապահանության համար մղվող պայքար էր:

Յիմա՝ դարեր անց, մի հարց շարունակում է հնչել՝ կարո՞ղ էր Մովսես Տաքեւացին Լվովի հայ թեմի խնդիրը լուծել հօգուտ Յայ առաքելական Եկեղեցու եւ կասեցնել կարողիկության տարածումը Լեհաստանի եւ Ուկրաինայի գաղթօջախներում:

Այդ հարցը, ըստ էության, մեկ պատասխան ունի՝ չեր կարող, թեեւ իրենից կախված ամեն ինչ արեց:

Դրվագներ համարի նախապատրաստության ընթացքից

1625 թվականն էր, երբ Խոտանան գյուղում ոնն գրի՝ Ղազար անուն, պատգամեց իր ժամանակակիցներին ու գալիք սերունդներին. «Արդ աղաչում եմ բոլոր հայերին ու եղբայրներին, վարդապետներին ու քահանաներին, իմաստասեր գիտուններին...., ծեր մաքրափայլ աղոթքներում իշխեցք սրբանունդ ու պատվական Մովսես վարդապետին եւ նրա ծնողներին»:

Շետագյում, սակայն, տարբեր պատճառներով, այդ պատվիրանը չկատարվեց պատշաճ ծեւով, իսկ խորհրդային տարիներին գրեթե մոռացության մատնվեց Յայոց մեծ Մովսեսը: Դրա լավագույն վկայությունը կարող է լինել Յայկական սովետական հանրագիտարանը, որտեղ այսպես է ներկայացված. «.... ծ. թ. ա. անհ. -1632, Յայոց կաթոլիկոս 1629-ից: Յաջորդել է Ղավիթ Դ Վաղարշապատցուն: Մինչեւ կաթողիկոս ձեռնադրվել հիմնադրել է Յարանց անապատի եւ Յովհաննավանքի դպրոցները, գրադպել հայկ. դպրոցների բարեկարգման հարցերով: Օգտագործելով պարսից Շահ Աբաս 1-ինի հետ ունեցած մտերիմ հարաբերությունները՝ Էջմիածնի վանքն ազատել է հարկից, վերա-

Առողջել վանքը, վեհարանը, պարիսպները, օժանդակ կառույցները: Թաղվել է Երեւանի Կողեզնի գերեզմանոցում» (հ. 8, էջ 40):

Մոռացության փորշին մաքրելու համար էլ, ինչպես նշեցինք, հրատարակում ենք «Սյունյաց Երկրի» սույն համարը:

Կատարված աշխատանքներից մի քանիսն արժանի ենք համարում հիշատակել:

Առաջին. Մովսես Տաթևացու դիմապատկերը ժամանակին չի ստեղծվել: Նման փորձեր արվել են վերջին տարիներին, եւ իհան ունենք չորս տարբերակ, Երեք՝ Սուրբ Չորավար Եկեղեցու նախաձեռնությամբ հորինված: Սակայն դրանով չենք բավարարվել, եւ ստեղծել ենք մի նոր դիմանկար: Յեղինակը կապացի գեղանկարիչ Ռուբեն Կոստանդյանն է: Դիմանկարը ստեղծելու համար հիմք են ընդունվել բազմաթիվ սկզբնաղյուրներուն տեղ գտած նկարագրությունները եւ առաջին հերթին ոնմ գրիչ Ստեփանոսի 1655ք. մի հիշատակություն (Յայերեն ծեռագրերի ժեղարի հիշատակարաններ, հ. 4., Երեւան, 1984, էջ 648): Օգտակար էն նաև Եսայի Կարճեւանցու հիշատակությունները: Դիմանկարը գետեղվել է սույն համարի 1-ին էջում (շապիկի վրա):

Երկրորդ. Երեւանի պետական համալսարանի Յայ Ժողովորի պատմության ամբիոնի եւ հաստապես ամբիոնի ղեկավար, պրոֆեսոր Պետրոս Յովհաննիսյանի աջակցությամբ, կարելի է ասել առաջին անգամ, ստեղծվել է Մովսես Տաթևացու մատենագիտությունը: Յեղինակը տեր Արարատ քահանա Պողոսյանն է, ով Վեհափառ Յայրապետի բարձր տնօրինությամբ 2013ք. նոյեմբերի 1-ից Մայր արոր Սուրբ Էջմիածնի «Վաչե եւ Թամարա Մանուկյան» մատենադարանի տնօրենն է:

Պրոֆեսոր Պետրոս Յովհաննիսյանին եւ Արարատ քահանա Պողոսյանին մեր Երախտագիտությունն ենք հայտնում:

Մինչ այդ Մովսես Տաթևացու մատենագիտությունը ստեղծելու փորձ է արել տաթևացիագիտության երախտավորներից մեկը՝ Ներսես Վրոց Ակինյանը՝ «Մովսես Գ. Տաթևացի Յայոց կաթողիկոսն եւ իր ժամանակը» հիմնարար աշխատության մեջ (Վիեննա, Միխարեան տպարան, 1936):

Երրորդ. Խնդիրներից մեկն էլ հայոց մեծահամբավ այդ Վարդապետի շիրմի հարցն է, որը, կարելի է ասել, շարունակում է մնալ անհայտության մեջ:

Մովսես Տաթևացու շիրմի շուրջ ստեղծված վիճակի հանդուրժումը մեր օրերում, հիրավի, բացատրություն չունի այլեւս: Այդ հանգանաքը հաշվի առնելով՝ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը նամակ հղեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին եւ Ամենայն հայոց կաթողիկոսին՝ առաջարկելով պատշաճ վերաբերմունք մատուցել Մովսես Տաթևացու շիրմին՝ նշիրական այդ վայրը բարեկարգելով, ուխտատեղին վայելու տեսքի բերելով: Որպես խնդրի լուծման մեկ այլ տարբերակ՝ նշվել է Մովսես կաթողիկոսի՝ Սուրբ Էջմիածնում կամ Տաթևի վանքում վերաբերու տարբերակը (նամակը հրապարակվում է թերթի սույն համարում, մինչ այդ հրապարակվել է «Սյունյաց Երկրում», N14 (357), 15 մայիսի 2015ք.):

Զորորորդ. մի հարց եւս, որ ավելի պարզաբանվեց ու հստակեցվեց:

Մեզանում ընդունված է, որ Մովսես Տաթևացին Յայոց ազգային-Եկեղեցական վերջին սուրբն է: Այդ մասին նշված է նաև «Ամենայն հայոց կաթողիկոսները» ժողովածուի Ա պրակում (Մայր արոր Սուրբ Էջմիածնի հրատարակչություն, 2008), ինչպես եւ մի շարք այլ գրքերում: «Վարք սրբոցը» եւս (Երեւան, 1988) հաստատում է այդ իրողությունը՝ նշելով. «Յայ Եկեղեցու կողմից կանոնացված վերջին սուրբն է, որն այդ պատվին է արժանացել իր բեղուն հոգեւոր գործունեությամբ ու մի շարք բարենորոգությունների համար, որովհետեւ դրանք իրագործվել են մեր Եկեղեցու անկումային, կարելի է ասել ամլացած տարիներին»:

Այդ բոլորով հանդերձ, հարցի վերաբերյալ ոչ միանշանակ կարծիք է եղել մատենագիտության մեջ:


Մայր արոր Սուրբ Էջմիածնում ա. թ. ապրիլի 23-ին, երբ սրբադասվում էին Յայոց ցեղասպանության նահատակները, մեր հոգեւոր հայերի աղոթքներում եւ խոսքերում քանից վերահաստատվեց փաստը, որ Մովսես Տաթևացին, իսկապես, եղել է Յայոց ազգային-Եկեղեցական վերջին սուրբը: Վկայակոչվեց Մինեն Երեւանցին, ով առաջինն էր պաշտոնապես հրաշակել այդ գնահատությունը:

Մինեն Երեւանցին, ով Յայոց կաթողիկոս էր 1763 թվականից, լրացրել, կարգավորել եւ հրապարակել է հայ Եկեղեցու «Տօնացոյցը» (հ. 1-2)` նպատակ ունենալով միաձեւություն մտցնել ծեսերի ու արարողությունների մեջ (գործադրվել է 1777-ից), որտեղ էլ նշվել է Մովսես Տաթևացու անունը:

Մինեն կարողիկոս Երեւանցու այդ գնահատությունը հանդիպում ենք նաև նրա կորողային «Զամրը» գրքում (Վաղարշապատ, 1873, էջ 21). «Սա էր այր հոգեթնկալ, առաքինազարդ, եւ բնակարան շնորհած Յոգույն սրբոյ, սիրեցեալ յԱստուծոյ եւ ի մարդկանէ, որ ի նստիլն յԱթոս սուրբ, որպես թէ նոր ի նորոյ ի հիմանէ նորոգեաց զսուրբ Աթոս եւ պայծառացոյց հոգեւորական կարգօք եւ մարմնական պիտոյիւթ: Որ գորեք զկնի Լուսավորիչին մերոյ եւ թռանց նորին եւ թարգմանչացն մերոց, յայլոց Յայրապետացն ոչ ոք եղեւ Երախտաւոր եւ թարերար սրբոյ Աթոռոյս եւ Ազգիս մերոյ նման սորին»:

Յարցը, սակայն, դրանով չի փակվում, մանավանդ որ մի շարք պատմագիրներ, այդ թվում Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը (Ազգապատում) այնուում է. «.... ոչ տօնացոյցը եւ ոչ յամաւուրը չեն արձանագրած»: Ավելի ճիշտ՝ Մաղաքիա Օրմանյանը Երկակի մոտեցում է ցուցաբերում. մեկ վկայակոչում է Ավետիս Վարդապետ Պերտերյանի «Պատմություն հայոցը» (Կ. Պոլիս, 1871, էջ 1), մեկ էլ թերահավատություն ցուցաբերում (Ազգապատում, հ. 2, էջ 3587):

Ընորիք արքեպիսկոպոս Գալստյանը «Յայազգի սուրբերը» աշխատության մեջ նոյնպես այլ կարծիք է հայտնում. «Յայ Եկեղեցու եւ ազգի իսկական Վերագարբնումը սկսվեց Մովսես կաթողիկոսով, ուստի միջնադարից դուրս գալուց հետո արդի ժամանակների մեր Երախտակին արժանի եւ մեծ դեմքերի շարքը բացում ենք իրենով, որը թեւ ամեն ինչով արժանի էր տոնելի սրբոց շարքն անցելու, բայց, դժբախտաբար, չի անցել»:



**Ամիդ.
Շունացվում
է Արեւամտյան
Հայաստանի
Դիարբեքիր
քաղաքի հետ**

Յայոց ավանդական պատմությունը քաղաքի կառուցումը վերագրում է Յայկազունի կամ Երվանդունի Տիգրանին (մ.թ.ա. 6-րդ դարի առաջին կես), որի անունով հայ պատմագիրներն այն անվանել են նաեւ Տիգրանակերտ: Երբեմն Դիարբեքիրը շփոթել են Աղձնիք նահանգում Տիգրան Բ-ի հիմնած Տիգրանակերտի հետ: Ամիդում է Մովսես Տաթեացին շարունակել ուսումը (Տաթեի վանքից հետո)՝ աշակերտելով Սրապիոն Ուժայեցուն:

Սր Զորավոր Եկեղեցու ծիսական խորհրդի նախաձեռնությամբ հրատարակված «Տարեւացու մինչ է Տարեւացի» գրքույկում (Երեւան, 2002) նշվում է. «Մովսես Տարեւացու, նրա աշակերտների՝ Փիլիպոս Սքանչելագործի եւ այլոց, նաեւ Տարեւացու ընկերակից Պողոս Մովսեսու եւ... Յարանց անապատի հայրերի՝ սրբոց դասում չկարգվելը պայմանավորված է եղել զուտ այն պատճառով, որ Սր Գրիգոր Տարեւացու հետո, այդ երկրարյա «խավարի» շրջանում, սրբոց կարգին դասելու կանոնակարգը մոռացվել, անտեսվել եւ կորել է՝ դրա չկիրառման եւ համապատասխան անձանց բացակայելու հետեւանքով, իսկ նշված այրերը, ըստ պատմիչների, բոլոր արժանիքներն ունեին սրբոց շարքում դասվելու» (նշված գրքույկի էջ 19):

Առկա տարակարծությունը հոլովում է, որ դեռևս անելիք ունենք «Տօնացոյցի» ուսումնասիրության ուղղությամբ:

Ավելի հստակ է եղել Մովսես Տարեւացու հիշատակի հանդեպ Եկեղեցու վերաբերմունքը: Սայսի 14-ը նրա հիշատակի օրն է: Նրա անունը հիշվում է սուրբ պատարագի ժամանակ՝ մեծամեծ սրբերի, եռամեծ հովհանքների ու հովվապետերի շարքում:

Ահա թե ինչ է ասում այդ կապակցությամբ Մաղաքիա Օրմանյանը. «.... Մեծագոյն եւ բացարիկ պատիվ է արել եւ անուն նրան Եկեղեցին՝ նրա անունը հանապաօք հիշելով Պատարագի մեջ՝ եռամեծ հովվաց եւ հովվապետաց կարգում, եւ կցելով նրան մի ուրիշ լուսավոր անվան՝ զույգ հիշատակում է անուն Գրիգոր եւ Մովսես Տարեւացիների անունները, քանզի Մովսեսն էլ Գրիգորի համանամ՝ եղավ լուսատու տանս Կրամյան» (Ազգապատում):

Հինգերորդ. ամենամեծ անելիքը, սակայն, եղել եւ մնում է Մովսես Տարեւացու կյանքի եւ գործունեության այն հատվածի ուսումնասիրման, հետագուտման ոլորտում, որ կապված է Յոռմի Եկեղեցու հետ նրա առնչություններին եւ, առհասարակ, դավանաբանական մի քանի սկզբունքային հարցերի հանդեպ նրա դիրքորոշման հետ:

Այսօր էլ այդ հարցերը շահարկվում են, քանի որ հրապարակի վրա առաջմն (եւ հիմնականում) հռոմեադպան պատմագիրների խոսքն է:

Սակայն դա այն հարցը չէ, որ կարողանայինք հիմնովին ու սպառիչ լուծում տալ «Սյունյաց երկրի» սույն համարի պատրաստման շրջանակում:

Վեցերորդ. Մովսես Տարեւացուն առնչվող գիտական գրականության գերակշռող մասը ոչ արդի հայերենով է, ինչը մեզ մեկ այլ խնդիր առջեւ կանգնեցրեց: Անհրաժեշտ եղավ, որ որոշ գործեր, գոնե մասնակիութեն, փոխադրենք արդի հայերենի, որպեսզի ընթերցողին առավել հասկանալի դարձնենք մատուցվող նյութը: Եվ մեր թերթի վաղեմի բարեկամ Յակոպ Քյուսեյանի միջոցով արդի հայերենի փոխադրեցինք մի շարք նյութեր:

Ահա դրանք՝

1. Ղետող վարդապետ Ալիշան, Միսական, հատվածներ,
2. Միքայել վարդապետ Զամշյան, Յայոց պատմություն, հատված,
3. Զարարիա Թանաքեռցի, Մովսես կաթողիկոսի (կյանքի) կարծ պատմությունը,

4. Գրիգոր վարդապետ Կամախնեցի (Դարանաղցի), ժամանակագրություն, հատված,
5. Զարարիա Էջմիածնեցի (Յայերեն ծեռագրերի մէջ դարի հիշատակարաններ, հ. Բ., Երեւան, 1978, էջ 175-176),
6. Գրիչ՝ Ղազար, Վայր՝ Խոտանան (Յայերեն ծեռագրերի մէջ դարի հիշատակարաններ, հ. Բ., Ե., 1978, էջ 177-179),
7. Գրիչ՝ Եսայի սարկավագ, Վայր՝ Երեւան (Յայերեն ծեռագրերի մէջ դարի հիշատակարաններ, հ. Բ., Ե., 1978, էջ 177-179),
8. Գրիչ՝ Ստեփանոս քահանա, Վայր՝ Էջմիածին (Յայերեն ծեռագրերի մէջ դարի հիշատակարաններ, հ. Գ., Ե., 1984, էջ 648),
9. Թուղթ Մովսէս Գ. կթղ. -ի, Խաչատուր Եպս. Կեսարացի եւ Արհստակէս Վրդ. -ի առ Ուրբանոս Ը. պապ (1626, օգոստոսի 17), (Կարապետ Եպս. Ամասունի, Ուկան Վրդ. Երեւանցի եւ իր ժամանակը, Վենետիկ, Ս. Ղազար, 1975),
10. Թուղթ Մովսէս Գ. կթղկս. -ի առ Ուրբանոս Ը. պապ (1632, օգոստոսի 19), (Կարապետ Եպս. Ամասունի, Ուկան Վրդ. Երեւանցի եւ իր ժամանակը, Վենետիկ, Ս. Ղազար, 1975),
11. Կարապետ Եպս. Ամասունի, Մովսէս Գ. Տարեւացի Կաթողիկոս Էջմիածնի, հատվածներ, Վենետիկ, Ս. Ղազար, 1992,
12. Յ. Ներսէս Վ. Ալիմեան, Մովսէս Գ. Տարեւացի Յայոց կաթողիկոսն եւ իր ժամանակը, հատվածներ, Վիեննա, 1936:

Գրական ժառանգությունը

Մովսես Տարեւացին, որ իր ամբողջ կյանքը նվիրել է քարոզական, ուսուցչական, շինարարական եւ վարչական գործունեության, չեր կարող զբաղվել նաեւ զուտ մատենագիտությամբ: Ինչպես Ներսէս Ակինյանն է նշում. «Իր գոթերն են իր աշակերտները, իր շինարարական գործերը, ամբողջ հայ կեանքի վերազարթնումն եւ հայ Եկեղեցւոյ կազմակերպումն: Զարմանալի է, որ անոր ձեռքով գորուած եւ ոչ մեկ ձեռագիր ծանօթ է հրապարակի վրայ. թեպէտ կան անոր հրամանով գորուած գրչագիրներ»:

Այդունահանդերձ կարող ենք ասել, որ նա մեծ թվով գրական ժառանգություն է թողել: Այդ շարքում, իհարկե, առաջինը «Ոդր ի մահն Սրապիոն Վարդապետի» ստեղծագործությունն է՝ գրված մասամբ արձակ եւ մասամբ չափածու: Նվիրված է Սրապիոն Վարդապետ Ուրիհայեցուն, ով 1603-ին օծվեց Էջմիածնի կաթողիկոս իիրեւ Գրիգոր ԺԳ, բայց 1606-ին հրաժարվեց ու վերադարձավ Ուրիհա, եւ նույն տարում մահացավ Ամիղում: Սրապիոնը Մովսեսի ուսուցիչն էր: Մովսեսն այդ ոդրի մեջ արտահայտում է իր զգացմունքները սիրելի ուսուցչի նահվան կապակցությամբ:

Նրա մատենագիտական ժառանգության մաս են կազմում հետեւյալ փաստաթղթերը՝ թուղթը առ Ուրբանոս Ը. թուղթը առ Վլատիսլավ թագավար, թուղթը առ Գրիգոր Կեսարացի, թուղթը առ Ալգուստինոս Բաշենց, թուղթը Երկու առ Գրիգոր Վ. Դարանաղցի, Օրինութիւն եւ Քաղուածք տօնից եւ տէրունականաց եւ ամենայն սրբոց, Կոնդակ Մաղարադայ վանքի: Ըստ Յայոյանի՝ Մովսեսը հեղինակ է նաեւ մի

գանձի ու նի տաղի:

Տարակարծություններ մի քանի դարեթևվերի հարցում

Տարակարծություններ կան Մովսես Տաթեւացու կյանքի եւ գործունեության մի քանի տարեթևվերի հարցում:

Դրանց մի մասում հստակություն նտցնելը, կարծում ենք, անհրաժեշտ է:

Նախ՝ ծննդյան թվականի մասին: Ըստ շրջանառվող առաջին վարկածի՝ ծնվել է 1577 կամ 78 թվականին: Իբրեւ հիմք կարող ենք վկայակոչել «Կարող սրբոց» գիրքը, Յայ Եկեղեցու հանրագիտարանը... Կարող ենք վկայակոչել Կարապետ Եպիսկոպոս Անտունուն, Ներսես Ակինյանին եւ այլոց:

Երկրորդ վարկած. Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի կարծիքով՝ երբ 1600թ. արելա եւ քահանա ձեռնադրվեց՝ 15 տարեկան էր, ասել է թե՝ ծնվել է 1585թ.:

Կա նաեւ Երրորդ վարկածը, ըստ որի՝ ծնվել է 1573 թվականին: Այդ վարկածի համար հիմք են ծառայում մի քանի ձեռագրեր: Օրինակ՝ «Ժողովածու» կոչվող ձեռագիրը (Վայր՝ Եջմիածին, ստացող՝ Մովսես արելա): Սույն ստացողն էլ հիմք է ընդունել N507 ձեռագրի հիշատակարանի վկայությունը: Դրա համաձայն՝ Մովսես Տաթեւացու մահը տեղի է ունեցել 1633թ. մայիսի 21-ին (Յայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ժեղադարձ հայոց հայոց համաձայն):

Մովսեսի 1633թ. մայիսի 21-ին 60 տարեկանում մահանալու մասին է վկայում «ճաշոց» կոչվող ձեռագիրը (Վերը նշված հիշատակարանի էջ 646-650), որտեղ նշված է նաեւ՝ ծնվել է 1573 թվականին:

Մահվան տարեթիվը. քիչ առաջ մատնացույց արեցինք Երկու աղյուր, որոնց համաձայն Մովսեսը մահացել է 1633թ. մայիսի 21-ին: Մյուս կողմից՝ Յայ առաքելական Եկեղեցու պաշտոնական պատմագրությունը կողմնակից է վարկածին, որի համաձայն Մովսեսը մահացել է 1632թ. մայիսի 14-ին: Ի դեպ, Յայը Աճառյանն էլ (Յայոց անձնանունների բառարան, Երեւան, 1946) մահվան տարեթիվ է հանարում 1632-ը:

Մահվան տարեթիվի Երրորդ տարրերակի հիմք է Ուրբանոս Ը պապին հղած Երկրորդ նամակը, որի տակ նշված է՝ 1632, օգոստոս 19, ինչը նշանակում է, որ այդ տարվա մայիսի 14-ին նա չէր կարող մահացած լինել: Նամակն ավարտվում է այսպիսի տողով. «Ես Մովսես կաթողիկոս գրեցի ձեռամբ իմով»: Դրանից հետո՝ նոյն տարվա օգոստոսի 30-ին, Մովսեսը նամակ է հղել Եթեա Վլադիմար թագավորին:

Մովսեսի ժամանակակիցը՝ Գրիգոր վարդապետ Կամախեցին (Դարանաղցին), իր ժամանակագրության մեջ նշում է 1633 թվականը՝ գրելով նաեւ, որ «Սույր Գրիգորի արողին նստեց չորս տարի»:

Ներսես վարդապետ Ակինյանն էլ Մովսեսի մահվան տարեթիվ է համարում 1633թ. մայիսի 21-ը՝ նշելով՝ «Մենք ստուգագոյն կը համարենք Մովսեսի մահուան տարին եւ օրը՝ 1633 մայիսի 21, այն է՝ ըստ նոր տօնմարի՝ մայիսի 31»:

Ղեւննդ Ալիշանն էլ մահվան տարեթիվ է համարում 1633թ. մայիսի 14-ը:

Յատկապետ մահվան տարեթիվ շուրջ առկա խար-

նաշփոթ տարակարծություն է առաջացրել նաեւ Մովսեսի կաթողիկոսության ժամանակի հարցում: Առաջին վարկած՝ կաթողիկոսության մեջ մնաց Երեք տարի չորս ամիս: Երկրորդ վարկած, որ առավել հավանական է, կաթողիկոսության մեջ մնաց չորս տարի չորս ամիս:

Դիացական արդահայպություններից եւ գնահարդականներից մի քանիսը

Մովսես Տաթեւացու կյանքի, գործունեության, նաեւ մարդկային նկարագրի մասին պատկերացումն ամբողջացնում են դրվատանքի, գնահատանքի անթիվ արտահայտությունները, որ հանդիպում ենք մատենագիտության մեջ:

Դեռևս կենանանության օրոք էր արժանացել «Երկրորդ լուսավորիչ հայոց» պատվանումնին: Եվ դա, կարելի է ասել, նրա գործունեության ամենաբարձր գնահատականն էր:

Դիշենք մի քանի բնութագրական արտահայտություններ եւս:

Առաքել Դավիթիծեցի

«Եվ Մովսես կաթողիկոսը Սյունյաց Երկրից, որ եղավ լուսավորիչ մեր Երկրի արեւելյան մասի համար եւ նորոգող Սուլր Եջմիածին....»:

«.... Մեծահավատ սուլր հայրապետ Մովսես կաթողիկոսը»:

«.... Յայոց ողջ ազգը՝ արեւմուտքիներ եւ արեւելքիներ, միաբանվեցին եւ Մովսես վարդապետին օծեցին Սուլր Եջմիածնի կաթողիկոս»:

Գրիգոր վարդապետ Կամախեցի (Դարանաղցի)

«.... Տիր Մովսես վարդապետն, որ եղեւ կաթողիկոս եւ վերջին լուսաւորիչ տանս թորգոնական....»:

«.... Տիր Մովսես կուսակրոն սուլր վարդապետն լուսաւորիչն արեւելեան եւ կարգաւորիչն ամենեցուն՝ Եկեղեցականա եւ աշխարհականաց, վաճաց եւ անապատականաց....»:

Երեմիա Կարծավանցի

«.... Մովսես վարդապետ քաջ րաբունին. նա լուսավորում է Յայկայան ազգս»:

Գրիշ Ղազար

«Մովսես քաջ րաբունապետ, որ լցված էր իմաստության շնորհով ու գերազանց ամեն տեսակ առաքինի գործերով» (Յայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ժեղադարձ հայոց համաձայն):

Գրիշ Եսայի սարկավագա

«.... Քաջ ուստուցիչ Մովսես վարդապետ, որ լուսավորում է Յայկայան ազգս» (Յայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ժեղադարձ հայոց համաձայն):

Դավիթ Բաղիշեցի

«.... Կրկին լուսաւորիչ ամենայն Յայոց» (Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. II, էջ 358):

Հակոբ Կառնեցի

«.... Երից երանեալ տեառն տեառն գերազանց Մովսես աստուծապատկ կաթողիկոսն ամենայն Յայոց» (Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. II, էջ 566):

Ստեփանոս քահանա գրիշ

«.... Երանելի հայրն մեր եւ պայծառ ջահն Եկեղեցւոյ սրբազն հայրապետն Յայոց մեծն Մովսես» (Յայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ժեղադարձ հայոց համաձայն):



դար, հ. Գ, էջ 648):

Մովսես աբեղա (ստացող)

«.... Սրբազն եւ երջանիկ հայրապետ Մովսես.... զոր ոչ ոք կարասց ըստ քանիօնութեան նորոյ արտավորիպել, եւ զի՞ է քեզ, կալջիր նպատակ զ Պարթեն Սահակ կամ զմեծն Ներսէս, ըստ բնության բարուցն, ըստ մաքրութեան կենացն, ըստ ուղղութեան ընթացիցն» (Յայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ժե դար, հ. Գ, էջ 5-6):

Ցոհան սարկաւագ (գրիչ, ծաղկող)

«.... Եւ աշակերտ եղ է Մովսես րարունապետի, որ եւ կոչի անյաղը փիլիսոփայ, քանզի բազում աշխատութիւն արար ի վերա իմ՝ թէ զորի եւ թէ ծաղկի.... » (Յայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ժե դար, հ. Գ, էջ 553):

Փիլիպոս կաթողիկոս

«.... Մեծ եւ սրբազն Մովսես կաթողիկոս եւ կրկին լուսաւորիչ տաճն խաւարեալ ազգին.... » (Յայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ժե դար, հ. Գ, էջ 564):

Սիմեոն Լեհացի

«Նա՝ Մովսեսը, շատ խոնարի ու հեզ էր, առաքինի, սուրբ եւ ընտիր, որ առանց ուր կանոն սաղմոսի ոչ մի օր չէր անցկացնում, ոչ մի ժամ պարապ չէր մնում, այլ ցերեկ ու գիշեր հսկում ու տքնում էր աղոթքներով՝ անձանձիր ոտնկացությամբ» (Ուղեգործություն):

Յայր Միքայել Չամչյան

«Նա՝ (Մովսես Տարեւացին) եղավ ջահը ուղիղ վարդապետության Յայր աշխարհի»:

Մաղաքիա Օրմանյան

«Նար կաթողիկոսությունը Յայ Եկեղեցու համար դարավլուս է կազմում, եւ իրող նրանով է փակվում այն աղետալի եւ Եղիկի շոջանը.... Այս կետից սկսելով կերպարանափոխ է լինում Յայոց հայրապետության վիճակը»:


Ներսես Ակինյան

«Ուներ ռազմագետի շրջահայացություն, հեռատեսություն, կորով եւ խոհականություն՝ խիզախու-

թյամբ հանդերձ: Մեծախորհուրդ էր, ատակ համախմբելու ամբոխը, կառավարելու այն եւ նպատակին խրախուսելու: Իր հաջողությունների գաղտնիքն իր անձնագորհության մեջ էր: Ոչ թե իր անձը, այլ հասարակության շահն էր փնտրում իր գործերի մեջ: Այս անձնագորհությանը խրախուսում էր հասարակությունը եւ արժարությանը նրա վստահությունը: Ոչ ոք չխնայեց իր լունան, երբ կաթողիկոսը պահանջեց այն. ընդհակառակը, հարուստ եւ աղքատ ինքնակամ դնում էին իրենց ուժերը նրա տրամադրության տակ, որովհետեւ արդյունքը իրապարակատես էր: Նրանց համագործակցությամբ սրբվեց Եջմիածնի տաճարը, կանգնեցին ավերակ Եկեղեցները, բացվեցին դպրատներ, վանքեր եւ կուսաստաններ, փրկվեցին գերիներ եւ միշիքարվեցին աղքատներ: Ազգի եւ Եկեղեցու բարորության համար չափահացավ Մովսեսը, չխնայեց անձը, կատարեց հեռավոր ճանապարհորդություններ՝ բախտելու համար բռնապետների դրները, նրանց գուրքն աղերսել Ազգի համար, ժողովրդի համար, Եկեղեցու համար: Եվ բախտն ամենուրեք նրա աճքածան ընկերը եղավ: Այսպես անշնչությունից ի շնչառություն բերեց ոչ միայն կաթողիկոսական Աթոռը, այլև Ազգը՝ հոգեպես եւ նյութապես:

Ի տես Մովսես կաթողիկոսի վաստակներին, ժամանակակիցները միաբերան նրան, իբրև շնորհակալություն, երախտամուռություն եւ գնահատանք, տվեցին «Երկրորդ Լուսավորիչ Յայոց» պատվո անունը: Եվ մենք այս հորջորջանքը չափազանցության չենք համարում: Ի՞նչ պիտի լիներ Յայոց Եկեղեցին, եթե նախախնամությունը չհարուցաներ մի Մովսես ժե (17-րդ) դարի առաջին քառորդի քառոսի մեջ: Ինձ դժվար է պատասխանել այս հարցմանը, բայց կարող եմ ասել, թե առանց Մովսեսի չպետք է ծնվեր մի Փիլիպոս: Իսկ Մովսեսն ու Փիլիպոսը երկու փողփողուն աստղերը եղան ժե (17-րդ) դարի հայ երկնակամարի վրա» (էջ 151-152):

ՍԱՍՎԵԼ ԱԼՔԵՍԱՆՅԱՆ



Նոր Զուղարք

Յայկական գաղթավայր է՝ հիմնադրված 17-րդ դարասկզբին Սպահան քաղաքի մոտ: Հիմնադրվել է Աբաս 1-ին շահի կազմակերպած բռնագաղթի արդյունքում: Սովորական կապված է Նոր Զուղարքի հետ: Այդտեղ է նրա աշակերտ Խաչատուր Զուղարքին 1638-ին հիմք դրել հայկական տպագրությանը, որ առաջինն է հրանում ու ամբողջ Միջին Արևելքում:

Յայտնի է Նոր Զուղարքի մատենադարանը՝ Ար Ամենափրկիչ վանքի տնօրինության ներքո, որի հավաքածուն սկսել է կազմվել 17-րդ դարասկզբին: Յայտնի է հայկական կերպարվեստի դպրոցը Նոր Զուղարքում, որը նույնպես սկզբնավորվել է 17-րդ դարում:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԱՀԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Հարդված Հայր Ներսես
Վ. Ակինյանի «Մովսես
Տաթէւացի» գրքից, Վիեննա,
1936թ.

ՆԵՐՍԵՍ
ԱԿԻՆՅԱՆ



Անչպես Եկեղեցականությունը կարիք ուներ բարեկարգվելու հոգեպես ու մարմնապես, նույնպես Եկեղեցին՝ բարեզարդվելու ներքուստ եւ արտաքուստ: Վերանորոգչական գործի նշակները բարակական չհամարեցին միայն Եկեղեցիների արտաքին բարելավումը, այլև հարկ համարեցին այն սրբել ու մաքրել ներքուստ: Տաճարը թալանված, կողոպտված էր իր սրբազն արդուօպարոյից, մի կողմից այնտեղ ավերմեր էր գործել ժամանակի ավերիչ ծերքը, մյուս կողմից անհավատ, բիրու ասպատակողմեռը պղծել էին նրա նվիրական խորանները, նաեւ՝ իրի ու սրի արհավիրքի տակ ահարեւկված հովվին եւ հոտին: Խարարվել էին հնավանդ կարգերը, մոռացվել էին նախնիների հոգեշշունչ երգերը, լոել էին պաշտամունքի մեծաշուրջ հանդիսականատարությունները, բեմադրվում էր այն տոհմիկ, մեծապայծառ արարողությունների սոսկ անհրապույր կմախքը, որն իր անշքության մեջ մի հեգնանք էր՝ ուղղված հնաշեն գմբերներին:

Եկեղեցիների ներքին պայծառությունը, խորհրդականատարությունների փայլը, մեղեղիների ու երգերի ներդաշն երգեցողությունը ոչ միայն աստվածային նկարագիր պիտի տային խորհուրդներին ու խորհուրդների մատակարարությանը, այլև համախմբված ունկնդիրների մեջ պետք է արթնացնեին բարեպաշտական զգացումներ՝ նրանց մտքով վերացնելու, բարձրացնելու վերին ոլորտներ՝ հոգեխառնվելու հրեշտակների հետ Ամենակալի գահի շուրջը:

Սրան հետամուտ ձեռնարկվեց կամոնավորել աղոթքի ժամերը, կազմակերպել երգեցիկ խումբ, արարողությունների պահպանան վեհություն ու լրջություն տալ խորհուրդներին ու խորհրդականատարություններին: Դարձյալ անապատը պետք է լիներ

դպրոց, ուր հավաքված էր մեծ թվով աշակերտություն: Այդ վանականների ձեռքով պետք է վերանորոգվեին հին կարգերը գյուղերում եւ քաղաքներում:

Մովսես վարդապետը, որ անցել էր Ամիդի դպրոցը, ուր Ղովկաս Կեղեցու եւ Մրապիոն Ուռհայեցու ջանքերով ծաղկում էին հին կարգերը, քաջապես հմտացել էր բոլոր հրահանգների ու սովորությունների մեջ, Պողոս Մոկացու հետ կանգնեց գործի գլուխ: Ժամանացության վերաբերյալ եղան հետեւյալ որոշումները:

Գիշերային ժամը պետք է լիովին պաշտվեր,

Յիշեսցուքը պետք է կատարվեր տերունական տոնների եղանակով. պետք է քաղվեր երկու կանոն սաղմոս, կանոնագլուխը պետք է կատարվեր ծայնով: Հոգեհանգստյան կարգը տերունական օրերին (Վիրակիներին) պետք է կատարվեր անխափան: Օրինությանը կից պետք է երգվեին քաղվածքներ շարականներից, իսկ Թագաւորքն եւ Ալելուքը՝ ծայնով: Գիշերային ժամի ավարտից հետո պետք է ընթերցվեին Հայունավուրքը եւ ընթերցմանը կից պետք է երգեին համապատասխան մի շարական կամ մի գանձ:

Առավոտյան եւ Արեւագալի ժամից հետո կարդացվում էր խրատական մի գիրք:

ճաշու ժամերը «զատ եւ առանձին էին ասուն իրարից յուրաքանչյուր նշանակված ժամին» (1):

ճաշու ժամից հետո բարձրանում էին Պատարագ կատարելու. «Պատարագի արարողությունը մատուցում էին դպիրներով ու սարկավագներով, յուրաքանչյուրն իր համար նշանակված զգեստներով»:

Դավրիմեցու հայտնած այս մանրամասնություններից ինացվում է, որ Արեւելյան Հայաստանուն թուլացել էին ժամասացության այս կարգերը, այս պատճառով էլ հարկ է համարվել մասնավոր իրա-

հանգմերով վերահաստատել դրամք: Դավրիժեցին ավելացնում է, թե՝ «սրանք են նրանց հայտնի կարգն ու սահմանումները, որ վերոհիշյալ վարդապետները երկու մարդկանցով սահմանեցին» (2). այսինքն՝ մատնացոյց անելով Մովսես ու Պողոս վարդապետներին՝ Սարգիս Եախսկոպոսն ու Կիրակոսը պարտադիր դարձրին իրենց միաբանների համար (նրանց օրինադրած սահմանումները):

Որ Մովսես վարդապետը մեծ մասնակցություն է ունեցել այս բարեկարգական որոշումներում, ակներեւորեն երեւում է Եջմիածնի թիվ 2413 ձեռագրից (3), ուր գտնում ենք (էջ 846-870) «Օրինութիւնը եւ քաղլուածք տօնից եւ տերունականաց եւ ամենայն սրբոց, զոր սահմանեաց սուրբ հայրապետն Մովսես ի փառս Աստուծոյ» խորագրով բնագիր: Այս գրվածքը համարում մի ցուցակ է օրինությունների եւ նրանց կից երգվելիք քաղվածքների. սկզբն է. «Գկ. Երգեցք որդիք Սիոնի: [Քաղ. ։] Եակից Յոր եւ Յոգևոյն...»: Այս բնագիրն ուրիշ ձեռագրեր վերագրում են Ղուկաս Կեղեցուն. այսպէս. Զննաորի թիվ 118թ. 149ա. «Խորատը եւ կարգ շարական քաղելոյ՝ Ղուկաս վարդապետի Կեղեցոյց»: Սա ձեռագրերում հանդիպում է նաև անանուն (հմտ. Երեւան, Պետ. Թանգարանի թիվ 821 եւ 864 ձեռագրերը):

Անտարակուս Մովսեսը չէր Օրինություններին կից քաղվածքներ երգելու սովորության սկզբնավորողը, այլ դա ժառանգել էր Ամինի դպրոցից ու բերել հաստատել Հայաստանում եւ այնտեղ ընդունելի դարձել իր ճոխությամբ: Սրա հետ կապված մի գեղեցիկ վկայություն ունենք Մովսեսի աշակերտից՝ Խաչատուր վարդապետ Կեսարացուց, որն իր 1642 թվականին Նոր Զուլայայում հրատարակած ժամագրում (էջ 700-701) գրում է.

«Իմացեք, ով տոնասերներ, որ մեծ եւ երանելի տեր Մովսես հայրապետի [նասին], ով նորոգեց Սուլը Եջմիածինը, որի առաջինասեր վարքի ու Եկեղեցու կարգերի, կրոնի հաստատության (ուղղությամբ) ունեցած քաղնաջան վաստակների արժանի գովասնությունը թողում եմ, որ ուրիշն ասի, բավական են համարում առաջիկա ամփոփ խոսքը. Սա ինքը, Վերոհիշյալ մեր սուրբ հայրը սահմանեց տասն շարական ասել օրինություն տասն թվի բազում խորհուրդների պատճառով: Նաև վկայակոչելով մեծ փիլիսոփա ու հավատարիմ քահանայապետ սուրբ Ստեփանոսին (4), որ Ավագ օրինությունների համար տասական շարական հորինեց եւ ոչ ավելի կամ պակաս, ըստ բանական (Էակների) տասն դասերի, նմանապես եւ այս սուրբ հայրը օրինության տասն շարական կանոնակարգեց ի փառս Քրիստոսի ու նրա սուրբերի: Եթե հոժարի ձեր եղբայրության կամքը՝ (դրանք պատշաճ են) Տիրոջ գոհության համար, բայց եթե չախորժի՝ կամքը թող ձերը լինի: Իսկ մեզ, աղաջում եմ, ազատ թողնել մեղադրանքներից ու բամբասանքներից» (5):

Այս եւ նման վերանորոգումները, որոնցով Մովսեսը բարեգարդեց Եկեղեցին, հետապնդում էին մի ծածուկ նպատակ՝ Աստծո տաճարը գրավիչ դարձնել ժողովորի համար, նրան հրապուրել խուռն ընթացքով ներկա գտնվելու ժիսակատարություններին. արարողությունների ներդաշն ընթացքը պետք է ներկաներին համակեր բարեպաշտ զգացումներով ու կրթեր նրանց սրտերը պաշտամունքի խնկարույր

ազդեցության տակ:

Ինչպես ժամանակակիցների ակնարկներն են Ենթադրել տալիս, Մովսեսն օժտված էր հնչուն եւ հաճելի ձայնով, իր շարժուձեւի, կազմվածքի մեջ կային վսեմ ու վայելուց գօթը: Իր դեգերումները Ամիդում, Կ. Պոլսում, Երուսաղեմում արթի էին տվել նրան շատ անգամներ հանդիսատեսը լինելու այդ պատրիարքանիստ քաղաքներում կատարված մեծաշուրջ ծիսակատարությունների: Դրանք տպավորություն էին թողել նրա հոգու խորքում, որոնք հետո, երբ հրապարակ եկավ որպես վարդապետ, Եախսկոպոս եւ կաթողիկոս, խոսեցին իր մեջ: Այս է պատճառը, որ Մովսեսի Ժիսակատարությունները պատկառազդեցիկ էին եւ ունակ սուրբ հմայքով դյութելու մերձավորներին ու հեռավորներին:

Քիշատակության արժանի է Մելքիսեդեկ կաթողիկոսի շահափիտական խորհուրդը՝ Սյուռոնօրինեթքը Մովսես վարդապետին կատարել տալու վերաբերյալ՝ այն համոզումով, թե նրա Ժիսակատարությունը մեծ քաղմություն պիտի հավաքի Եջմիածնում, ու սրանով մի պատկառելի գումար պիտի գոյանա ի նպաստ հայրապետական գանձարանի: Եվ ի հիրավի, Մյուռոնօրինեթքի հանդեսն այնքան գոհացրեց հանդիսականներին, որ նրանք հիացմունքով խոսեցին նաև հեռուներում օրվա տպավորությունների մասին (6):

Դարձայլ Ֆահրապատում, երբ Շահ Արասի ներկայությամբ Մովսեսը կատարեց Զրոհնայաց հանդեսը, ինչպես գրում է Դավրիժեցին (էջ 234). «Տեսնելով զարդերի գեղեցիկ ներդաշնությունը, սպասավորների կարգավոր շարժումն ու կեցվածքը՝ արքան խիստ հոժարել, հավանել ու հիացել էր Մովսեսի վրա» (7):

Ծանոթագրություններ

1. [Մեն Ալաքել Դավրիժեցի Պատմություն, աշխ. թրգմ. էջ 204-205]:
2. [Ճանդ, էջ 205]:
3. [Սա Մաշտոցի անվ. Մատենադարանի ձեռագիրն է]:
4. [Նկատի ունի Ը դարի մեծամուն մատենագիր Ստեփանոս Սյունեցուն /+735/, ով հեղինակելի է քազում երկեր, կատարել թարգմանություններ: Նրա՝ Ավագ օրինության շարականների հորինման վերաբերյալ տեղեկություն է հաղորդում Ստեփանոս Օրբեյանը. տեսն Սյունիքի պատմություն, թրգ. Ներած. եւ ծամոթ. Ա. Ա. Արքահամյանի, Երեւան, 1986, էջ 152, նաև՝ Ա. Արեյյան, Յայոց հին գրականության պատմություն, գիրը Ա. Երեւան, 1944, էջ 486 և. Պայան, Աստվածաշնչական արտացոլումներ Ստեփանոս Սյունեցու Յարության Ավագ Օրինություններում, «Էջմիածին», 2000, 2, էջ 48-56]:
5. [Քիշատակարանն ամրողապես տեսն Ն. Ուկանյան, Ք. Կորկոտյան, Ա. Ասպալանյան, Յայ գիրը 1512-1800 թր., Յայ հնատիպ գրքի մատենագիտություն, Երեւան, 1988, էջ 27]:
6. [Մեն Դավրիժեցի, Պատմություն, աշխ. թրգմ. էջ 234-235]:
7. [Մեն Դավրիժեցի, Պատմություն, աշխ. թրգմ. էջ 239/սարբեր թրգմ. և]

Արեւելահայերների վերածեց, ծանոթագրեց
ՀԱԿՈԲ ՔՅՈՍԵՅԱՆ

Պատվերը՝ «Սյունյաց Երկիր» թերթի

ԷԶՍԻԱԾՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՐԱԲԵՐՈւԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՌԱՄԱՐԻ, ԳԱՆՉԱՍԱՐԻ ՈՒ ՍՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԻ ԵԼ ԱՅԼ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Հարված Հայր Ներսէս Վ. Ակինյանի «Մովսէս Տաթեւացի» գրքից, Վիեննա, 1936թ.

 ովսէս կաթողիկոսի նշանաբանն էր՝ «Եկեղեցիների համերաշխություն հավատի ու սիրո միհության մեջ», ինչը կարելի էր տեսնել իր գործունեության մեջ:

Բնականաբար եկեղեցիների այս համերաշխությունը կարեւոր էր ամենից առաջ վերահաստատել արյունակից ու միավեցու հայ ժողովորի մեջ: Եկեղեցին մեկ էր, սակայն այնտեղ տիրում էր երկպառակությունը տարբեր հովվապետների պատճառով, որոնք չին ընդունում գերազահություն, որով խոչընդոտներ էին դառնում ազգային, եկեղեցական սուրբ միության մեկ գերագույն հովվապետի գերազահության համար:

Կային ոչ միայն հինավորց կաթողիկոսարաններ, որոնք պարծենում էին իրենց հնօրյա ազատություններով եւ ինքնիշխան թեմերով, որոնց սահմանը ձգտում էին օրժանքորեն ընդարձակել, այլև դեռ կային կաթողիկոսակիցներ, որպիսիք էին Դավիթը եւ Սահակը: Դավիթը, որ խորին ծերության մեջ, ապրում էր առանձնացած ֆռնգիկան գյուղում ու գտնվում էր Նոր-ջուլայեցիների ազդեցության տակ, ովքեր Մովսէսի պաշտպաններն էին, պատճառ չուներ խոչընդոտելու Մովսէսին:

Սակայն դժվար եղավ լրեցնել իր փառափրության մեջ վիրավորված Սահակ կաթողիկոսին, որ փախուստի մեջ գտնվելով Օսմանյան հողում՝ Վասպուրականում, ջանք էր թափում արժեցնել իր իրավունքները գոնե Օսմանյան տիրապետության տակ գտնվող այն ազգակիցների վրա, ովքեր դուրս էին Սսի եւ Աղթամարի թեմերից ու պատկանում էին Եջմիածնի թեմին: Ինչպես վերը տեսանք, այս շատ վլտանգավոր զարգացումները կանխելու նպատակով Մովսէսը ոչինչ չխնայեց՝ սիրով ու խաղաղությամբ հորդորելու իր հակառակորդին՝ ընթանալու զիջողությամբ: Թեպետ շատ ցավալի եղավ Սահակի պարտությունը, սակայն դրանով խափանվեց Եջմիածնի թեմի երկփեղկումը (1):

Աղթամար. Մովսէս կաթողիկոսի նվիրակ Փիլիպոսը, որ 1629 թվականին շրջում էր Վասպուրականում, ըստ երեւութին կաթողիկոսից մասնավոր հանճնարարություն ուներ ոչ միայն բանակցելու Սահակ կաթողիկոսի հետ, այլև բանակցության մեջ

մտնելու Աղթամարի Ստեփանոս կաթողիկոսի (1616-1654) հետ՝ խաղաղության ճանապարհով վերացնելու երկար տարիների վեճը, որ բորբոքված էր Եջմիածնի եւ Աղթամարի միջեւ մասնավորաբար բենական հողերի շուրջը:

Վեճը ստացավ իր լուծումը: Աղթամարը ճանաչեց Եջմիածնի Արոնի գերազահությունը, իսկ Եջմիածնն ընդառաջեց, որ Աղթամարի Արոնը շարունակի կրել իր կաթողիկոսական պատվանունն իրեն պատկանող թեմում, որի սահմանները ճշտվեցին: Այս մասին մեր միակ աղբյուրն է Նիկողայոս գրչի հիշատակարանը՝ 1632 թվականին ընդորինակված մի Մաշտոցի վերջում. «Դայոց ՈՉԱ թվականին... Դայոց հայրապետության Եջմիածնի տեր Մովսէսի... եւ մեր Աղթամարի տեր Ստեփանոսի, որ վերացրեց անհնազանդության կնճիռը ու եղավ իլու եւ հնազանդ լուսապատկեր եւ գրիգորաշեն սուրբ Եջմիածնին, եւ իր գլխի վրա, իր փոքրիկ հոտի մեջ ընդունեց Լուսավորչի օրինությունը, որի հիշատակը թող օրինությամբ լինի, եւ սուրբ Լուսավորչի աղոքքներով նորահնազանդ որդեգրության թող ողորմա Քրիստոս Աստված մեր» (2):

Դավանաբար այս մասին է ակնարկում Սսի Սիմեոն կաթողիկոսը Փիլիպոս կաթողիկոսին հղած նամակում. «Դուք ինչո՞ւ հափշտակեցիք Աղվամից տունը, որի մասին գրել էիք Ձեր նամակում, թե սուրբ Լուսավորչի կողմից կարգված ինքնուրույն արոռ է: Նույնաես եւ Աղթամարը ծեր իշխանության տակ առաք, որ 526 տարի է, որ ինքնուրույն կաթողիկոսներ են, թեպետ գրքերը պարսավում են: Տես, ե՞ս եղա, որ «տանը տուն են կցում» (Եսայի Ե 8), թե՞ դու՝ «ուտելով այրիմների տմերը...» (Մարկ. ԺԲ 40) (3):

Աղվանք. Սիմեոն կաթողիկոսի հիշյալ տողերից տեսնվում է, թե Մովսէսը նաև Աղվանքի հետ էր մշակել բարեկամական հարաբերություններ, որոնց աստուղը պետք է քաղեր Փիլիպոս կաթողիկոսը (4):

Սիս. Պետք է ենթադրել, թե Մովսէս կաթողիկոսը սիրով տոգորված է եղել նաև Սսի Արոնի նկատմամբ: Այս մասին մեզ ամհայտ է ժամանակակից սկզբանդրյուր: Տվյալ տեսակետից ուշադրության արժանի է Գրիգոր Դարանացու հետեւյալ հատվածը (Եջ355), ուր ասվում է, թե Սսի Մինաս կաթողիկոսը (+ 1632) «ուխտի նպատակով կամեցավ գնալ Եջմիածնին եւ

տեսնել Մովսես կաթողիկոսին՝ արեւելքի երկրորդ լուսավորչին եւ բոլոր անապատավոր մենակյացներին, որովհետեւ սիրող էր այնպիսի վարքի ու կարգավորության, ու գնաց միջնեւ կարին... եւ զգիտեմ, թե ինչ սադուցին չարը սիրողները, բարու հակառակորդները, ու փոշմանեցրին եւ այնտեղից ետ դարձին»:

Մինաս կաթողիկոսի այս դրական տրամադրությունը ենթադրել է տալիս, թե Մովսես եւ Մինաս կաթողիկոսների մեջ կանխապես փոխանակված են եղել սիրո նամակներ: Մովսեսի ջանքերի հետեւանքը պետք է համարել 1638-ին Երուսաղեմում կայացած համաձայնությունը, որի մասին գրում է Սավալանյանը («Պատմութիւն Երուսաղեմի», Ա, էջ 287-288). «Այս տարի Երուսաղեմ է գալիս Սսի Մինեն կաթողիկոսը՝ իր հետ ունենալով Ներսես Վարդապետին եւ ուրիշ Եկեղեցականների: Եվ որովհետեւ նախկին կաթողիկոսների օրերից սկսած գժուություն կար էջմիածնի ու Սսի կաթողիկոսների միջեւ ձեռնադրությունների պատճառով, որ կատարում էին երկու հայրապետները՝ հակառակ իրենց իրավասության տակ եղած թեմերի կանոնների՝ Գրիգոր պատրիարքը հորդորում է Վերացնել ատելության պատճառները, որոնց հետեւանքով Եկեղեցին մատնվում էր շատ անկարգությունների: Ուստի բոլոր ներկա Եկեղեցականներն ու Երեւելի աշխարհականները ժողով են գումարում: Միմեռն իր ձեռագրով խոստանում է իր Վիճակին չպատկանող Եպիսկոպոսներ ու քահանաներ չձեռնադրել այլեւս, նույնպես ասում է Էջմիածնի կաթողիկոսը՝ իր Վիճակից դուրս որեւէ մեկին չձեռնադրել: Եթե իր Եկեղեցականներից մեկը մեր Վիճակ գալու լինի՝ թող հյուրասիրությամբ մեծարվի, ու թույլատրվի կամավոր նվերներ հավաքել, նմանապես՝ եթե յուրայիններն էջմիածնի Վիճակ գնամ՝ թող նույն

սիրով եւ նույն պատվով ընդունվեն: Իսկ ինչ վերաբերում է Եկեղեցական արարողություններին՝ երկու արուներից ոչ մեկը թող չհամարձակվի ընդունված կարգից դուրս փոփոխություններ նշցնել դրանց մեջ»:

Կ. Պոլիս. Մովսեսը կաթողիկոս ընտրվելուց հետո եւս շարունակեց նամակցել Գրիգոր Կեսարացու հետ, ով մեծ հեղինակություն էր վայելում Արեւմուտքում, նաեւ՝ պատրիարքական արություն զրկվելուց հետո: Այդ ժամանակ պատրիարքական արություն վրա էր Զաքարիա Վանեցին (1626-1633): Սա հենց սկզբից պաշտպանեց Սահակ կաթողիկոսի ծայրահեղ ընթացքը. թե նրա ձախողելուց հետո ինչ դիրք որդեգրեց Մովսես կաթողիկոսի նկատմամբ, ով աշակերտն էր Զաքարիայի հակառակորդ Գրիգոր Կեսարացու, հայտնի չէ, բայց ինչպես պարզվում է, Եկեղեցական միության վերաբերյալ Մովսես կաթողիկոսի ու Զաքարիայի տեսակետները, որոնք զայրացնում էին Գրիգոր Կեսարացուն, պետք է ներդաշնակեն իրար:

Ծանոթագրություններ

1. [Սահակի անփառումակ գործունեության վախճանի մասին տես՝ Օրմանյան, Ազգապատում, Բ, էջ 2781-2782]:
2. [Տես՝ Յայերեն ձեռագրերի մէջ դարի հիշատակարաններ (1621-1640թթ.), ԽԱ. Բ, էջ 494]:
3. «Արարատ» 1904, էջ 381 հմմտ. իմ «Գավազանագիրը կաթողիկոսաց Աղթամարայ, [Վիեննա, 1920], էջ 29:
4. Հմմտ. [Միմէօն Երեւանցի], Զամբռ, [Էջմիածին, 1873], էջ 79:

**Արեւելահայերենի վերածեց, ծանոթագրեց ՀԱԿՈՔ ՔՅՈՍԵՅՅԱՆԸ
Պատվիրատու՝ «Սյունյաց Երկիր» թերթ**



ՄԱՂԱՐԴԱ ՍՈԼՐԲ ՆԱԽԱՎԿԱ ՎԱՆՔԻ ԿՈՆԴԱՎԿԸ

Յարված Յայր Ներսես
Վ. Ակինյանի «Մովսես
Տաթեւացի» գրքից, Վիեննա,
1936թ.

∅ ովսես կաթողիկոսը, որ ամեն ջանք գործադրություն էր հաստատելու Յայաստանյաց Եկեղեցու հիմ կարգերը ու պայքարում էր եղծումների դեմ, չէր կարող անուշադրության մատնել թեմերի կազմակերպման գործն ու բարեկարգությունը: Այս նապատակին հետամուտ կարեւոր թեմերի համար ընտրում էր իր ձեռքի տակ քրծված առաջնորդներ: Որտեղ խոհեմությունը թույլ չէր տալիս նոր փոփոխություններ կատարել, հրահանգներ էր գրում տեղական առաջնորդներին ու պահանջում էր, որպեսզի ճշտորեն իրականացնեն:

Այսօրինակ հրահանգական կոնդակների թիվը պետք է որ մեծ լիներ: Բայց դրանցից մեզ հասել է միայն մեկը՝ ուղղված Մալարդա Սուրբ Նախավկա վանքին: Ինչպես Երեւում է, մի վեճ է եղել Նախավկա վանքի առաջնորդի ու ժողովրդի միջեւ՝ մասնավորաբար թեմի սահմանների տարածությամ, առաջնորդի ու ժողովրդի փոխհարաբերության վերաբերյալ: Այս խնդրով զբաղվել էր նաեւ Մելքիսեդեկ կաթողիկոսը. աչքի առցել ունեմ նրա մի կոնդակի սկզբնագիրը՝ շարադրված 1614թ. ապրիլի 28-ին, ուր օրինություն-

Եից հետո կաթողիկոսը գրում է. «Սուրբ եւ հռչակավոր, անվանի եւ ականավոր վանքին՝ Նախավկային ու սահմանված թեմին, ու բովանդակ վիճակին, (որ ընդգրկում է) Զուղան եւ իր վանքը, Աստապատոր եւ իր վանքը, Շամբը եւ իր վանքը, Արարքը եւ Զաղացը ու իրենց վանքը, Մահլազամն ու Ղուրովսանը, Կրերեցը, եւ ամենայն թեմն ու վիճակն ամբողջապես», որի մեջ հայտարարում էր. «Ի գիտություն բոլորիդ... Մահարդավանքի Սուրբ Ստեփանոս Նախավկայի, Զուղայի, Աստապատի, Շամբի ծորի, Մահլազամի, Ղուրովսի ամբողջ ժողովրդին, տեսանք առաջին հայրապետերի հաստատած խոսքը, ու մենք Վերստին հաստատեցինք: Օրենքով սահմանված բովանդակ հասույթը եւ իրավունքը անթերի տվեք Պետրոս արքեպիսկոպոսի ծեռքը, որ (Վերաբերում է) մահվանն ու կյանքին, տերունական ու սրբոց տոռերին, կենդանիների մատաղին ու հանկարծամահ (Կենդանիներին), ննջեցյալների կողոպուտին, երդումը դրժողներին, քահանայական տների հասույթին ու նրանց ամեն տեսակ իրավունքին: Եվ մեկը թող մեկը չհանդին ծածկել այդ ամենը եւ կամ հակառակվել մեր բարձր հրամանին եւ այլն: «Կոնդակս գրվեց ՈԿԳ (1614)-ի ապրիլի 28-ին ծեռամբ մեղապարտ Սարգիս Երեցի ծեռքով Երեւան քաղաքում, տեր տեր Մելքիսեդ Ամենայն Հայոց կաթողիկոսի հրամանով» (1):

Ըստ Երեւույթին նոյն վեճը դեռ շարունակվում էր: Այժմ Մովսես կաթողիկոսը փորձում է վերջ տալ այդ վեճին: Մովսեսի տողերից հայտնի չէ, թե արդյոք Պետրոս եախսկոպ նն է Նախավկա վանքի առաջնորդը, սակայն զգացվում է, թե Մովսեսն ուրիշ անգամ էլ շոշափել է այս խնդիրը:

Կոնդակը գրված է 1631 թվականի նոյեմբերի 11-ին, սկզբնագիրը, որը պահպում է Վիեննայի Մշիքայան Սատենադարանի թիվ 694 ծեռագիր ժողովածուի մեջ, դժբախտաբար շատ մաշված վիճակում է մեզ հասել, տեղ-տեղ անընթեռնելի բառեր կամ, նաև տողեր, որոնք խաճագրում են հասկանալ կոնդակի որոշումների ճշգրիտ իմաստը: Ամբողջ հրատարակում եմ՝ հավատարիմ մնալով բնագրին:

Սկզբում դրված է կաթողիկոսի մեծ կնիքը՝ այսպիսի վերտառությամբ (որդան հնարավոր եղավ վերծանել):

<Տեր Մովսես Կաթողիկոս Ամենայն Հայոց եւ Պատրիարք Վաղարշապատի Սուրբ Աթոռ<ի. ՈՐԵԲ>

Հիսուս Քրիստոսի ծառա Մովսես վարդապետ Ստաբե (Տաթեւ) վիճակի/:

Հիսուս Քրիստոսի ծառա Մովսես կաթողիկոս, Էջմիածնի Սուրբ Աթոռի ծառա, որից ժամանելով թող այս օրինության գիրն ու պահպանության նամակը, առաքելական շնորհըն ու աստվածային օրինությունը համանի աստվածախնամ սուրբ Նախավկայի վանքին պատկանող վիճակին՝ մանավանդ Զուղայի եւ Աստապատի քահանաներին, իշխանավորներին եւ առհասարակ բովանդակ ժողովրդին, մեծերին ու փոքրերին, տղամարդկանց ու կանաց, ծերերին ու մանուկներին, երիտասարդներին ու կույսերին եւ բոլոր չափուհասակի հավատացյալներին ի Տեր: Շնորհը ծեզ եւ մեր Հայոց Աստծու եւ ամենակալ Տեր Հիսուս Քրիստոսի ու կենարար, առատածավալ, պարգևաբաշխ, շնորհապարգեւ, ամենազոր ու մար-

դասեր Սուրբ Յոգու խաղաղությունը ծեզ հետ. ամեն:

Յոր օրինությունը, Որդու պահպանությունը, ամենասուրբ Յոգու նախախնամությունը միշտ ու տեւապես թող լինի ծեզ վրա, եւ ամեն օր թող ծեզ լցնի փառքով, պատվով, եւ արդյունաշատ ճոխությամբ խաղողի որի ու սաղարթախիտ ոստերի նման պտղալից այգի լիներ (Սուրբ) Յոգու վտակների հոսանքի մոտ՝ հարատեւել ծեզ խաղաղ կյանքի ու պարագաների մեջ մինչեւ խորին ծերություն:

Եվ օրինության հետ ինացեք, սիրելիներ, որ դուք Սուրբ Նախավկա վանքի սեփական թեմն ու վիճակն եք՝ հենց սկզբից սահմանված ու հաստատված մինչեւ օրս: Եվ Սուրբ Նախավկայի առաջնորդն իրավասու է շրջել ամեն տեղ:// (2) մեզ պատշաճ չէ քանդել սուրբ հայրերի ցանկապատնեշը, կամ նրանց սահմանած վիճակը վերցնել եւ տալ (այլ օտարների՝) մարդահաճության կամ կողմնապահության պատճառվով, ինչն ընդդեմ է նախնիների օրենքին եւ կանոններին, ինչպես դուք եք կարծում՝ Զուղայի եւ Աստապատի կողմից. այդպես չէ. այլ թույլ տվեք մի որոշ ժամանակով, որ նրանք գնան անվայելուց ընթացքով, անմիաբանությամբ, որպեսզի, թերեւս հասնեն արդարության: Եվ ինչ առաջնորդ էլ որ հաստատվի սուրբ Նախավկայի համար, նրանց հասույթը եւ իրավունքը պետք է տրվի նրան: Եվ օրենքի ու կանոնի հետ կապված ինչ հարց էլ որ բարձրանա՝ թե՛ հասույթի, թե՛ ոչ հասույթի, թե՛ ողջերի, թե՛ ննջեցյալների. ամեն ինչի վերաբերյալ նրանից պետք է իմանաք, որովհետեւ ծեր հաստատուն արողը սուրբ Նախավկան է ու ծեր իսկական առաջնորդը ու տեղի նստողը նա ե/// (3) այս խոսքը լուսները, իսկ ով հակառակվի եւ ընդդեմ լինի սրան՝ թե՛ քահանաներից, թե՛ աշխարհականներից՝ թող հոգով ու մարմնով անեօքի ու կապանքների մեջ լինեն, իսկ ովքեր հնազանդ ու լսող լինեն խոսքիս ու կամարաները նախնի սուրբ հայրերի ավանդությունների՝ կորինվեն Աստծուց ու նրա բոլոր սուրբերից եւ մեր կողմից:

Այսուհետեւ դարձալ՝ ինչ կանոնական հասույթ եւ իրավունք, որ հաստատված է սուրբ Սահակից եւ այլ սուրբ հայրապետներից, մի՛ պակսեցնենք, այլ զգարք սիրով եւ լի սրտով տվեք ծեր վանքին՝ սուրբ Նախավկային՝ թե՛ մատաղ, թե՛ պտուղ, թե՛ հոգերածին եւ այլ կանոնական ընծամեր՝ նվիրեք աննվազ եւ անթերի սուրբ Նախավկայի դռանը, որովհետեւ մեզ համար սովորություն չէ, որ սուրբ հայրապետների կոնդակով ու վկայական գրով հաստատված թեմը հանել վանքից: Այս պատճառով էլ դուք ծեր հասույթը ու իրավունքն անպակաս վանքին տվեք:

Մեր հրամանի կատարողներդ օրինվեք Աստծուց, բոլոր սուրբերից եւ մեզմից. ամեն: Հայր մեր, որ երկնում ես:


Օրինության այս թուղթը գրվեց Հայոց Ռ եւ Զ (1631) թվականին Նոյեմբեր ամսի ԺՄ/11/ եւ Նավասարդի ԽԸ/28/ ի փաս մեր Հիսուս Աստծու. Ամեն:

Ծանոթագրություններ

1. Զեռագիր Վիեննայի, Թիվ 694:
2. մեկ բառ ամրենենելի
3. մեկ տող անընթեռնելի

**Արեւելահայերների վերածեց, ծանոթագրեց
ՀԱԿՈԲ ՔՅՈՍԵՅԱՆԸ
Պատվիրատու՝ «Սյունյաց Երկիր» թերթ**

**ՄԵՐԱԳՈՐԾՎԱԾ՝
ՇԱՏԻ ՍՈՎԱԵՍ ՏԱՐԵՆԻԱՑՈՒ ԻՆԻՉՈՎ**



**Սուլբ Աստվածածին
Եկեղեցին՝ Պոլսո կամ
Թուրքիայի Հայոց
պատրիարքության
կենտրոն**

Գտնվում է Ստամբուլ քաղաքում: Յիմնադրվել է օսմանցի թուրքերի կողմից Կոստանդնուպոլիսի գրավումից քիչ անց՝ 1461թ., Սովորան Մեհմեդ Բ-ի նախաձեռնությամբ:

Հայ Եկեղեցական համայնքը Կ. Պոլսում իիմնադրվել է 572 թվականին: 1543 թվականից՝ Աստվածատուր Ա-ից սկսած, կիրառվում է Հայոց պատրիարք տիտղոսը: 1900-ականների սկզբին պատրիարքությունն ունեցել է 1181 Եկեղեցի և 132 վանք: 1915-ի Մեծ եղեռնից հետո պատրիարքությունը կորցրեց իր նախկին նշանակությունը:

Ներկայումս այն Թուրքիայի հայ համայնքի հոգեւոր

ներկայացուցչությունն է եւ Ենթարկվում

է Ամենայն հայոց կաթողիկոսին:

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԶԵՌՆԱՐԿ

Հարված Կարապետ Եպս. Ամազունու
«Մովսէս Գ. Տաթեւացի կաթողիկոս
Էջմիածնի» գրքից, Վենեդիկ-Ս. Ղազար,
1992

1573 թ. Լուսիտանացի Օգոստինայի ճամանական կաթոլիկոսը հաստատվել է ին Յնդիաստանի պարտութայան գաղթավայր Կուա քաղաքում: Նրանցից Յ. Մինոն դե Մորաես գնում է Յուրմուզ կղզի քրիստոնեություն քարոզելու, եւ ասվում է, թե 1601 թվականին կարողացել է մկրտել մոտ 300 հոգու: Խուրապանդա շահը թույլատու աչքով էր վերաբերվում իր սահմանների վրա գործող արեւմտյան քարոզիչներին՝ իր գլխավոր քշնանու՝ թուրքի մեջքից քրիստոնյա պետությունների բարեկամությունը վայելելու հաշվարկով:

Երբ նրա հաջորդը՝ Շահ Աբաս Մեծը, բռնագաղթի քաղաքականությամբ Արեւելահայաստանից մեծ զանգվաճներ տեղափոխելով ժե դարասկզբին Սպահանի դիմաց հիմնում է Նոր Ջուղան, Խսպանիայի թագավոր Փիլիպպոս Գ-ն/ 1598-1621թթ. / 1601 թվականին նրան գրում է՝ Պարսկաստանի դրաները բացել առեւտրի ու արեւմտյան քարոզիչների համար: Խսկ հաջորդ տարի՝ 1602 թվականին, որպես իր պատգամավորներ երեք օգոստինյան կրոնավորներ է ուղարկում: Շահ Աբասը նրանց հետ պատերազմի եւ առեւտրի մասին խոսելուց բացի, արտոնում է, որ նրանք կարողանան Սպահանում ունենալ վաճք եւ եկեղեցի՝ նվիրելով նաեւ 2000 սկուլ: Յանում իրենց աղքատության ուխտի՝ նրանք հրաժարվում են դրամական նվեր ընդունել, սակայն Սպահանի Յումենին թաղում հող են վերցնում, ուրի 1603 թվականին իրենց բնակության համար տուն են կառուցում, հարակից մատուռ:

Շահը 1605 թվականին Փիլիպպոս Գ թագավորին հղած նամակում իր համակրանքն ու գոհունակությունն է հայտնում օգոստինյան կրոնավորների ներկայության համար, մանավաճոր պարուկագետ հայր Անտոն դե Գունեա-ի անձի նկատմամբ: Այսպես նա իր հեռատես քաղաքականությամբ նտադրվում է իր քաղաքական նպատակներին ծառայեցնել Արեւմուտքի քրիստոնյա պետություններից եկող քարոզիչներին (32):

Այնուհետև հետզետես Արեւմուտքի Սպահան են հասնում այլեւայլ կրոնավորական միաբանությունների քարոզիչներ, այս անգամ արդեն առաքված Յոռոմից: Այսպես, 1604թ. գալիս են կարմելյան կրոնավորները, 1628 թվին Ս. Փրանկիսկոսի կարգից Վեդարավորները/ Կաֆուչին/, ապա 1653-ին՝ Յիսու-

սյաններ [ճիզվիտներ], որոնք բոլորն էլ Սպահանում բացում են վաճառտներ եւ առաքելական կայաններ: Վերջիններն [այդպիսի կառույցներ] ստեղծում են միայն Նոր Ջուղայում: Այսուհետեւ, վերջում, 1677 թվականին գալիս են Եվրոպացի դոմինիկյանները:

Այսպիսով Արեւմուտքի լատին քարոզիչների ներկայության տեսակետից Սպահանը եւ չի մնում օնմանյան մայրաքաղաք Կ. Պոլսից: Նոր Ջուղայի հայ վաճառականները շփման մեջ են մտնում նորեկ լատին քարոզիչների հետ: Յայազգի վաճառականները, ինչպես Օսմանյան հողերի վրա, պարսից երկուում նմանապես, այդ տերությանը հպատակ լիմելով, իրենց կենցաղով, տարազով, լեզվով՝ տեղացի ժողովոյ նման, առեւտրի նպատակով ներկա Պարսից ծոցի եւ արեւմտյան Յնդկաստանի շուկաներում/ որոնք Խսպանիայի ու Պորտուգալիայի ձեռքում էն/, Վայելում էն Արեւմուտքի կողմից նյուու ոչ քրիստոնյաներին վերապահված հավասար վերաբերնումք:

Լատին քարոզիչների հետ հարաբերությունների կապակցությամբ Սպահանի հայերի համար հրատապ է դառնում Յոռոմի եկեղեցու հետ Յայատանյայց եկեղեցու միաբանության հարցը: Յայ եկեղեցականները չեն կարող անտարբեր մնալ այս շարժման նկատմամբ, մանավանդ որ եկեղեցու նյութական պետքերը հոգում էն տեղի հայ մեծահարուստները: Զուղայեցի վաճառականներն իրենց առեւտրական ցանցով ներկա էն թէ Արեւելքի եւ թէ Արեւմուտքի շուկաների վրա, մեծ գումարներ ի պահ դրած լիմելով Արեւմուտքի դրամատներում, տեւական շփման մեջ էն նրանց առեւտրականների հետ, եւ «հերձվածող» որակումը, ինչը տրված էր նրանց ճիշտ այն պատճառով, որ եկեղեցին, որին պատկանում էն նրան, հաղորդակցության մեջ չէր Յոռոմի հետ, թէ Վիրավորում էր նրանց եւ թէ գրկում նրանց Արեւմուտքի քրիստոնյաներին վերապահված արտոնություններից:

Յայր Յովհաննես Թադեոս di S. Eliseo-ն՝ Պարսկաստանի կարմելյան առաքելության մեծավորը, որ 1632 -ի վերջերին եպիսկոպոս էր ծեռնադրվել, Յավատաքննության սուրբ ժողովին ներկայացրած իր մի հանգամանալից Տեղեկագրում, որի վերջին երեք հատվածները նվիրված է հայ քրիստոնյա հանայնքին, իմիշիալոց ողջամտությամբ գրում է. «Պետք չէ արհամարել նրանց՝ հերետիկոս կամ հերձվածող անվանելով մի քանի սխալների պատճառով, որովհետեւ եթե կան ինչ-ինչ նոյնու հավատալիքներ՝ այդ բնորոշ է միայն նմանց» (33):

Խոջա Նազարը, որ մեծ ազդեցություն ու հմայք ուներ Շահի պալատում, բարեկամ էր ոչ միայն Մովսէս Տաթեւացի Վարդապետին ու Կարողիկոսին, այլ նաեւ Եվրոպացի քարոզիչների, ովքեր հաստատվել էն Սպահանում: Սա նպատառ է երկու կողմերի բարեկամական հարաբերություններին: Շուտով դրա արձագանքը հասնում է մինչեւ Յոռոմ:

Կարմելյան մեծավոր Fra Eugenio di S. Benedetto-ն 1627 թվականի փետրվարի 14-ին իր Տեղեկագրով սուրբ ժողովին հայտնում է նորջուղայեցիների՝ Յոռոմի հետ միաբանություն կազմելու տրամադրությունների մասին: Սա գրում էր, թե նրանց առհասարակ ընդունում են Յոռոմի ուսմունքը: Թե՛ պետք նրանց խոստովանության կերպից թվում է, թե

Քրիստոսի մեջ մի բնություն են ընդունում, սակայն հասկանալու ու բացատրելու կերպը չի տարբերվում մերինից: Ֆրանկոներն ու հայերը սիրելի եղայրների նան են, թե նրանք մաս չունեն բաժանման մեջ. ոմանք փափագում են Հռոմ գալ, եթե Հռոմում դպրոց բացվի իրենց մանուկների համար՝ հարաբերություններն էլ՝ ավելի կլավանան. իրենց վարդապետները, որոնց գլուխն է Սովուես վարդապետը, շատ հարգված են Շահի կողմից, նա/ Սովուես վարդապետը - Յ. Ք. / մեր Հայրերի բարեկամն է, ով ձեռքից ընդունեց Նորին Սրբության գրությունը: Նա կարողիկոսության հավանական թեկնածուն է Շահի՝ Բաղդադից վերադիմությունը հետո (34):

Նոր Զուլայի ֆրանսիացի նվիրակի ձեռքով առաքված 1629 օգոստոս թվակիր մի նամակով Հավատաքննության սուլր ժողովը շնորհավորում է Խոչա Նազարին Վեղարավոր /Կարուչին/ հայրերի նկատմամբ իր ցուցաբերած բարյացականության եւ առատաձեռնության համար (35):

Մասնավորաբար մտերմական էին Կարմելյան Հայր Հովհաննես Թաղեռու di S. Eliseo-ի հետ եղած հարաբերությունները: Սա 1629-ին Նոր Զուլայից մեկնում է Հռոմ: Երկու հայ եպիսկոպոսները, որոնց միացավ նաև Մովսես Տաթեւացին, նրան են հանձնում հետեւյալ առաջարկները՝ ներկայացնելու սուլր ժողովին.

ա/ Հռոմում բացել մի հայ դպրատուն,
թ/ Հայ վաճառականներին, որոնցից մեկն էր Խոչա Նազարը, Պապի պետության ու Եվրոպայի մեջ շնորհիվ առևտրական կայաններ, մարսից ազատ ապրանք Մոցներու իրավունք:

Սուլր ժողովը 1630 մարտ 19 եւ հուլիս 23 նիստերի ընթացքում որոշում է.

ա/ Հայերը կարող են Պապի հողերի ու քրիստոնյա պետությունների մեջ, իրենց ծախսով շուկա հաստատել իրենց վաճառքի համար, եւ իրենց ծախսով իրենց գործածության համար՝ եկեղեցներ կամ մատուցներ, սեփական քահանայով,

թ/ Այս թույլտվությունը միայն նրանց համար է, ովքեր եկեղեցական հաղորդակցության մեջ են Հռոմի եկեղեցու հետ, այսինքն՝ «կարողիկե են եւ կամ ցանկանում են լինել», ձանաչփում է նրանց՝ մարսից ազատ /franchise/ լինելու մեջամորիք: «Եկ որպես գիրանք նրանք նոյն իրավունքով ուրիշ քրիստոնյա հողերի վրա եւս կարողանային հաստատվել», ժողովը որոշեց նրանց հանձնարարել գրով:

1630 սեպտեմբերի որոշումով Հայր Հովհաննես Թաղեռու di S. Eliseo-ն Հռոմի այդ պատասխանը տանում է ջուղայեցիներին, թե՝

ա/ Պապն իր տերության սահմաններում տեղեր է շնորհելու հայ վաճառականներին, որպեսի այնտեղ կարողանան ապրել իրենց ծախսերով, եւ այս նոյնի համար դիմելու է ուրիշ իշխանների՝ «պայմանով, որ լինեն Հռոմեական եկեղեցու հետ հաղորդակցության մեջ»:

թ/ Եթե հանձն առնեն գմել դպրանցի/ collegio կամ Seminario/ շնոր ու կահկարասի՝ «ժամանակին պիտի կազմակերպվի 405 աշակերտի համար մի դպրանց»: Նմանապես պիտի կարողանան տպարան բացել իրենց պաշտամունքի մատյանների տպագրության համար՝ անշուշտ պայմանով նախ-

Նական գրաքննության (36):

Հայր Հովհաննես Թաղեռու կերպում է մնում, հարկավ, եպիսկոպոս ձեռնադրվելու պատճառով: 1633 հունվար 5 թվակիր մի նամակ է հանձնվում իրեն Հավատաքննության սուլր ժողովից՝ հասցեագրված Խոչա Նազարին, ուր սրան հաղորդվում է, թե այս Հայրը Սպահանի լատին առաքելության եպիսկոպոս է օծվել, ու քանի որ ծեր է, իրեն կցված է մի Արքուակից հանձնի Հայր Տիմոքեոսի: Գրված է, թե՝ Ձեզ ու Զուլայի հայ վաճառականներին է մնում Հռոմում ձեր ազգի համար բացվելիք դպրանոցի համար անել ինչ որ անհրաժեշտ է՝ ի փառս Աստծո եւ հօգուտ ձեր ազգի (37):

Այս թղթակցության արյունքները զգիտենք: Հավանաբար Հայր Հովհաննես Թաղեռու վերահաս նահը արգելե է լինում. գրեթե նոյն ժամանակ մեռնում է Մովսես Կարողիկոսը եւս /1633 Մայիս/: Թող որ Լվովի թեմի շուրջ ծագած տարածայնությունները նմանապես պղտորել էին հայ-հռոմեական [Եկեղեցական] մթնոլորտը:

Սովուես Տաթեւացու Միաբանական ձեռնարկը

Կասկած չկա, որ Մովսես Տաթեւացին, երբ տակավին իրեւ Գրիգոր Կեսարացու աշակերտ գտնվում էր Կ. Պոլսում, տեղյակ էր Մելքսեթը Կարողիկոսի, Հովհաննես Խովլ ու Զաքարիա պատրիարքների միջեւ առկա Եկեղեցական հարաբերություններին, որոնք մշակվել էին 1610-ական թվականներից սկսած Հռոմի Արքորի հետ՝ Պողոս ԵՊապի քահանայապետության /1605-1621 թթ. / ու նրա հաջորդ Գրիգոր ժԵ-ի օրերին/1621-1623 թթ. /:

1612-ին, երբ Զաքարիա Վանեցին Հռոմից Կ. Պոլսիս էր վերադառնում Մելքսեթը կարողիկոսին հանձնելի նամակներով եւ ընծաներով, Մովսեսն այնտեղ էր, որ, անշուշտ, տեղյակ էր Զաքարիա Վանեցու եւ Գրիգոր Կեսարացու միջեւ եղած վեճերին. Վերջինն բուռն հակառակորդ էր «Փրանկների», բայց Մովսեսի «հոգեւոր հայոն» էր:

Վարդապետական գավազան ստանալուց հետո ականատեսն ենք լինում այն բարեկամական հարաբերությունների, որ Մովսեսը պահպանում էր թե՝ Սպահանի Կարմելյանց, թե՝ Նախիջեւանի ունիթոր [միարար] դոմինիկանների միջեւ (38): Անշուշտ, նրա տեսակետներն ամբողջապես չեն հանգնում իր ուսուցչի՝ Գրիգոր Կեսարացու տեսությունների հետ (39): Տեղյակ էր Գրիգոր Կեսարացու տրամադրություններին, բայց թե այդ մարզում որքանով է անկախ եղել իր վարդապետի մտածելակերպից, մենք նշանառում ենք թե՝ իրեւ վարդապետ եւ թե՝ իրեւ Ամենայն Հայոց կարողիկոս եղած գործունեության շրջանում: Նա քրիստոնեական վերանորգության ոգի է մշակում թե՝ Սպահանի եւ թե՝ Նախիջեւանի լատին թեմերում աշխատող քարոզիչների հետ: Սրա հետ կապված իրեն գործակցում են իր լավագույն աշակերտները՝ Խոչա Նազարը, Պապուա Կարողապետ Շամբեցին: Նրա համախոհն է եղել Խոչա Նազարը, որի համար էլ Սուլր ժողովի կողմից էլ գնահատանքի էր արժանացել:

Ակինյանը գրում է. «Մովսեսը եպիսկոպոսական ձեռնադրություն ընդունելուց հետո, հավանաբար 1623 թվականից հետո, երբ հրավիրվեց Նոր Զուլա-

1624-ին, առիր ունեցավ հանդիպելու տեղի լատին քարոզիչներին: Այդ մերձեցման հետևանքով շատ կանխակալ կարծիքներ երկուստեր նահանջեցին: Ինքը եւս զգաց հայ եւ լատին եկեղեցիների մերձեցման, քարեկամական կապի անհրաժեշտությունը: Այնքան կարեւոր չհամարեց տարրերազատիչ գծերը՝ կարեւորագույններից հրաժարվելու աստիճան: Նախ անձանք տվեց իր հավանությունը՝ ենթարկվելու Յոռմի սուրբ Աթոռի շքեղությանը, եւ հետո խոստացավ վեծի խնդրահարուցյ կետերը դնել եախսկոպոսների ժողովի քննությանը» (40):

Մովսես Տարեւացու, ինչպես նաեւ նրա աշակերտ Խաչատուր վարդապետ Կեսարացու հարաբերությունը Յոռմի եկեղեցու հետ, ցարդ մեզ ծանոր դիվանական հետքերի լույսի ներքո, ըստ երեւութիւն սկզբնավորվել է 1625 թվին:

Յոռմի Սուրբ ժողովին 1625 թվականի հունիս 13-ի եւ օգոստոս 22-ի նիստերում Մելինո կարդինալի կողմից գեկուցվում է Յայր Պրոսպերո dello Spirito Santo Կարմելյան քարոզչից առարված խնդրանքը՝ Մովսես վարդապետին եւ Խաչատուր վարդապետին նվիրելու, -որոնց ուղղափառ դավանանքի մասին վկա է այս Յայրը, -շուրջառ իր հարմարանքով՝ սրբազն Պապի կողմից ի նշան բարյացականության, եւ երկրորդ՝ թույլատրել, որ նրանք կարողանան եկեղեցական պաշտամունք մատուցել քարոզիչների մատուների մեջ, իսկ սրանք էլ փոխարձարաբար Յայր եկեղեցիներում: Ի վերջո կատարյալ փոխարձարակցություն հաստատվի երկու եկեղեցիների միջև, մի տեսակ՝ intercommunionon [փոխազեցություն]:

Յավատաքննության սուրբ ժողովը դրականապես է պատասխանում՝ հետեւյալ պայմանով. Եկեղեցական սպասքները տանել, հանձնել Մովսես վարդապետին եւ ընկերներին Պապի անունով, եթե խոստովանեն ընկալված կանոնական Յավատի դավանությունը, այլապես դրանք պարզապես պեսու է հանձնվեն Կարմելյան հայրերի կողմից (41):

1625 թվականի հունիս 13-ի Վերոհիշյալ արձանագրության մեջ կարդում ենք խնդրո առարկա «Թրիստոնեական վարդապետություն» կոչված գրքի մասին, թե «խմբագրված է Յայր կողմից, Քաղկեդոնի ժողովից հետո, ընդդեմ նույն այդ Քաղկեդոնի ժողովի ուսմունքի եւ առարված Մովսես վարդապետի կողմից, որպեսզի դրան եւս պատասխան տրվի: Յավատաքննության սուրբ ժողովը հրահանգեց նախ լատիներեն թարգմանել տալ եւ հանձնել մի քանի հմուտ անձերի, որպեսզի դրա մասին եւս գեկուցեն» (42):

Մեզ դեռ հայտնի չէ, թե խնդրո առարկա այս հայերեն գրվածքը ինչ էր իրենից ներկայացնում. [գիրք], որի մասին Մովսես վարդապետը ցանկանում էր իմանալ Յոռմի տեսակետոր: Նշված գրության դավանական բնույթի մասին վերջին խոսքը կարող էր ասել միայն Sant Ofizio Յավատաքննության ժողովը:

1625 թվականի օգոստոս 22-ի նիստով Սպահանի քարոզիչներին հրահանգվում է, որպեսզի հետամուտ լինեն, որ Մովսես Արքեպիսկոպոսը եւ նրա պաշտոնյաները «վկաների առջեւ, ծածուկ կերպով տան Կաթողիկե [Կաթոլիկ] հավատքի դավանությունը եւ այն ուղարկեն Յոռմ: Սա կարեւոր է թույլատրելու համար, որպեսզի իրենք /քարոզիչները/ Յայր

եկեղեցիներում եւ փոխարձարաբար հայերը մեր եկեղեցիներում կարողանան Պատարագ մատուցել» (43):

Այս սկզբնական հարաբերությանը, որ կատարվեց Սպահանի քարոզիչների միջնորդությամբ, հետեւում է Մովսես Վարդապետ Տարեւացու 1626 օգոստոս 17-ի թվակիր նամակը հասցեագրված Ուրբանոս Ը պապին՝ ստորագրված Խաչատուր վարդապետ Կեսարացու եւ Արիստակես վարդապետ Շամբեցու կողմից: Այս նամակի ամբողջական պատճենը, որի բնագիրը պահպանվում է Յավատաքննության սուրբ ժողովի դիվանում «Ուկան վարդապետ Երեւանցին եւ իր ժամանակը» մեր մենագրության մեջ /էջ 267-269/:

Օրմանյանը /Ազգապատում/, Բ, 1659/ նախ տարակուտում է, թե Մովսես Կաթողիկոսը թղթակցել է Յոռմի հետ: Սակայն, ի նպաստ այս հարաբերությունների, գգալով փաստերի ուժը, որոնց մասին ակնարկում են Զամյանը, Պալճյանը, Տաշյանը (44) եւ ուրիշներ, որոնց մեջ կար նաեւ նույն ինքը Գրիգոր վարդապետ Կեսարացին, ծիգ է գործադրում բացատրելու նրանց միտքը:

Ի՞նչ էին ուզում այս երեք հայ վարդապետները Յոռմի եպիսկոպոսից, ինչո՞ւ են ծեռնարկել գրել նրան: Նրանք շշափում են երեք նյութեր, երեքն ել եկեղեցաբանական. ա/ նախ հայտնում են, թե իրենց փոքրիկ հոտով գտնվում են այլահավատների մեջ «իբրեւ այծյան որսորդների մեջ»: Փառք ենք տալիս Աստուր, «որովհետեւ քրիստոնյա ենք եւ քրիստոսի անուն ենք կրում մեզ վրա...», համաձայն Պողոսի «հոհժար ենք չաշարպել»: Ապա անցնում են իրենց բուն նյութին, այսինքն՝ «նախ այն սիրուն, որ կա երկու ազգերի՝ հայերի ու լատինների միջեւ, որ հաստատեցին մեր հայրերը սուրբ Սեղբեստրոս Յոռմի Պապը եւ Մեծ Յայքի սուրբ Գրիգոր Լուսավորիչը, խնդրում ենք նույնը հաստատել»:

Ա. Ահա նամակի իմանական շարժառիթը. Եկեղեցական հաղորդակցության վերահաստատում Յայր եւ Յոռմի եկեղեցիների միջեւ:

Առաջնորդվելով քրիստոսի եկեղեցու միության հավատանքով՝ նամակագիրները ողջամտորեն պատճառաբանում են. «Եթե որոշ հովհաններ կոչեցին մեկմեկու դեմ՝ հոտի անդամներս ի՞նչ մեղք ունենք դրանում, եւ մեր անշատման պատճառը՝ լինի Դիսկորոսը թե Փլարիանոսը, կամ թե որեւէ մեկը, պատասխան են տալու քրիստոսին»: Բայց մենք իրար սիրենք հոգեւոր սիրով, Պողոս առաքյալի հորոդորի համաձայն, թե մեկմեկու անդամ ենք:

Բ. Անցնելով Յայրաստանյաց եկեղեցու դավանանքին՝ նամակագիրները ցանկանում են հերեք ու փարատել առհասարակ նրա ուղղափառության վերաբերյալ լատինների ունեցած կասկածները. «Ոչ թե հերետիկոս կամ հերձվածող ենք, ինչպես դուք եք կարծում, այլ ուղղափառ ենք, համաձայն մեր հոգեւոր հայրերի դավանության, եւ անվանապես նզումում ենք բոլոր հերետիկոսներին՝ Արիոսին, Սակեդոնին, Նեստորին, Եվտիքեսին եւ նրանց բոլոր համախոհներին»:

Եվ ապա տալիս են քրիստոսի մեկ անձի մեջ երկու բնության դավանանքի բացատրությունը, որը Քաղկեդոնի ժողովից որդեգրված բանաձեւն էր՝ հավատապետ ընդունված Արեւմտյան ու Բյուզանդա-

կան Եկեղեցիների կողմից՝ ձեւակերպված հետեւյալ տողերում. «Որովհետեւ թեպետ քրիստոսի համար ասում ենք, թե մի բնություն է, եւ [ըստ այսմ] կարծում եք, թե Եվտիյյան ենք, սակայն դրա կողքին դնում ենք, թե անշփոր է/ մարդկային եւ աստվածային բնությունները/. Եթե չասենք անշփոր՝ չար հերձվածող կլիմենք: Որովհետեւ, ինչպես դուք եք ասում, Երկու բնությունը, որ Նեստորի [Խոսնունքն] է, ասում եք, թե անբաժանելի է, եթե չասեիք, թե Երկու բնությունն անբաժանելի է՝ չար հերձված կլիմենք /այսինքն կլիմենք Նեստորի մոլորությունը/: Սակայն մենք ասում ենք՝ մեկ անշփոր բնություն, եւ դուք ասում եք՝ Երկու անբաժանելի բնություն, եւ Երկու խոսքերի իմաստը նույնն է, եւ ճշմարիտ է»:

Այն, որ հավատի անբեկաննելի ճշմարտությունները աստվածաբանական լեզվով արտահայտելիս միանգամայն ընդունելի է pluraliste բանաձեւումը [բազմակարծությունը], ահա մէ դարասկզբում այս Երեք վարդապետներն արդեն ենթադրում են իրենց կեցվածքով, որ մեր օրերում Կատողիկանի Բ Տիեզերաժողովից (45) հետո պետք է ընդհանրանար լատին աստվածաբանների մեջ:

Գ. Երկու Եկեղեցիների տոների ու պահքերի մեջ եղած տարբերությունները պարզապես ազգային ավանդություններ են, որ հարգելի եւ անվնաս են: Նրանց զանազանությունը չպետք է արդի լինի խօսելու սկիզ պատվիրանը: Լուսն ենք, թե ուստի կամ առեւտրի համար մեզանից այնտեղ գնացողները բռնադրտվում են ձեր կողմից, ոմանք ասում են, թե՝ «Նզովիր քո հայրապետին ու դավանիր մեր դավանությունը», որի հետեւանքով Ձեր անունն այստեղ վատարանվում է: «Այս պատճառով, նամակովս աղաջուն են, այլեւս նման սովորությունների չիետեւել, այլ բողեք կամքին: Եթե հոժար կամքով չդավանի ու չխոստովանի ու խնդրի Սրբությանը հաղորդվել՝ տվեք, իսկ եթե ոչ՝ մի ստիպեք չհամաձայնողներին: Եթե առաջնորդի հրամանով ու նամակով չի եկել՝ մի ընդունեք»:

Այստեղ Երեք վարդապետները շարժվելով քրիստոնեական ոգով, այնախոն մտածումով սերտ հաղորդակցությունը համարում են լավագույն ուղին հարաբերությունների սերտացման՝ intercommunion:

Պետք է արձանագրել, որ Երեք վարդապետների այս նամակում բացակայում է մարդկային կամ քաղաքական որեւէ դիտում: Նրանք պարզապես ձգտում են հարթել գետինը՝ կրկին վերահաստատելու համար դարերի ընթացքում ընդհատված Եկեղեցական հաղորդակցությունը՝ վանելով Երկուստեք կուտակված փոխադարձ կասկածի եւ անվստահության հոգին, պարզել անձիշտ ենթադրության մթնոլորտը, եւ նպաստավոր պայմաններ ստեղծել Եկեղեցական լիակատար հաղորդակցության համար:

Երբ Մովսես վարդապետն այսպիսի կեցվածք է որդեգրում՝ դեռ կաթողիկոս չէր ընտրվել, ոչ էլ ծայր դիմ առել Լվովի հայ թեմի տիտրահոչակ խոռվությունները:

Պետք է ասենք, որ Մովսես Տարեւացին իր այս պարզ գրությանը իմիջիայլոց միանում է իրեն կանխոր ս. Ներսես Շնորհալուն, ով միարանական խոսակցություն էր սկսել Կ. Պոլսի Արոնի հետ Բյուզանդիայի կայսեր միջոցով:

Յոռմի դիրքը

Մեկ տարի անց, 1627 թվականի օգոստոս 28-ին Յավատարքնության սուլր ժողովի նիստի ընթացքում գեկուցվում է Հոռմի Եկեղեցու հետ Յայոց Եկեղեցական հաղորդակցության վերականգնման առաջարկը, որ անշուշտ եղավ 1626 թվականի օգոստոս 17-ին Ուրբանոս Ը-ին Երեք վարդապետների հղած նամակի արիթրով: Ժողովի նամակից հայրերը ըկատելով, թե Sant Offizio Յավատարքնությանն է վերաբերում դավանական ամեն հարց՝ թղթածրարը առարում են նրան:

Իսկ 1628 թվականի փետրվար 4-ի եւ դեկտեմբեր 12-ի Յավատարքնության սուլր ժողովի նիստերի քննության նյութ է դաշնում Մովսես վարդապետի առաքած «Քրիստոնեական վարդապետությունը», եւ Sant Offizio ժողովը տալիս է դրանց լուծումները: Դրվագում են նաև Յայր Էմիդիո-ի ջանքը, ու նրան հանձնարարում Սուլր ժողովի համար գտնել մի «Յայսմավուրք» (46):

1628 թվականի փետրվար 16-ի նիստում Յավատարքնության սուլր ժողովի կարդինալները որոշում են Մովսես վարդապետին ու նրա Երկու վարդապետ ընկերներին ուղարկել Գրիգոր ԺԳ Պապի /1572-1585/ Յավատու դավանության բանաձեւը (47):

Յավատարքնության սուլր ժողովը, որի իրավասության մեջ էր մտնում նույն հարցով գրալվել, 1628 թվականի փետրվար 19-ի իր նամակով, որն ուղղված էր Սպահանում գտնվող Կարմելյանների մեծավորին, այսպես է պատասխանում Մովսես Արքեպիսկոպոսին, թե նրա նամակի բովանդակությունը, սուլր ժողովի այն նիստում, որը նախագահել էր Նորին Սրբություն Ուրբանոս Ը Պապը, մեծ գոհունակություն է պատճառել: Ինչ վերաբերում է նրա շոշափած դավանական ու միարանական հարցին՝ թե ինչ պետք է անել, որպեսզի վերահաստատվի Ս. Սեղբեստրոսի եւ Յա ազգի հետ եղած Եկեղեցական հաղորդակցությունը Ս. Պետրոսի Արոնի հետ, Սպահանի Կարմելյան մեծավորին հրահանգվել է Ձեզ պատասխանել:

1628 փետրվար 19 թվականի այդ նամակի պատճենը, ինչպես նաև Ֆլորենցիայի ժողովի հայերին վերաբերող հատվածի հայերեն թարգմանությունն ու արեւելքիների համար ձեւակերպված հավատի դավանությունը առաքվում է նաև Մովսես վարդապետ Տարեւացուն: Վերոհիշյալ քարոզչին հանձնարարում է հրավիրել Մովսես Արքեպիսկոպոսին ու նրա ընկեր վարդապետներին, նաև նրանց հետեւորդ ժողովրդին՝ նզուելու Եվտիքսին ու Ղոնսկորոսին եւ բացահայտ կերպով դավանելու Քրիստոսի աստվածարդկային խորհուրդը. Երկու բնություն մեջ անձինչ չի էր նաև այն, որ ս. Լեռն Ա Պապը հերետիկոս չի եղել (48): Նետո նույն նամակն ընդունող հորմ հաղորդվում է, թե կարող է հավաստիացնել հիշյալ Երեք Եպիսկոպոսներին ու հայ ժողովորդին, թե պետք է վայելեն Հոռմի քահանայապետների լավագույն վերաբերությունը (49):

Յայտնի է, որ 1628 թվականի վերջերին այս բանակցություններն ընդմիջվում են Մովսես Տարեւացուն՝ Ս. Էջմիածնի գահակալ ընտրվելու պատճառով: 1629-ի սկզբուն նաև օծվում է կաթողիկոս: Յայր Պրոսպերն այս իրադարձության դրական արձագանքը հասցնում է Հոռմ:

Խաչատուր վարդապետ Կեսարացին սիրալիր մի նամակ է հղում Հայր Պրոսպեր dello Spirito Santo քառօզին՝ գրելով, որ թեև մարմնով մեզմից հեռու ես, բայց միշտ մեր մտքում ես, «Եւ խնդրում ենք ձեզմից, որ չմոռանաք մեզ աղոթքների մեջ»: Սրանք նշաններ են երկու կողմերում տիրող փոխադարձ վստահության: Խաչատուր վարդապետի այս նամակը անթվական է, սակայն առկա է նամակագիր կնիքը: Հավանաբար այն գետեղի է 1626-1629 թվականների միջեւ: Յ. Ակինյանը հայերեն է թարգմանել իշխանությանը նամակը:

Հավատաքննության սուրբ ժողովի 1628 թվականի փետրվար 19-ի նամակի թվանդակության հետ սերտորեն կապված է, այդ թվականից չորս տարի հետո, 1632-ի նոյեմբերի 22-ին, Ուրբանոս Ը Պապի անունով, Վերոիշյալ երեք վարդապետներին հղված նամակը: Դա պատասխանն է այս վերջինների 1626-ի օգոստոս 17-ին Ուրբանոս Ը-ին հղած նամակի:

Սա մի Համառոտագիր /Brevie/ է, որի բովանդակությունը խորքի մեջ նույնն է Հավատաքննության սուրբ ժողովի կողմից 1628-ի փետրվարի 19-ին Սպահանի Կարմելյան մեծավորներին հասցեագրված նամակի հետ: Հռոմը նախ իշխեցնում է Մովսես Կարողիկոսին երկու դար առաջ Ֆլորենցիայի 1439 -ի ժողովի՝ հայ պատվիրակների հետ կնքված միաբանական դաշինքը Հայոց եւ Հռոմի երկու եկեղեցների միջեւ, եւ առաջում է այդ համաձայնության հետ կապ ունեցող փաստարդերը, որոնք են.

- ա/ 1439 նոյեմբերի 22 -ին կնքված միաբանական դաշինքը,
- բ/ Եկեղեցու յոթ սուրբ խորհուրդների (51) մատուցման վերաբերյալ, որ Արեմտյան աստվածաբաններին հայտնի է Ֆլորենցիայի 1439 թվականի ժողովով՝ հոչակած Decretum pro Armenis [Յրահանգ առ Հայս] վավերագրով:
- գ/ Հռոմի Ս. Պետրոս տաճարի պղնձե դրան վրա 1439 թվականին քանդակած իշխատակարանը, ուր ի շարս ժողովի մասնակից հայերի, արձանագրված էին նաև հայերի կողմից եկած եպիսկոպոսների անունները (52):

1632 նոյեմբեր 22-ին Հավատաքննության սուրբ ժողովը շտապում է մեկ այլ նամակ եւս ուղարկել Խաչատուր վարդապետ Կեսարացուն, ով Լվովի առաքելությունից վշտացած վերադարձել էր առանց դեպ Հռոմ իր քայլերն ուղելու, թեպետ համաձայնություն ունենալու հանդիպելու հայր Դիմաս Կարմելյան քառօչի հետ:

Այս նամակում եւս Հավատաքննության սուրբ ժողովը հաստատում է այն, ինչ գրված էր նույն թվականին Մովսես Կարողիկոսին հղված նամակում, եւ ապա ցավ հայտնում, թե Խաչատուր վարդապետը նախորդ տարում, այսինք՝ 1631-ին չի կարողացել Լվովից գալ Հռոմ, ինչը պատեհ առիթ պիտի ներկայացներ «ավելի ոյուրությամբ կարգավորելու Լեռուղլիս [= Լվովի] հայ Արքեպիսկոպոսի գործերը» (53):

Այս վերջին նամակը ներկայացնում է այն ճիգը, որով փորձ էր արվում վերսկսել վեց տարի առաջ ողջույնի արժանացած միաբանական երկխոսությունները, որոնք միտված էին մեղմելու այն անպատշաճ վարդելավերապը, որ Կարողիկոսի նվիրակը գտել էր տեղի Լեհ եկեղեցական իշխանությունների կողմից:

Այս նամակում դարձյալ ակնարկված է Հռոմում բացվելիք դպրատան ծրագիրը, ինչպես նաև՝ Խոջա Նազարի կողմից առաջարկված՝ արեւամտյան շուկաներում հայ վաճառականների համար վերապահված արտոնությունները: Հետո հաղորդվում է նաև, թե Հայր Դիմասին, որն այնքան համակրանք էր տածում նոր Զուղայի հայերի հանդեա, եպիսկոպոս են ձեռնադրել:

Հայոց պատասխանը եւ եպիսկոպոսական ժողովը

Աջուշտ, Սպահանի Կարմելյան Հայրերի՝ Հռոմից նրանց առաքված հրահանգների կատարումից հետո է, որ Հայր Դիմասը իր 1629 նոյեմբեր 25 թվակիր նամակով, ինչը վերաբերում է Մովսես Տարեւացու՝ Քաղկեդոնի ժողովի քրիստոսաբանական դրույթների նկատմամբ որդեգրած դիրքորոշմանը, հետեւյալն է հաղորդում Հավատաքննության սուրբ ժողովի նախագահ կարդինալ Լուտովիզիին: Տեղեկագիրը զեկուցվել է սուրբ ժողովի կարդինալներին 1631 հունվարի 4-ի նիստում: Այնտեղ ասված է, թե Հայոց Կարողիկոսը

ա/ չի ցանկանում լսել Քաղկեդոնի անունը, որովհետեւ Սարկիանոս կայսեր վրա ծանրացած է շատ հայերի արյունը

թ/ սակայն «Քրիստոսի մեջ երկու բնությունների հարցում նոյն Կարողիկոսը /= Patriarche/ մի բնություն է ասում, առանց մյուս բնության աղավաղման կամ ոչմագման, եւ ավելացնում, որ այս հաստատում չի տարբերվում այն բանից, որ կարողիկոսները հաւակացել են՝ երկու բնություն մեկ անձի մեջ խոսրով:»

թ/ թե հայերը Ս. Լեոն Պապին հերետիկոս չեն համարում.

թ/ իսկ ինչ վերաբերում է Դիոսկորոսին, թե նրան սուրբ են անվանում իրենց շարականներում, Կարողիկոսը մտադիր է այդ առիթով ժողով գումարել, որին ցանկանում է հրավիրել նաև Հայր Դիմասին:

ե/ Հետո հայ մանուկներին սովորեցնել լատիններեն, որտեղից մեծ օգուտ կարելի է հուայ կրոնի համար:

Չորրորդ կետն, անշուշտ, ակնարկ է «Ո՞վ իրաշալի նախահարք» Շարականի հինգ հարազատ ու հնավանդ տների ավարտին ավելացված երեք տների վերաբերյալ, ուր փառաբանվել է Ալեքսանդրիայի Դիոսկորոս պատրիարքը (54) ու նզովել Քաղկեդոնի ժողովը:

Այսպես, Մովսես Կարողիկոսի նախատեսած ժողովի ծրագիրը գուգադիպում է այն բանի հետ, որ Հավատաքննության սուրբ ժողովը 1630 թվականի սեպտեմբերի 5-ի եւ նոյեմբերի 21-ի նիստերում թելադրել էր Հայր Դիմասին:

Հավատաքննության սուրբ ժողովի 1630 թվականի հունիսի 15-ի նիստի ընթացքում զեկուցողի կողմից տարակույս է հայտնվում Մովսես Կարողիկոսի ուղղափառության վերաբերյալ: Սակայն Հայր Պրոսպեր հերքել է այդ տարակույսը՝ ասելով, որ եթե հերետիկոս լիներ՝ մեզ չեր հորոդրի դպրոց բացել Սպահանում եւ Զուղայում (55):

Հայ եպիսկոպոսների մի ժողովի ծրագիր՝ Մովսեսի օրոք

Նույն 1630 թվականի սեպտեմբերի 5-ի եւ նոյեմ-

թերի 21-ի Հավատաքննության սուրբ ժողովի նիստերի ընթացքում խօսք է բացվում Հայոց Պատրիարք /Կաթողիկոս/ Մովսեսի մասին: Սեպտեմբերի 5-ի նիստի ժողովի հայրերը թելադրում են Սպահանում գտնվող Հայոց Պրոսպերին, որպեսզի ջանա համոզել Կաթողիկոսին, որ իր եպիսկոպոսներով ժողով գումարի եւ ընդունի Քաղկեդոնի քրիստոսաբանական բանաձեւը՝ երկու բնությունների՝ աստվածային եւ նարդկային՝ մեկ անձի ու մեկ դեմքի մեջ գտնվելու վերաբերյալ:

Իսկ նոյեմբերի 21-ի նիստի ընթացքում գեկուցվում է, թե Մովսեսն իր թե գումարել է Հռոմի եկեղեցու հետ եկեղեցական հաղորդակցության վերաբերյալ ժողովը: Ուստի Հավատաքննության սուրբ ժողովի հայրերը որոշում են քաջալերական նամակ գրել ու պատշաճ նվերներ ուղարկել, որպեսզի խնդիր «հաջողությամբ ընթանա» (56):

Հաջորդ տարի, 1631 հուլիս 8 թվակիր մի նամակ էլ գրվում է Հայոց Դիմասին, Սպահան՝ հանձնարարելով նրան շարունակել իր ջանքերը՝ ցույց տալու համար Հայոց Կաթողիկոսին Քաղկեդոնի ժողովի ճշմարտությունը: Գրում են, թե նկատի առնելով նրա խիստ բարի վարքը՝ Աստված նրան կլուսավորի:

Յ. Ներսես Ակինյանը հաստատում է, թե Մովսես Կաթողիկոսից խոստացված ժողովը տեղի է ունեցել: Ակինյանը գրում է, որ այդպիսի մի ժողովի լուրս առաջին անգամ Հռոմ է հաղորդվել Հալեպից, 1630 թվականի մայիսի 8-ին, Հայոց Պրոսպեր քարոզչի կողմից: «Հայերը Պարսկաստանում մի ժողով են գումարել՝ քննության ենթարկելու համար Հռոմի եկեղեցու հետ միության հարցը: Որպեսզի հաջողությամբ գույն գա այս խնդիրը, Մովսես Կաթողիկոսին են գրել, միաբանության հորդոր պարունակող նամակներ» (57):

1631 թվականի դեկտեմբերի 25-ի նամակով այս բանը վկայում է մեկ ուրիշ Կարմելյան քարոզիչ, Հայոց Եպիփան Տ. Giovannī Battista, թե այդ ժողովը «քրիստոսի մեջ երկու բնության վերաբերյալ վարդապետության մասին էր, որ նույն Կաթողիկոսը խոստովանում էր արդեն»:

Նոյեմբեր 1631 թվականի դեկտեմբեր 25-ին Հնդկաստանի Կոռա քաղաքից մի երկար տեղեկագիր է ուղարկում իր աշաքելության վերաբերյալ՝ հասեագրված Հավատաքննության սուրբ ժողովի նախագահ կարդինալին: Այստեղ Արեւելի աղետների վերաբերյալ ակնարկից հետո, գրում է. «Զգիտեմ, այդ ժողովորի հետ բանակցելու եւ Քաղկեդոնի ժողովի ընդունման վերաբերյալ Հայաստանում գումարվելիք ժողովն ի՞նչ եղավ արդյոք»: Մտավախություն է հայտնում, որ կարող է դժվարությունների հանդիպել ու խափանել ծրագիրը, որովհետեւ գրում է, թե՝ ես մեկ եւ կես տարի է, որ չկարողացա Պարսից Հակին ուղարկել Մորազան Պատի առաքած նամակը (58):

Յ. Ն. Ակինյանը ենթադրում է, որ այս գրություններում ակնարկված ժողովը լինի այն, որի վերաբերյալ գրում է Կղեմես Գալանոսը իր հայտնի երկեղվան հաստորներում, Կարդան Եպիսկոպոս Հովհաննան իր «Թուրբ քաջալերականում» եւ Ստեփանոս Լեհացին իր «Տարեգրության» մեջ գալիս են այն եղողակացության, որ այդ նամակը Մովսես Կաթողիկոսն առաքել է Ուրբանոս Ը Պապին: Քիչ անց

մենք կներկայացնենք իիշյալ երեք ժամանակակից անձանց վկայությունները: Մինչ այդ, դառնալով 12 եպիսկոպոսների անունով գրված նամակին, իիշենք Ակինյանի վարկածը: Ալլացիուսի գրքից նա արտագրում է Մովսես Կաթողիկոսի՝ Ուրբանոս Ը Պապին հղած նամակի սկզբնավորությունը՝ ասելով, թե հավանաբար սա վերաբերում է 12 եպիսկոպոսների կողմից ուղարկված նամակին: Ալլացիուսը չի տալիս նամակի թվականը, ինչը դժվարացնում է ստուգել այն (59):

Մովսես Կաթողիկոսի կողմից Ուրբանոս Ը Պապին հղած երկու նամակներ հրատարակել ենք մեր «Ուկան Վարդապետ Երեւանցի» ուսումնասիրության հավելվածում /էջ 267-275/: Ակինյանի արտագրած սկզբնավորությունը չի համապատասխանում ոչ մեկին, ոչ էլ մյուսին: Գիտենք նաեւ, որ Մովսես Կաթողիկոսը շատ առիթ չի ունեցել գրելու Ուրբանոս Ը Պապին: Յ. Ն. Ակինյանի վարկածը հավանական է: Անեն դեպքում դեռ ստուգելի է, որ միայն այդ նամակի պատճենը Կատիկանի դիվանից դուրս բերելով կարելի է լույս սփռել հարցի վրա:

Ի վերջո, Հովհաննես Սոլին Անկյուրացին, որ գտնվում էր Կ. Պոլսում, 1633 թվականի հոկտեմբերի 8-ի՝ Հավատաքննության սուրբ ժողովի լուրս առաջին անգամ Հռոմ է ունեցել: Ակինյանը գրում է, որ այդպիսի մի ժողովի լուրս առաջին անգամ Հռոմ է հաղորդվել Հալեպից, 1630 թվականի մայիսի 8-ին, Հայոց Պրոսպեր քարոզչի կողմից. «Հայերը Պարսկաստանում մի ժողով են գումարել՝ քննության ենթարկելու համար Հռոմի եկեղեցու հետ միության հարցը: Որպեսզի հաջողությամբ գույն գա այս խնդիրը, Մովսես Կաթողիկոսին են գրել, միաբանության հորդոր պարունակող նամակներ» (60):

Հայ աղբյուրներն ու ժամանակակիցների վկայությունները լրում են Մովսես Կաթողիկոսի գումարած մի այդպիսի ժողովի մասին: Բայց ակնարկներ կան Վարդապետ Արքեպիսկոպոս Հովհաննանի կողմից՝ գրված 1703 թվականին, Լվովից, իր «Քաջալերական նամակներ Եվրոպիայի ուղղափառներին» գրվածքում, ուր կարդում ենք հետևյալը. «Էջմիածի Մովսես Կաթողիկոսը Տիրոց ՌՈՒԾ /1628/ տասներկու Եպիսկոպոսների հետ միասին ստորագրել ու կնքել է Կարողիկե [Կարոլիկ, Ընդհանրական] հավատի դավանությունը, որ առաքեց Ուրբանոս Ը Պապին, որի օրինակն ին գրատան մեջ է»:

Կղեմես Գալանոսը, որ վախճանվել է 1666-ին, կարող է ժամանակակից վկա համարվել. իր հայտնի աշխատության մեջ, որ լույս է տեսել Հռոմում, Հավատաքննության տպարանից, 1650 թվականին, գրում է. «Մովսեսը ուղղի հավատի դավանությունը՝ ստորագրված տասներկու Վարդապետների կողմից, հղեց Ուրբանոս Ը Պապին»: Եվ որ այդ դավանագրում Սուրբ Հոգին դավանում է «Հոգից եւ Որդուց բժան» (61):

Մեկ այլ հեղինակ, ով մոտիկ է Վարդապետ Արքեպիսկոպոս Հովհաննանին՝ Ստեփանոս Ռոշբան իր Տարեգրության մեջ գրում է. 1629 թ. «Մովսես Կաթողիկոսը, երբ նստեց Էջմիածնի Արքուին, գրեց ուղղափառ հավատի դավանությունը 12 Եպիսկոպոսների հետ միասին... Ուրբանոս Ը-ին»: Խակ 1630 թվականին, թե «ՈՎ Իրաշալի նախահարք...» շարականից (62) համեց



1998-ին ընդգրկվեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության օբյեկտների ցուցակում: Տաճարի շինարարությունը սկսվել է 1363-ին, երկու հայ հարուստ վաճառականների՝ Թեոդոսիացի Յակոբի և Յայցարածի Փանոսի կողմից: Շինարարությունը ղեկավարում էր լվովյան հայտնի շինարար Դորիմազը: Վաճական համալիրը ներառում է հայ բենեդիկտականների վանքը, նախկին հայկական բանկի շենքը, արքեպիսկոպոսական պալատը և XVI դարի աշտարակ-զանգակատունը: Խորհրդային իշխանության ժամանակ տաճարում էր տեղակայված Լենինի անվան Լվովի թանգարանի պահոցը: 2000-ի հունվարին անկախ Ուկրաինայի իշխանությունները տաճարը փոխանցեցին Հայ առաքելական Եկեղեցուն: 2003-ի մայիսի 18-ին համայն հայերի կաթողիկոս Գարեգին Բ-ն օծեց տաճարը:

**Սբ Աստվածածին
Եկեղեցին Լվովում,
Հայ առաքելական
Եկեղեցու Ուկրաինայի
թեմի առաջնորդանիստ**

Վերջին երեք տները, որ ավելացված էին որոշ հերձավածողների կողմից, ինչպես հայտնի է նրա՝ մեր Լեռնապուտեցիներին [Լվովցիներ] հղած նամակից» (63):

Այս վկայությունների համաձայն, ասվում է, թե խնդրո առարկա ժողովը տեղի է ունեցել Մովսեսի Կաթողիկոս Շնորհվելուց եւ անշուշտ օծվելուց հետո, ինչզ կատարվել է 1629 թվականի սկզբին:

Չանչանց եւս ակնարկում է Մովսես Կաթողիկոսի կողմից ընդունված այս որոշման մասին: Գրիգոր Կեսարացին, որ Կ. Պոլսի Արորից հեռացված էր, լսելով Մովսես Կաթողիկոսի՝ Շողմի եկեղեցու հետ ունեցած սիրալիր հաղորդակցության մասին, իր դժգոհությունն է հայտնում: Մանավանդ, որ նա ոյն էր կուտակել Մովսեսի նվիրակի՝ Խաչատուր Վարդապետ Կեսարացու դեմ, որովհետեւ վերջինս ունաց ասել էր, թե Յայոց դավանանքը նույնն է Քաղկեդոնի ժողովի հետ. տարբերությունը ծեսի մեջ է: Ուստի նա գրում է Մովսեսի՝ հայտնելով իր մտահոգությունն ու մեղադրանքը Խաչատուր Վարդապետի հասցեին. այսու զգուշացնում Մովսեսին: Խել էր իմանում է, թե նա եւս սիրո ու հապատակության նամակներ է հղել Պապին, իր գանգատը հայտնում է նրան ննանապես, թե «ուխտ եւ դաշինք» ես դրել քաղկեդոնականների հետ, ու «միաբանության բազում նամակներ ես» գրել Շողմ: Լսելով այս ամենը, գրում է, թե՝ համակած եմ մեծ վշտով, այնպես որ «Կնախընտրեի մեռնել, քան կենդանի մնալ...», «ինչզ վայել չէ քո խոհենությանը»: Մովսեսն անտեսում է սա, ու շարունակում է իր հոտի խնանքը՝ «բոլորի համար լինելով արդարության ու սրբության հայելի»:

Չանչանն ունի մեկ այլ վկայություն եւս: Գրում է, թե այն օրերին Յայր Պողոս Պիրոնալլին (64) հյուր էր Մովսես Կաթողիկոսի մոտ. Հատիճ քարոզիչը հարցուել էր հայրապետին, թե ինչու չի նամակցում Շողմի Եպիսկոպոսների հետ: Մովսեսը պատասխանում է. «Սենք ճանաչում ենք նրան. հենց ես 1629 թվականին նամակ եմ գրել Պապին, ու չգիտեմ՝ ընդունել է նամակս, թե՝ ոչ: Եթե դու ապահով հնար ունես, հենց իհմա երկորորդ կգրեմ»: Ու մի նամակ է գրում, որի տակ ստորագրում են 12 Եպիսկոպոսներ, եւ այն հանձնում են Յայր Պիրոնալլիին:

Չանչանի աղյուրը մեզ անծանոր է: Սակայն գիտենք, թե երբ Յայր Պիրոնալլին տարածայնություն է ունենում Նախիջևանի թեմի առաջնորդ Տեր Օգոստինոս Եպիսկոպոսի հետ, փախչում է Երեւան, ու սիրալիր ընդունելության է արժանանում Մովսես Կաթողիկոսի կողմից: Այս փախուստը տեղի է ունեցել շուրջ 1632 թվականի հունիսի վերջերին: Մեկ ամսից ավելի մնում է Կաթողիկոսի մոտ: Գիտենք նաեւ, որ Մովսեսը 1632 թվականի օգոստոսի 19-ին մի երկար նամակ է գրում Ուրբանոս Ը պապին՝ խնդրելով նրա միջամտությունը՝ կանչելու Լվովի Նիկողայոս Արքեպիսկոպոսի (65) հարուցած խորվությունները: Եթե Յայր Պիրոնալլին թելադրել է Մովսես Կաթողիկոսին գրելու Պապին՝ պետք է որ այս հարցին վերաբերեր նաեւ 1632 թվականի օգոստոս 19-ի նամակը (66): Սակայն այս նամակը ստորագրված է միայն Մովսեսի կողմից: Տասներկու Եպիսկոպոսների ստորագրած նամակը պետք է ավելի վաղ գրված լիներ:

Յ. Ներսես Ակինեանի տեսակետի վերաբերյալ տարակույս չի կարող լինել: Ա. Ալպոյաջանը նույն-

պես «Ով իրաշալի նախահարք» շարականի Վերջին երեք տները ջնջելու որոշումը, որն ընդունվել է Մովսեսի կողմից՝ տասներկու Եպիսկոպոսների հավանությամբ, գետեղում է 1628 թվականի մեջ՝ անշուշտ հետեւելով Վարդան Եպիսկոպոս Յունանյանի վկայությանը: Գրում է, որ այդ նամակի պատճենը դեռ հայտնի չէ (67):

Անտարակույս, Մովսես Կաթողիկոսի տրամադրությունների անկեղծության լավագույն ապացույցն էր դա՝ նախնիների այդ շրեթ Շարականը սրբել հերձավածողական հավելվածից եւ Յայաստանյաց Եկեղեցին հսպառ ձերբազատել նաեւ հերձավածողի ու հերետիկոսի արատից, որով որոշ հերձավածողներ, ինչպես նկատում է Ստեփանոս Վարդապետ Ռոշբան (68), արատավորել էին նրա հարազատ դիմագիծը:

Ծանոթագրություն

31. տես՝ Կարապետ Եպիսկոպոս Ամատումի, Մովսես Գ Տարեացի Կաթողիկոս Էջմիածնի-«Յայագիտական մատենաշար «Բազմավէպ»» քիվ 36, Վենետիկ, 1992, էջ 45-61: Անկյունավոր փակագծերում գետեղված ծանրագրությունները թարգմանչինն են:
32. A. Bugnini, *La Chiesa in Iran*, Roma, 1981, p. 120-122, 125. Ծահ Արասի, ինչպես նաեւ նրա հաջորդների այսպիսի թույլատու քաղաքականությունը քրիստոնյա փոքրամասնությունների հանդեպ տեական չի եղել: Նոյն ինքը՝ Ծահ Արաս Մեծը, 1621-1622 թվականներին հալածանքներ է հարուցել քրիստոնյաների դեմ. նահատակներ եղել են նաեւ հայ համայնքից: Ասվում է, թե այդ հալածանքների առիթը մի հայ կնոջ գանգատն էր նրա դեմ, ինչի հետեւանքով գրիծադրել է քրիստոնյա ժողովուրդներին, մանավանդ հայերին իսլամացնելու քաղաքականությունը: Առաքել Դավիթեցին արձագանքում է 1621-1622 թվականներին կատարված հարստահարություններին /գլ. ԺԴ, 122-128/: Ծովը քառասուն հայ գյուղերի բնակչներ ենթարկվել են այդ կեղերուններին: [Այդ քաղաքականությունը շարունակել է նաև Ծահ Սովեյմանը 1674 թվականին Նոր Ջուղայի հայ մեծասունների դեմ, 1678 թվականին դարձյալ հրեա եւ հայ փոքրամասնությունների դեմ:]
33. COCG, v. 209 f. 248v. Georges Goyau, «La France missioinaire» իր գրքում Paris, 1948, v. 1, p. 237-238/, հետեւյալն է գրում Փրանցիսկյան Վեղարվոր /Capucins/ հորոցքված կրոնավորների Սպահան մուտք գործելու վերաբերյալ.
- Նրանք առաքված էին Լյուտովիկոս Ժ քազավորի կողմից, կարդինալ Ռիշըիէօի վարչապետության օրոք: Մարտելից մեկնում են երեք քարոզիչներ, որոնցից մեկը մնում է Յալեպում Բաղրադի համար, երկուր, որոնք են Յ. Փասիֆիր de Provins-ը եւ Յ. Գարրիէլ դե Paris-ը 1628-ի սեպտեմբերի կեսին մտնում են Սպահան:
- Խոջա Սուշեն անունվ մի հայ, ով չորս տարի առաջ Փարիզում ծառայություն էր գտել Յ. Փասիֆիր de Provins-ի օգնությամբ, Նոր Ջուղայում, իր տան մեջ հյուրընկալում է երկու քարոզիչներին: Երբ լուր հասնում է Յայոց Արքեպիսկոպոսին, ով հավանաբար Խաչատուր վարդապետ Կեսարացին էր, քա-

րոգիչներին ստիպում են, որ փոխադրվեն Յայոց վանք: Թափորով նրանց ընդունում են Եկեղեցի, վարդաջրով լվանում են նրանց ոտքերը ու ցողով նրանց գլուխն իրեւ Թրիստոսի առաքյաներ եւ հյուրասիրում Յայոց վաճրում:

Խոչա Նազարը այցելում ու հարցնում է, թե արդյոք ընծաներ ունե՞ն Ծահին նվիրելու. նրանք ասում են, թե բերել են Լյուտովիկոս ԺԳ թագավորի, նրա մոր՝ Դե Ամիջսի ու տիկնոց նկարները: Խոչա Նազարը ասում է, թե որպես նվեր դրանք հաճելի կլինեն Ծահին:

Այսպես մի տասը օր Յայոց վաճրում իշեանելուց հետո, Կարմեյան քարոզիչների մեծավորը՝ Յ. Յովհաննես Թադեոս, նրանց տանում է իր վանատունը, Սպահան:

Ignazio da Saggiano /L'opera dei Cappucini+Or. Chr. Analecta, Roma, 1962, v. 163, p. 330/ գրուէ է, թե Սովուսն էր այդ Արքայիսկոպոսը, որ իրենց էր վերապահել այդ սիրայիր ընդունելությունը: Իրապես էլ՝ 1628 թվականին, Սովուս Տաթեացին գտնվում էր Նոր Ջուղայում:

34. *Lusitania-India- Japonia, 1629, f. 258-259, Յ. Ներսես Ակինեան, Սովուս Գ Տաթեացի, Վիեննա, 1936, էջ 336-337*

35. *Lett. volg. [= Archivio de Propoganda Fide, Lettere Volgari] 1629, v. 8, f. 132 :*

36. *Acta[= Archivio de Propaganda Fide, Acta], v. 7, f. 34, n. 15; f. 100, Ակինեան, նշվ. աշխ., էջ 388:*

37. *Ակինեան, նշվ. աշխ., էջ 388-390 :*
38. *[Ունիթորները (միարարները) Յայաստանում տարածված էին ԺԳ-ԺԵ դարերում: Նրանց մեջ կային ինչպես լատին, այնպես էլ հայ քարոզիչներ, որոնց նպատակն էր Յայ Եկեղեցու միավորումը Լատին-կարոյիկ Եկեղեցու հետ: Այս նպատակին հետամուտ նրանք լատիներենից հայերեն են թարգմանուած Արեւմտյան Եկեղեցու նշանակոր հայրերի աստվածաբանական փիլիստիվական երկերը]:*

39. *Ակինեան, նշվ. աշխ., էջ 332-337:*
40. *Ակինեան, նշվ. աշխ., էջ 334-335:*

41. *Acta, v. 3, f. 233-234, n. 2, 4: f. 250, n. 5 :*

42. *Acta, v. 3, f. 234, n. 4, Ակինեան, նշվ. աշխ., էջ 337-343:*

43. *Acta, v. 3, f. 250, Ակինեան, նշվ. աշխ., էջ 339 :*

44. *[Եկատի ումի այդ հեղինակների հետեւյալ երկերը. «Պատմոքին Յայոց ի սկզբանէ աշխարհի մինչեւ ցամն 1784, ըստ աւանդելոյ այլեւայլ մատենագրացտ յօրինեալ ի հայր Միքայէլ Վարդապետէ Չամչեանց », հտ. Գ. Վենետիկ, 1786, էջ 611, Պալճան- «Աքոռ Սրբոյն Պետրոսի Առաքելապետի. աշխ. Թովմաս Գովիելմոս Սլայս, թրգմ. Յ. Ակերսանդր Վարդապետ Պալժեան, Վիեննա, 1853, էջ 270, «Յուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Միսիփարեանց ի Վիեննա, աշխտ. Յ. Յակորոս Վարդ. Տաշեան, Վիեննա, 1895 էջ 111]:*

45. *[Կատուկանի Բ ժողովը տեղի է ունեցել 1965թ.: ժողովի նպատակն էր թրիստոնեական հավատի հավերժական արժեքները պատշաճորեն ներդաշնակել այն արժեքներին, որոնք մարդկության հայտնվում են աստիճանաբար, պատմական զարգացման ընթացքում: Ժողովում մասնավորապես շեշտվում է միջեկեղեցական հարաբերություններում բազմակարծության իրեւ քաղաքակրթական արժեքի, կի-*

րառելիության պարագան:

46. *Acta, v. 4, f. 274, n1- Acta, v. 6, f. 11, n. 12; f. 179. ո 10 [Յայսմավուրով սուրբերի վարքն ու վլայարաբանությունը բովանդակող ծխամատյան է, որն ընթերցվում է տվյալ սուրբի հիշատակի օրը]-Յ. Ք.:*

47. *Acta, v. 6,f. 18, n. 1 :*

48. *[Եւտոն Ա Պապ. աթոռակալել է 440-461 թվականներին: Յայտնի է նրա «Տոմար»-ը/տես տապ. «Սկզբնագիր Տոմարի սրբոյր Եւտոնի եւ սահմանի սուրբ ժողովոյն Քաղկեդոնի», Վենետիկ, 1805/ ուր շարադրված թրիստոսարանական դատողությունները պետք է վարդապետական հիմքը դառնային Քաղկեդոնի ժողովի/451թ. լ/:*

49. *Acta, v. 7,f. 18-20 :*

50. *Lett. volg. 1628,v. 7,f. 18. SOCG[Archivio de Propaganda Fide, Scritture Originali Congregazioni Generali],v. 181. f. 207v :*

51. *[Եկեղեցու յոթ սուրբ խորհուրդներն են Մկրտությունը, Դոռշմը, Ապաշխարությունը, Յաղորդությունը, Պակը՝ Ամուսնությունը, Կարգ հիվանդացը եւ Զեռնադրությունը]:*

52. *Lett. volg. v. 13, f. 117. - Denz. Enchiridion Symbolorum, ed. 1922, nn. 691-702, Ակինեան, նշվ. աշխ., էջ 353-354, ուր 1632 նոյեմբեր 22-ի թվակիր նամակը հայերենի է վերածել :*

53. *Persia /anno 1648/,v. 209, f. 282-283. Ակինեան, նշվ. աշխ., էջ 355-358, թարգմանել է Խաչատուր Վրդ. Կեսարացուն հասցեագրված նամակը եւս:*

54. *[Ղիոսկորոս Ա-ն Եղել է Ակերսանդրիայի պատրիարքը/ 444-455 թթ. I, հաջորդն ու անձմոյիր հետեւորդն ու Կյուրեղ Ակերսանդրացու թրիստոսարանական ուսումնիքի: Ի դեպ, Քաղկեդոնի ժողովը նրան մեղադրել է ոչ թե իր վարդապետության, այլ անկարգ ընթացքի ու ժողովի որոշումներին չեմքարկվելու համար: Յայ Եկեղեցու հայերերը բարձր դրվատանքով են խոսում նրա մասին]:*

55. *Acta, v. 7f. 85v-86. Ակինեան, նշվ. աշխ., էջ 343-344, նամակի հայերեն թարգմանությունը: Acta, v. 7,f. 75,n. 10:*

56. *Acta,v. 7f. 119,n6; f. 157,n. 7-Acta,v. 8,f. 22,n. 4 :*

57. *Acta v. 7,f. 157, Ակինեան, նշվ. աշխ., էջ 349 :*

58. *Lett. Spagna, Portugal, Armenia, v. 104, f. 299-303, Ակինեան, նշվ. աշխ., էջ 348-350 :*

59. *տես Allatius Leo, De Ecclesiae Occidentalis atque Orientalis perpetua confession, tom 1-3, Coloniae, 1648, p. 1004. -Lett. volg. v. 13, f. 107 :*

60. *Acta, v. 8, f. 21 :*

61. *CL. Galano,Conc. Ecclesiae Armenae cum Romana, pars 2, t. 1, 397-Վիեննայի Միսիփարյան Սատենադարան, ձեռ. 37, թերթ 39ա [, Միսիփարյան Յայոց սուրբ Եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ Եկեղեցւոյն Յուղմայ, շարադրեալ ի յերկու հասորու՝ ի պատմական եւ վիժարանական, ի կարգէ թէատինոսաց Կոհէմս վարդապետէ,]:*

62. *[Հարականը տեսն Սատենագիրը հայոց, Անթիլիաս-Լիքանան, 2007, հտ. Ը, էջ 347] :*

63. *Ստեփանոս Լեհացի, Տաթեգրութիմ, էջ 174: Ալշան, Կամենեց, [Վենետիկ, 1897,] էջ 138:*

64. *[Յայր Պողոս Պիրոմալիմ/ + 1680 թ. I, որ հայ իրականության մեջ հայտնի էր Առաքել Բորիկ Շոռթեցի անունով, նշանակալից դեր է կատարել Յայ-Լա-*

տին եկեղեցաքաղաքական հարաբերություններում հատկապես 1660-70-ական թվականներին: Երկար տարիներ ապրելով Յայաստանում՝ կազմել է 35000 բառամիավորից կազմված հայ-լատիներեն բառարանը, որը սակայն մնացել է անտիպ. տես Գ. Կասպարյան, Յայ բառարանագրության պատմություն, Երևան, 1968, էջ 57]:

65. [Նկատի ունի Նիկոլ Թորոսովիշին]:
66. Չամչեան, Խո. Գ, էջ 611-612, Ամասունի, Ոսկան վարդ. Երեանցի [եւ իր ժամանակը, Վենետիկ-Ս. Ղազար, 1975], էջ 41-42, 269-275:
67. Ակինեան, նշվ. աշխ., էջ 349-350, Ալպոյաջյան, «Սիոն», 1937, էջ 122:
68. [Ստեփանոս Ռոշքան/Ստեփան Ստեփանյան] 1670-


1739 թթ. / ծնվել է Լեհաստանի Կամենեց քաղաքում, ուսումը ստացել Յոռմում: Յեղինակել է փիլիսոփայական, աստվածաբանական, պատմագրական երկեր: Նրա գոյին է պատկանում Յայ-լատիներեն եւ լատիներեն-հայերեն արժեքավոր բառարանը՝ «Գանձ հայոց լեզով» խորագրով: Վկայությունը քաղված է նրա ժամանակագրական աշխատությունից: տես «Ստեփաննոսի Ռոշքայ, ժամանակագրութիւնը կամ տարեկանը եկեղեցականը, հրատարակեց ի. Յամազասպ վրդ. Ոսկեան», Վիեննա, 1964]:

**Արեւելահայերենի վերածեց, ծանոթագրեց
ՀԱԿՈԲ ՔՅՈՍԵՅԱՆԸ
Պատվիրատու՝ «Սյունյաց Երկիր»**



Երուսաղեմի Սուրբ Յակոբյանց եկեղեցի

Խսկական անվանումը Միքայել Յակոբեանց Վանք Յայոց, Երուսաղեմի գլխավոր հայկական եկեղեցին է: Կառուցվել է 12-րդ դարում եւ նվիրված է Յակոբին՝ Երուսաղեմի առաջին պատրիարքին: Ըստ ավանդույթի՝ Յակոբը կախվել է եկեղեցու կառուցման վայրում: Նախապես այստեղ գտնվել է բյուզանդական եկեղեցի: 18-րդ դարում եկեղեցին վերանորոգվել է: Արեւմտյան հատվածում կա հիանալի գարդարված, 17-րդ դարի փայտյա դուռ: Եկեղեցում են նաև գտնվում 94-րդ Երուսաղեմի հայոց պատրիարքի՝ Գուրեգ Խրայելյանի եւ Սալահ աղ Դինի ժամանակակցի՝ Աբրահամի գերեզմանները:



Երուսաղեմի եւ ընդհանրապես քրիստոնեական
աշխարհի ամենանվիրական եւ գլխավոր
սրբավայրերից է: Այն կառուցված է Քրիստոսի
գերեզմանի, Գողգոթայի խաչելության տեղի,
Խաչգյուտի քարայրի եւ մի շարք այլ սրբավայրերի
վրա: Քրիստոսի գերեզմանը գտնվում է Ս. Հարության
տաճարի մեջ գմբեթի տակ՝ վիմափոր ժայռերի մեջ,
եւ երկու խորշի է բաժանված:
Տաճարը համատեղ տնօրինում են Հայ, Հույն եւ
Կաթոլիկ Եկեղեցիները, եւ Նրանց է Վերապահված
այս սրբավայրի մաքրությունը, նորոգությունն ու
գործածությունը: Հայոց Եկեղեցու իրավասությունների
շրջանակում մասնավոր իրավունքներ ունեն Շայի
ղպտիներն ու ասորիները:

**Երուսաղեմի
Սուրբ
Հարության
տաճար**

ՓԻԼԻՊՈՍ Ա ԱՂԲԱԿԵՑԻ



2 մենայն Յայոց կաթողիկոս 1632-ից: Յաջորդել է Մովսես Գ Տաբեւացուն:

Ծնվել է 1593-ին Աղբակ գավառի Էրմկան գյուղում, մահացել 1655-ի մարտի 25-ին Վաղարշապատում: Թաղվել է Ս. Յոհիվսիմե տաճարի հյուսիսային խորանում:

Եղել է Խաչատուր Վարդապետ Կեսարացու, Մովսես Տաբեւացու «արբազնանաքուր եւ բազմահանձար ծեռնասուն աշակերտ»-ը, Վերջինիս գործակիցն ու ծրագրերի շարունակողը: 1630-ին ծեռնադրվել է Եախսկոպոս եւ նշանակվել Քջիի առաջնորդ: Եղել է Մայր Արոնի նվիրակ Վան, Բաղեց եւ Կարին քաղաքներում, նշանակվել կաթողիկոսական փոխանորդ: Մովսես Գ Տաբեւացու մահից հետո՝ Վերջինիս կամոք, առաջադրվել է Ամենայն Յայոց կաթողիկոս: Կաթողիկոսական օժումը տեղի է ունեցել 1632-ի դեկտեմբերին:

Փիլիապոս Ա Աղբակեցին եղել է Յայոց Եկեղեցու ամենաարդյունաշատ եւ նշանավոր հայրապետներից: Ծավալել է Եկեղեցարարեկարգչական լայն գործունեություն, նպաստել հայ մտավոր մշակույթի եւ լուսավորական շարժման աշխատացմանը: Զարկ է տվել տպագրությանը, բացել դպրոցներ, կառուցել եւ վերանորոգել Եկեղեցիներ, վանքեր: Իր այդ ծեռնարկումների շնորհիվ «վաղնջուց խափանեալ վանօրայք լցան աբենայիք, եւ գիւղը եւ քաղաքը Երիցամբք. բազում կիսաւեր եւ խախտեալ Եկեղեցիք նորոգեցան, յոլով Եկեղեցիք նոր շինեցան» (Աղաքել Դավիթից): Ժամանակագիր Դավիթ Բաղիշեցին հավաստում է, թե Փիլիապոս Ա Աղբակեցին «ձեռնադրեաց ավելի քան զշորս հարիւր Եախսկոպոս եւ վարդապետ»: Վերաբացել է Եջմիածնի վանական դպրոցը եւ այստեղ հրավիրել շատ նշանավոր մանկավարժների: 1635-1637-ներին Յովիաննավանքի դպրոցը տեղափոխել է Եջմիածնի եւ, միավորելով տեղի վանական դպրոցի հետ, 1646-ին այստեղ ուսուցապետ է նշանակել Սիմեոն Վարդապետ Չուղայեցուն:

Փիլիապոս Ա Աղբակեցին իր շուրջն է համախմբել ժամանակի ամենանշանավոր մտավորականներին՝ աստվածաբաններ, փիլիսոփաններ, մանկավարժներ, փորձել Մայր Արոն Ս. Եջմիածնի վերածել հայ մտավոր եւ հոգեւոր կյանքին խթան հանդիսացող կենտրոնի: Ժամանակակիցը վկայում է, թե նրա օրոք Եջմիածնում կար «հարիւր սպասաւորս գրոց՝ վարժասէրս եւ հանճարատենչս»:

Վերանորոգել է կիսավեր վիճակում գտնվող Ս. Գայանե (1652), Ս. Յոհիվսիմե (1653), Յաղպատի, Սա-

նահինի վանքերը, Երեւանի Ս. Անանիա Առաքյալի անապատը (1654), Մայր տաճարն ու հարակից շինությունները, սկսել Մայր տաճարի զանգակատան կառուցումը (1654): Նրա համանարարությամբ է, որ 1651-ին Աղաքել Դավիթիցին սկսել է շարադրել իր նշանավոր «Գիրք պատմութեանց» Երկասիրությունը: 1638-ին ուղեւորվել է Սպահան եւ պարսից շահ Սեֆիի համաձայնությամբ 1623-ից Նոր Չուղայում պահվող Գրիգոր Լուսավորիչի Աջը փոխադրել Ս. Եջմիածնի:

1651-1653-ներին հովվապետական այցելություններ է կատարել Երուսաղեմն եւ Կ.Պոլիս: Երուսաղեմուն մասնակիորեն վերանորոգել է Ս. Յակոբյաց տաճարը: 1652-ին Երուսաղեմուն գումարել է Եկեղեցական ժողով, որին մասնակցել է 125-ից ավելի մարդ, այստեղ ընդունվել է 13 կանոն: Կ.Պոլսում փորձել է հաշտեցնել համայնքի ներսում «ներսեցի» եւ «դրսեցի» խմբավորումների միջեւ բորբոքված պայքարը եւ հասել որոշակի դրական արդյունքների (1653): Կարգավորել է Կիլիկյան աթոռի հետ լարված հարաբերությունները, մասնավորապես Եախսկոպոսական ծեռնադրության հետ կապված խնդիրները, մեղմել լեհահայ համայնքում բորբոքված հոլովացները, հակազդել նիկոլ արքեա. Թորոսովիչի կաթոլիկամետ քաղաքականությանը:

Իր ամբողջ գործունեությամբ Փիլիապոս Ա Աղբակեցին նպաստել է Յայոց Եկեղեցու միասնության ամրապնդմանը եւ ընդհանրական կաթողիկոսի դերի ու հերինակության բարձրացմանը: Նրա կիսատ մնացած բազմաթիվ ծեռնարկներ եւ ծրագրեր իրականացրել է իր աշակերտ ու գաղափարակից Յակոբ Չուղայեցին:

Կաթողիկոսական գահին Փիլիապոս Ա Աղբակեցուն հաջորդել է Յակոբ Դ Չուղայեցին: **Գրականություն. Աղաքել Դավիթիցի, Գիրք պատմութեանց, Երեւան, 1990; Օրմանյան Ս., Ազգապարում, հայո. Բ, Ս. Եջմիածնի, 2001:**

ՊԵՏՐՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՐ ԱՆԴՐԵԱՍ ՔԱԻՎԱՆԱ

Ըստ Առաքել Ղավիթեցու
«Պատմության»

2 յնպես եղավ, որ Շահ-Աբաս թագավորը եկավ Ագուլիս գյուղը:
Շահը սովորություն ուներ, ուր էլ կմտներ՝ թե քաղաք, թե երկիր, տեղի բոլոր բնակչութերը միանգամից ընդառաջ էին ելնում՝ իշխաններ, ժողովուրդ, տղամարդիկ, կանայք, աղջիկներ, երիտասարդներ ու մանուկներ: Բոլորն էլ զարդարվում էին ազնիվ ու թաճկագին զարդերով, (տանում էին) քաղցրահամ մրգեր, համադան ու անուշաբույր ուտելիքներ, ծաղկահամ զինիներ: Վայելչահասակ ու գեղեցկատես մանուկներն ու աղջիկները, կանայք ձեռքները բռնած գինին ոսկե բաժակով մատուցում էին շահին: Նաեւ աշխարհիկ գուսաններն ու երգչները առջեւից ընթանալով եւ գեղարվեստական երգերով քաղցրանվագ երգում էին: Նաեւ եկեղեցականները՝ քահանաներ, պաշտամունք կատարողներ, հագած շուրջառ ու ժամաշապիկ, առած խաչ, ավետարան, բարձրացրած խաչվառ, խումկերով, մոներով, զանգակներով ու ծնծղաներով դուրս էին գալիս շահին ընդառաջ եւ երգելով գնում, մինչեւ հասցնում էին նրա իշեւանատեղը:

Արդ՝ երբ Ագուլիս գյուղի քահանաները եկան շահի առաջ հագած շորերով, նրանց հետ կային դպրոցի մանուկներից ոմանք, որոնք շապիկ էին հագած, վերցրել էին մոնմակալներ ու մոներ եւ գնում էին խաչվառներին առջնթեր: Մինչ քահանաները երգելով գնում էին շահի առջեւից, շահը նայում էր այստեղայնտեղ և ըստ իր չարահուշ մտքի ու բարյախտության զնոնում էր բոլորին եւ գնեւելիս նայեց մանուկներին, տեսավ, որ մանուկների գագաթները ածիլված էին: Այս բանը նրան սարսափելի ծանր թվաց, որով հետեւ համարեց, թե իր համար են այդ արել, որպես զի մանուկները նրա աչքին վայելչագեղ չերեւան եւ շահին հաճելի չլինի, որ նրանցից չվերցնի: Շահը վայրկեմապես ցատումով լցվեց այն մարդու դեմ, որ մանուկների գագաթները ածիլված է եղել: Նաեւ մահմեդական հավատը ունեցող մարդիկ, որ բնիկ Ագուլիս գյուղի բնակչութեր են՝ երեւելի իշխաններ, որ շահի հետ շրջում էին եւ նրան մոտիկ սպասավորում, քրիստոնյաների դեմ ունեցած բնական նախանձի պատճառով ավելի եւս գրգռեցին ու զայրացրին քրիստոնյաների դեմ թագավորի ցատումը, դրա համար շտապ հուզմունքով շահը հրանայեց քննել ու գտնել նրան եւ սպանել, ով այդ բանն արել է: Եթե մանուկների ծնողներն արած լինեն այդ, նրանց սպանել եւ ունեցվածքները հափշտակել, իսկ մանուկներին

վերցնել թագավորի ծառայության մեջ: Իսկ թագավորի առաջիկա ծառայողները սկսեցին քննել, սրանցից, նրանից հարցնել, թե ով այն արած կլինի: Ամենքը պատասխանում էին, թե չգիտեն: Ապա մեջտեղ բերին տեր Անդրեասին, ստիպելով պահանջում էին, թե ասս մեզ, քանի որ մանուկների վերակացուն դու ես եւ դու ես տեղյակ: Իսկ տեր Անդրեասը մտքում խորհում էր, եթե ծնողներին մեղադրեն, նրանց կսպանեն եւ մանուկներին կիափշտակեն, եթե մեկ ուրիշի մեղադրեն, նրան կսպանեն, իսկ այդ կդառնա ինձ համար խղճնուանքի անփարատելի ցավ ըստ սուրբ ավետարանի վկայության, թե՝ «Լավ է, մի մարդ մեռնի, որ ամբողջ ժողովուրդը չկորչի» (2): Այս պատճառով լավ համարեց իրեն մատնել ու շատերին փրկել: Եվ եր զինվորները շատ ստիպեցին, տեր Անդրեասը ուրիշներին փրկելու համար ասաց, թե ես եմ արել այդ: Զինվորները նրա խոսքը հայտնեցին շահին, իսկ շահը հրամայեց՝ բռնել նրան եւ պահել կայանքի տակ: Օրեր հետո շահը հրամայեց նրան բերել իր առջեւ, հարցրեց. «Թե ճիշտն ասա, ո՞վ է այդ գործի անողը»: Տեր Անդրեասը ասաց. «Ոչ ոք, այլ միայն ես»: Իսկ շահը տեսավ, թե ուրիշ մեկի չմատնեց, սարսափելի բարկացավ նրա վրա, հրամայեց տարածել գետնի վրա ու անխնա բրածեթել: Շատ հարվածներից հետո շահը ասաց. «Դու այդախսի վնաս ու հանցանք ես գործել, եթե կամնում ես կենդանի մնալ, ուրացիր ձեր քրիստոնեական հավատը, ընդունիր մեր կրոնը եւ մեր մոլար առաջնորդի դավանանքը, ես թեզ կտամ պատիվներ ու մեծություն, իսկ եթե չհամաձայնվես, շների ու զազանների առջեւ կնետեմ քեզ»: Նա հանձն առավ չուրանալ, այլ պատասխան տվեց, թե քրիստոնյա են եւ քրիստոսի ծառա: Իսկ թագավորը այդ լսելով զայրագին բարկությամբ հրամայեց դարձյալ բանտ գցել:

Մյուս օրը վերստին բերեց իր առջեւ եւ հարցրեց՝ «Ուրանո՞ լմ ես քո հավատը»: Տեր Անդրեասը ասաց. «Չեմ ուրանում»: Կրկին անգամ արքան ասաց. «Քեզ պատիվներ ու մեծություն կտամ, եթե ուրանա ձեր հավատը»: Իսկ նա չհամաձայնվեց, եւ դարձյալ հրամայեց բանտ գցել:

Իսկ քրիստոնյաները մոտեցան թագավորի նախարարներին եւ խոստացան մեծ դրամ, որ գուցե պահանձեն նրան: Թեպես նախարարները երկից, երից նանդեցին, արքան չլսեց: Նաեւ ցղնացի խոջա Անձրեւի կինը, որին շահը մայր էր ասել, եւ հարգանք ուներ շահի առջեւ, մեծ աղաշանքով ընկավ շահի ուտքը, նանդեց ազատել նրան, սրան նույնպես չլսեց:

Դարձյալ տեր Անդրեասին բերին արքայի առջեւ. շատ անգամ արված հարցուփորձից, պարզեւերի խոստումով, տանջանքների սպանալիքով, երբ թագավորը տեսավ չի համաձայնվում, հրամայեց սպանել: Իսկ քա նահատակ եւ ծշմարիտ քահանա տեր Անդրեասը հաստատուն հավատով կանգնած էր քրիստոնեության մեր հավատի անշարժ հիմնան վրա:

Իսկ զինվորները առան տեր Անդրեասին կապանքներով տարան ի կատար ածելու տեղը, եւ նա ուրախությամբ ու հոժար կամքով գնում էր: Եվ եր հասավ կատարնան տեղը, ինքը արձակեց իր գոտին, հանեց հագուստները եւ դահիճներին ասաց, որ իր վրա կատարեն թագավորի հրամանը: Բայց դահիճները ուշացնում էին, թե գուցե համաձայնի թա-

գավորի առաջարկներին:

Եվ մինչ սուրբը կանգնած էր կատարման տեղում, թագավորը նրա մոտ ուղարկեց նախարարներից ունաց կրկին անգամ, թե՝ «Մի կորցնիր քո գեղեցկությունն ու երիտասարդությունը, եկ, հանաձայնվիր իմ խոսքերին եւ իմ ճնշնից պարգևներ ու մեծություն առ»: Իսկ քաջ նահատակը նրանց բոլոր խոսքերին պատասխանում էր, թե՝ «Զեր դատարկ խոստումները չեմ ընդունում եւ իմ ճշնարիտ հավատը չեմ ուրանում»: Դահիճները հանել էին սրերը, խաղացնում էին նրա վրա, դնում էին որովայնին նրան վախեցնելու համար, բայց նա չէր երկազում:

Նահատակության տեղը եկան սրբի ծնողները եւ կանգնած էին մոտը, աղիողորմ ու հորդաբուխ լալիս էին եւ աղազանքով ասում սրբին. «Մեր քաղցրիկ որդյակ, որ ստանձնեցիր քահանայության կարգ եւ եղար քրիստոսի զինվոր, երբեք չուրանաս քրիստոսին եւ լինես քրիստոսի աստղների զինվոր չըողնես քրիստոսի լուսապայծար հավատքը եւ ժամանակավոր կյանքի համար զրկվես հավիտենական կյանքից, այլ հիշիր քրիստոսի ճշնարիտ մարտիրոսներին, որոնց պատմությունը ճշտապես կարդալով պատմում էիր մեզ, համբերիր, ինչպես նրանք, որպեսզի նրանց պսակին արժանանաս»: Ծնողները փողձագող սրտով, հորդաբուխ արտասուրմերով, աղերսելով այս եւ սրա նման խոսքեր էին ասում սրբին նրա մոտ կանգնած: Իսկ դահիճները երկար ժամանակ ուշացնում էին այնտեղ, որ թերեւս երկմտելով թուլանա, բայց սուրբը անդրդվելի կանգնել էր ճշնարիտ հավա-

տի վրա եւ դեմքը խաչակնքելուց չէր դադարում: Երբ դահիճները տեսան նրա հաստատուն մտադրությունը, որ չի դաշնա (իր հավատից), այդ ժամանակ սուրբ երկարելով պատռեցին նրա որովայնը, եւ փորից աղիճները դուրս թափվեցին: Իսկ սուրբը մի ձեռքով աղիճներն էր հավաքում փորում, մյուս ձեռքով խաչակնքում էր երեսը եւ հիշում քրիստոսի անունը: Ապա (դահիճները) ոտքի սրունքների ջիւերը ծակեցին եւ պարանով բարձրացրին վեր եւ սրբին գլխիվայր կախեցին: Նա մնաց կենդանի մինչեւ արեւամուտ, երեկոյան մաքուր հոգին ավանդեց աստծու ձեռքը որպես անուշաբույր խունկ եւ ընդունելի մատադ:

Սրբի նահից հետո շահը հրամայեց նրա մարմինը նետել շինությունից դուրս, որպեսզի կերակուր դառնա գազանների ու թօչունների: Իսկ քրիստոնյաները այնտեղից վերցրին. բերին Ագուլիսի մերքին եկեղեցին, որ այժմ կոչվում է Խցածորի եկեղեցի, եւ այնտեղ բաղեցին. այժմ էլ այնտեղ բաղված են նրա ոսկորների պատվական Շշխարները բոլոր քրիստոնյաների բարեխսության համար:

Աստծու սուրբ քահանա տեր Անդրեասի նահատակությունն ու մարտիրոսական մահը տեղի ունեցած հայոց մեծ թվականության 1066 (1617) տրե (3) ամսի 10-ին, այսինքն՝ նոյեմբեր ամսի տասնութին: Նրա հիշատակը թող օրինությամբ լինի, իսկ աղոթքներով տերը մեզ ողորմի. ամեն:



ՄԵԾ ԵՒ ՎԻՃԱՎՈՐ ԻՉԻԱՆ ԽՈՉԱ ՆԱԳԱՐ

â ափազանց հզոր ու նշանավոր էր խոջա նազարը, ով ոչ միայն ջուղայեցիների, այլև Պարսկաստանում բնակվող հայերի ավագն էր եւ սիրելի էր Շահ Արասին:

Խոջա նազարի եւ նրա գերդաստանի մասին մենագրություն է հեղինակել Յարություն Քյուրտյանը (Քիւրտեան Յ., Զուղայեցի Խոջայ Նազարը եւ իր գերդաստանը, Վիեննա, թվականը հայտնի չէ): Մինչ այդ նրա մասին հարուստ տեղեկություններ է հաղորդել Յարության Թ. Տէր Յովհաննեսը՝ «Պատմությին Նոր Զուղայու, որ յԱսպահան» գրքում (1880, Նոր

Զուղայ):


Ազգատոհմի նահապետը խոջա Խաչիկն էր, ով որդին էր Մանուկ Նազարի (ըստ Ղետնդ Ալիշանի Ենթադրության, «Սիսական», էջ 424):

Խոջա Խաչիկը նույն այն անձնավորությունն էր, ում հիշում է նաեւ Առաքել Դավիթիցին՝ կապված Շահ Արասի Զուղայ գյուղաքաղաք այցելության հետ: Ահա. «.... Իսկ շահի ընթացուղին զարդարել էին, գետեզրից մինչեւ Խոջա Խաչիկի ապարանքը փուել էին գորգեր քագավորի ոտքերի տակ, թանկարժեք, մեծահարգի ու վայելուշ կերպասներ, որոնց վրայով քագավորը անցավ գնաց Խոջա Խաչիկի տունը: Իսկ այնտեղ տանը Խոջա Խաչիկը ուսկէ սկսուեղու ուսկով լցորած տված իր որոտ ձեռքը մատուցեց քագավորին... Շահը այնտեղ մնաց երեք օր, իսկ ջուղայեցիները պատվեցին նրան համադամ կերակուրներով ու ծաղկահամ գինիով» (Պատմություն, Երեւան, 1988թ., էջ 31-32):

Խոջա Խաչիկի կամ Աղա Խաչիկի կինը Մամին էր, ում նաեւ Մարիամ էին անվանում: Նրանք ունեցել են երեք որդի՝ Սաֆար, Նազար, Սիման, եւ երկու դուստր՝ Խաթուն Եղտիհաս եւ Խաթուն Ազատ:

Խոջա Խաչիկը, ըստ Ղետնդ Ալիշանի, մահացավ 1604-ին Զին Զուղայում:

Նրա որդիներից նշանավորը Խոջա Նազարն էր,



100. Շիրբէ խոնց Ումուսի նախքառը -

**Խոջա Մանուկ Նազարի շիրիմը Նոր Զուղայում: Մանուկ Նազարը, Ալիշանի
Ենթադրությամբ, Խոջա Խաչիկի հայրն է**

ով ամուսնացավ Խաթուն Զաննի (կամ Խաթունջանի) հետ: Ունեցան երեք որդի՝ Սաֆրազ, Էյազ եւ Վաթան: Նաեւ դուստրեր ունեցան, որոնց անունները չի հիշատակվում:

Ինչպես արդեն նշեցինք, բացառիկ ծերմ հարաբերություններ ունեին Նազարն ու Սաֆարը Շահ Արա արքայի հետ: Արքան գալիս էր նրանց տները, շահն էր նրանց էր իր տուն հրավիրում ու պատվում իր մեծամեծների հետ, պատվիրում իր նախարարներին՝ նույնը անել: Շահ Արասը մեծ հրովարտակ էր գոել՝ Խոջա Նազարին տալով ազատ վաճառականության հրավունք:

Խոջա Նազարը միջնորդների օգնությամբ բանակցություններ էր վարում Հոռնի Սուրբ Քահանայապետի հետ՝ Եվրոպական երկրներում հայ վաճառականներին արտոնություններ տալու, նաեւ հայերի համար դպրատուն իհմնելու նպատակով: Եվ, ընդհանրապես, Նազարը բարի հարաբերություններ ուներ լատին կրոնապետների հետ: Նրա լատինամետության մասին է խոսում փաստը, որ իր որդիներից մեկին սովորեցնում էր լատին լեզուն եւ պատրաստում դառնալու լատին կրոնավոր:

Խոջա Նազարի ազգանապաստ գործունեության մասին շատ պատմություններ կան, որոնցից մի քանին արժանի ենք համարում իշշել:

Ուշագրավ գործերից մեկը կապված է Սուրբ Շոփիսիմի նշխարների հետ, որ ֆռանկները համել էին Եջմիածնից եւ փորձում էին տանել Պորտուգալիա: Խոջա Սաֆարի ու Խոջա Նազարի միջնորդությամբ Շահ Արասը հրամայեց հայտնաբերել նշխարները եւ վերադարձնել:

Մի ուրիշ պատմություն էլ կապված է Սուրբ Հովհաննես Կարապետի նշխարների հետ: Խնդիրն այս անգամ եւս լուծվեց հօգուտ քրիստոնյա հայերի:

Խոջա Նազարն իր խոհեմությամբ կասեցրեց Շահ Արասի ցնորական մտադրության իրազործումը՝ կապված Եջմիածնի Մայր տաճարը Սպահան տեղափոխելու հետ: Ան թե ինչպես է ներկայացնում Առաքել Դավիթեցին Շահ Արասի ու Խոջա Նազարի միջեւ տեղի ունեցած գրույցն այդ մասին: «.... Շահը Խոջա Նազարին ասաց. «Ձեզ համար այստեղ Եջմիածնին եմ շինում, որպեսզի այն Եջմիածնի համար ձեր սրտերը կարոտ քաշելով չճնլվեն. Կիրամայեմ՝ բազմաթիվ ուղտեր, ջորիներ, սայլեր գնան, որպեսզի այն Եջմիածնի քարը, հողը քանդեն, թերեն այստեղ, որ այն քարով, հողով շինվի այս Եջմիածնը, որպեսզի առանց որեւէ երկմտության ձեր սրտերը կաչեն այս նոր շինվածքին»: Իսկ Խոջա Նազարը քանի որ չէր ցանկանում Սուրբ Եջմիածնի քանդումը, դա նրան սրտին կսկիծ էր, շահի մտադրությունը Խափանելու համար պատասխանել է այսպես. «Թագավորը ողջ մնա, եթե քո կամքը ուզի գեղեցիկ ու հաստատուն Եջմիածնին շինել, կարող ես արծաթից ու ոսկուց շինել, ոչ թե քարից: Ի՞նչ հարկ կա քարի ու հողի համար այդքան տառապանք կրել ու այդքան ծախս անել դրա վրա. Ինտո եւ օտար աշխարհից քար ու հող բերել: Այս աշխարհի քարն էլ, հողն էլ եւ բավական է, եւ լավ, եթե կամենում ես շինել, սրանցով շինիր, եւ մեզ ընդունելի է»» (Պատմություն, Երեւան, 1988, էջ 162-163): ... Եվ այսպես խափանվեց շահի մտադրությունը, ինչին նպաստեցին նաեւ արտաքին

հանգանաճները:

Խոջա Նազարը մեծ դերակատարություն ունեցավ Մովսես Տաթեւացուն առնչվող հարցերում:

Ֆահրաբադում, օրինակ, Նազարը շահի անունից պատվիրեց Մովսեսին ավելի լավ հոգածությամբ պատրաստություն տեսնել Զրորիների համար, որ հանդիսավոր լինի: Տոնից հետո, որ կայացավ աննախադեպ շքեղությամբ, Նազարը շահին շատ բարի խոսքեր ասաց Մովսեսի մասին: Շահն էլ հարցրեց Նազարին. «Վարդապետն իր սրտում ի՞նչ խնդրանք ունի, որ կատարենք. ոսկի, արծար կամ այլին, որը որ կամենա» (Առաքել Դավիթեցի, նույն տեղը, էջ 187): Օրեր հետո խոջա Նազարն արքային ասաց. «Եթե Էջմիածնի լուսարարությունը շնորհես սրան, շատ լավ կանեն, քանզի ինքն էլ է այդ խնդրում»:

Եվ թագավորը հրամանով շնորհեց այդ խնդրանքը:

Խոջա Նազարը մնտահոգված էր նաև Յայոց Եկեղեցու 100 թուրան տուգանքի հարցով: Երբ 1629թ. Պարսկաստանում թագավոր դարձավ Շահ Սեֆին, Նազարը Սպահանից ինաց տվեց Մովսեսին (սուրհանդակ ուղարկելով) շտապ գալ արքայի պալատ, որպեսզի միջոց գտնեն՝ վերացնելու տուգանքը: Եվ երկուսով, շատ գումար ծախսելով, կարողացան վերացնել տուգանքը, ինչի վերաբերյալ արքայական հրաման գրվեց:

Իսկ ավելի ուշ, երբ Մովսեսն արդեն եպիսկոպոս էր, Նազարն իր որդի Սաֆրազի միջոցով նրան հրավիրեց Սպահան, որտեղ եւ մեծարեցին եպիսկոպոսին:

Խոջա Նազարը 1621-ին կարողացավ կասեցնել Շահ Արասի եւս մի ցնորամիտ ծրագրի հրագործումը. արքան կամենում էր Սպահանի հայերին բռնի մահմեղականացնել:

Սակայն եղավ եւ դեպք, որ Նազարը համաձայնության չեկավ Մովսես Տաթեւացուն հաջորդած Փիլիպոս Աղբակեցի կարողիկոսի հետ: Խոսքը Սուրբ Լուսավորչի աջը (որ Շահ Արասի հրամանով Էջմիածնից բերել էին Սպահան) Սուրբ Էջմիածնի վերադարձնելու մասին էր: Ահա թե ինչպես է ներկայացնում ջուղայեցիների դիրքորոշումը ժամանակի պատմագիրը. «Իսկ այնուհետեւ տեր Փիլիպոս կարողիկոսը երեւանի հայ ժողովողի երեւելի մարդկանցով, որ կամենում էին աջի Էջմիածնի գնալը, սկսեց շրջել թագավորի իշխանների դռները եւ առատաձեռն նվերներով ամենքի սիրտը գրավեց: Ապա այս ամենից հետո գուտ ոսկի դահեկան լցուց սկսութեղը եւ սրա հետ գրված խնդրագիր մատուցեց Շահսեֆի արքային՝ նրանից սուրբ Լուսավորչի

աջը տալու հրաման խնդրելով: Իսկ ամբողջ հավիտենից եւ ազգաց տերն ու աստված, որ իր ձեռքում պահում է բոլոր թագավորների սրտերը եւ որ կողմը կամենում շրջում է այն, այս ժամին թաղցրացրեց թագավորի սիրտը, նա շնորի արեց հայրապետին, կատարեց նրա խնդրանքը եւ գրով, թագավորական կնիքով հրաման տվեց, որ ջուղայեցիր սուրբ Լուսավորչի աջը տան տեր Փիլիպոս կարողիկոսին: Երբ Փիլիպոս կարողիկոսը առավ թագավորի հրաման-հրովարտակը, բերեց խոջա Սաֆարի թոռների մոտ.... Սրանք չկամեցան աջը տալ, կարողիկոսը սրանց մեծ բարկությամբ սաստեց, իսկ նրանք, վախենալով նրա սրբությունից եւ հայրապետական անեծքից, փափկեցին համառությունից: Եվ տեր Փիլիպոս հայրապետը թագմարիվ քահանաներով ինքը գնաց խոջա Սաֆարի տուրնը, այնտեղից աջը առավ եւ բերեց խոջենց եկեղեցին» (Առաքել Դավիթեցի, «Պատմություն», Երեւան, 1988, էջ 252):

Ինչպես տեսնում եք, միայն Նազարի եւ Սաֆարի մահից հետո Լուսավորչի աջը հնարավոր եղավ տեղափոխել Էջմիածնի: Դա 1638թ. սեպտեմբերի 20-ին էր:

Խոջա Նազարը մահացավ 1636-ին եւ թաղվեց Նոր Ջուղայի հասարակաց հանգստարանում (ծննդյան թվականը հայտնի չէ): Տեր Յովհաննեանցը հիշեցնում է երկարաշունչ դամբանագիրը, որից երկու տող կուգենայինք հիշել՝

«Ա՛ իմ աննման խօջա որ չկայ յաշխարհս քեզ նման...»

Անունդ քո Նազար կոչի որ ասի ծաղիկ պատուական»:

Խոջա Նազարի մեծագործությունների մասին խոսել են նաև նրա մահվանից հետո:

Շահ Արասի եւ Նազարի բացարիկ բարեկամական հարաբերությունների մասին ասացինք: Սակայն, ըստ որոշ աղբյուրների, Արասը նրան անվանում էր «քռո»: Դավիթեցին նման բան չի հիշում, որ Նազարը եղած լինի միաշքանի կամ կույր: Այդուհանդերձ կարելի է ենթադրել, որ հայ վաճառականապետն աշքի անկանոնություն կամ տկարություն է ունեցել:

Մի հավելում եւս. Խոջա Նազարի շիմարարական գործունեության մասին գրավոր աղբյուրներում գրեթե ոչինչ չի պահպանվել, թեև մեծ գործեր է արել: Միակ տեղեկությունն այն մասին է, որ ինքն է կառուցել Նոր Ջուղայի Սուրբ Գեւորգ եկեղեցին:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ





Մելիք
Հայկազն 2-րդ:
Գեղանկարը
Որբերտ
Կամոյանի,
յուղաներկ
100x90, 2013թ.:
Պատվերը՝
«Սյունյաց
Երկողի»

Մելիք Հայկազն 2-րդ. այր դյուցազ- նական, իշխան երկրիս ու պանծալի անուն

Է Եֆյան Շահ Արքաս Ա-ի 1609թ. իրովարտակը Քաջարադի Մելիք Հայկազն նորին սրբությանը գեկուցեց, որ նախքան Գանջայի վիլայեթի՝ հաղթական պետության տիրապետության տակ անցնելը, հակառակորդի կողմն անցած մի խումբ նարդկանց եւ օսմանցիների, որոնք անցնում էին օսմանցիների երկիրը, ինքը բռնել եւ ուղարկել է բարձրագույն դուռը: Այժմ որոշ նարդիկ ցանկանալով վրեժինդիր լինել այն գործերի համար, որոնք տեղի են ունեցել նախքան այս վիլայեթի՝ հաղթական պետության տիրապետության տակ անցնելը, իիշյալ մելիքին հետապնդում եւ անհանգստություն են պատճառում: Ուստի, որոշեցինք, որ ոչ մի արարած չհամարձակվի օսմանցիների չարաբաստիկ ժամանակներում կատարած գործերի պատճառով իիշյալ մելիքին նեղություն տալ եւ անհանգստություն պատճառել, եւ թող գգուշանան անհնազանդությունից: այդպիսիք ենթակա են պատժի:

Այսու Պետ. Կենտ. արխիվ. ֆոնդ 59. գործ Ա., թերթ 1. բնագիր, մեջ. 38x16 սմ, գիր՝ շիքաքե - նասբաալիդ

Իշխանությունն աստծունն է:

Շահ Արքաս Ա-ի կնիքը

ՎԱՎԵՐԱԳԻՐ 9

ԱՐՁԱՅԱԿԱՆ ՀՐԱՄԱՆ
ԵՂԱՎ ՀԵՏԵՎՅԱԼԻ
ՄԱՍԻՆ

Ե ավագույն քրիստոնյա քուշրասիֆի Մելիք Հայկազն նորին սրբությանը գեկուցեց, որ նախքան Գանջայի վիլայեթի՝ հաղթական պետության տիրապետության տակ անցնելը, հակառակորդի կողմն անցած մի խումբ նարդկանց եւ օսմանցիների, որոնք անցնում էին օսմանցիների երկիրը, ինքը բռնել եւ ուղարկել է բարձրագույն դուռը: Այժմ որոշ նարդիկ ցանկանալով վրեժինդիր լինել այն գործերի համար, որոնք տեղի են ունեցել նախքան այս վիլայեթի՝ հաղթական պետության տիրապետության տակ անցնելը, իիշյալ մելիքին հետապնդում եւ անհանգստություն են պատճառում: Ուստի, որոշեցինք, որ ոչ մի արարած չհամարձակվի օսմանցիների չարաբաստիկ ժամանակներում կատարած գործերի պատճառով իիշյալ մելիքին նեղություն տալ եւ անհանգստություն պատճառել, եւ թող գգուշանան անհնազանդությունից: այդպիսիք ենթակա են պատժի:

Այն դեպքում այս թող ընդունեն որպես խիստ կարգադրություն եւ իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1017 թվականի գիկադիա ամսին (1609թ. փետրվար 6 - մարտ 7):

Սովեն Տաթեւացի

Sê ա մեծախորհուրդ մարդ էր՝ շինարար, պահեցող, ճգնող եւ կարեկից, ողորմած ու գքած աղքատների, մանավանդ գերյալների նկատմամբ»։ Ղուկաս գրի (1)։

Ինչպես ականատեսներն են միաբերան վկայում, Մովսես կարողիկոսը «միանգամայն պարզ էր բարոյականությամբ, մտքով՝ ազատ, վայելչացած գեղեցիկ եւ փառազարդ դեմքով, միջահասակ էր, ներքին եւ արտաքին մարդով շնորհաշուր եւ ճոխությամբ փայլատակող»։ Մովսես Քջնեցին, որին են պատկանում այս տողերը, ավելացնում է, թե այն հատկությունները, «որոնցով (Աստված) օժտել էր սուրբ Սահակ Պարթևին, որ գովաբանված էր բնական եւ իմացական շնորհներով, կարելի էր համարել» (2), թե գտնվում էին Մովսեսի անձի մեջ։ Նույն հեղինակից են նաեւ հետեւյալ տողերը. «Սրբազն ու երջանիկ Մովսես հայրապետը... այսօր անհամենատելի գտնվելով, ոչ ոք չի կարող նրա շնորհների քանակը հիշատակել, եւ քեզ համար թող օրինակ լինեն Սահակ Պարթևը եւ Մեծն Ներսեսը՝ համաձայն բնության բարքի, ըստ կյանքի մաքրության, ըստ արդար ընթացքի, ըստ ազգին բերած շահի առավելության եւ այլ բաների» (3)։ Ուրիշ մերձավոր մեկը կարողիկոսի մասին վկայում է, թե՝ «ահարկու էր, տեսքով՝ զվարերես ու հասակով՝ վայելուչ, ինչպես ասպուն է սուրբ Ներսեսի եղբորորդու՝ տեր Գրիգոր Տղա հայրապետի վերաբերյալ» (4)։ Ավելի հատու է Նիկողայոս գրչի վկայությունը (1632 թ.)։ «Որ ծաղկուն եւ բարգավաճ է բնական, բանական, կրթական իմաստությամբ՝ մանավանդ կրկին նորոգող լինելով հայ ազգի» (5)։ Եթե այս նկարագրությունները վերաբերում են արտաքին մարդուն, ուրիշներն անտեղյակ չեն՝ ուրվագծելու նրա ներքին մարդու պատկերը՝ վերիհանելու համար «առաքինի վարքով» (6) «սրբամյալ ճգնող կարողիկոսի» (պատկերը) (7), որ «մաքրակենցաղ է եւ սրբասնունդ, երկայնամիտ եւ ողորմած» (8) «հույժ խոնարի եւ հեզ, առաքինի եւ սուրբ, կույս եւ ընտիր» (9), «պարկեշտ եւ սրբակրոն վարքով, խոշորագեստ ու պահեցող» (10)։

Կարողիկոսի «գեղեցիկ եւ փառազարդ դեմքը», որ այնքան պատշաճ էր նրա «միջնաշափ հասակին», թեպետ ըստ արտաքին հանգամանքի «ահարկու» էր ցույց տալիս նրա անձը, սակայն «բնական, բանական եւ կրթական իմաստությունը», որով ծաղկել ու բարգավաճել էր, նրան զվարք տեսք էր պարգետում

եւ դարձնում «շնորհաշուր», «ճոխությամբ» պատկառազդու, բայց եւ «պարզ», բնավորությամբ՝ սիրելի եւ «ազատական մտքով»՝ կաշառող, «մեծախորհուրդ», իմացականությամբ դիմացինին իրեն հարազատ դարձնող ու համոզող։ Թեպետ նշանավոր տոհմից էր, բայց սիրեց պարզությունը, եւ պարկեշտ ու սրբակրոն վարքով ապրեց՝ աղքատի հետ հարազատ եւ հարուստի հետ հաշտ։ Քանի որ «խոշորագեստ ու պահեցող էր», սիրելի չեր շիերը կենցաղով պարող մարդկանց համար, եւ ինքն էլ չուզեց հաշտություն կնքել նրանց հետ։

Մովսեսը մանուկ հասակից նվիրված էր սուրբ Խորանին, հոգով փարված իր կոչմանը, ու նրան հավատարիմ մնաց մինչեւ իր վերջին շունչը։ Կամովին հրաժարվել էր աշխարհից ու եւ չնայեց։ Խոչա նավարը իրավունք ուներ նրա մասին վկայելու, թե «զանց էր արել աշխարհն ու նրա հանդեպ փափագը» (11)։ Անձնուրաց կերպով նվիրված էր եկեղեցուն, ապրեց նրա համար, նախանձախնդիր եղավ նրա շահին ու պայծառությանը։ Զգաց, որ իր պաշտոնը իրենց պահանջում է գիտություն։ առանց մերձավորի սիրուց կաշկանդվելու, առանց հայրենիքի բարձրաբերձ լեռներով ու հովասուն վայրերով հրապուրվելու՝ իր ծեռքն առավ ցուաք եւ իրեն ուսուցիչ փնտորեց հեռավոր օստարության մեջ։ Յարատեւ տքնությամբ, գրկանքներով ջանք էր գործադրում հասնել վարդապետի ոստիքին, պայքարեց աներեւույթ ոգիների դեմ՝ քաղելու համար անմահարար ողբի ողկույզները։ Զարմանք էր առաջացնում իր հարատեւ ընթերցասիրությունը։ Ուսանա տեւողությունը չհուսահատեցրեց իրեն՝ ոչ հեզաքարո Ուրիայեցու դաստիարակությունը (12), ոչ խիստ եւ անմերող Կեսարացու ուսուցչությունը (13)։ Կյանքի անհարթ ընթացքն էլ ավելի թոքեց նրա ներքին կարողությունները։

Պանդիստության օրերը նա օգտագործեց՝ ընդարձակելու իր մտավոր պաշարը, հարստացնելու իր իրազեկությունը զանազան գիտելիքներով, ծանոթանալու ազգային խնդիրներին, ըմբռումներին ու մտածումներին եւ սրելու իր քաղաքական շրջատեսությունը։ Եղավ Ամիդուն, Եղեսիայուն, Կ. Պոլսուն եւ Երուսաղեմուն, այցելեց Եգիպտոսի ճգնարանները, Պաղեստինի վանքերը, թափանցեց վանական հաստատությունների եւ կազմակերպությունների ներքին խոհանոցի մեջ։ Փորձառություն ամբարեց, որոնք նպաստեցին թե՝ անձի կատարելագործմանը եւ թե՝ օգտակար եղան հասարակությանը։ Այսպես, ամեն տեսակետից զարգացավ արքուն մտքով, ուսումնասեր եռանդով, որպեսզի եկեղեցու պայծառացնողն եւ ժողովրդի լուսատուն դառնա։

«Նորաձեւ» ու «նորահնար» համարվեցին նրա քարոզները հայրենիքում, իր «խոշորագեստ ու պահեցող» կենցաղավարության համար մեղադրվեց «խաքերա», «կեղծավոր» որակումներով, զգնահատվեց նրա շինարարական գործունեությունը, կարողիկոսը սպառնաց։ «Թո շինած բոլոր եկեղեցիները գլխիդ պիտի թափվեն» եւ նույնիսկ սպառնաց՝ պահանջելով։ «Դուն արի այս երկիրց»։ Թշնամիներն իրենց ատամները կրծտեցին նրա դեմ, սակայն նա անդրդվելի մնաց իր տեղում, ինչպես մի հսկա ծառ, որ իր արմատները ծգել է խորը հայրենի հողի մեջ՝ աներկյուղ մնալով թե՝ հալածանքների մեջ, թե՝ աքսո-

րի սպառնալիքների առջեւ. «Ինչպե՞ս ես մոռանամ Թրիստոսի Ավետարանը, կամ աքսորը, որ եղավ հանուն Աստծոն օրենքի»: Երկյուղ չգործեցին նաև պարսկի բռնակալի սպառնալիքները, ոչ էլ երկաթյա կապաճեները, ոչ մահվան արհավիքը եւ ոչ էլ ծանր տուգանքը (14): Դրանք հարվածներ էին, որ իշնում էին հրաշեկ երկարի վրա՝ էլ ավելի զորացնելու նրա կարծրությունը: Ի վերջո բռնակալի (15) խստարստությունը տեղի տվեց «մաքրակենցաղ ու սրբանունդ» առաջալի համբերության առջեւ, եւ թշնամիները - ափսոս որ ազգակից էին նրանք - խոնարհեցին նրա առջեւ: «Նրանք որքան ջանում էին ընկեն՝ իրենք իսկ ծաղրի առարկա էին դաշնում» (Ղուկաս գրիչ) (16): Կաթողիկոսը խոստովանեց, թե «Ահա ազգս հայոց՝ մեծ ու փոքր, երես դարձրին ինձանից ու քեզ են սիրում եւ ընդունում... այսուհետեւ դու վարիր կաթողիկոսության պաշտոնը, ինչին որ արժանի ես»:

Մովսեսը հետամուտ չէր կաթողիկոսական պատվին, բայց պահանջում էր ազատ խոսք, ազատ ասպարեզ ու բազուկների անկաշկանդ շարժում: Կարոտում էր Եկեղեցուն՝ վերանորոգելու գլուխն ու անդամներին. պետք էր մարտնչել թուլամորթ, անպտուի, նյութապաշտ առաջնորդների դեմ, պետք էր պայքարել զեղծարարությունների դեմ, զսպել վաշխառուների ազահությունը, բարձրացնել բարոյական կարգերը, նորոգել կիսավեր տաճարները, պայծառացնել Եկեղեցիները, դաստիարակել ժողովրդին, ծաղկեցնել ամայությունը եւ հայ սրտում վառ պահել կրոնի եւ լուսավորության կանթեղը: Եվ հարատեւեց կռվի դաշտում ու տարավ հաղթանակը: Մինչ փառասերները փախուստի էին դիմում, փառքը հետապնդում էր փառքից փախչողին:

Ազգը միահանոււ, միախորհուրդ ընտրեց իր առաջնորդին: Չէր սիալվել իր ընտրության մեջ: Մովսեսը դարձավ ազգի «երկրորդ լուսատուն», նույնիսկ «հայոց աշխարհի բազմապատիկ լուսավորիչը»: Այստեղ, իր գործունեության բարձունքի վրա մեր առջեւ, որպես դարակազմիկ դեմք, հանում է իր մեծ անձը: Հզոր բազկով կանգնեցնում է ժամանակի անիվը, որ գնում էր դեպք քայքայում, ու նրան տալիս էր նոր ընթացք՝ դեպք բարվերում եւ բարգավաճում:

Անգեն եւ առանց նյութական միջոցների նետվեց կովի սպարեզ, եւ, ապավինելով իր հավատքին եւ կամքի ուժին, ընկեց թշնամուն, եւ նվաճեց հայրենի աշխարհը, վերաշխնեց այն ու քաղցրացրեց այնտեղի կյանքը: Օժոված էր ռազմազետի շրջահայցությամբ, հեռատեսությամբ, կորովվով, խոհականությամբ ու խիզախությամբ: Մեծախորհուրդ էր, ընդունակ էր համախմբելու ժողովրդին, կառավարելու նրան եւ խրախսելու նպատակին հասնելու համար: Իր հաջողությունների գաղտնիքն իր անձնագործության մեջ էր. «Սա բազում, քան թե սակավ տքնությամբ սովորեցնում էր օրենքի խոսքերը, մասնավանդ որ գործով կատարելով, իբրեւ օրինակ, իր անձը տալիս էր բոլորին» (Ղուկաս գրիչ): Իր գործերում փնտրում էր ոչ թե իր անձի, այլ հասարակության շահը: Այս ամձնագործությունը գոտեանդում էր հասարակությանը ու մեծացնում նրա վստահությունը: Ոչ ոք չխնայեց իր լուսան, երբ կաթողիկոսը պահանջեց այն. ընդհակառակը. հարուստ եւ աղքատ իրենց ուժերը հոժարակամ դնում էին



Առաջնարք Առաքելութեան,
Տեսանք Առաքելութեան Վարչութեան,
Ընտրաւալ Սուրբ Հայութեան:
Ո՛ւ է Տօնաւ Տառեւ Աստվածութեան:

Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի պատրասխանը



Առաջնորդ
Առաջնորդականության
Աթոռական Սուրբ Էջմիածնի
Պատրասխան

Անձանության հայության մասին

Սուրբ Առաջնորդ Աթոռականի հայության մասին պատրասխանը կազմված է Առաջնորդական Սուրբ Էջմիածնի պատրասխանի մեջ և նշանակած է Առաջնորդ Աթոռականության հայության մասին պատրասխանը:

« Առաջնորդական Սուրբ Էջմիածնի պատրասխանը կազմված է Առաջնորդ Աթոռականի մեջ և նշանակած է Առաջնորդ Աթոռականության հայության մասին պատրասխանը:

« Առաջնորդ Աթոռական Սուրբ Էջմիածնի պատրասխանը կազմված է Առաջնորդ Աթոռականի մեջ և նշանակած է Առաջնորդ Աթոռականության հայության մասին պատրասխանը:

« Առաջնորդ Աթոռական Սուրբ Էջմիածնի պատրասխանը կազմված է Առաջնորդ Աթոռականի մեջ և նշանակած է Առաջնորդ Աթոռականության հայության մասին պատրասխանը:

Օրինական
I. Հայության
Առաջնորդական Սուրբ Էջմիածնի Պատրասխան

նրա տրամադրության տակ, որովհետեւ արդյունքը հայտնի էր: Նրանց համագործակցությամբ մաքրվեց Եջմիածնի տաճարը, վերանորոգվեցին խոնարհված Եկեղեցիները, բացվեցին դպրատներ, վանքեր եւ կուսանցներ, փրկագնվեցին գերիներ ու միշտարպեցին աղքատներ: Ազգի ու Եկեղեցու բարորության համար Մովսեսը չխնայեց իր անձը, կատարեց հեռավոր ճանապարհորդություններ՝ բախսելու համար բռնապետների դրները, աղերսելու նրանց գուրը ազգի համար, ժողովրդի համար, Եկեղեցու համար: Եվ բախտը ամենուրեք իր հավատարին ընկերու եղավ: Այսպես, «անշնչությունից շնչավորության բերեց» ոչ միայն կարողիկոսական Աթոռը, այլև՝ ազգը՝ հոգեպես ու նյութապես:

Տեսնելով Մովսես կարողիկոսի վաստակները՝ որպես շնորհակալության, երախտագիտության եւ գնահատանքի հավատում՝ ժամանակակիցները միաբերան նրան տվեցին «Երկրորդ Լուսավորիչ Հայոց» պատվանունը: Եվ մենք այս որակումը չափազանցություն չենք համարում: Ի՞նչ պիտի լիներ Հայոց Եկեղեցին, եթե Նախախնամությունը չբարձրացներ մի Մովսեսի մեջ դարի առաջին քառորդի քառսի մեջ: Ինձ համար դժվար է պատախանել այս հարցին. բայց կարող եմ ասել, թե առանց Մովսեսի չեր ծնվելու մի Փիլիպանու: Իսկ Մովսեսն ու Փիլիպանը դարձան երկու փողփողուն աստղեր մեջ դարի հայ երկնականարի վրա:

Ծանոթագրություններ

1. [Տես Հայերեն ձեռագրերի մեջ դարի հիշատակարաններ (1621-1640 թթ.), հու. Բ, կազմեցի՝ Վազգեն Հակոբյան, Աշոտ Հովհաննիսյան, Երեան, 1978, էջ 429] անկյունավոր փակագեթրում եղած ծանուցումները թարգմանչինն են - Յ. Ք.:
2. Զեռ. Էջմիածնի, 981 [արդի թիվ 885], Արարատ, 1888, էջ 417-418:
3. [Տես Հայերեն ձեռագրերի մեջ դարի հիշատակարաններ (1640-1660 թթ.), հու. Գ, կազմեց՝ Վազգեն Հակոբյան, Երեան, 1984, էջ 5-6]:
4. Դուկաս գրիչ, Էջմիածնի ձեռ. 2372, 355թ [Տես Հայերեն ձեռագրերի մեջ դարի հիշատակարաններ

- (1621-1640 թթ.), հու. Բ, էջ 430]:
5. [Տես Հայերեն ձեռագրերի մեջ դարի հիշատակարաններ (1621-1640 թթ.), հու. Բ, էջ 494]:
6. Թորոս Աղբար, Բ, 428 / Ճաշոց 1630-ից:/
7. Անդ, էջ 450-452:
8. Առաքել Դավիթիցի, 312:
9. Սիմէոն Լեհացի, Ողեգրութիւն, [ուր Մովսեսի վերաբերյալ ասվում է, թե, որ մի օր անգամ չէր անցկացնում առանց ոյք կանոն սաղմոսի, եւ մի ժամ իսկ պարապ չէր լինում, օրուգիշեր առանց ձանձրույթի ոտքի վրա հսկում եւ տրնում էր աղոթքի մեջ եւ միշտ գրաղվում էր Սուրբ Գրի ընթերցանությամբ]:
10. Առաքել Դավիթիցի, էջ 286 [աշխ. թրգմ. էջ227]:
11. Առաքել Դավիթիցի, էջ 302 [աշխ. թրգմ., էջ 239-240]:
12. Շնկատի ունի Հովհաննես Ուռհայեցի վարդապետին, որի մասին Առաքել Դավիթիցին ասում է, թե սա «եղավ Ուռհայի առաջնորդ, որը բաջահմուտ էր աստղագիտության եւ մաթեմատիկայի մեջ». աշխ. թրգմ., էջ 21]:
13. Շնկատի ունի Գրիգոր Կեսարացի վարդապետին, «որ գիտակ էր նորը եւ արտաքին գիտելիքների, եւ էր ծշմարտության դեմ կովողներին հայթող ախոյան՝ լինեին մերազնյա, թե այլազի» տեսն Առաքել Դավիթիցի, Պատմություն, աշխ. թրգմ., էջ 21]:
14. [Այդ մասին տեսն Առաքել Դավիթիցի, Պատմություն, աշխ. թրգմ. էջ 223, 284]:
15. Շնկատի ունի Պարսից Ծահ-Արաս Ա արքային. 1557-1628 թթ.]:
16. [Տես Հայերեն ձեռագրերի մեջ դարի հիշատակարաններ (1621-1640 թթ.), հու. Բ, էջ 425]:

Ն ԵՐՍԵՍ Վ. ԱԿԻՆՅԱՆ, ՄՈՎՍԵՍ ՏԱԹԵՎԱՑԻ,
ՎԻԵՆՆԱ, 1936

Արեւելահայերենի վերածեց, ծանոթագրեց
ՀԱԿՈԲ ՔՅՈՍԵՅԱՆԸ
Պատվիրատու՝ «Սյունյաց Երկիր»



Սուրբ Զորավոր Եկեղեցի

«Ե» րեւանք, որ հաճախակի պարահող տարերային աղեղների կենսորոն էր, 1679թ. հունիսի 4-ին վերապետեց սարսափելի եւ ավերիչ մի նոր Երկրաշարժ եւս: Այս անգամ աղեղի կիզակետը Գառնին էր: Ժէ դարի պարսիչ Զաքարիա սարկավագի վկայությամբ, սպորգելինյա ցնցումները շարունակվել են շուրջ չորս ամիս: Վնասվել են Երեւանի բազմաթիվ շինություններ, այդ թվումնաեւ Սր. Անանիայի վանքը, որտեղ աղոթքի պահին իր հավաքակից

Եղեայրների հետ վլավակների տակ զոհվում է Նաեւ գիտնական եւ համբավավոր հոեւրոր Սփերականու վարդապետը՝ Գեղարդի (Այրիվանքի) վանահայրը:

Այս տարիներին է, որ Երեւանցի վաճառական խորած Փանոսի բարեգործական միջոցներով նոր հիմքի վրա, զանգակատնից քիչ հեռու, սր. Աստվածածնի պատվին կառուցվում է Եկեղեցին՝ զանգակատնով։ Շինարարության ավարտից հետո գլխավոր նուտրի վրա տեղադրվել է մի հուշաքար, որը պատմում է Եկեղեցու անվան եւ այն մասին, որ Եկեղեցին կառուցվել է ի հիշատակ խոջա Փանոսի նախնիների ու սերունդների։

Թեեւ այս գրությունը բազմից է ուսումնասիրվել հետազոտողների կողմից, այսուհանդերձ, Եկեղեցու կառուցապատճան տարեթվի վերաբերյալ տարակարծություններն առկա են, քանզի գաղտնագիրը գրեթե անընթեռնելի վիճակում է։ Կառուցման տարեթիվն ընդունված է համարել 1693-ը՝ հիմք ունենալով, հավանաքար, արեւելան նրագեղ խաչքարի գրությունը» («Պատմություն սր. Զորավոր Եկեղեցու»)։

Ինչպես ասվեց, Զորավոր անվանումը կապված է սուրբ Անանիա առաքյալի «ամենազոր» նշխարժերի հետ։ Սակայն մի այլ պատճառ էլ է եղել, որ այդ «Զորավոր» անունը հաստատվի այս Եկեղեցու վրա։

«Սր. Անանիայի վանքի հարուստ կենսագրությանը զուգահեռ մեզ են հասել բազմաթիվ ավանդություններ, որոնք եւ օգնում են պարզաբանելու Եկեղեցու «Զորավոր» անվան ծագումը։ Յամածայն դրանցից մեկի, որ գրի է առել սր. Ղազար կղզում Մխիթարյան միաբանության ճանաչված ուսումնասիրողներից Գ. Ինճիշյանը, թշնամական արշավանքների ժամանակ կողովատվել է Մեւանա կղզու վանքը։ Գողացված արժեքների թվում է եղել նաեւ հրաշագործ (զորավոր) մի Ավետարան, որն ինչ-որ ձեւով լին է ընկնում։ Լժից Զանգու (Քրագդան) գետի ջրով Ավետարանը հասնում է մինչեւ Երեւան եւ հայտնվում աստվածապաշտ, հավատավոր մի կնոջ մոտ, որը եւ Սուրբ Գիրքը հանձնում է Սր. Անանիայի վանքին։ Այստեղ Ավետարանը պահպում է մինչեւ Ժմանակը։ Վերջը։ Ավետարանի հրաշագործ զորության նկատմամբ ունեցած հավատի ազդեցությամբ ժողովուրդը առօրյա խոսակցության պահին, իր խոսքը հաստատելու նպատակով, Երդվում էր «Զորավոր Ավետարանով»՝ Երեմն-Երբեմն Եկեղեցին կողեւով նաեւ Սր. Զորավոր։ 1835-ից հետո, Երբ վանական կյանքն այստեղ արդեն դադարել էր գոյատեւելուց, Եկեղեցին դանում է Մարաղայից (Պարսկաստան) գաղթած եւ մոտերքում ապրող հայերի ծխական աղոթատեղին եւ վերջնականապես անվանվում Սր. Զորավոր։ Ցավոք, ձեռագրի

նկատմամբ քնքուշ գգացումներ ծնող գաղտնիքը այդպես էլ մնաց չբացահայտված։ Մինչեւ այսօր էլ անհայտ է, թե որ Ավետարանի նասին է այս պատմությունը, եւ թե որտեղ է գտնվում այն» («Պատմություն սր. Զորավոր Եկեղեցու»)։

1895թ. Վաղարշապատում տպագրված «Տեղեկագիր Գեղարքունիք» աշխատության մեջ պատմվում է մի ծանապարհորդության նասին։ Եջմիածնից Տփիխ (Թբիլիսի) գնալու ճանապարհին Մեսրովը արքեպիսկոպոսն անցնում է Երեւանով եւ այցելում տեղի սրբավայրերը, նաեւ՝ Սուրբ Զորավոր Եկեղեցին։ «Ապա գնացինք սուրբ Անանիա առաքյալի անվանք շինված Եկեղեցին, որ այժմ «Զորավոր» է անվանվում։ Այս Եկեղեցու միջից՝ արեւմտյան դոան մոտից, սանդուղըներով ուխտավորներն իշնուն են 10 աստիճան գետնի տակ՝ ուխտ անելու Անանիա առաքյալի գերեզմանին, որ մի փոքրիկ թաղակապ մատրանի մեջ է. որ եւ մենք իշնելով՝ խունկ ու մոմ նվիրեցինք Անանիա առաքյալին եւ հայցեցինք նրա բարեխոսություննը բոլոր ճանապարհորդների համար։ Այս վայրը վանականների տեղ լինելով՝ Երբեմն նստում էին վանահայր վարդապետներ, ինչպես եւ Մովսես Սյունեցի (Տաթևացի) մեծանուն կարողիկոսը եւ ուրիշ շատեր»։

1961թ. Վազգեն Ա-ի ջանքերով սկսվեցին Սր. Զորավոր Եկեղեցու վերականգնման աշխատանքները, իսկ 1978-1980-ին կատարվեցին նաեւ որոշ վերակառուցումներ։

Այսօր էլ Սուրբ Զորավոր Եկեղեցու վրա վերանորգման աշխատանքների կարիք կա։ Սակայն առավել մեծ աշխատանքների կարիք է զգացվում Եկեղեցուն կից տարածքում, որտեղ մինչեւ վերջերս պահպանվել էին Փիլիպոս Աքանչելագործ հայրապետի կողմից կառուցված խցերի մնացորդները։ Այստեղ նախատեսված է կառուցել մի շինություն, որը միգուց կլին մեր երանելի հայրապետի՝ Մովսես Տաթևացու անունը, եւ հուսով ենք, որ այն նորից կծառայի այսօրվա մեր հոգեւոր կյանքի վերելքին աջակցելուն։ Կառույցի նախագիծը վաղուց պատրաստ է. եթե գտնվեն հովանավորներ, ապա այս օրինված վայրը, որը դարեր շարունակ մեր սուրբ հայրերի կողմից նշտապես վերանորգվել է, կվերանորգվի ես մեկ անգամ, եւ նրա հովանավորները կարող են հուսալ արժանանալու առ Աստվածառաքաված նրանց բարեխոսությանը եւ բախտ ունենալ հիշվելու Եկեղեցական աղոթքներում։ Քանզի նման Երախտավորները նշտապես հիշատակման են արժանանում։ «Ողորմեա գեկեղեցի շինողաց, Երախտավորաց, պտղտուից, սպասավորաց եւ այնոցիկ, որը ընդ հովանեալ սրբոց Եկեղեցւոյ են հանգուցեալ» (Ժամագիրը)։


Աշոտ դպիր Արեւածայան, «Տաթևացու մինչեւ Տաթևացի», Երեւան, 2002թ.



Սուրբ Զորավոր Եկեղեցի

Երեւանի հնագույն Եկեղեցիներից մեկը: Սկզբնապես կոչվել է Սուրբ Աստվածածնի անունով: Եկեղեցին գտնվում է իհն Երեւանի Շահար քաղաքամասում: Նախապես այդտեղ գտնվում էր Սուրբ Անանիա Առաքյալի մատուռ-դամբարանը: Երեւանցիների նյութական օժանդակությամբ Մովսես Տաթեացի վարդապետը կառուցում է վաճճային համալիր՝ բաղկացած Եկեղեցուց, մատուռից, միաբանական խցերից, առաջնորդարանից՝ բոլորն առնելով պարիսպների մեջ: Յավաքելով այստեղ միաբանություն՝ հիմնում է նաեւ վաճական դպրոց:

Կողեւնի մակուր



Աշուր դպիր Արեւադրյան
«Տաթեւացուց մինչեւ Տաթեւացի»,
Երեւան, 2002թ.

Երբ նշված հիշատակությունների մեջ շատ հաճախ հիշվում էր Կողեւնի գերեզմանատան եւ Կողեւնի մատուրի մասին: Ինչպես արդեն նշվեց, այս բլուրը, որ շրջափակված է Պոռշյան, Դեմիրճյան եւ Բաղրամյան փողոցներով, ժամանակին եղել է Երեւանի հնագույն գերեզմանոցներից մեկը եւ, ինչպես արդեն ասվեց, 10-11-րդ դարերի հայոց մեջ վարդապետ Հովհաննես Կողեւնը թաղվել է այս բլրի վրա. «Կողեւնի մոտ հետագայում թաղվել է Բաղեշի Ամրողլա վանքի արտաքին գիտությունների դպրոցի նշանավոր վարժապետ Մելքիսեդ Վժամեցի վարդապետը, իսկ դրանց երկուսի մեջտեղը՝ մեր հայտնի Սովուս Գ. Սյունեցի կաթողիկոսը: Այդտեղ՝ դրանց գերեզմանների վրա, հետագայում շինվել է մի վայելուչ մատուռ, որը կոչվել է «Կողեւնի մատուռ», եւ որը վաղուց արդեն հնացած է եղել, եւ Մելիք-Սահակ Աղամայանը 1829 թվին վերանորոգել եւ իր համար ընտանելիքն դամբարան է դարձել: Այդ հին գերեզմանները մինչեւ այսօր էլ դեռ Երեւում են կիսաքանդ, անխնամ եւ ապականության մեջ պահպան մատուռում: Սովուս կաթողիկոսի գերեզմանի տապանաքարի վրա դժվարությամբ կարդացվում է:

«Այս է տապան դամբարանի եղյալ շիրիմ ճանապարհի՝ Տեառն Մովսեսի վարդապետի ընտրեալ սուրբ հայրապետի Որ է տեղաւ Տաթեւացի Նորոգող սուրբ Եջմիածնի Բացող եւ շինող գմբերի»:

(Երվանդ Շահագիզ. «Հին Երեւանը»):

1934 թվականին որոշում է կայացվել տեղափո-

խել գերեզմանոցը: Ոմանք իրենց հարազատների շիրիմները տեղափոխեցին, սակայն հիմնական մասը ուղղակի քանովեց, եւ մինչեւ մեր օրերը, երբ որեւէ պատճառով հող են փորում, այդտեղ հանդիպում են մարդկային ոսկորների եւ գանգերի: «Երեւանը այդ ուղղությամբ ընդարձակելու պատճառով գերեզմանը մնացել էր քաղաքի մեջ: Այդ պատճառով էլ այն պետք է տեղափոխվեր եւ, մինչ ննջեցյալների աջյունները իրենց տապանաքարերով այլ գերեզմանոցներ տեղափոխելու, մեզ հանձնարարեցին՝ ուսումնասիրել հնավայրը: Այդ աշխատանքները կատարվեցին 1934 թվականին» (Կարո Ղաֆաղարյան. «Երեւան. Միջնադար, Հուշարձաններ»):

Զարհուրելի էր մտածել, որ մեր երկրի այդ սուրբ մարդկանց գերեզմանները կարող էին նույն ճակատագրին արժանանալ, ինչ նյուու բազմաթիվ գերեզմանները, որոնց տապանաքարերով կառուցցին Երեւանի N29 դպրոցը, որի պատերի վրայի հին արձանագրությունները մինչեւ այսօր երեւուն են: Պարզվեց, սակայն, որ Աստու ողորմությամբ մատուռը կանգուն է մնացել, չնայած այն ոչ մի տեղ չի երեւում:

Ահա թե ինչ պատմեց ժամանակին Կողեւն թաղամասի տնային լիազոր, ապա կոմիտեի նախագահ, 73-ամյա Կառլեն Յախվերյանը.

«Մենք 1955 թվականից այստեղ ենք բնակվում, այդ թվերին մատուռի մոտակայքում ընդամենը մի քանի տուն կար: Ես ցանկանում եի մատուռին կից ապրող զինվորական Յայկազից գնել մատուռը (այն ժամանակվա դրամով 600 ռուբլի) իմ ազգականների համար, որպեսզի գյուղից գան եւ ապրեն այստեղ: Դա արդեն 1960 թվին էր:

Բայց նրանք, Վեդիում հողամաս ունենալու պատճառով, փոշմանեցին եւ չուզեցին գալ Երեւան: 1970-ական թվերին այն գնեց Մկրտչյան Ազիզը՝ 1925 թվի ծնված, եւ կից սենյակներ կառուցելով, մատուռը դարձրեց իր բնակելի սենյակներից մեկը: Վերջին անգամ արդեն վաղուց է, որ տեսել եմ մատուռը, նրա ծածկը, պատերը եւ հատկը մնացել էին նախնական վիճակով»:

Մենք այցելեցինք Մկրտչյանների ընտանիքին եւ հարցուիրձ արեցինք. նրանք շատ սիրայիր ընդունեցին մեզ եւ պատմեցին մատուռի մասին (9. 04. 2002): Ասացին, որ արեւմտյան դուռը փակել էին, իսկ արեւեյան պատը քանելով՝ մուտք դարձրել: Երեւում էին մատուռի պատերի հաստությունը եւ տանիքի կամարը, որոնք սվաղված էին եւ փչված: Ասացին, որ մեջը տապանաքարեր չեն եղել եւ, ապա, հատակը բետոնել եւ փայտով պատել էին: Եվ քանզի հատակը վնասված չի եղել, ապա հուսով ենք, որ նրանց սրբատուն նշխարներն էլ անխախտ իրենց տեղում են, ինչպես սր. Անանիայի նշխարները, անկախ շինությունների դարենար ավերումներից եւ վերանորոգումներից հետո էլ մշտապես իրենց տեղում են մնում Տիրոջ կամքը: Սակայն մեր ազգի համար անվայել է՝ այսօր տեսմել մատուռի այդ վիճակը եւ անտարբեր մնալ:

Այդ մատուռը այնտեղ ննջող սրբերի աջյունների պատճառով համարվել է մեջ սրբավայր, եւ նույնիսկ այստեղ նրանց հիշատակին Սուրբ Պատարագ է



Կողեզնի մատուռը, որտեղ հանգչում է Սովուս Խորենացին

հաճախ մատուցվել: Ինչպես այդ մասին վկայված է 1842 թվականին գրված. «Ստորագրութիւն Կաթողիկէ Եջմիածնի եւ հինգ գաւառաց Արարատայ» աշխատության հեղինակ Յովհաննես Եպիսկոպոս Շահիսարունանցի կողմից՝ «Կողեզն կոչված բլրակը, որ քաղաքի հյուսիսային կողմում է գտնվում, հայագի բնակիչների գերեզմանատուն է:

Բարձրավանդակի կենտրոնում գտնվում է մատուռը, որը Յովհաննես վարդապետի գերեզմանի վրա պատրագելու տեղ է: Նրա անունով էլ կոչվում է բլրակը: Առօնթեր հիշյալ վարդապետի, ամփոփվեց նաև Սովուս կաթողիկոս Սյումեցին»:

Մի կողմից ուրախալի փաստ է մատուրի կանգուն լինելը, իսկ մյուս կողմից էլ մեծ ցավ ենք ապրում՝ տեսնելով հայոց աշխարհի այս մեծագույն երախտավորների հիշատակի հանդեպ նման անտարբեր վերաբերմունքը: Գուցե այս ընտանիքի բնակվելով է պայմանավորված այն, որ մատուռը անաստված բռնակարգի աչքից հեռու մնալով՝ չի քանովել:

Սակայն մեր ժամանակներում, երբ արդեն անցյալ է դարձել 70-ամյա անաստվածության շրջանը, պետք է պատշաճ վերաբերմունքի արժանացնել այդ սրբավայրը, շնորհակալություն հայտնել տեղի բնակիչներին եւ հոգալ նրանց բնակարանային պայմանների մասին՝ վայրը բարեկարգելով եւ նորից այդ ուխտատեղին իր նախկին վայելուշ տեսքին բերելով:

Ցավոք, Եկեղեցին այսօր միայն իր ուժերով ի զորու չէ այդ նվիրական վայրը բարեկարգել ըստ պատշաճի. դրա համար հարկ է պետական հոգածություն:

Ինչպես բազում բնակիչների բնակարանային պայմաններն ապահովելով պետությունը մաքրեց Յովհաննային պողոտայի համար նախատեսված տարածքը, այնպես էլ կարելի է, ցանկության դեպքում, անել այս պարագայում:

Եթե մենք մեր երկրի ներսում պատշաճ վերաբերմունք չկարողանանք մատուցել մեր մեծերի շիրմիներին եւ Եկեղեցական շինություններին, էլ ի՞նչ պահանջենք մեր հարեւան ազգերից, որոնք, մասնավորապես Վրացիները, մեր մեջ վրովմունք են առաջացնում մեր Եկեղեցիների հանդեպ ունեցած ոտնձգությունների եւ հայ հեղինակությունների շիրմիների պղծնան համար: Անցած 70 տարիներից հետո շատ նախանձելի է այսօր Ուսասատանի դիրքորոշումը իրենց սրբերի եւ նահատակների հիշատակի հանդեպ:

Տա Աստված, որ մենք էլ ակնածանք տածենք մեր մեծանուն սուրբ հայրերի հիշատակի հանդեպ եւ արժանանանք նրանց բարեխոսությանը առ Աստված, որպեսզի Աստծո ողորմության դրները բացվեն Յայաստան աշխարհի վրա, եւ մենք էլ արժանանանք համաձայն Նոր Կտակարանյան պատվիրանի՝ «Յոգով եւ ծշմարտությամբ» մեր սուրբ հայրերի պես փառավորենք Յորը, Որդուն եւ Սուրբ Յոգուն հավիտյան: Ամեն:

«Յակատենական յիշատակն արդարոց օրինութեամբ եղից»:

Սովոր Գ Տաթեւացի.

մարտենագիրական ակնարկ



Տեր Արարավը քահանա Պողոսյան
**Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչէ Եւ
Թամար Մանուկյան» մարտենադարանի
պնօքնը**

Ճ 3/4 դարի առաջին քառորդը Յայ Եկեղեցու պատմության մեջ բնորոշվում է որպես անկյալ վիճակ: Սակայն միշտ էլ խավար ու դժվարություններով լեցուն տարիներին գալիս են փոխարինելու լուսավոր եւ բարեբեր ժամանակները: Այս դարաշրջանին նվիրված իր ուսումնասիրության մեջ Միսաք Խոստիկյանը գրում է. «Տաթեւացու դպրոցի հոգին եւ եռանդը, որ դարեր շարունակ մնացել էր Յայոց Եկեղեցույ մէջ, այժմ կարծես բոլորովին պահել էր» (Մ. Խոստիկյան, Վերածնության շրջան, ժե Դարու հայոց վերանորոգի կարողիկուները, «Արարատ», 1902, Ե-Զ, էջ 430):

Այս վիճակից Եկեղեցին դուրս բերելու փորձ կատարեց Մրապիոն Ուռհայեցին, սակայն վերջինին ջանքերը հանդիպեցին Մելքիսեդեկի եւ այլոց կողմից հարուցած խոչընդոտներին (Մ. Խոստիկյան, էջ 431):

Սակայն այս տիսուր վիճակը երկար չտեւեց. բարենպաստ քաղաքական պայմանների հաստատումը հնարավորություն տվեց անապատի վերածված երկիրը նորից շենացնելու (Մ. Խոստիկյան, էջ 431): Յայ Եկեղեցում սկսվեց հավատի եւ ոգեւորության շրջան, որի ժամանակ ծնունդ են առել Եկեղեցական կյանքի հերոսները, որոնց մեջ վառ եւ հաստատուն էր առ Աստված ունեցած հավատը: Այսպիսի ազգային-Եկեղեցական ոգեւորությունը արեւելյան դպրոցի ավանդն էր: Առաքել Դավիթեցին վարդապետների ցանկ է ներկայացնում, ըստ որի Տաթեւան դպրոցի ավանդութերի կրողն ու իրագործողը հայ Եկեղեցականների արժանավոր փաղանգի ներկայացնուցիչ Մովսես Սյունեցին էր:

Տեղին չէ այժմ խսել Մովսես Գ Սյունեցի կարողիկոսի արժանիքների մասին, սակայն աներկար է, որ

Մովսես Սյունեցի հոգեւորականը, պետական-Եկեղեցական գործիչը եւ պարզապես մարդը կարիք ունի առավել արժեւորվելու: Վերջին տարիներին փորձել են քիչ թէ շատ անդրադառնալ Մովսես Գ կաթողիկոսին, սակայն բավարար չափով չեն արտացոլել նրա հսկայական դերը թէ՝ Յայ Եկեղեցու եւ թէ՝ մի ամբողջ ժողովրդի վերազարթոնքի գործընթացներում: Ներքո կից գրականության ցանկը փոքրիկ փորձ է ներկայացնելու Մովսես Տաթեւացուն վերաբերող երկերի շարքը: Չենք հավակնում ներկայացնելու ամբողջական մատենագիտական ցանկ, սակայն վստահ ենք, որ Մովսես Տաթեւացու կյանքով եւ գործունեությանը զբաղվողներին մեծապես օգտակար կլինի:

Ա. Սկզբնաղյուրներ

1. Առաքել Դավիթեցի, Գիրք Պատմութեանց, աշխատասիրությամբ Լ. Ա. Խանլարյանի, Երեւան, 1990:
2. Առաքել Դավիթեցի, Պատմություն, թարգմանությունը, առաջարանը եւ ծանոթագրությունները՝ Վարագ Առաքելյանի, Երեւան, 1988:
3. Գրիգոր Դարանաղյի, Ժամանակագրութիւն, հրատ. Մեսրոպ Նշանյանի, Երուսաղեմ, 1915:
4. Զաքարիա Քանաքեռցի, Պատմագրութիւն, Վաղարշապատ, 1870:
5. Թուրքական աղյուրները Յայաստանի, հայերի եւ Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, հ. Բ, Երեւան, 1964:
6. Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1915:
7. Խաչատոր արեղայի Զուղայեցոյ, Պատմութիւն Պարսից, Վաղարշապատ, 1905:
8. Կղեմես Գալանոս, Միաբանութիւն հայոց սուրբ Եկեղեցուն ընդ մեծի սուրբ Եկեղեցուն Յովմայ, հ. Ա-Բ, Յոռմ, 1650-1661:

9. Կորյուն, Վարք Մաշտոցի, Երեւան, 1941:
 10. Հակոբյան Հովհաննես, Ուղեգործություններ, հ. Ա, Երեւան, 1932:
 11. Սովուն Խորենացի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913:
 12. Ուսկան վրդ., Յաղագս միութեան եւ միաւորութեան, «Հասկ», 1966, 3-4:
 13. Սիմեոն Երեւանցի, Զամրո, Էջմիածին, 2003:
 14. Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910:
 15. Օսմանյան օրենքները Արեմատյան Հայաստանում (XVI-XVII դդ. կանունամներ), թարգմ., առաջարան եւ ծանոթագրությունները Ա. Խ. Սաֆրաստյանի եւ Ա. Կ. Չուպայանի, Երեւան, 1964:
 16. Աստուածաշունչ Մատեան, 1997:
 17. Գետրգ-Մեսրոպ, Պատմութիւն հայ եկեղեցւոյ, հ. Բ, Կ. Պոլիս, 1914:
 18. Եզնիկ վրդ. Կողբացի, Եղծ Աղանդոց, Երեւան, 1994:
 19. Զաքարիա Ազովեցի, Օրագրություն, Երեւան, 1938:
 20. Ա. Կիմոլչիսանցի, Պատմութիւն անցից անցելոց Աէվանայ վանուց, Վաղարշապատ, 1871:
 21. «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը», պարկ Երկրորդ կազմեց Յ. Դ. Փափազյան, Երեւան, 1959:
- Բ. Մատենա-ձեռագրացուցակներ**
1. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանի Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Ա, Վենետիկ, 1914:
 2. Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. Դ, կազմեց Նորայր Եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1969:
 3. Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, հ. Ա, Վիեննա, 1895:
 4. Դայ գրքի մատենագիտական ցուցակ, Երեւան, 1963:
 5. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի ձեռագիրը 1801-2100, (խմբ. Գէորգ Տէր-Կարդաննեան), հ. Զ, Երեւան 2012:
 6. Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբյանց (կազմ. Նորայր արք. Պողարեան), հ. Զ, Երուսաղէմ, 1972:
 7. Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբյանց (կազմ. Նորայր արք. Պողարեան), հ. Է, Երուսաղէմ, 1974:
 8. Մամր ժամանակագրություններ XIII-XVIII դդ. (կազմ.՝ Վ. Ա. Յակոբյան), հ. Բ, Երեւան, 1956:
 9. Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմանի վանքի Մատենադարանին (կազմ. Սեսրոպ վրդ. Քէշշեան), Վիեննա, 1964:
 10. Ցուցակ հայերէն ձեռագրաց Թարիկի (կազմ. Յրաշեայ Յ. Աճառյան), Վիեննա, 1910:
 11. Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի (կազմ. Օ. Եգանյան, Ա Զեյթունյան, Փ. Ամթարյան խմբ. Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի), հ. Ա, Երեւան, 1965:
 12. Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի (կազմ. Օ. Եգանյան, Ա Զեյթունյան, Փ. Ամթարյան խմբ. Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի), հ. Բ, Երեւան, 1970:
 13. Դայերէն ձեռագրերի հիշատակարաններ, մէ դար, հ. Բ, Երեւան 1978, էջ 72, էջ 76, էջ 97, էջ 99, էջ 175-179, էջ 184, էջ 209, էջ 283, էջ 286, էջ 301, էջ 311, էջ 314, էջ 324, էջ 329, էջ 332, էջ 335, էջ 338, էջ 341, էջ 355, էջ 361, էջ 365, էջ 369, էջ 375, էջ 378, էջ 380-383, էջ 385, էջ 387, էջ 389, էջ 397, էջ 400, էջ 402, էջ 404, էջ 406-409, էջ 413, էջ 414, էջ 418, էջ 419, էջ 424, էջ 432-434, էջ 438, էջ 441, էջ 446, էջ 449, էջ 452, էջ 454, էջ 458, էջ 461, էջ 462, էջ 465, էջ 478, էջ 480, էջ 491, էջ 492, էջ 494, էջ 499, էջ 504, էջ 511, էջ 514, էջ 515, էջ 520, էջ 527, էջ 530, էջ 531, էջ 547, էջ 548, էջ 554, էջ 559, էջ 560, էջ 579, էջ 588, էջ 590, էջ 603, էջ 608, էջ 633, էջ 639, էջ 657, էջ 661, էջ 711, էջ 739-741, էջ 853, էջ 854, էջ 857, էջ 860, էջ 864:
 14. Դայերէն ձեռագրերի հիշատակարաններ, մէ դար, հ. Գ, Երեւան 1984, էջ 6, էջ 553, էջ 710, էջ 886:
 15. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարյանց ի Վենետիկ, հ. Դ, Վենետիկ, 1993, էջ 248, էջ 782, էջ 990:
 16. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարյանց ի Վենետիկ, հ. Զ, Վենետիկ, 1996, էջ 86, էջ 782:
 17. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարյանց ի Վենետիկ, հ. Է, Վենետիկ, 1996, էջ 924:
 18. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, Երեւան, 1984, էջ 306, էջ 729, էջ 876, էջ 882, էջ 1092, էջ 1106, էջ 1222:
 19. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, Երեւան, 2004, էջ 656, էջ 813, էջ 1046, էջ 1047, էջ 1048:
 20. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Գ, Երեւան, 2007, էջ 587, էջ 589, էջ 590, էջ 476, էջ 548, էջ 694, էջ 1414, էջ 1557, էջ 1592:
 21. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, Երեւան, 2008, էջ 306, էջ 576, էջ 578, էջ 799, էջ 801, էջ 802:
 22. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ե, Երեւան, 2009, էջ 27, էջ 37, էջ 410, էջ 411, էջ 412, էջ 450, էջ 462, էջ 801, էջ 958, էջ 1058, էջ 1162, էջ 1251:
 23. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Է, Երեւան, 2012, էջ 857, էջ 858, էջ 1120, էջ 1143, էջ 1148:
 24. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ը, Երեւան, 2013, էջ 50, էջ 746, էջ 837, էջ 971, էջ 1164:
 25. Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբյանց, հ. Բ, Երուսաղէմ, 1967, էջ 186, էջ 187, էջ 387:
 26. Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբյանց հ. Ե, Երուսաղէմ 1971, էջ 186:
 27. Ցուցակ հայերէն ձեռագրաց Մկրտիչ Սամասարյանի, Վենետիկ 1981, էջ 27:
 28. Ցուցակ ձեռագրաց Նոր-Զուլայի Ս. Ամենափրկչյան վանաց թանգարանի, հ. Ա, Վիեննա, 1970, էջ 163, էջ 371, էջ 379, էջ 384, էջ 611, էջ 665, էջ 689, էջ 750, էջ 832:
 29. Ցուցակ ձեռագրաց Նոր-Զուլայի Ս. Ամենափրկչյան վանաց թանգարանի, հ. Բ, Վիեննա 1972, էջ 138, էջ 238, էջ 239:
 30. մէ դարի հայերէն ձեռագրերի հիշատակարաններ (1601-1620 թթ.), կազմ.՝ Վ. Յակոբյան, Ա. Յովհաննեսիսյան, հ. Ա, Երեւան, 1974

31. Մաշտոցի անվան Սատենադարան, ձեռ. Յմբ. 31, 136, 1496, 5345, 5348, 4692, 6093, 3843, 432, 509, 5057, 4721, 4515, 5665, 6243, 6273, 7063, 9222
32. Ժէ դարի հայերեն ծեռագրերի հիշատակարաններ (1621-1640 թթ.), (կազմ. Վ. Յակոբյան, Ա. Յովհան նիսյան), հ. Բ, Երեւան, 1974:
- Գ. ՌԱՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**
- ա. ՅԱՅԵՐԵՆ
- Ա. Արքահաման, Յամառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հատ. Ա. Երեւան, 1964:
 - Ալիշան Դ., Արքարատ, Վենետիկ, 1890:
 - Ալիշան Դ., Սիսական, տեղագրութիւն Միմնեաց աշխարհի, Վենետիկ, 1893:
 - Ալիշան Դ., Յայապատում, Վենետիկ, 1901:
 - Ալիմնեան Ն., Մովսէս Գ. Տաթեացի, Վիեննա, 1936:
 - Ալիմնան Ն., Երեմիա Չելչահի Քէօմիլթեան. Կեանը եւ գրական գործունեութիւնը, Վիեննա, 1933:
 - Ալիմնան Ներսես Վ., «Գայազանագիրը կաթողիկոսաց Աղթամարայ», Վիեննա, 1920:
 - Ալիմնան Ներսես, Բաղեջի դպրոցը (1500-1704), Վիեննա, 1952:
 - Ամատումի Կարապետ Եպս., Ժէ դարու Երեւելի վարդապետներ, Վենետիկ, 1989:
 - Ամատումի Կարապետ Եպս., Մովսէս Գ. Տաթեացի, Վենետիկ, 1992:
 - Ամատումի Կարապետ Եպս., Ուկան վարդապետ Երեւանցի եւ իր ժամանակը, Վենետիկ, 1975:
 - Ամատումի Կարապետ Եպս., Մովսէս Գ Տաթեացի կաթողիկոս Էջմիածնի, «Բազմավեպ», Վենետիկ, 1989, էջ 67-90:
 - Անտոնիոս, «Վարդապետ», Բաքու, 1903:
 - Անասյան Յ., Յայկական մատենագիտություն, հ. Ա. Երեւան, 1959:
 - Բարայան Լ., Դրվագներ Յայաստամի XVI- XVIII դարերի պատմագրության, Երեւան, 1984:
 - Բարայան Նելսոն սրկ., Էջմիածնի միաբանությունը եւ նրա հոգետը վերազարթոնքն ըստ Առաքել Դավիթեցու, ավարտածառ, անտիպ, Ս. Էջմիածնի, 2002:
 - Բարյայեան Եզնիկ վրդ., Ուկան վարդապետ Երեւանցի, Կենսագրական համառոտ ակնարկ, «Դասկ», 1966, № 9-Դ:
 - Բարխուդարյան Ա. Գ., Դիվան հայ վիմագրության, պրակ Բ, Երեւան, 1960:
 - Գալայձեան Ա., Ուկան Երեւանցի, հայ տպագրութեան մեծ Երախտաւոր, «Սիլոն», 1966, Բ-Գ:
 - Գալէմքէրեան Յ. Գ., Կենսագրություններ Երկու հայ պատրիարքներու եւ տասն Եպիսկոպոսներու եւ ժամանակին հայ կաթողիկեայր (Կենսագրություններ Ա. 1554-1822, Գովեմքյարյան Գրիգորիս), Վիեննա 1915թ.:
 - Գետրդ Տեր-Վարդանյան, Մովսէս Գ Տաթեացի, «Ամենայն հայոց կաթողիկոսներ», ժողովածու, պրակ Ա, Ս. Էջմիածնի, 2008:
 - Գետրդ-Մեսրոպ, Պատմութիւն հայ Եկեղեցու, հ. Բ, Կ. Պոլիս, 1914:
 - Դանեղյան Լ., Առաքել Դավիթեցու Երկը որպես Սեֆյան իրանի XVII դարի պատմության սկզբնադրյուր, Երեւան, 1978:
 - Դոլովսանյան Ա., Ներսես Մովսէսի, Ներսես Մովսէսու ստեղծագործությունների արվեստը, Ս. Էջմիածնի, 2009:
 - Ենրիկյան Վարդան, Յայ գիրքը պատմության խաչմերուկներում, մասն Ա., Վենետիկից Յոռմ, (ԺԶ-րդ դար), Երեւան, 2012:
 - Զամինյան Ա., Յայոց Եկեղեցու պատմություն, հ. Բ, Նոր-Նախիջևան, 1909:
 - Զարպիհանալեան Գ., Պատմութիւն հայկական դպրութեան, հ. Բ, Վենետիկ, Ս. Ղազար, 1878:
 - Զոլայան Ա. Կ., Արեմույան Յայաստամը XVI-XVIII դդ., Երեւան, 1980:
 - Զոլայան Ա. Կ., Զալայինների շարժումը եւ հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, Երեւան, 1966:
 - Թարգերյան Յ., Ստեփանոս Լեհացու փիլիսոփայական հայացըները, Երեւան, 1979:
 - Թումանյան Բ., Յին հայկական աստղադիտական գործիքներ, «Էջմիածն», 1962, Դ:
 - Իշխանյան Ռ., Յայ գիրքը, Երեւան, 1981:
 - Իշխանյան Ռ., Յայ գրքի պատմություն, հ. Ա, Երեւան, 1977:
 - Լալայեան Ե., Սիսիան, «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1898, գիրք 3, 1:
 - Լալայեան Ե., Կասպուրական, Թիֆլիս, 1902:
 - Լեռ, Երկերի ժողովածու, հ. Գ, գիրք Երկրորդ, Երեւան, 1973:
 - Լեռ, Երկերի ժողովածու, հ. Գ, գիրք առաջին, Երեւան, 1946:
 - Լետոնյան Գարեգին, Յայ գիրքը եւ տպագրության արվեստը, Երեւան, 1958:
 - Խոստիկեան Ա., Ժէ դարու հայոց վերանորոգիչ կաթողիկոսները, Յակոր կաթողիկոս Զուղայեցի, «Արքարատ» ամսագիր, 1902, Թ-Ժ:
 - Խոստիկեան Ա., Ժէ դարու հայոց վերանորոգիչ կաթողիկոսները, Փիլիպպոս կաթողիկոս եւ բարենորոգական դպրոցները, «Արքարատ», 1902, Է-Ը:
 - Խոստիկյան Ա., Վերածնության շրջան. Ժէ դարու հայոց վերանորոգիչ կաթողիկոսները, Յարանց Անապատ եւ Մովսէս կաթողիկոս, «Արքարատ», 1902, Ե-Զ:
 - Կոստանյանց Կ., Գրիգորիս Աղթամարցին եւ իր տալերը, Թիֆլիս, 1898:
 - Յայոց պատմություն, բոհեմական դասագիրը բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, Երեւան, 2012:
 - Յայոց պատմություն, ակադեմիական հրատ., հ. Գ, գիրք Ա, Երեւան, 2010:
 - Յասրաթյան Ա. Ա., Սյունիիրի ԽVII-XVIII դարերի ծարտարապետական համալիրները, Երեւան, 1973:
 - Յատիշյան Արթուր, Յաղագս Նորոգութեան լուսակառոյց սրբոյ արտօնոյն Էջմիածնի, «Էջմիածն», 1970, Ե:
 - Յարովյանյան Բ., Դավիթ Դ Վաղարշապատցի, «Թրիստոնյա Յայաստամ» Երկարաբեր, 2010, Ա թիվ, Բ թիվ:
 - Դագարոսյան Ա., Յայ գրչության կենտրոնները XV-XVIII դարերում, Երեւան, 2007:
 - Դագարոսյան Ա., Սեւանի անապատը Ժէ-Ժթ դարերում, «Էջմիածն» ամսագիր, 1997, Ժ:

50. Ճեմճեմեան Սահակ, Յայ տպագրութիւնը եւ Յոռմը (ԺԵ դար), Վենետիկ, Ս. Ղազար, 1989:
51. Սագուստան Ն., Աշխարհի ամենագեղեցիկ քարտեսը հայերեն լեզվով, «Էջմիածին», 1946, Դ-Ե:
52. Մինասեան Լ., Նոր Զուղայի տպարանն ու իր տպագրած գրքերը, Նոր Զուղա, 1972:
53. Միրզոյան Գետրդ սրկ., Յայ գրատպությունը ԺԵ դարում, ԳԵՁ ավարտածառ, անտիպ, Ս. Էջմիածին, 2014:
54. Միրզոյան Յ., Յայ մշակույթի նշանավոր գործիչները V-XVIII դարեր, Երեան, 1976:
55. Սովորյան Ա. Խ., Ուրվագծեր հայ դպրոցի եւ մանկավարժության պատմության (X-XV դարեր), Երեան, 1958:
56. Սովորյան Դավիթ սրկ., Տաթենի Յարանց մեծ անպատճ եւ նրա մշակութային ժառանգությունը, ԳԵՁ մագիստրոսական թեզ, անտիպ, Էջմիածին:
57. Ուկանյան Ն., Կորկոտյան Ք., Յայերեն նորահայտ հնատիպ գրքեր, «Էջմիածին», Ե:
58. Ուրուցյան Ա., Ամենայն Յայոց կաթողիկոս Յակոբ Դ. Զուղայեցու մահվան օրվա առեղծվածի շուրջ, «Էջմիածին», 2013, Ը:
59. Ուրուցյան Ա. Ամենայն Յայոց կաթողիկոս Յակոբ Դ. Զուղայեցու շիրիմի ողիսականը, «Էջմիածին», 2013, ԺՄ:
60. Պողարեան Նորայր Եպս., Յայ գրողներ. Ե-ԺԵ, Երուսաղեմ, 1971:
61. Միրունի Յ. Ճ., Պոլիս եւ իր դերը, հ. Ա, (1453-1800), Պեյրով, 1965:
62. Մրվանձոյան Գ., Թորոս աղբար, հ. 2, Կ. Պոլիս, 1888, էջ 268-269:
63. Տեր-Յովիկանյանց Յ., Պատմություն Նոր Զուղայու, որ յԱսպահան, հ. Ա, Նոր Զուղա, 1880:
64. Փափազյան Յ. Դ., Ոյայթեների իրավական ազատության հարցը Արենելյան Յայաստանում 16-18-րդ դդ. եւ շահ Սովորան Յուսեմի հրովարտակը, «Էջեր հայ ժողովրդի պատմության եւ բանասիրության», Երեան, 1971:
65. Փափազյան Վ., Պատմություն հայոց գրականության, Թիֆլիս, 1910:
66. Փիրղալեմյան Ղ., Նշխարք..., հ Ա, 733:
67. Քիլտեան Յ., Յակոբ կաթողիկոս Զուղայեցիի նորագիտ խիստ կարենոր վաերաթուղթ մը, «Սիոն», 1967, 3-4:
68. Աբեղյան Ս., Երկեր, հ. Դ, Երեան, 1970:
69. Արքահամյան Ա., Պարսկահայ գաղթօջախը, Յամառուս ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Երեան, հ. Ա, 1964:
70. Ալիշան Ղ., Յուղիկը հայրենեաց, հ. Ա, Վենետիկ, 1869:
71. Աձառյան Յ., Յայերեն արմատական բառարան, հ. Ա, Երեան, 1926:
72. Անասյան Յ., Յայկական մատենագիտություն, հ. Ա, Երեան, 1959:
73. Աշոտ դափիր Արեւատյան, Տաթեացուց մինչեւ Տաթեացի, Երեան, 2002:
74. Բարյայան Լ., Դրվագեր Յայաստանի XVI- XVIII դարերի պատմագրության, Երեան, 1984:
75. Դանեղյան Լ., Առաքել Դավիթեցու Երկը որպես Սեյխան իրանի XVII դարի պատմության սկզբանարդյուր, Երեան, 1978:
76. Երուանդ Տէր Ակրտչեան, Գանձեր Վասպուրականի, հ. Ա, Պոսթոն, 1966:
77. Թարվերյան Յ., Ստեփանոս Լեհացու փիլիսոփայական հայացըները, Երեան 1979:
78. Յակորյան Թ. Խ., Յայաստանի պատմական աշխարհագրություն, Երեան, 1968:
79. Յայ Եկեղեցու հանրագիտարան, Ամենայն հայոց կաթողիկոսներ, պարկ Ա, Ս. Էջմիածին, 2008:
80. Յովիաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. Բ, Երեան, 1959:
81. Ղաֆադարյան Կ., Յովիաննավանքը եւ նրա արձանագրությունները, Երեան, 1948:
82. Սաղարիա արք. Օրմանյան, Յայոց Եկեղեցին, Երեան, 1993:
83. Մայխասեանց Ստ., Յայերեն բացատրական բառարան, հ. Ա, Երեան, 1944:
84. Միրզոյան Յ., XVII դարի հայ փիլիսոփայական մտքի բննական վերլուծություն, Երեան, 1983:
85. Միրզոյան Յ., Յայ մշակույթի նշանավոր գործիչները V-XVIII դարեր, Երեան, 1976:
86. Միքայել Չամչյանց, Յայոց պատմություն (սկզբից մինչեւ 1784 թ.), հ. Գ, Երեան, 1984:
87. Սովորյան Ա. Խ., Ուրվագծեր հայ դպրոցի եւ մանկավարժության պատմության (X-XV դարեր), Երեան, 1958:
88. Նելսոն սրկ. Բաբայան, ավարտածառ, Էջմիածինի միաբանությունը եւ նրա հոգենոր վերազարթոնքն ըստ Առաքել Դավիթեցու, Ս. Էջմիածին, 2002:
89. Սարգսի արք. Զավալեանց, Ճամապարհորդութիւմ ի Մեծն Յայաստան, մասն Բ, Տփդիս, 1858:
90. Սուլր Յայաստան, Արփենիկ Ղազարոսյան, Յայ գրչության կենտրոնները XV-XVIII դարերում, Երեան, 2007:
91. Փափազյան Վ., Պատմություն հայոց գրականության (բանահյուսության պատմություն), սկզբից մինչեւ մեր օրերը, Թիֆլիս, 1910:
92. Քյոսեյան Յ., Յայ Եկեղեցական մատենագրություն (անտիպ):
93. Քյոսոնյա Յայաստան, Յանրագիտարան, Երեան, 2002:
94. Էփրիկյան Յ. Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վենետիկ, 1903-1905:
95. Յայկական սովետական հանրագիտարան, Սովետ Տաթեացի, հ 8, Երեան, 1982, էջ 40:
96. Գալէմքեարեան, Յ. Գ., Կենսագրություններ Երկու հայ պատրիարքներու եւ տասն եպիսկոպոսներու եւ ժամանակին հայ կաթողիկեայք, (կենսագրություններ Ա. 1554-1822, Գալէմքյարյան Գրիգորիս, Վիեննա, 1915):
97. Գրիգորյան Գր., Ս. Յախվերյան, Սյունիքի պատմություն, Երեան, 2001:
98. Դավթյան Շ., Սովետ Գ Տաթեացի Ամենայն հայոց կաթողիկոս, Երեան, 2001:
99. Դիվան հայոց պատմութեան, նոր շարք, Ա, Երեան, 1986:
100. Դիան հայոց պատմութեան, Գիրը Ա, Թիֆլիս, 1894:
101. Զամինյան, Յայ Եկեղեցու պատմություն, Նոր Նախիջևան, 1908:
102. Ա. Արք. Օրմանեան, Ազգապատում, Բ. հատոր, Էջմիածին, 2001:
103. Ա. Արք Օրմանեան, Յայոց Եկեղեցին եւ իր պատ-

- մութիմը, վարդապետութիմը, վարչութիմը, բարեկարգութիմը, արարողութիմը, գրականութիմը, ու ներկայ կացութիմը, Կ. Պոլիս, 1911:
104. Սաղարիա արք. Օրմանյան, Մովսես Գ Տաթեացի, Ազգապատում, հ. Գ, Ս. Էջմիածին, 2001:
 105. Թիւրտեան Յ., Զուղայեցի Խօջայ Նազար եւ իր գերդաստանը, Վիեննա (առանց տեղի եւ թվականի):
 106. Ստեփանոս Ռօքա, «Ժամանակագրութիւն կամ տարեկան Եկեղեցականը», Վիեննա, 1964, հրատարակեց Յամազասպ Ուկեան:
 107. Պետրովիչ Գր. վրդ., «Յայ Եկեղեցին Լեհաստանի մէջ», Վիեննա, 1980:
 108. Յայ գիրքը 1512-1800թթ., Երեան, 1988, կազմեցին Ն. Ուկանյան, Բ. Կորկուտյան, Ա. Սավայան:
 109. Յակոբ արդ. Գրիգորյան, Ամենայն հայոց կաթողիկոս Մովսես Գ. Տաթեացու եւ Սպահանի հայոց Եպիսկոպոս Խաչատուր Կեսարացու՝ Յայ միարաների առաջնորդ «Նախիջևանի Յայոց» տիտղոսակիր արքեպիսկոպոս Օգոստինոս Բագենցին հասցեագրված մի նամակի վավերագիտական նկարագրությունը, «Ծորակն Արարատյան», 2010-15, օգոստոս, Ա, Էջ 4:
 110. Ըստկարյան Վարդան, Եկեղեցական պատմություն հանդերձ ազգային Եկեղեցական պատմությամբ բարձրագույն դպրոցաց եւ վարժանաց համար, Վիեննա, 1962:
 111. Թոփջան Յ., ցուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, Վենետիկ 1962, Էջ 235:
 112. Կյովեսերյան Բարկեն Աթոռակից կաթողիկոս Մեծի Տաճան Կիլիկիո, Պատմություն կաթողիկոսաց Կիլիկիո (1441-ից մինչ մեր օրերը), հ. Ա-Բ, Անթիլիաս, 1939:
 113. Յայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. IV, Երեան, 1972:
 114. Սարսույան Գրիգոր, Մովսես վարդապետ Տաթեացի, 16-17-րդ դդ. հայ կաթողիկոսի եւ մատենագրի մասին, «Պայքար», Բոստոն, 1972, մարտի 25-26:
 115. Արել արք Մխիթարյան, Պատմություն ժողովոց Յայաստանյաց Եկեղեցու հանդերձ կանոնագրությամբ, Էջմիածին, 1878:
 116. Յուսիկ վրդ. Մովսիսյան, Յայաստանյաց Առաքելական Սույր Եկեղեցու պատմություն, Էջմիածին, 1884:
 117. Ս. վրդ. Մուրադյան, Պատմություն Յայաստանյաց Առաքելական Սույր Եկեղեցու, Երուաղեմ, 1872:
 118. Յովհաննես Եպս. Ծահիսարումյան, Ստորագրություն կաթողիկէ Էջմիածին եւ հինգ գավառաց Արարատի, հ. Բ, Էջմիածին, 1842:
 119. Տեր-Կարդանյան Գ., Մովսես Գ Տաթեացի, «Թրիստոնյա Յայաստան» հանրագիտարան, Երեան, 2002, Էջ 760:

բ. Օտարալեզու

1. Barkan Omer Ltfi, XV ve XVI inci Asırlarda Osmanlı İmparatorluğu'nda Zirai Ekonominin Hukuki ve Mali Esasları, I cilt, kanunlar, İstanbul, 1945.
2. Browne Edward Granville, A literary history of Persia, v. IV, Cambridge, 1953.
3. Febure M., L'état présent de la Turquie ou il est

traite vies, moeurs et coutumes des ottomans et autres peuples de leur empire, Paris, 1675.

4. Hammer J., Histoire de l'Empire Ottoman, trad. de l'allemand depuis son origine jusqu'à nos jours, vol. I-XVIII, Paris, 1835-1843.
5. d'Ohsson M., Tableau général de l'Empire ottoman, v. I-VII, Paris, 1788-1824.
6. Աննինսկի Ա., Իստորիա Արմանական պատմություն (ծովական պատմություն), Կապան, 1900.
7. Օրբելի Ի. Ա., Հայության պատմություն, Երևան, 1963.
8. Պետրոսյան Ի. Պ., Օչերք պատմություն կաթողիկական պատմություն (Հայության պատմություն), Երևան, 1949.
9. Տանյան Մ. Խ., Հայության պատմություն (Հայության պատմություն), Երևան, 1969.
10. Աննինսկի Ա., Իստորիա Արմանական պատմություն (ծովական պատմություն), Կապան, 1900.
11. Բայբույն Յ., Արմանական պատմություն (Հայության պատմություն), Երևան, 1969.
12. Եզօն Գ., Ընօտագիր Պետր Առաքելոց պատմություն, Երևան, 1898.
13. Dr. Antonius I., «Կարդինալ», թարգմանեց Ս. Բարխուդարեան, Բաքու, 1903:
15. Պինգուրյան Գ., Իստորիական պատմություն կաթողիկական պատմություն, Երևան, 1965.

Դ. Մամուլ

1. «Արարատ» ամսագիր, Վաղարշապատ, 1875:
2. «Արարատ» ամսագիր, Վաղարշապատ, 1888:
3. «Արարատ» ամսագիր, Վաղարշապատ, 1902, մայիս-հունիսի:
4. «Յանդես Ամսօրեայ», 1906, յուլիս-սեպտեմբեր:
5. «Էջմիածին», 1946, 1966, 1962, 1970, 1997, 2013:
6. «Յասկ», 1966:
7. «Սիոն», 1966, 1967:

Ե. Յամացանց

1. http://www.pravoslavie.by/page_book/stanovlenie-monashestva-11.12.2013/:

Մովսես Գ. Տաթեացի կաթողիկոսը (1577/1578-1633թթ.), հիրավի, այն վար անհատականություններից է, որոնք երբեւից փայլել են հայոց Եկեղեցու եւ ընդհանրապես՝ հայ ժողովրդի պատմության երկնականացմանը:

Ներսէս Ավիմյանը Մովսես Գ. կաթողիկոսի վարքին եւ ժամանակին նվիրված իր աշխատության մեջ հիացական էջեր է նվիրել այդ ականավոր կրոնական գործի նկարագրին՝ վկայակոչելով կաթողիկոսի ժամանակակից մատենագիրների թողած հիշատակությունները: Անբողջովին նվիրված լինելով Եկեղեցուն, նա չափազանց պահանջկուտ էր իր նկատմամբ, գերծ ամեն տեսակ հրապույրներից: Նրա համոզմանը Եկեղեցին էր համագային խնդիրների կիզակենտրոնը եւ ազգային-քաղաքական միակ կառույցը: Նա կարողացավ մշակել Յայաստանյաց Եկեղեցու կրոնական-կանոնական շատ հարցեր, որոնք գործում


Են մինչեւ այժմ: Այդ հարցերում նա խսկական նորարար էր եւ զարմանալի ավանդապահ: Յշացնում են նաեւ նրա ամկոտրում կամքը, խիզախությունը, աներկյուղ կեցվածքը: Յաղթահարելով տիրողների կամայականությունները, նա մյուս կողմում կրվում էր թուլանորդ, դատարկամիտ ու դատարկածեռն կրոնական առաջնորդների հետ, պայքարում գեղծությունների դեմ, զսպում վաշխառությունը: Եվ այդ ամենն անում էր, որպեսզի ժողովրդին վերադարձի Եկեղեցի՝ որպես ազգի ինքնության պահպանության ամենակարեւոր գործնի:

Եվ ժողովուրդը գնահատեց կաթողիկոսին, նրան անվանեց ազգի Երկրորդ, կրկին լուսատու, բազմապատիկ լուսավորիչ Յայոց աշխարհի: Եվ հենց դրա համար էլ մեր Եկեղեցու պատմության մեջ Մովսես կաթողիկոսը դարձավ դարակամիկ դեմք: Նա հետ շոշեց ժամանակի ամիվը, որ դեպի քայլքում էր տանում մեր Եկեղեցին, եւ նրա ընթացքը տարավ բարվորման ու բարգավաճման ուղիով: Ուներ ռազմագետի շրջահայացություն, - գրում է Ն.Ավինյանը, - հեռատեսություն, կորով եւ խոհականություն՝ խիզախությամբ հանդերձ: Մեծախորհուրդ էր, ատակ համախմբելու ամբոխը, կառավարելու այն եւ նպատակին խրախուսելու: Իր հաջողությունների գաղտնիքն իր անձնազոհության մեջ էր: Ոչ թե իր անձը, այլ հասարակության շահն էր փնտրում իր գործերի մեջ: Այս անձնազոհությունը խրախուսում էր հասարակությունը եւ արժարուում էր նրա վստահությունը: Ոչ ոք չխնայեց իր լուման, երբ կաթողիկոսը պահածեց այն. ընդհակառակը, հարուստ եւ աղքատ ինքնակամ դնում էին իրենց ուժերը նրա տրամադրության տակ, որովհետեւ արդյունքը հրապարակատես էր: Նրանց համագործակցությամբ սրբվեց Եջմիածի տաճարը, կանգնեցին ավերակ Եկեղեցիները, բացվեցին դպրատներ, վանքեր եւ կուսաստաններ, փրկվեցին գերիներ եւ միսիթարվեցին աղքատներ: Ազգի եւ Եկեղեցու բարօրության համար չագահացավ Մովսեսը, չխնայեց անձը, կատարեց հեռավոր ճանապարհորդություններ՝ բախելու համար բռնապետների դռները, նրանց գութն աղերսելու ազգի համար, ժողովրդի համար, Եկեղեցու համար: Եվ բախսն ամենուրեք նրա անբաժան ընկերը եղավ: Այսպես անշնչությունից ի շնչառություն թերեց ոչ միայն կաթողիկոսական արօռը, այլև ազգը՝ հոգեալես եւ նյութապես:

Ի տես Մովսես կաթողիկոսի վաստակներին, ժամանակակիցները միաբերան նրան, իբրեւ շնորհակալություն, երախտագիտություն եւ գնահատանք, տվե-

ցին «Երկրորդ Լուսավորիչ Յայոց» պատվո անունը: Եվ մենք այս հորջորջանքը չափազանցություն չենք համարում: Ինչ այսի լիներ Յայոց Եկեղեցին, եթե նախախմանությունը չհարուցաներ մի Մովսես ժե (17-րդ) դարի առաջին քառորդի քառոսի մեջ:

Մովսես մեծ կաթողիկոսին 1638թ. առաջին տպագիր հրատարակության (Սաղմոսարանի) հիշատակարանում անփոփ գնահատական է տալիս Խաչատուր Կեսարացին. «Եր սա յերկրէն սիւնեաց: Խտիս մանկութե [ան] սրբաւէր եւ աղօթարար եւ պահածող հեզ եւ հանդարտ բարութ: Որ եւ յարեցաւ ի մեծ կաթուղիկոսն Սրապիոն. անհանգիստ երկամբ աշխատեալ յընթերցումն ա [ստուա] ծաշունչ տառից. եւ յետ մահուան կաթուղիկոսին. ընկալավ իշխանութի [լն] եւ գաւազան ի Գրիգոր Վարդապետէ Վարդապետութ [եամ] բ եւ բարի քաղաքավարութ [եամ] բ լուսաւորեաց զազգս հայկազան եւ արար բազում ուղղութի [լն] ս: Նախ զի գեղծեալ կարգս Եկեղեցւոյ. որ ի թուլութենէ առաջնոցն խանգարեալ էր. վերստին ուղղեաց: Երկրորդ ի բազում տեղիս յանապատս կարգեաց խարազնազգեաց զգնաւորաց. արանց միանգամայն եւ կանանց: Յոր ժողովեցան. ուր քսան եւ երեսուն. ուր վարսուն եւ եւթանասուն զի անդադար աղօթեսցեն. եւ ինքն ոյրապէս զիայր հասարակաց խնամ տաներ ամենեցուն. զմարմնաւոր պէտս ն[ոյ]ց[ա] լնլով: Երրորդ յամ [ենայն] տեղիս. ի շենս եւ յաւանս անթիւ Եկեղեցիս շինեաց եւ քահանայս կարգեաց. որով հաւատ քիստոնեւթե [ան] ծաղկեալ պայծառացան: Չորրորդ զս [ուր] բ Էջմիածինն նոր նորոգեալ զարդարեաց եւ պայծառացոյց անթուելի ծախիւթ. զտեսօյն իհացուցան: Յինգերորդ ընկալեալ զկաթուղիկոսութի [լն] ն եւ դիմեաց առ արքայն պարսից. եւ զդիմոսական հարկն որ յառաջնոց կաթուղիկոսացն եղեալ էր ի վ[ել]րապէս ս[ուր]բ Էջմիածնայ. բազում զանիւ գուն գործեալ վերացոյց եւ արար ազատս ի հարկապահանջութենէ: Վեցերորդ յամ [ենայն] տեղիս դասատունս եւ դպրոցս կարգեալ եւ լուսաւորեաց զազգս հայոց. եւ յարաժամ ցանկայր տպագրութե [ան] ս զի յառատութենէ գրոց ամենեքեան դիւրաւ վարժեսցին. սակայն չեղեւ ծեռնահաս. զի փոխեցաւ աստի յանանց կեանսն առ ցանկայն իւր. յորում ծարաւին էր եւ արտասուօք ժուր միշտ. կացեալ կաթուղիկոս չորս ամ եւ չորս ամիս որոյ յիշատակն ա [լ] ծ [լ] նութ [եամ] բ եղիցի»:



ՄԱՎԵՍԻ ՏԵՇԵՒԾՈՒՅՑ

ՈՐ Ի ՄԵՇՆ ՄՐԵՎԻՑՈՆ ԿԵԹԱՊԻԿԱՅՈՒ

ՄՈՎՍԵՍԻ ՄԻՈՅ. ՈՐ է ՏԵՂԵԱՆ ՏԱՐԵՒԱՅԻ,
ՍԱԿԱՀԻ ԲԱՆ

Համեմատուքին աշակերտի առ վարժապետ որպէս
բազմաց մի եւ սուխ:

Գիտելի է, զի մարդն երեք ծնունդ ունի.
նախ ի հօրէ եւ ի մօրէ. երկրորդ չնորհօք
սուրբ աւազանին. երրորդ աշխատութեամբ
վարժապետաց:

Դարձեալ յերից է մարդն՝ ի հոգւոյ եւ ի մարմնոյ եւ ի մտաց: Զի թէպէտ միոյն Աս-
տուծոյ է երեակու, սակայն առանձին ստեղ-
ծող գոյ սոցա. մարմին ստեղծեալ ի ծնողաց
չնորհողին անհաս զիտութեամբն. Հողին
տուեալ յԱստուծոյ ի մօր յարգանդին, ան- 10
զիտելի ի մարդկանէ. միտքն պայծառացեալ
աշխատութեամբ վարժապետաց սուրբ Հող-
ոյն ձեռնոտութեամբ:

Դարձեալ երեք ծնունդն որ ասացաք՝
միմեանց համեմատ եւ նմանութիւն ունին. 15

ԶԵԲԱՂԻԻՐՔ. A = Շաւարչ վ. Սահակեանի որի-
նակը. B = Երուսաղէմի թ. 1042:
ԽՈՐԱԳԻՐ. Մովսէս. B. որ է չի Բ. սոկ. B:
1 մարդուն B: — 5 երից B. ի (ծնողաց) չի Բ:






այո երկու ծնունդն կարի քաջ միաբան . և
մինն ի սոցանէ զերազանց և արիտուր ըստ
առաքելոյ , զոր անհնարին էր օրինաց . Աս-
տուած զորդին իւր առաքեաց ի նմանութիւն
20 մարմնոյ և այլն :

Բեր աեսցուք զմիաբանութիւն ծննդոցն .
պինչ որ աշխատութեամբ ծննդենէ վարժա-
պետաց զնմանութիւն մօրն ունի : Նախ մայրն
յետ սաղմատութեան քառասուն օր դիակիր
25 չըջի . նոյնալէս և վարժապետն իմ երբ յանձն
էստ զիս՝ զիակիր էի սոտջի իւրն միայն ս-
շակերտ ձեւացեալ : Երկրորդ զի յետ քառա-
սուն աւուրն տղան չնշաւորի և Հոգիանոյ
յարդանդ մօրն . նոյնալէս և և փոխանակ
30 հոգւոյն՝ առի հրաման վարժապետէն իմոյ
ընթեռնոյ զիրք մարդարէից . որպէս ասէ .

Կոչումն եղեալ աշակերտին
Որպէս աղայն մօրն յարդանդին .
Քառասնօրեայ զիակըրբին
35 Առեալ Հոգի բանականին :
Այսպէս կոչիլ աշակերտին
Ընդ միանալ վարդապետին .
Զեռօքն ընծայ չնորհեալ Հոգին
Մարդարէից տառըս նոյին :

40 Երրորդ զի մայրն տղան ինն ամիս յար-
դանդին կրէ . նոյնալէս վարժապետն իմ փո-
խանակ ինն ամսոյն ինն աստիճան երանու-

17 զերեզանց Յ : — 20 մարմնու Յ : — 23 նոյնու Հ :
ինս կը սկսի Ա : — 38 ձեռօք Յ ընծայն որչէեալ Ա :





ԱԴՐԻ Խ ԱՐԱՊԻԱՆ. ԱՒԲՀԱՑԵՑԻՆ 411

Թեամբ աւետարանին զիս տուանձին խրառու-
կան բանիւ է պահեալ որպէս առէ.

Մայրն զտղան ի յարգանդին
Կրեալ աշխատի իննեակ ամսին.
Եւ վարժապետն աշակերտին
Ուսուցանէ զինն երանին :

Չորրորդ, զի մայրն յետ ինն ամսոյն
աղան ծնանի. Նոյնպէս վարժապետն իմ յետ 50
ինն երանութեան խրառուլոյն միտք իմ պայ-
ծառ ծնանի :

Մայրն ծնեալ ի խանձարրի,
Տղայն մտեալ՝ հող աշխարհի.
Եւ վարժապետն աշակերտի
Ունայն առէ փառք աշխարհի : 55

Հինգերորդ, զի թէ ինն ամիսն պակաս
լինի որ ծնանի, աղան չէ ապրելոց : Նոյնպէս
վարժապետն իմ առ իս ասէր, թէ մինն յինն
աստիճանացս պակաս լինի, որ ոչ կատարես, 60
չես ապրելոց յաւիտենից հրոյն :

Պակաս աւուրրք ծընեալ մանկան
Եւ ութնամսեայ մեռեալ ծընան.
Մընողք նորա զուր աշխատան
Յաւ եւ երկունք նոցա մընան :

43 առ յանձին Ա: — 45 աղան Ա: — 46 աշխատի
յաշակերտ Ա: — 47 յաշակերտին Ա: — 53 խանձարրի Ա:
— 54 աղան Ա յաշխարհի ԱԲ: — 55 աշակերտին Ա:
— 56 յաշխարհի ԱԲ: — 57 չինկերորդ Ա: — 59 առ յիս
ԱԲ ի ինն Ա: — 60 աստիճանաց Բ: — 61 չէ Բ: —
65 ծնահաղք... աշխատեցան Բ:






Դու, իմ որդեակ, իմաստութեան
Երկիւղ ընդ քեզ ինն աստիճան.
Սիրովն յաւարտ զլուխ անդեան
Եւ ութներեկէն կաս կենդան :


70 Վեցերորդ . եօթն ամսուն ծնեալն ապրի .
Եւ ութն չէ ապրելոց : Եւ այս բանիս վար-
ժապեան իմ ժողովողին բանիւն դիս ուսու-
ցանէ , թէ Տուր բաժին եւթանց այլ եւ ու-
թից . եւ տասն կատարեալ թիւ է . եւթն ան-
75 գամ տասն եւթանասուն է եւ ժամանակ ժար-
դու եւթանասուն ամ է ըստ Դաւթայ : Եւ
այս է որ ասէ . Տուր բաժին եւթանց եւ այլ
ութից . զի թէ այսպէս է , նա պարտ է աշա-
կերտին գնալ յառաքինութենէ յառաքինու-
80 թիւն , որ կարողանայ յութիցն ապրիլ :

Ամսոց եւթեանց մանուկն ապրեալ ,
Եւ ութամսեայ անտես զիթեալ .
Եւ թէ բաժին եւթից չառեալ
Ի յութներեկ խոռար քարչեալ :

85 Եւթներորդ . զի մայրն որ ծնանի , տղան
ի ներքոյ սկզբնական մեղաց է . նոյնպէս վար-
ժապեան իմ մինչ դասի զիրք չէր տուեալ ի
ձեռն իմ՝ չէի աշակերտ , այլ անուամբ միայն :

90 Երկուր A: — 73 եւթեաց A եւթեաց B այլ
եւ չի՛ AB ի յութիցն AB: ժող. ժող. 2: —
76 Դաւթայ AB: — 78 նայ AB յառազինութենէ AB
յառազինութիւն A չի՛ B: — 80 ութիցն AB: —
81 ամաց B ժանուկ B: — 83 հաւթից չարեալ B: —
86 ներքու B: — 87 զիրքն չի՛ B: — 88 չի՛ B:





ԱԴՐԻ Ի ՍՐԱՎԳԻՌՆ ԱԽՇԱԱՆՑԻ

413

Մայրն ծնեալ մեղաց որդի
Կրծիմն առեալ մօրն Եւայի .
Սոյնպէս կոշիլ աշակերտի
Մինչ չէ առեալ զիրքըն դասի :


Հ. Զի յետ աւուրց ինչ աղան մկրտի ձեւ-
առմբ քահանային ի սուրբ աւագանն , շնորհաք
որդի լինի Աստուծոյ և բնութեամբ՝ ծնողին : 96
Նոյնպէս վարժապետն իմ փոխանակ մկրտու-
թեան օրհնեաց զիս և և ի ձեռն իմ դասի
զիրքն . ևզ որդի իւրն շնորհաւք :

Մեղաց որդին կրկնեալ ծնի .
Ճուր ։ աւագան և սուրբ Հոգի .
Եզրայր անուամբըն Քրիստոսի ,
և բընութեամբն իւր ծնօդի :
Օրհնութիւն վարժապետի
Համակ նրման աւագանի .
Դասի զիրքն աշակերտի ,
Նովաւ բնակէ ի սուրբ Հոգի :

Տե՛ս , ով դքեզ , զրոց աշակերտ , թէ ո՛ր-
ովէս մէծ է աշխատանք վարժապետաց , որ
աւսուցանելովն զնմանութիւնն մօրն ունի օր-
հնութեամբն համակ աւագանին որդիս իմաս . 110
ասութեան ծնանի : Ասկա վայ այն աշակերտին
որ անհնագանդ լինի վարժապետին . շիք ինչ
ուրախութիւն վարդապետին քան զլսողու-

90 Եւայի Ա: — 92 առջեղէս Ա: — 93 ազայն Բ:
— 99 որդի Բ: — 101 Քրիստոսի ի յաշխարհի Բ: —
102 բնութեամբ Բ: — 108 յաշխատածի Ա: — 111 յաշխ-
ակերտին Ա: — 112 ինչ չի Ա: — 113 լազաթիւ Ա:





414

ՄՈՎԱԼՈՒՅ ԿԱՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

թիւն աշակերտին, բառ Առակին, եթէ Ուրախ
115 լիցի սիրու քո, ուրախ արացես և զիմ
սիրու:


Դու յեր հլու և Հաղատակ
Վարժապետիգ մըտօք յըստակ.
Ունի ընդ քեզ աշխատ զերկակ
120 Եւ զի չնորհօք զու ևս որդեակ:

Իններորդ. կոյ մայր որ երանութեան
մահուամբ կու մեռանի. կոյ որ թշուառու-
թեան: Դարձեալ երանութեան մահ այն է որ
եւթանանամեայ լինի ըստ Դաւթայ և տե-
125 սանէ զորդիս որդւոցն խաղաղական կենօք
գհասարակաց մահն վճարէ. այս երանութիւն
է և ոչ մահ:

Ժ. թշուառութեան մահ այն է որ ծնողն
երիտասարդական հասակն լինի կամ սուզ ինչ
130 աւելի. և լինի որդի իւր ըստնողեայ. և զորն
անկատար յանկարծմահ հասանի իւրն. հայի
տեսանէ զողան իւր կաթնակեր ի լոց և ոչ
կարէ օգնել. սիրոն ի կախ մեռանի. այս է
թշուառութեան և լալու մահ: Ո՞վ մահ,
135 դառն է յիշումն քո. որչափ յիշեմք զքեղ՝ քանց
զուս զողամ:

Վա՞յ ասեմ այնոէս որդուն
Որ անջատեալ ի մօր ծոցուն.

116 Ա կը յաւելու զա՞յ ինձ և. եզուկ է. ես ան-
ձամբ զանձն իմ զատապարտեմ: — 120 զիլ շիֆ Ա:
— 121 կոյ շիֆ Բ: — 122 զողայ Բ: — 123 ի շիֆ Բ:
— 125 քան Բ: — 128 ձաղայ Ա:





ԱԴՐ Ի ՍՐԱՎԻԹՆ ՈՒՐՀԱՅԵՑԻ 415

Ստեանց կարօտ որբացելուն,
Եւ թալիացեալ ի մօր սիրուն։ 140


Արդ այսպէս վարժապետն իմ Տէր Սրա-
ոյիոն և Գրիգոր կաթողիկոս Հայոց թշուտ-
ուական մահուամբ փոխեցաւ եւ զմեղ որբա-
ցեալ եւ կաթոնակեր եթող։ Ո՞վ աստուածա-
սէր ժողովուրդք, ցուցէք ինձ՝ զմա՞յրն ամեւ 145
նեցուն լամք, թէ զտղան կաթոնակեր։

Ա.

Աչք իմ լուսատու,
զիա՞րդ խուարեցար.
Բազուկ իմ հըզօր,
զիա՞րդ յարմնկէ հասար.
Գլուխ իմ զանգբահեր,
զիա՞րդ խոնարհեցար.
Դու համասփիւռ ծաղիկ,
զիա՞րդ թառամեցար.
Երկինք լուսատու,
զիա՞րդ ամուսին ծածկեցար.
Զօրեղ զօրաւոր,
զիա՞րդ խոցեցար.
Կ' շունչ իմ եւ հողի,
զիա՞րդ քաղլեցար.
Ընտիր ճարմնով սուրբ եւ կոյս,
զիա՞րդ ի հող լուծար.

139 ի ստեաց Ե՞ւ — 140 նորայ տէսուն Բ։ —
144 կաթոնակեր Ա։ — 146 տղայն Բ կաթոնակեր Ա։

Ա.
3 զանգբահեղ Ա։ — 4 համասփիւռ Ա։ —
7 քաղլեցար Բ։






Թագ ականակուռ դլուիս իմ,
զիա՞րդ վերացար .

10 Ժրաժան մեղու և ուրծ քաղցրահաճում ,
զիա՞րդ զաղարեցար .
Ի յացդոյն Յիսուսի դու ծառ պտղալի ,
զիա՞րդ զօսացար .
Լեզու քաղցրախօս , ահարկու դիմօք ,
զիա՞րդ լուեցար .
Խորհուրդ բարի , կոյս մաքուր ,
զիա՞րդ վերացար .
Եռվ ծիրանի , խաղաղ , անքոյթ ,
զիա՞րդ վրօդովեցար .

15 Կանգնող դլորելոց ,
զիա՞րդ վերջացար .
Հոգւով լցեալ տուն ևւ տաձար ,
զիա՞րդ քակտեցար .
Զեռնաւարկու զեկո ճարտար ,
զիա՞րդ զու անկար .
Ղամբար լուսափայլ , ջահ անշիջնի ,
զիա՞րդ զու չիջար .
Ճշմարիտ ողկոյզ սիրով քո արրեալ ,
զիա՞րդ ճմլեցար .

20 Մարդարիտ պայծառ , ատամունք շարեալ ,
զիա՞րդ նստեցար .
Յայտղ քո լուսով , ունքով քո կամմար ,
զիա՞րդ անտեսացար :
Նունի ծաղիկ , փըթթեալ վարդենի ,
զհա՞րդ տպեղացար .

11 զաւոեցար Բ: — 13 կուս AB: — 14 իսոզ
անքոյզ Բ: — 17 ձեռնուառկու Բ: — 18 ահշիջա-
նելի Բ:



ՈՂԲ Ի ԱՐԱՊԻԱՆ ԱԽՎԱՅԵՐԻ


417

Երթունքը լար, կլափիզ փայլուն,
զիս՝ բղ ի Հոգ մածար.
Արդահան գետ, աղբիւր բարեհամ,
զիս՝ բղ ցամաքեցար.
Չորից յօրինեալ, երրեակէ դայեալ,
զիս՝ բղ քարկեցար. 25
Պարիսպ ամբութեան, անդի առաստան,
զիս՝ բղ տաղպարեցար.
Զուր զավացուցիչ առազմամբ ծարաւոյ,
զիս՝ բղ ծածկեցար,
Ռեւին քաղցրութեան, մանանոց երկնացին,
զիս՝ բղ հայեցար.
Սիրալի խորիսի հաստատեալ տառ,
զիս՝ բղ կործանեցար.
Վերջացեալ ժաման ձրադ լուսառաւ. 30
ուժկնակի հողմով, զիս՝ բղ զու շիջար.
Տարածեալ մուց լուծմունք բու զրոց,
զիս՝ բղ զադարեաց.
Բարունեաց պարծանք, զլուխ Հայկազան,
զիս՝ բղ դու անկար.
Յնցութիւն Հայոց, պարծանք աչխարհաց,
զիս՝ բղ բանաեցար.
Խիւծեալ հառաչեմ, խզճիւ խոցոտիմ,
զիս՝ բղ խոցեցար. 35
Փառացն ձայն հաւուն լոեցար,
ոլոցեալ հոգւով զիս՝ բղ բնթացար.
Քնար քաղցրախօս, երզարան Դաւթի,
զիս՝ բղ անշնչացար:

23 փայլոյն Բ: — 24 որդացնոսուն Ա: — 25 քակու-
չար Բ: — 26 ձարաւուն Ա: — 33 յաշխորհոց ԱԲ: —
34 քիւծեալ Ա: — 35 հոգով ԱԲ:

ՄԱՅԻՍ ԱՐԱՎՈՐԻ

27




Բ.

Աչքդ լուսատեսիլ ուղմեցաւ .
Բերանդ քաղցրահամ խփեցաւ .
Գլուխագ զմբեթոյարկ խռնարհեցաւ .
Դէմքդ քաղցրահայեաց թառամեցաւ .
Երեսդ քո պայծառ ազեղացաւ .
Զասամունք քո մարզըրատաշար
կարկարելոյ դադարեցաւ .
Էջ քո վակասակիր տկարացաւ .
Ընկրկեցաւ անիւ քո բոլորակ -
Թուլացաւ մէջ քո կամարտկապ .
10 Ժողովագ միտքդ ափչեցաւ .
Ի յերկինս հայեցար .
Լուծումն յանդամոցդ կծկեցար .
Եսիւ փոշատեսակն ափսոսացար .
Ծիծաղականդ խափանեցաւ .
15 Կամքդ ոչ կամելով պահապան
տանըն չարժեցաւ .
Հնձողն շփուալ դիմաց նորին զարհուրեցար .
Զեռքդ յաջ և յաշեակ տարածեցար .
Վ Ղամբարն լուսափայլ տուածի աչաց
քոց տեսուար .
Ճեմելով յերկինս ճանապարհին դարձացար .
20 Մասացար զաշակերտքս ,
ի ձայն հաւուն սլացար .

Բ.

1 ազմեցաւ B: — 3 զմբեթոցորկ Ա զմբեթոց-
յորկ B: — 5 ազեղացաւ չի՛ B: — 6 մարզըրատոց-
չար Ա մարզըրատաշար B: — 7 վակասակիր Ա: —
9 կամարտկառ Ա: — 10 յափշեցաւ AB: — 13 ֆո-
շոց տեսակ Ա: — 15 պահապան B: — 16 չրդեմլ B:
— 18 լուսափայլ AB: քոյլ քոյլ B:



ՈՂԲ Ի ՍՐԱՎԻԲՈ ԱԽՇԱՅԱՅԻ

419

Յաւախի ի մէնջ վերացար .
Նուժացաւ աշխարհս զգալի .
Եիրոմի բանդեցար .
Աստ ծառուղ քակառունն յարմատոց խլեցար .
Չորից յօրինեալ մարմինոց միմևանց
բաժանեցաւ .
Պահապան տանդ , սամփոր ջրոյն մանրեցաւ .
Զուրն յակն Յորդանանս զարձաւ .
Խարի աշակերտաց զմեղ մոռացար .
Աիրելի վարդապետ զիա՞րդ Հեռացար .
Վա՞յ Եւնդուկ մեղ ի Հօրէդ որրացաք .
Տիրեաց մեղ խաւարն թանձրամած .
Բնենական լոյսն ի մէնջ վերացաւ .
Ծնծութիւն աշակերտացս յանկարծ
սպու գիողեցաւ .
Իիւսեալ սիրով եղբարդս միմևանց
կոծով բաժանեցան .
Փոխեցաւ ցնծութիւն մեր ներշանկ
որամութեան ,
Քննութիւն աշակերտացն խափանեցաւ :


Գ .

Ամայի եղեալ Հօրէդ Հեռացայ ,
որրացեալ որդեւակս առ ո՞վ զարդանամ .
Բանի կարօւեալ , սրտիւ թախտնձեալ ,
կերակրի կարօսս առ ո՞վ լիանամ .
Գծուծ նուաստիս , մերկակ շրջաղիս ,
ի Հօրէդ անկեալ առ ո՞վ ողերձանամ .

ՀՀ յաշխարհս AB: — 24 ծառուան B: — 25 առիբ-
նեալ AB: — 28 յաշխերտաց A: — 31 թանձրացմած A:
ՀՀ լուսն A: — 33 յաշխերտաց AB: — 34 Ժի-
ւեաց A: — 36 յաշխերտացն A:

27*






420

ՄԱՎԱԼԻ ԿԱԹԱՐԱԿԱՐԱ

- Դարսվ պարսաւեալ, ծաղրով նախառաւեալ,
զանգաղեալ մրտօք առ ո՞վ ժողովիմ.
 5 Երկիրս ուսարութիւն, յալով չառաշեմ.
բղձայի սրտի բնդ քեզ մեռանիմ.
Զանխառւյս բանից մարդկանց նախառիմ,
կոչեցեալ աշնեկերսու առ ո՞վ ուսանիմ.
Է ասաող մուրացկանս ոյսելով չըջիմ,
ոչ զոլով աեզի զիս՝ րդ զաղարիմ.
Բնկրկեալ բանիւ ի քէն չեռացայ.
կաթիղ պակասեալ՝ սրտիւ նուաղիմ.
Թափառիկ եղեալ՝ մոլորեալ չըջիմ.
սասուցեալ ցրտու առ ո՞վ աղանիմ.
 10 Ժրակելով բանի ի քէն քաղցրացայ.
թերացեալ մրտօք առ ո՞վ լիանամ.
Ի հօրէ թողեալ առ քեզ զիմեցի.
որրացեալ որդեակս առ ո՞վ ևս երթամ.
Լքեալ կորնչիմ, ծարու. պազակիմ.
նուաղեալ շնչուս բնդ քեզ մեռանիմ.
Խելագար չըջիմ, սրրով խցուտիմ,
սիրելի ժարդապես հոդով քո ծածեիմ.
Մասկել կերակրոց մօրդ կարօտիմ.
չիրիմ տապանի բնդ քեզ զիջանիմ.
 15 Կականակ ձայնիւ առ քեզ չառաշեմ.
մթացեալ զիշերիս առ ո՞վ ժողովիմ.
Համանակ նման քեզ ոչ երեւին.
կոկիծ աղետից զիս՝ րդ դարձանիմ.

6 յաշակերտա Ձ: — 9 թափառի ԱԲ: — 10 ժր-
ցելով Բ: — 14 չիրիմ չըջիմ Բ իջանիմ Բ: —
16 աղետից Ա:




ՈՒՅ. Ի. ԱՐԱՊԻԱՆ. ԱԽՎՀԱՅՈՒԹԻՒՆ

421

Չայնիւ դռչելով, առաջ առելով,
մթացեալ հոգւստս ընդ քեզ ելանիմ .
Դեկտարդ ձարաւար յաշխարհ հնուացար,
զեկիս մոլորեալ հոգով մեռանիմ .
Շեւու յաշխարհէս կամաւ հետեւիմ
ձախողի ևզեալ սրո՞վ ևս ուզդիմ
Մաղթելով հայցեմ, առ քեզ պազատիմ .²⁰
որբացեալ որդեակս ընդ քեզ մեռանիմ :
Յափրացեալ սրտիս վիրօք խոցոտիմ ,
յանցաւ աշխարհէս զիա՞րդ ելանեմ .
Եերգեւալ հոգւով մոլորեալ չըջիմ ,
Յովհաննէս կամիսիկ առ քեզ հասաշեմ .
Շարարարդեալ մեղաց ուժդին զարհուրեմ ,
նախնիդ իմ Գրիգոր, առ քեզ աղերսեմ .
Ողբոց արժանիս կոկիծ աղէտիս ,
Միսիթար տոհմի լալով պազատիմ .²⁵
Չորացեալ խոհս հրով տոշորիմ .
Կարասիտ արի առ քեզ անկանիմ .
Պարուրեաց կոկիծ իմ յազէտ դորովի .
Յովհաննէս Համշի առ քեզ զիմեցի .
Զազելով կոծիմ, սրտիս խոցոտիմ ,
Գրիգոր Տարօնի առ քեզ բազոքիմ .
Բիմ շարացեակս խելազար չըջիմ .
Թորոս անուանի մԷծաւ պազատիմ .
Մովեալ կորնչիմ քաղցեալ մեռանիմ ,
Յովհաննէս Շիրաք առ քեզ աղերսեմ .³⁰
Վիրօք խոցոտիմ, շարաւ տեսանիմ ,
Դուկաս վեհի կոծով պազատիմ .

17 Ելանեմ Ա: — 18 զեկտարդ Ա: — 19 ևս
չի՞ ԱԲ: — 21 սոկէ սրբակ կը պակսի Բ: — 22 հո-
գով Ա: — 23 յոյժդին Ա: — 26, 29, 32 Յովհաննէս Ա:





Տիրական աղքիս սեռիս Հայկազան,
Մրապիօն արրայ, զիա՞րդ մեռանիս¹։
Բոգովնու աստիս, Մովսէս եղելիյս,
Յովհաննէս համշիրակը առ ո՞վ դարձանիմք։
Յնորեալ խելոք խղճիւ վարանիմ,
մածուցեալ մեղօք, որով բաժանիմ։
Իիւծեալ հառաչնմ, հոգւով տառապիմ,
յերկրիս սամրութիւն, առ ո՞վ դադարիմ։
25 Փանաքի եղեալ, եղրարց բաժանեալ,
կոկիծ աղէտօք միմւանց հեռացեալ։
Քառեակ տառնակի և իննեակ ամի²։
բաղցրութիւն սրտիս տէրն իմ մեռանի։

Մեռանիլ բղձոմ հոգով ծածկելու։
գարշապար ստից դժոխը բանաելու։

ՅՅ Խղջիւ Ա:

¹ Մովսէս կու ասց Հառ վարդապետաց կորդը
այսպէս։
Յովհաննէս կախիկի Արսանեցի։
Կրիզոր Տաթեւոցի
(Դանիէլ ճղնաւոր)
Յովհաննէս Համշէցի։
Թորոս Տարօնեցի,
Կրիզոր Տարօնեցի
Յովհաննէս Շիրաց
Հուկաս Կղեցի
Մրապիօն Ռոբացեցի։
Արմէ պիտի տանէր ինքն ալ զաւազանի իշխանու-
թիւնը։
Իսկ քետրապետ արից շպիտեմ։ Հին ցուցակներու-
մէջ չի յիշուիր անիկու։
² Յովհաննէս Արշացեցի։
³ Մովսէսի այս տողէն կը տեսնաք թէ Մրապիօն
Արշացեցի վախճանած է 49 տարեկան։ ուստի ծննդ է
1550(57)ին։





ԱՐՅ. Ի ՄՐԱՊԻԹ. ԱԿՐՀԱՑԵՑՔ 423

Որոշեալ ստեանց պատճառ ինձ լալու .

սիրելի բանրիչ մայրն է իմ պիտու .

Վերացեալ աչացո կարօտ եմ տեսու .

խարեն զիս բանիւ նման աղայու :

Մնուցեալ որդեակդ ի քէն արտաքու ,

զէշ զէշ պատճառի զազան սոսիու .

երէկն և յեռանտ մտարերելու .

բարբառ ու խօսիցդ յունկանս լոելու .

Սպասաւոր ուարի ըմպոն է շիրմու ,

զատուցեալս ստենէ եղիք ի ծոցու :

Արդ եղբարք իմ սիրելիք, չէ պարտ մեզ
ահմխիթար լալ, այլ չսփ և կշխո : Եթէ թա-
գաւոր ոք սիրելեաց իւրաց առ ինքն կոչէ և 15
բնուանիք նորա խնդան և ուրախ լինին . բանի՛
սուսէլ երկնաւոր թագաւորն, որ այսօր վար-
ժապետն մեր առ ինքն կոչեաց : Չէ պարտ մեզ
սուդ առնուլ, այլ սակաւ մի լաց և ազօթք
անզագար վասն փոշատեսակ մեզացն, որով 50
գիրելեացէ Քրիստոս գամենսանս . նմա փառք
յաւիտեանս . ամէն :


Ով բնթերցող, թէպէտ յետու զրեցու,
առկայն առ ոսոս նորա էի մինչ ի գոփենին առ
Քրիստոս . և յետու եղէ տառանման յօտա- 55
րութիւն, որովէս ոք բանս յիշէ :

Գրեցու ի մայրաքաղաքն յԱւրհայ . թվին
ննջԶ . ի Արաց⁴ ամսու : Թվին ննջԵ . ՄԵ-

38 սիրելի առելի Ա : — 40 զազան զազ Ա : —
42 ս'րի Ա կարդա՞լ սարաւեց : Ա չիրժու թիր-
ժու Ա : — 50 փոշատեսակ Ա :

⁴ Արաց—Ասորիւ :





Հեղի Ե՞ւ առոր շորեքարթի Եւ Հայոց զատկի
առաջի շարաթու^ո, ի մետասոն ժամու վար-
ժապետն մեր առանց հաց դհոգին սրբանելաւ:

Շարագրեալու պակաս է Եւ թերի .
Միտք իմ մոլորեալ խռուարաւ ծանկի .
Ազակին ստակ յորմէ հոյէի ,
Վերացեալ աշացս սյլ ոչ երեւի .
Նուաստ աշակերտացն եւ շեմ անուսանի
Մաենէ զատուցեալ մանուկ թարշամի .
Կերտակուր կարծրագոյն չէ ինձ ստեղի .
Կաթին փափաքիմ մօրն իմ ձնուցի .
70 Վարդապետ քաղցան բաժակ բերերայի .
Աշացս լուս, սրախս բոցայի .
Մարմինդ կոյս եղեալ ի շիրմի ,
Հովիդ գասակցեալ նախնոյն Գրիգորի :

⁵ Ազգի 23:

⁶ Այսինքն 23 Ազգի 1006 Դէ. — Շ Մէշեկ ուսի-
նուակցու Արտօնիու գարդապետ յԱմիս:

Ըստ Ներսես Ակինյանի
«Սովուս Տաթեւացի»
գրքի



Մովսես Տաթեւացու Ժամանակը



ԼԻԼԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Կապանի N2 ավագ դպրոցի պատմության
ուսուցչուհի

XVI դարի սկզբներից մինչեւ 17-րդ դարի 30-ական թթ. Վերջերը, կարճատես ընդիշումներով, Հայկական բարձրավանդակի նկատմամբ տիրապետություն հաստատելու համար միմյանց դեմ պատերազմներ սկսեցին Օսմանյան Թուրքիան եւ Սեֆյան Պարսկաստանը: Թուրք-իրանական պատերազմների արհավիրքները կործանարար հետեւանքներ ունեցան հայ եւ անդրկովկասյան մյուս ժողովուրդների համար: Տնտեսական ու քաղաքական մասնատվածության պայմաններում նվազողների անհագ կողոպուտներից, կեղեքումներից ու խոշտանգումներից ընդարձացած եւ ուժասպառ, նրանք իրական կրվան չունեին համաժողովրդական դիմադրության միջոցով փոխելու ստեղծված իրադրությունը: Չկար քաղաքական արտաքին որեւէ գործոն կամ սոցիալական ներքին որեւէ ուժ, որը զորավիճ լիներ կամ ձգտում ու հնարավորություն ունենար օգնելու, միավորելու նրանց ջանքերը՝ նպատակ ու ընթացք տալու ազատագրական մղումներին: Մերթընդմերը դրզրբաշների կամ օսմանցիների դեմ գենք բարձրացնող տեղական իշխանավորները, դիմադրական ապարդյուն փորձերից հետո, իրենց գլխավորած զանգվաճների նկատմամբ ի վեջո բռնում էին տիրափոխության եւ դավանափոխության ուղին՝ գործիք դառնալով թշնամու քաղաքականության, իրենց ժողովորդի ազատագրական ջանքերը գլխավորելու փոխարեն բռնում փախուստի կամ համակերպու-

թյան ճանապարհը:

Թուրք-իրանական պատերազմները Հայաստանի համար անհամենատ ժան էին ու կործանիչ, քան սելջուկ-թուրքների, մոնղոլների ու թուրքմենների կազմակերպած ջարդերը, ավարառություններն ու ավերումները: Եթե նախընթաց դարերում հիմնականում ունեցրկվում եւ քայլավում էին հայ ավատական իշխանությունները, ապա այս շրջանում ոտնատակ էին արվում Հայաստանի քաղաքներն ու գյուղերը, կոտորածների էր ենթարկվում կամ խոշտանգվում հայ ազգաբնակչությունը, գերեվարվում կամ կամավոր գաղթի ցուա առնում հայ աշխատավորությունը: Տեղաբնիկների ոչնչացումն ու բռնի գաղթեցումը, նրանց գյուղերի ու քաղաքների, տների եւ եկեղեցիների ավերումը, ցանքադաշտերի ու այգիների իրկիզումը հալածանքի արտահայտություն չին միայն, այլև ծնկի բերելու եւ ահարեկելու միջոցառումները: Պատերազմական արյունահեղություններին հաջորդում էին տեւական եւ զանգվածային կեղծքումներն ու ճնշումները՝ ստեղծելով կամավոր կամ ակամա զարգանացություն: Հայ բնակչությունը նվազ հալածանքներ չեր կրում պատերազմներին զուգընթաց ներքին ապստամբությունների, ջալալիների գործած խժժությունների, ինչպես նաեւ ռազմական բախումներին հաջորդած մահասիյուր սովոր անխուսափելի համաճարակի հետեւանքով:

16-17-րդ դարերում միայն Հայաստանի լեռնային գոտիներում է, որ տեղ-տեղ դեռ երեւում էին հայկական մանր իշխանությունների հետքեր: Արեւելյան Հայաստանում հայկական ինքնուրույն իշխանության հետքեր էին մնացել Սյունիքի, Արցախի, Լոռու եւ Գեղարքունիքի որոշ վայրերում: Վաղեմի ամկախության հետքեր նկատվում էին նաեւ Արեւմտյան Հայաստանում՝ Ձեյրունում, Սասունում, Մոկսի, Շատախի որոշ գյուղահամայնքներում: Սակայն ներքին որեւէ կապ չկար այդ հայ հանացների միջեւ, որոնք է ազգային անկախության հանգրվաններ չին դառնում:

Նման պայմաններում 1602թ. սկսվում է թուրքարկական՝ արդեն երրորդ պատերազմը, որը, ի տարրերություն նախորդ երկու պատերազմի, սկսում են պարսիկները: Պատճառն այն էր, որ պարսից Շահ Արա Ա-ն (1587-1629) ցամկանում էր Վերադարձնել իր իսկ կողմից Օսմանյան կայսրությանը զիջած տարածքները: Շահ Արաը կարողացել էր ընդամենը մեկ տասնամյակի ընթացքում կատարել ռազմական եւ տնտեսական վերափոխումներ, որոնց շնորհիվ ստեղծել էր հզոր ու մարտունակ բանակ եւ տնտեսապես անուր պետություն: Փաստորեն, պարսից շահն այնպես էր վերակառությունը իր երկիրը, որ Պարսկաստանը պատրաստ էր նոր՝ անգամ հաղթական պատերազմի:

Պատերազմից առաջ ստեղծվել էին նաեւ արտաքին նպաստավոր պայմաններ: 1590-ական թթ. Փոքր Ասիայում բորբոքվել էր ջալալիների ապստամբությունը, որը երկրի ավերածության, անիշխանության, սանձառնակ կեղեքնակ ու ճնշման հետեւանք էր: Երկրի ուժերի անկումը, ենիշերական կամայականությունների սաստկացումը կենտրոնական իշխանության դեմ ոտքի էին հանում ներքին նահանգների զինվորներին, ուժեղացնում նրանց դասալքումներն ու

տրոտունջները, հանգամանք, որ իրենց նպատակների համար ճարպկորեն օգտագործում էին կենտրոնական իշխանությունից դժգոհ բանակի միջին օղակի ծառայողներին ու տեղական մանր ավատատերերը: Ենիշերական ուժերի վրա խարսխված սուլթանական բռնատիրության դեմ 1596-1608թթ. ծավալում է Կարա-Յազիչի ու նրա եղբոր՝ Դելի Յասանի գլխավորած շարժումը, որից մեծապես տուժում են Արևելյան Հայաստանի ու փոքրասիհական նահանգների հայ գյուղացիությունն ու քաղաքաբնակչությունը: Օսմանյան կայսրությունն զրադված էր այն ճնշելու գործով: Փոքր-ինչ պարսկանետ դիրքորոշում էին որդեգորել օսմանյան լժից դժգոհ հայերն ու վրացիները: Շարժմանը մասնակցող քուրդ ցեղապետերից մի քանիսը նոյնիսկ իրենց գինական ծառայությունն առաջարկեցին Շահ Արքային՝ քուրքերի դեմ պատերազմ սկսելու համար: Պարսիկներին էին աջակցում նաեւ Եվրոպական երկրները, որոնք վախեցած էին Օսմանյան կայսրության՝ Եվրոպայում ավելի ու ավելի ընդարձակվելու վտանգից: Զնորանանք, որ ինենց Եվրոպացի մասնագետների (անգլիացի Ենթոն եւ Ռոբերտ Շերլի Եղբայրներ) աջակցությամբ պարսիկները կարողացան Վերակազմակորել եւ Վերագինել իրենց բանակը: Յատկապես նորանություն էր հզոր քննանորների կիրառությունը պարսկական բանակում, մինչեւ դրանք օսմանյան բանակի կարեւոր մասերից մեկն էին կազմում դեռեւս 15-րդ դարի առաջին կեսից սկսած:

Յաշվի առնելով ներքին ու արտաքին բոլոր նպաստավոր պայմանները՝ պարսից Շահ Արքաը 1602թ. ռազմական գործողություններ սկսեց. կարծ ժամանակամիջոցում պարսիկները գրավեցին Ասորապատականի եւ Արեւելյան Հայաստանի՝ ռազմավարական եւ առեւտրատնեսական տեսանկյունից կարեւորագույն կետերը՝ Թավրիզը, Նախիջեւանը, Երեւանը, սակայն բուրքական հակահարձակումն ստիպում է պարսիկներին նահանջել մինչեւ Թավրիզ: 1603թ. Վերագրավելով Թավրիզը՝ Շահ Արքան անցավ Արարսը եւ խանողավար ընդունելություն գտավ մեծահարուստ Զուղա քաղաքի հայ խոջաների կողմից, որը պատահական չէր, քանի որ Արքասի հովտի ավաններն ու գյուղերն ազատված էին այն տուրքերից, որ հարկադրաբար վճարում էին բուրքական իշխանություններին: 1601թ. Ագուլսում գրված մի հիշատակարանում գանգատ կար, որ բուրքերի օրոք հայ ծնողները պարտքերի հասուցման համար հարկադրված էին նոյնիսկ վաճառել իրենց զավակներին (Մատենադարան, Ճեռագիր 2845, էջ 267թ):

Յայերիս համար այս պատերազմում իշխատակության է արժանի ոչ այնքան Արեւելյան Հայաստանի Վերագրավումը պարսիկների կողմից, այլ պարսից Շահ Արքաի կողմից 1604թ. կազմակերպված բռնագաղթը՝ «Մեծ սուրգունք»: որը ոչ միայն ռազմական վայրագ տակտիկայի արդյունք էր, այլև կապված էր նրա պետական եւ ռազմական բարեփոխումների հետ: Այն իսկական արհավիրը դարձավ Արեւելյան Հայաստանի (Գանձակից մինչեւ Նախիջեւան ու Սեւանից մինչեւ Մակու), Յայուսիսարեւմտյան Ատրապատականի (Թավրիզից մինչեւ Ուրմիո լիճ) եւ մասսամբ Արեւմտյան Հայաստանի (Մուշից ու Վանից մինչեւ Երզում) համար, քանի որ տեղի բնիկ երնիկ

տարրը բռնագաղթի է Ենթարկվում հայրենի հողից:

Բռնագաղթի պատճառն այն էր, որ պարսից Շահ Արքա Ա-ն նպատակ ուներ հայ վաճառականների միջոցով ընդլայնել Պարսկաստանի արտաքին առեւտրական եւ քաղաքական կապերը, ինչպես նաև հայ արհեստավորների միջոցով զարգացնել երկրի հետամնաց տնտեսությունը: Նա հույս ուներ նաև մեծ հարված հասցնել Օսմանյան կայսրության մետաքսի առեւտրին՝ փոխարենը զարգացնելով մետաքսի սեփական առեւտրությը, որը Հայաստանի տարածքից տեղափակվելու էր հարավ՝ ընդհուպ մինչեւ Պարսից ծոց՝ հետապնդելով հեռահար նպատակներ՝ հզորացնելու իր երկիրն ու բուլացնելու թշնամուն:

Բռնագաղթի Ենթարկվածների թիվը գերազանցում էր 300 հազարը, որից միայն 100-200 հազարն է ողջ մնում բռնագաղթի երկարատեղ ու դաժան ճանապարհն անցնելուց հետո: Միայն Արքս գետն անցնելիս դժվարություններից մահացել կամ խոշտանգումներով ոչնչացվել է շուրջ 100 հազար հայ:

Վերոնշյալ առեւտրապարհետավորական հեռահար նպատակներ հետապնդելով՝ Շահ Արքա Ա-ն Իրանի Սպահան քաղաքի մոտակայքում հիմնադրում է զուտ հայաբնակ Նոր Զուղա ավանը, որտեղ Վերաբնակեցվում են Նախիջեւանի Զուղա քաղաքի հայերը:

Նոր Զուղայի օրինակով ստեղծվեց նաեւ Ֆահրաբարդ Սազանդարանում՝ Կասպից ծովի հարավային ավին: Բռնագաղթված հայերին բնակեցրին Իրանի կենտրոնական Ալճան, Բուրվարի, Գյանդուման (Չհարմահալ), Լճան, Խանձիրզա, Մալայեր, Միզդե, Զղախոռ, Փերիա (Փարիա), Փլարդ, Քյարվանդ գավառներում: Յայերի քանակը շատացավ նաեւ Յանադան, Ճիրազ, Ռաշտ եւ այլ քաղաքներում:

Այսպիսով՝ բուրք-պարսկական հերթական պատերազմն իսկական արհավիրը է դառնում Հայաստանի համար՝ զրկելով նրան շուրջ 300 հազար տեղաբնիկից, այսինքն՝ հայից: Փոխարենը բավականաչափ ստվարացավ Պարսկաստանի հայ համայնքը:

1604թ. հունիսին Երեւանի բերդը գրավելուց հետո Արարատյան երկրի կամ Չուխուր-Սադի վիլայեթի բեկլարբեկությունը հանձնվեց Ամիր-Գունա խանին (1605-1625թթ.), ով պատերազմի ընթացքում ոչ միայն ռազմապես, այլև տնտեսապես ամրացնում էր Երեւանը եւ շրջակա տարածքները: Ամիր-Գունա խանը, ում հանձնարարված էր կազմակերպել Երեւանի նահանջի բնակչության գաղթը, լավատեյակ լինելով ձեռնարկած գործի ռազմական, տնտեսական, քաղաքական նպատակներին, այնքան էլ շահագործված չէր ամայացնելու այն երկրամասը, որն իր իշխանության ներքո էր գտնվում, եւ որի հայ բնակչությունը մեծ եկամուտներ էր խոստանում: Այդ իսկ պատճառով՝ եթե զըզըլը աշխատաված էր կիրառվել էր տեղահանման իրանը, հատկապես Արարատյան դաշտում, օսմանյան բանակի անցուղու երկարությամբ, ապա այնուհետեւ այդ բնակչության մի մասին հաջողվեց վերադառնալ եւ հաստատվել նախկին բնակավայրերում:

17-րդ դարի առաջին քառորդում Ամիր-Գունա խանի ծավալած եռանդուն գործունեության շնոր-



Յայասպանը 17-րդ դարի առաջին կեսին

Յայաստանի պատմության ատլաս, Ա մաս
(հեղինակ՝ պրոֆեսոր-դոկտոր Բարձեն Յարությունյան)

Իիվ Արարատյան երկրին սահմանակից քրդական աշխարհապետերն ընդունեցին շահի գերիշխանությունը: Նա մեծ եռանդով աշխատում էր վերաբնակեցնել հատկապես Երեւանի շրջակայքում գտնվող անայի գյուղերը: Մի քանի անգամ արշավելով Կարսի, Էրզրումի, Վանի եւ Մուշի շրջանները՝ այնտեղից մեծ թվով հայ ռայարների իրենց ընտանիքներով քշեց եւ բնակեցրեց Արարատյան դաշտի ավերակ գյուղերում: Չնայած շահի խիստ հրամանին՝ Երեւանի շրջակայքում եւ հատկապես սահմանամեր շրջաններում վարուցանք չկատարել, քանի դեռ թուրքերի հետ հաշտություն չէր կայացվել, ձեռներեց խանը կարողանում է համոզել շահին եւ թույլտվություն ստանալ որոշ վայրերում վար ու ցանք կատարելու: Խանի այս նախաձեռնությունների մասին է վկայում Խաբանդար Մունշին՝ գրելով. «... Ամիր-Գունա խանը խնդրեց շահին թույլատրել, որպեսզի զինվորներն իրենց եւ ձիերի հանար բերդի մերձակա վայրերում որոշ չափով վարուցանք կատարեն, եւ եթե մինչեւ հունձը լուր ստացվի, որ հակառակորդի բանակը մուտք է գործել այդ կողմները, անմիջապես կարելի է ամբողջ բերդը ոչնչացնել, իսկ եթե ոչինչ չպատահի, մեկ օրվա մեջ կարելի է հնձել եւ փոխադրել բերդը, դրանով ապահովել զինվորների պաշարը...» (Ի. Մունշի, Թարիխս-ե ալամարայե Արասի(պարսկ. բնագիր), Թեհրան 1957, հ 2, էջ 787-788):

Ասպատակության, ավարառության ու բնակչության զանգվածային տեղահանության նպատակով կազմակերպվող հաճախակի արշավանքների ընթացքում փոփոխվում էր Յայաստանի կենտրոնական նահանգների, հատկապես դաշտային շրջանների բնակչության ազգային կազմը:

Յողագործ ռայարները թեև նորից մնում էին հայերը, սակայն փոքր թիվ չէին կազմում ամայացած գյուղերում հաստատված քոչվորության բեկորները, որոնք, արդեն նստակյացության անցնելով, սկսել էին զրադակել հողագործությամբ: Ամիր-Գունա խանի հանար շահավետ էր ունենալ հայ ռայարներ, որոնք բազմաթիվ այլ հարկերից բացի կանխիկ դրամով վճարում էին հատուկ գլխահարկ՝ «ջիզյա», որը չափազանց մեծ գումար էր կազմում եւ նախապես հաշված ու արձանագրված էր նահանգային հարկային մատյաններում (Յ. Ժ. Պ, հ4, էջ104): Երկրի արագ վերաբնակեցման հարցում կարեւոր էր, որ Արարատյան դաշտը, լինելով արգավանդ երկիր, հնարավորություն էր տալիս արագ կերպով հիմնադրել եւ զարգացնել նոր տնտեսություն՝ ապահովելով պետական եկամուտներում նախատեսված հարկաման ընդհանուր գումարի հավաքումը: Յայ բնակչության նկատմամբ Ամիր-Գունա խանի ցուցաբերած հատուկ վերաբերմունքի մասին է վկայում 17-րդ դարի պատմիչ Զաքարիա սարկավարդ Քանաքեռոցին՝ նրան անվանելով. «այր քաջ եւ սրտապինդ եւ արի

ի պատերազմունս, անահ եւ աներկիւդ, շինարար եւ սիրող քրիստոնէց» (Զ. Սարկավագ, «Պատմություն, Վաղարշապատ՝ 1870, հ. 1, էջ 45): Երեւանի բերդի պաշտպանության եւ Արեւամտյան Հայաստանում մղված կրիվների համար Ամիր-Գունա խանին շահը շնորհեց «Սարու ասլան» (Խարտյաշ առյուծ) տիտղոսը (Յ. Ժ. հ4, էջ 105): Ամիր-Գունա խանի բեկլարբեկության 20 տարվա ընթացքում (1605-1625թթ.) երկրի գյուղատնտեսության վերականգնման եւ արտադրողական ուժերի զարգացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները շարունակվեցին նրա որդու՝ Թահմագկուլի խանի օրոք:

Պատերազմը տեսական կողոպուտի ասպարեզ դարձեց Անդրկովկասյան մարզերը, հատկապես աճում էր մետաքսի քալանը Շիրվանում, Վրեշում, Վրաստանում, Գանձակում, Ղարաբաղում, որի մասին են վկայում Առաքել Դավիթեցին եւ Շովիաննես Ծարեցին: Պարբերաբար կրկնվող արշավանքները, կոտորածն ու գերեզմանություննը, սովո ու մահտարածամն անայացնում էին Հայաստանի գյուղերն ու քաղաքները, ոչնչացնում արտադրողական ուժերը: Շարունակվում էին «դեւշիրմեի»՝ պարբերաբար կրկնվող «ստղայաժողովներն» ու «աղջկաժողովներ», որոնց ժամանակ ավելի քան կես միլիոն քրիստոնյա մանուկ հավաքագրվեց՝ Ենիշերիներ դարձելու համար: Բացի այս ահավոր մարդահանարից, որը շարունակվեց երեք դար, ստորացուցիչ էր նաև «օտարազգիների» եւ «օտարադավանների» նկատմամբ կիրառվող որոշումը՝ հայ եւ իրեա տղամարդկանց սպիտակ փակեղի փոխարեն սեւ գդակ կրելը: Ծանր էր հատկապես պատերազմի ժամանակ ծավալված պարհակը: Արշավող զորքին ուղեւցում էին նրանց սպասարկող ծառաները եւ բեռնակիրները: Բերդաշինությունը եւս կատարվում էր պարհակների միջոցով: Չնայած այն հանգամանքին, որ ռազմական գործողությունների հիմնական թատերաբեմ էր կենտրոնական Հայաստանի տարածքը, սակայն արեւատահայերի դրությունն էլ ավելի էր ծանրանում: Այդ մասին վկայություններ ունի Միմենն Լեհացին, ով Ակարազողում է Ստամբուլի «եսկիր բազարում» հայ գերիների վաճառահանման սրտաճմիկ պատկերը. «.... որոնք ծեր էին ու պառավ նստել էին: Խսկ աղջկներին ու մանուկներին, տղաներին ու գեղեցիկ կանանց ծերքից ծեռք էին անցկացնում ինչպես ծիերի ու ջորիների....» (Միմենն Լեհացի, Ուղեգրություն, Վիեննա, 1936, էջ 18-19): Խոսուն են Լեհացու նկարագրություններն արեւատահայ բնաշխարի հայ բնակչության նասին:

Արեւամտյան Հայաստանի խրծիները նա նամացնում է լուսազուրկ ախոռների, իսկ փոքր նուտք ունեցող խորափոր ու խավաշտին տնակներում պատսպարված քաղաքաբնակչության մասին գրում է, որ դատապարտված էին աղքատ ու տառապալից կյանքի, Ենթակա գրկանքի, խտրանքի, գրպարտությունների, տուգանքների ու հավելյալ հարկումների: Գավառական քրիստոնյաները գրկված էին լավ չուխս հագնելու, մեծ տուն ու այգի ունենալու իրավունքից: Նրանց արգելված էր անգամ ծի, ջորի կամ էշ հեծնելը: Հակառակ պարագայում պետք է «ուլախ» կոչված դրամական տուգանքը վճարեին: «Անեն տեղ եզ կու բանեցնեն, աղ ու բեռ բառնան, այլեւ հեծ-

նան», - գրում է Լեհացին (Միմենն Լեհացի, Ուղեգրություն, էջ 193-194):

Մեծ չարաշահումներ էին լինում հատկապես խարացի (ջիզեի) հարկահանության ժամանակ, երբ գանձումը կատարվում էր պանդխառության մեկնած ընտանիքի անդամների դիմաց:

Թուրքական նահանգներում իշխող բարբարոսության ու կամայականությունների պատկերն ամբողջական է դառնում Բաղեշի, Խոշարի, Մոլսի, Զուլամերիկին Սպարկերուի, Խիզանի, Շուզի եւ քրդական կիսանկախ այլ ամիրայություններին հպատակվող հայ բնակչության ծանր կացությամբ, որտեղ հայ գյուղացին քուրդ ամիրաների ու բեյերի ճորտն էր՝ Ենթարկված նույն կեղեքումներին ու ճնշումներին, որ հատկանշական էր օսմանյան ռայախի համար (Յ. Ժ. հ. 4, էջ 1115):

Օգտվելով արեւատահայ ժողովրդի ծանր վիճակից՝ իրենց գաղափարախոսությունն էին ուժեղացնում կարողիկ միհսիններներ՝ քարոզչական գործունեության հանգրվաններ դարձնելով միջազգային ուղիների վրա ընկած հայաբնակ քաղաքները:

Ուազնաճակատի կարիքները հոգալու պատրվակով թուրք իեցայլները բռնագրավում ու վաճառում էին անգամ վաճքերի ու եկեղեցիների խաչերն ու ավետարանները, ավարի Ենթարկում հայ գյուղերն ու բնակավայրերը:

Հայ ազգային եկեղեցու խոր տագնապն արտահայտվում էր նրանով, որ նախորդ դարերում հայ միջնադարական գրականության եւ գիտության հանգրվաններն էին հանդիսացող վանքերը հայտնվել էին քայլայված եւ ամայացած վիճակում: Եկեղեցական գիրն ու գրականությունն անգամ, ինչպես Ա. Դավիթեցին է վկայում, չին հետաքրքրում եկեղեցու սպասավորներին (Պատմություն, Էջմիածին, 1896, էջ 290): Գրչության եւ ընթերցանության փոխարեն վանքերն ու վաճականները տարված էին սեփական անդաստաններն ու գույքը բազմացնելու, սեփական ոչխարեների ու արջառների հոտերն աճեցնելու հոգսով: Նրանք վաճառքի էին հանում վանքի ու եկեղեցու գույքերը կամ փոխանցում իրենց ազգականներին ու հոնմաներին: Դավիթեցին նշում է, որ լրելով «հոգեւոր» պարտավորությունները, նրանք անց էին կացնում իրենց օրերը հետաքրքրությամբ ու զվարճությամբ, գինարդությամբ, աշխարհիկ կատակներով ու խրախճանքով: Աշխարհական իշխանների պես նրանցից ունանք հագնում էին մոռ ու մավի, կամ կորում սուր եւ հրազեն: Լինում էին դեպքեր, երբ սրանք տիրանում էին տանուտերերի, մելիքների պաշտոններին (Ա. Դավիթեցի, էջ 288-290):

Նման իրադրության մեջ՝ 16-րդ դարի վերջին եւ 17-րդ դարի սկզբին, Էջմիածնի հայրապետական արորի վրա միհաժանանակ բազմում էին մի քանի կաթողիկոսներ: Տակավին կենդանի էր Առաքել կաթողիկոսը, երբ ձեռնարդիք էր Դավիթը, որին հետզիւտե արորակից դարձան Մելքիսեդը, Սրափինը, Սահակը եւ Ավետիսը: Կանական կարգերի ու բարերի չարափիտում հավատացյալ զանգվաճների ընդերքում աշխաւացնում էր դարերի խորքում անթեղված աղանդավորության օջախները:

1606-1620թթ. Արցախի լեռնային շրջաններում տարածված էր Մելիքու անունով ուտիացի վաճա-

կանի գլխավորած գյուղացիական շարժումը: Մեխլուն սարկավագի աստիճան էր ստացել Գանձասարի վաճրում, բայց շուտով կարգազանց եղավ՝ վաճրապատկան գյուղերի հողերը հանայնքների սեփականություն հրչակելու համար: Մերկացնելով ծրիակեր վաճականների ընչամոլությունն ու զեխ կյանքը՝ նա քարոզում էր գոյքերի հավասարություն «քրծագոյաց» եւ խարազնազգեստ» վաճականություն, Մեխլուի քարոզները հանդիպեցին եկեղեցական եւ աշխարհիկ կալվածատերերի թշնամնին եւ հանակրանք գտան վաճական հողեր մշակող ռայարների մոտ:

Կղերի պահանջով Մեխլուն դուրս է քշվում Գանձակի բեկլարբեկությունից եւ անցնելով Երեւանի կողմերը՝ բազմաթիվ հետեւորդներ եւ ունկնդիրներ գտնում Արեւելյան Հայաստանի հայ եւ այլազգի գեղջուկների մեջ: Գնալով աճում էր Մեխլուի հետեւորդների թիվը՝ սպառնալիք դառնալով կղերի համար: Ամիր-Գունա խանն ու Եջմիածնի Ավետիս կաթողիկոսն արգելում են նրա գործունեւությունը, սակայն անօգուտ: Խուսափելով հալածնաբից՝ Մեխլուն իր քարոզությունը շարունակում է Արեւմտյան Հայաստանում, որտեղ եւս հանդիպում է հայ կղերի եւ մահմեդական իշխանավորների հետապնդումներին, քանի որ Մեխլուի հայացների մեջ խաչաձեւում էին քրիստոնեական եւ մուսուլմանական աղանդների հայացներ (Զաքարիա Սարկավագ, հ. 2, էջ 49):

Մեխլուի քարոզներն արձագանք են գտնում նաեւ Նոր Ջուղայի բնակիչների շրջանում, որոնց Դարանադիցին չի զանում մեղադրել կենցաղային ու բարոյական արտաների մեջ (Գր. Դարանադից, Ժամանակագրություն, Երուսաղեմ, 1915, էջ 456):

Եթե Մեխլուն եւ իր հետեւորդները կամենում էին վերջ տալ գյուղացիների կեղեքումներին՝ վաճականներին ոչնչացնելու ճանապարհով, նրա հակառակորդների շարքերից դուրս եկան եռանդուն քարոզիչներ, ովքեր ձգտում էին վերջ տալ պորտապարար վաճականությանը՝ մտավոր աշխատանքով գրադելու եւ անապատական կենցաղ կազմակերպելու միջոցով: Անապատական շարժումը շինան որոշ կետեր ուներ Մեխլուի շարժման հետ: Անապատականները եւս մերժում էին վաճականների մասնավոր սեփականությունը՝ այն հրչակելով ոչ թե գյուղական հանայնքի, այլ վաճերի «հասարակաց սեփականություն»: Դատապարտելով վաճականների շվայտ կյանքը՝ նրանք քարոզում էին խատարարո կուսակրոնություն, չորակեր էին, սնվում էին օրական մեկ անգամ, իսպառ հրաժարվում գինուց ու մսից, պահեցողությունը պարտադիր էր շաբաթվա բոլոր օրերին: Նրանց մեջ կային նաեւ միայնակներ, ովքեր քաղիք կամ մազեղեն գլխանոց էին կրում եւ մերկ մարմնի վրա բրդեցապիկ ու կոպիտ վերնաշղոր հագնում, քայլում ուսաբորիկ: Օրական մի քանի անգամ գրադիւմ էին ժամասացությանը, մյուս ժամերին՝ ընթերցանությանը, ուսուցչությամբ եւ գրչության արվեստով (Ար. Դավիթ Տեղի, էջ 285 եւ 297):

Եթե Մեխլուի շարժումը հանգում էր վաճականության ժխտմանը, ապա անապատական շարժման գաղափարախոսները ձգտում էին բարենորոգման ենթարկել վաճական կարգերը, վերականգնել հայ եկեղեցու հեղինակությունը եւ ընդլայնել նրա գոր-

ծունեության ոլորտը:

Նման քարոզիչների թվին էին պատկանում Մովսես Տաթեւացի եւ Պողոս Մոկացի վաճականները, ովքեր վաճական նոր սերունդ դաստիարակելու համար դպրոցներ բացեցին Յովհաննավանքում, Աստապատում, Շոռորում եւ այլուր: Նման քարոզչությամբ էին գրադիւմ նաեւ սաղմոսավանքը Մարգիս թարգմանությունում նշված էր 1608-13թ. իհմնեցին այդ նպատակին ծառայող Յարանց անապատը, որով սկիզբ դրվեց Արեւելյան Յայաստանի գիտամշակութային ապագա ծավալուն գործունեության թեպետ դանդաղ, բայց անխափան առաջընթացին:

Ներքաղաքական նման պայմաններում շարունակվում էին ռազմական գործողությունները Մեֆյան Իրանի եւ Օսմանյան Թուրքիայի միջև: 1618թ. կորպած ժամանակավոր հաշտությունը խախտվեց, եւ ռազմական գործողությունների ընթացքը փոխվեց, երբ Արա Ա-ն մահացավ: Թուրքերը նախ գրավեցին Յովսիսային Միջագետքը (Մոսուլ քաղաքով), Ախալցխան, Ախալքալաքը, Թավրիզը եւ այլն, իսկ 1638թ.՝ Բաղդադը:

Պատերազմի հետագա ընթացքը չէր բխում պարսկական շահերից, քանի որ նրանք տարածքային կորուստներ էին ունենում: Մեխլույն ժամանակ պատերազմի շարունակությունը չէր հանապատասխանում նաեւ թուրքերի շահերին, քանի որ նրանք ռազմավարական նվաճողական պլաններ ունեին Եվրոպայում եւ բավականաչափ հյուծվել էին Պարսկաստանի դեմ շուրջ 125-ամյա պատերազմի հետեւանքով:

Հաշտության պայմանագրի կորումը բխում էր երկու տերության շահերից, եւ պարսկական առաջարկում են թուրքերին հաշտություն կնքել, ինչին թուրքերը դրական պատասխան են տալիս:

1639թ. մայիսի 17-ին Տիգրիս գետի ձախափնյա Դիալա վլտակի ավագանում գտնվող Կասրե-Շիրին բնակավայրում կնքվում է հաշտության պայմանագիր՝ 30 տարով, որն ուժի մեջ է մնում մինչեւ 1720-ական թթ. թուրքական ներխուժումն Անդրկովկաս:

Պայմանագրի համաձայն՝ Արեւելյան Հայաստանը (արանց Կարսի), Արեւելյան Վրաստանը (Փարթիի եւ Կախերի քագավորություններ), Շիրվանը (մինչեւ Դերբեն) եւ Ալրապատականն անցնում էին Իրանին, իսկ Հայաստանի մեջ մասը, Արեւելյան Վրաստանը (Իներեթ, Մենգրելիա, Սվաներիա, Գուրիա), Արխագիան, Միջագետքը (այդ թվում՝ Մոսուլը եւ Բաղդադը)՝ Օսմանյան կայսրությանը:

Այսպիսով՝ Հայաստանը վերջնականապես բաժանվում է Օսմանյան կայսրության եւ Պարսկաստանի միջև: Թուրքերին անցած հայկական տարածքները (բացառությամբ Ախալքալաքի, Ախալցխայի, Աղրարայի) մինչ օրս էլ մնում են Թուրքիայի կազմում, իսկ Պարսկաստանին անցած տարածքների հյուսիսային մասը 1801-1828թթ. նվաճվում է Ռուսական կայսրության կողմից, եւ հետագայում (1918թ.) հենց այս տարածքների մեջ մասում էլ ստեղծվում է Հայաստանի Հանրապետությունը՝ տարածքային հիմք դառնալով ներկայիս Հայաստանի Հանրապետության համար:

Խոդանալը՝ գոչավայր



ՀՈՎԵՏՍ ԷԶԱՆԱՏՅԻ

Խոդանալ գյուղի պատմության սկզբնավորումը գիտուններից ոչ ոք չի ամրակայել դարերի սանդուղքի վրա: Գերմանացի մեծանուն հայագետ Հյուբերտ Մերազյանը ուսումնասիրություններից մակարեւելով՝ մերազյա Ումառյանը մափնանշել է նախաքրիստոն ոչ կոնկրետ ժամանակաշրջաններ, որոնք համահունչ են Ադոնցի, Ղափանցյանի, Ղարիբյանի զարգացումներին:

2 գարանգեղոսը Ոսկեդարում մեր նախնիներին մոխրապաշտ է անվանել եւ, անշուշտ, ի նասնապորի գիտեր նաեւ Աճանան գավառի պատումները, զի այն մոխրապաշտության մշակույթի տարածաշրջան էր: Ետիններից Ալիշանը կարծիք է հայտնել, որ կրակապաշտությունը հայոց մեջ ավելի վաղ էր տարածված, քան` Պարսկաստանում:

Աճանանը (նաեւ՝ Եջանան) հնամենի Բաղացածարի արեւմտյան մասն էր եւ անունն առել է ածյուն-ածենի հնավանդ բառարմատից: Ի դեպ, մեր ժամանակներում ատրուշան է պեղվել աճանանյան մի բարձունքում՝ Կավարտի մոտակա Կունաս-Կառաքարլեռան վրա:

Խոտանան Աճանանի հինավորց գյուղերից էր՝ Խոտուին լեռան ստորոտին եւ, աներկրայրեն, Վահնի թագավորության Խոտուինն աստծոն զոհարանն էր (Վահնի հարավարեւմտյան կողմի՝ հայտնի ընդարձակ սեպագիր արձանագրությունից. «Խոտուիններն թող երկու եզ եւ չորս ոչխար զոհաբերվի»): Ներանության մերժման ժամանակներում, բնականաբար, ի հայտ եկան հին աստվածներին մոռացության նատելու մարտնչող միտումներ եւ ըստ այդմ՝ Խոտանանի վերաբերյալ Աճանանում շրջանառվել էր Խոտու եւ

Անոն գոյսգի վերաբերյալ լեզենդը:

Խոտանանի առաջին հիշատակումը Տաթեւի վանքի՝ 9-րդ դարի սահմանադրության մեջ է: Գյուղանունը թվարկված է Տաթեւի վանքին հարկատու գյուղացանկում, որն, անշուշտ, տասներորդարյան է: Ստ. Օրբելյանի ավանդած այդ ցուցակում Բաղրի Աճանան ունի 41 հարկատու գյուղ: Ըստ նոր հետազոտությունների՝ դրանց մի զգալի մասը՝ Տորբնի, Պարքոն, Ատու, Զարերիկերտ, Տագամար, Անական, Տաթեղիշեն, Գուկական եւ այլք, Խոտանան գյուղանվան պես ունեն պաշտամունքային ծագում: Մտորելու է, որ Աճանանը երիզող սարահարթներից մեկը տեղացիները հնուց անտի կոչում են Բել...

Խոտանանի աշխարհագրական կոորդինատներն են՝ արեւելյան երկայնության 46 աստ. 22 րոպ. 39 վրկ., հյուսիսային լայնության 39 աստ. 18 րոպ. 38 վրկ.: Գյուղի տեղանքը Սյունիքի լեռնաշղթայից ճյուղավորված՝ Բարգուշատի լեռնաշղթայի հարավակողմ լեռնալանջ է՝ Ողջի գետի ծախս օժանդակ Աճանան գետի՝ ծախս վտակ Խոտանանջից վերնագավառում: Ըստ ավանդագրուցների՝ անցյալում Խոտանանը բաղանասեր է ունեցել բնածորի տարբեր մասերում՝ ընդհուպ մինչեւ նորանուն Շրվենանց գյուղը:

Խոտանանում հիշատակված են երկու՝ Սուրբ Սարգսի և Սուրբ Աստվածածին եկեղեցիները: Որպես հնավայր, Խոտանանամերձ տեղանքը սակավ ուսումնասիրված է: Յավաստի են տակավին 14-րդ դարին վերաբրվող հուշարձան-դամբարաններ:

Պրոֆ. Թ. Յակոբյանը բացահայտել է Զորք-Յաբանդ ճանապարհի կարեւորությունը վաղնջական ժամանակներում: Այդ ճանապարհի՝ Բաղրամյան-Տաթեւ սայլուղի հատվածի համար Խոտանանը կարեւոր իշեւան էր: Պարսկատիրության ժամանակներից Աճանանով անցնող մայրուղին տեղացիները, հետեւելով միջազգային անցուդարձին, «Ճամանական ճամփառ»-ի փոխարեն կոչել են «Ելյուի» (գրաւել եմ բանասաց Բախչի Ղավրյանից):

Աճանան գետի վրա պահպանվել է քարականար երկու կամրջատեղի: Արեւելակողմինը՝ սոսիների հարեւանությանը, ունի պարսկերեն արձանագրություն եւ ցայժմ բանուկ է: Կառուցվել է Մովսես Խոտանանցու՝ կաթողիկոս ընտրվելու տարում՝ 1629-ին, եւ, թերեւ, բարեգործ Աբասալիի որդի Աբրուլայի նվերն էր համբավանուն Խոտանանցուն: Արձանագրության մեջ առբերված է երկու տող Սաադից:

Կապրի այս չափն ու կարգը շատ տարիներ դեռ երկար,



Վ. Խոտանան գյուղի Սր Աստվածածին եկեղեցին

Թեկուզ մարմինս աճկենդան լինի հողին հավասար...

Աճանանում մի շարք գրչավայրեր են եղել, եւ Խոտանանն է հայտնի իր ցանուցիր մատենադարանով։ Անապահիկ՝ քաղվածքներ «Յիշատակարաներ»-ի հատորներից։

1. 1625թ. գրիչ Ղազարը Խոտանանում մի ժողովածու է գրչագրել «ի խնդրոյ Մովսէս քաջ րարունապետին, զարրամունդ եւ պատուական Մովսէս րարունապետն եւ զծնուս իր յիշեսչիք ի մաքրափայլ յաղօրս ձեր»։
2. 1629թ. Սարգիս գրիչը Սաղմոսարան է ընդօրինակել Խոտանանի Սր Ածն Եկեղեցում։ Յիշատակարանում, ի դեպ, հիշել է Տաճախափակի անապատի հայր Արիստակեսին եւ Յակոբ Ժամարարին։ Ըստ այդմ ամարժանս, Եմբաղջերով անապատի մերձակցությունը Խոտանանին, այն նոր վարեկածով տեղորոշել եմ Տորթի-Վաներ տարածաշրջանում՝ Չանախչի հորդորցվող վայրում, որտեղ չուսումնասիրված խաչքարեր, անձավ ու ավերակներ կան։ Այս դիտարկումը հակասում է այն վարեկածին, թե Տաճախափարախը Բեն գյուղի մերձական անապատն է։
3. Թերեւս վերորերյալ նոյն Սարգիս աշխարհական գրիչն է, որ վեց տարի հետո՝ 1635-ին, Խոտանանում Կանոնագիրը ու Դատաստանագիրը է ընդօրինակել եւ հիշատակարանում կարեւոր տեղեկություն հաղորդել իմա՝ ծեռագիր ստացող Տաթևի արքեպիսկոպոս Յովհաննեսը «Եր ազգական եւ մոտ ընտանի Մովսէս կաթողիկոսին»։
4. 1635-ին մեկ այլ գրիչ՝ Յովհաննեսը, Խոտանանում Ավետարան է գրչագրել։
5. 1660-ին, ըստ մի հիշատակարանի, արեղա Մինաս Խոտանանցին գյուղում ծեռք է բերել մի Շարակնոց։ Ակներեւ՝ Մովսէս Խոտանանցին խթանել-սատա-

րել է գրչագրությունը։ Դա վկայում են նաեւ այլուստ ընդօրինակված ծեռագրերը։ Զորօրինակ, Շոռորում 1653թ. գրիչ եւ ծաղկող Յոհան սարկավագի ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում կարդում ենք. «.... Յոհանիս, որ եւ աշակերտ եղէ Մովսէս րաբունապետի, որ եւ կոչի անյաղը փիլիսոփայ, քանզի բազում աշխատութիւն արար ի վերա իմ՝ թէ գրի եւ եթէ ծաղկի»։

6. Էջմիածնում 1655թ. Ստեփանոս քահանան ժաշոց է ընդօրինակել, ով, ի դեպ, տվել է Մովսէս կաթողիկոսի անձի՝ իր Ակարագիրը. «Եր սա յերկրէն Սիմեաց, ի գաւառէն, որ կոչի Ածենան, ի գեղջէն Խոտանանու։ Գոլով ամենելին պարզ բարոյիք եւ ազտական մտօք, զեղեցկադիր եւ փառազարդ դիմօք վայելչացեալ, զմիջինն ունելով չափ հասակին, եւ բոլորվիմ ներքին եւ արտաքին մարդով շմրհաշուր ճոխութեամբ արտափայլեալ, որում յարացոյց զսորըն զիսահակ պարթեազինն համարեսչիր ըստ ամենայն բարեունակ տեսութեան, բնականօք եւ մակստացականօք առատացեալ գովարանութեամբ։ Եւ այսպիսի ցանկալի երեւեալ աշխարհի եւ փափագելի ամենեցուն ծանուցեալ՝ փոխադրի յանմահական կեսամսն վարտում ամաց։»
7. Կոստանդնուպոլսում 1734թ. Արքահամ Դպիրի տպարանն առաջինը տպագրել է «ժամագիրը ատենի»-ն։ Տիտղոսաթերթի վրայի հիշատակարանից իմացվում է, որ այդ ժամանակները ժամագրի մեծ պահանջ է զգացվել, որի համար Դափնի Խոտանան գյուղի բնակիչ Յովհաննեսի որդի մահտեսի թումանը ցամկություն է հայտնել գիրքը տպագրել իր ծախքով «+ ի վայելումն Եկեղեցական մանկանց եւ ի փառս Յիսուսի Քրիստոսի»։ ■

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Դայոց մեծ Մովսեսը	
(Խմբագրական, Սամվել Ալեքսանյան)	1, 5, 68-81
2. Դամարի հովանավորները	4
3. Նամակ ՀՀ նախագահ Ս.Սարգսյանին եւ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ին	4
4. Քառարաններ եւ հանրագիտարաններ	
- Դատված Դրաշյա Աճառյանի «Դայոց անձնանունների քառարան»-ից ...	6-7
- Դատված «Վարդ Արքոց»-ից	6, 8
5. Դիշատակարաններ	
- Զաքարիա Էջմիածնեցի	9
- Եսայի սարկավագ	9
- Ստեփիանոս քահանա	9-10
- Խաչատուր Կեսարացի	10
6. Վավերագրեր	
- Շահ Արշակ Ա-ի 1627թ. հրովարտակը	11
- Շահ Սաֆիի 1629թ. հրովարտակը	11
- Վլադիսլավ թագավորին հղած թղթի պատճենը	13
- Նամակ Ուրբանոս Ը պապին (19 օգոստոսի 1632թ.)	14
- Նամակ Ուրբանոս Ը պապին (17 օգոստոսի 1626թ.)	17
7. Սկզբնադրյուրներ	
- Զաքարիա Քանաքեռցի	20
- Գրիգոր Կամախեցի (Դարանաղցի)	22
- Առաքել Դավրիժեցի	29
8. Այունյաց մեծ անապատը	
- Դատված Ղետոնդ Ալիշանի «Սիսական»-ից	42
9. Պատմագրություն	
- Դատված Միմեռն Երեւանցու «Զամրո»-ից	48
- Դատված Մաղաքիա Օրմանյանի «Ազգապատում»-ից	50
- Դատված Միքայել Չամչյանցի «Դայոց պատմություն»-ից	57


- Հատված Բարկեն Հարությունյանի մենագրությունից	64
10. Ներեկեղեցական եւ միջեկեղեցական հարցեր	
- Եկեղեցական կարգերի վերահստատությունը (հատված Ն.Ակինյանի «Սովոր Տաթևացի» գրքից)	83
- Էջմիածնի կաթողիկոսի հարաբերությունները Աղթամարի, Գանձասարի ու Սսի կաթողիկոսությունների հետ (հատված Ն.Ակինյանի «Սովոր Տաթևացի» գրքից)	85
- Մաղարադա Սուրբ Նախավկա վաճքի կոնդակը (հատված Ն.Ակինյանի «Սովոր Տաթևացի» գրքից)	86
11. Դավանություն եւ վարդապետություն	
- Միաբանական ձեռնարկ (հատված Կարապետ Ամասունու «Սովոր Գ Տաթևացի կաթողիկոս Էջմիածնի» գրքից)	89
12. Համախոհներ	
- Փիլիպոս Ա Աղբակեցի	100
- Տեր Անդրեաս քահանա	101
- Մեծ եւ փառավոր իշխան Խոջա Նազար	102
- Մելիք Հայկազն 2-րդ	105
13. Սովոր Տաթևացու նկարագիրը	106
14. Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի պատասխանը	107
15. Սովոր Տաթևացու հետքերով	
- Սուրբ Զորավոր Եկեղեցի	108
- Կողեռնի մատուռը	111
16. Սովոր Գ Տաթևացի. մատենագիտական ակնարկ (Տեր Արարատ քահանա Պողոսյան)	113
17. Գրական ժառանգություն	
- Սովոր Տաթևացի, «Ողբ ի մահն Արապիոն կաթողիկոսի»	119
18. Սովոր Տաթևացու ժամանակը (Լիլիթ Առաքելյան)	135
19. Սրբագործված հայրապետի օրրանը	
- Խոտանանը՝ գրչավայր (Որբերտ Էջանանցի)	140
20. Յանկ լուսանկարային էջերի	142

ԼՈՒՍԱՆԿԱՐԱՅԻՆ ԷԶԵՐ


Սովոր Տաթեւացու գեղանկար.....	1
Սուլր Էջմիածնի Մայր տաճար	2-3
Դռոմի Սուլր Պետրոս տաճար	19
Երեւանի Սուլր Աստվածածին Եկեղեցի (Կարողիկէ)	21
Ազուլիսի Սուլր Թովմա Առաքյալ Վանք	24
Դովիաննավանք	25
Կարքի գյուղի Սուլր Աստվածածին Եկեղեցի.....	33
Սաղմոսավանք	34
Շոռոք	36
Աստապատի Կարմիր Վանք	41
Դալիձորի բերդ	46
Բեխի կամ Տանձակարախի անապատ.....	47
Ծինուհայրի կուսանաց անապատ.....	49
Դոչանց անապատ	56
Խանածախի անապատ (Անապատի ծոր)	62
Խանածախի Սուլր Ջոհիսիմե Եկեղեցի	63
Մինա լեռ	69
Ամիդ (Դիարքեքիր)	78
Ֆահրարադ	81
Նոր Զուղա	82
Կ.Պոլսի Սուլր Աստվածածին Եկեղեցի	88
Լվովի Սուլր Աստվածածին Եկեղեցի.....	95
Երուսաղեմի Սուլր Յակոբյանց Եկեղեցի	98
Երուսաղեմի Սուլր Յարուբյան տաճար	99
Սուլր Զորավոր Եկեղեցի.....	110
Կողեռնի մատուռ	112
Քարտեզ. Դայաստանը 17-րդ դարի առաջին կեսին	137
Վերին Խոտանան գյուղի Սուլր Աստվածածին Եկեղեցի.....	141
Դարանց անապատ (Սյունյաց մեծ անապատ).....	145
Վերին Խոտանան գյուղ (համայնապատկեր).....	146-147
Տաթեւի վանական համալիր.....	148



Յարանց անապատ
(Սյունյաց մեծ
անապատ)՝
սկզբնապատճառ
հայոց մյուս
մենասդանների.
հիմնադրել են
1608-13թթ.
Սաղմոսավանքի
Սարգիս Եայսկոպոսը
եւ Կիրակոս
Տրապիզոնցի
քահանան (Յալիձոր
գյուղի դիմաց,
Որովան գետի աջ
ափին): Այդպեղից
են ելել Յայասդանի
17-րդ դարի մյուս
անապատների
հիմնադրները՝
դարածելով
նաև համալիրի
հորինվածքի ու
առանձին շենքերի
լուծումները:
Անապատի
կազմավորումից
հետո հիմնադրվել է
Յարանց անապատի
դպրոցը, երբ այդպեղ
է եկել Սովորս Գ
Տաթենացին:







ՎԵՐԻՆ ԽՈՏԱՆԱՆ

Աձանան գետի վրա պահպանվել է քարակամար երկու կամրջատեղի:
Արեւելակողմինը՝ սոսիների հարեւանությամ, ունի պարսկերեն
արձանագրություն եւ ցայժմ բանուկ է: Կառուցվել է Սովուս Խոտանանցու՝
կաթողիկոս ընտրվելու տարում՝ 1629-ին եւ, թերեւս, բարեգործ Արասալիի
որդի Աբդուլայի նվերն էր համբավանուն Խոտանանցուն

Տաթեւի վանական համալիր

Տաթեւի վանքի մայր տաճարը (Պողոս-Պետրոս տաճար), որի կառուցումն ավարտվել է 906 թվականին: 1087-ին համալիրի պաշտպանական համակարգի հյուսիս-արեւմտյան անկյունում, մուլքի եւ դամբարանի ծածկերի վրա, իբրեւ երկրորդ հարկ, կառուցվել է Սբ Աստվածածին Եկեղեցին: 1295-ին, Երկրաշարժից կործանված Սբ Գրիգոր Եկեղեցու (համալիրի հնագույն Եկեղեցին է՝ կառուցված 848-ին Փիլիապէ իշխանի կողմից) գեղում Սյունյաց մետրոպոլիտ, Խշանավոր պատմիչ Սբ Եփիանոս Օրբելյանը մի Եկեղեցի է կառուցել՝ դարձյալ Սբ Գրիգոր անվամբ (Ենթադրվում է, որ ճարտարապետը Մոմիկն է եղել):
Տաթեւի վանքում է նախնական կրթությունը սկաշել Մովսես Խորանանցին:
Այդպես էլ 15 տարեկանում ձեռնադրվել է կուսակրոն քահանա եւ սկաշել Մովսես
Տաթեւացի անվանումը:

